

Էջմիածին



Է-Ը
2005



ԱՊՐ 146 ԿԱ ՏԱՐԻ

ՀԱՄԱԾՈՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ



Յ " - Լ Ի " - Օ Գ " " Դ " "

2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Հայկազուն ծ. վրդ. Նաջաբյանին քահանայական ձեռնադրության երեսունամյակի առիթով	3
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Հասմիկ Պապյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	5
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Դորա Մազայանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	7
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Գրիգոր Շենյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	9
Հայրապետական գնահատություն	11
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առիթով	12
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական մաղթանքը նոր ուսումնական տարվա առիթով	13
ԳԱՅՄԱՆԵ ԱՆԷՔՍԱՆՅԱՆ - ԱՄՆ Եպիսկոպոսական Եկեղեցու պապավորության այցը Ս. Էջմիածին	14
ՀՈՎԱԿԻՄ ԱՐԵՂԱՍ ԾԱՆՈՒԿՅԱՆ - Կանադայի Եկեղեցիների հոգևոր առաջնորդների այցը Ս. Էջմիածին	16
«Ս. Ներսես Շնորհալի» շքանշան Տիրան Ակինյանին	18

ՔԱՐՈՋԽՈՍԱԿԱՆ

Տ. Հովնան աբեղա Հակոբյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	20
Տ. Ռուբեն աբեղա Զարգայանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	22
Տ. Նարեկ աբեղա Ավագյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Շողակաթ Ս. Էջմիածնի տոնին մատուցված Ս. Պատարագին	25
Տ. Ադամ քահանա Մակարյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. Աստվածածնի տոնի Մեղեդոցին մատուցված Ս. Պատարագին	28

ՀԱՅՐԱՐԱՆԱԿԱՆ

ԹԵՈՂՈՏՈՍ ԱՆԿԻՐԱՅԻ - Սրբոյն Թեոդորոսի եպիսկոպոսի Անկիողացոյ՝ ի Ճնուոնդն Փրկչին, գոր ընթերցան առաջի ժողովոյն Եփեսոսի	31
Նորին Թեոդորոսի եպիսկոպոսի խաւսք երկրորդ՝ ի Յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի ի բնութիւն դիմողաց, յորում թէ մի Աստուած Տէր Յիսուս	41

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ - Հովհաննես Օծնեցի Կաթողիկոսը Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի գնահատությամբ	49
ՄԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ - Ուսուցման միջնադարյան տեսությունը և Գրիգոր Մագիստրոսի կրթամշակութային գործունեությունը	54
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - Հովհաննես Սարկավագի գործունեությունն Անիում	59
ՆԵՐՒՔՆԱԶ ՈՐՄԿԱՆՅԱՆ - Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմի գաղափարական ընդգրկումները	73
ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Գրիգոր Դ Տղա Հայրապետը ժամանակի դավանական և քաղաքական խաչուղիներում	85
ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ - Մխիթարիչ Ապարանեցու «Գիրք տրամաբանութեան» երկի աղբյուրներից	94
ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ - Դանիելյան գրերի հարցը միջնադարյան բնագիտական ընթերցումների տեսանկյունից	110
ՄՍԱՏՈՒՐ ՓԱՇԱՅԱՆ - Հայր Գրիգորիս Գալեմբյաղյանի բնագիտական աշխատությունները	126
ԽԱԶԻԿ ՄԱՄՎԵԼՅԱՆ - Բաֆֆու գաղափարական տարրերացը և դրա հեղանակները	131
ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱՐԱՆՅԱՆ - Արցախի թեմը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1917 թթ.)	144
ՌՈՒԶԱՆ ՍԻՐԶՈՅԱՆ - Կնոջ կոչումը	148

ԳՐԱՆՈՍԱԿԱՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ - Ճաշոցին նվիրված նոր ուսումնասիրություն	156
--	-----

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Ամավերջի հանդիսություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում	163
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նորընծա վարդապետներին	164
Վարդապետական թեզերի պաշտպանություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	165

S. Իգնատիոս վարդապետ Մալխասյան	166
Մայր Աթոռում անցկացվեցին սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացները	167
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ալեք և Մարի Մանուկյան գանձապանը բացվեց Նոր Զոտայի ձեռագրերի ցուցահանդես	170
Վերածվեց Ախալքալաքի շրջանի Մեծ Սամսար գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին	171
Լուրեր Գերմանիայի հայոց թեմից	172

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՌՈՒՄ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Միջուկային Լեներգիայի գծով միջազգային գործակալության տնօրենին	174
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի հոբերդի հոբերդարանական Վեհաժողովի նախագահին	175
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի արքայքին գործերի, միջազգային առևտրի և պաշտամունքի նախարարին	176

Ի Տեր հանգյալ Գերաշնորհ Տ. Շառլե արքեպիսկոպոս Աճեմյանը	177
Վախճանվեց Հոգեշնորհ Տ. Դերենիկ վարդապետ Դավթյանը	179
Վախճանվեց Հոգեշնորհ Տ. Զավեն արեղա Հակոբյանը	181

Եկեղեցական բնմ. լուրեր	183
------------------------------	-----

“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата	185
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	188
“Etchmiadzine” organe officiel du Saint-siège d'Etchmiadzine	191

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐՆԱՆ ԴԵՎՈՒԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՅԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷԶՄԻԱԾԻՆ

«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"


Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՄԻՉ՝ 77764

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎՐԴ.
ՆԱԶԱՐԱՅԱՆԻՆ՝ ՔԱՎԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԵՐԵՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆՈՒՐԵԱԼ ՍՊԱՍԱՌՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱՃԱՐԵԱՆ,
ՈՐ Ի ՓԷՆՍԻԼՎԱՆԻԱ, ԱՄՆ**

ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամանից տեղեկացանք, որ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի Ա. Մառակ եւ Ա. Մեսրոպ եկեղեցու Շխական Խորհրդի եւ Խաւարատոր հայորդեաց կողմից կազմակերպուում է Ձեզ նուիրումը հաեղիսութիւն՝ քահանայական ձեռնադրութեան 30-րդ տարեդարձի կապակցութեամբ: Այս առիթով համագգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր սէրը, օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհատրանքները:

Սիրելի Հայր Սուրբ,

Արանձնելով կուսակրօն հոգեւորականի պատասխանատու առաքելութիւնը, երիտասարդ հասակից Դուք հովուական առաքելութեան կոչուեցիք Քրիստոսասէր մեր ժողովրդի կեանքում՝ քաջեռանդ ծառայութեամբ հոգեւոր սնունդ ջամբելով Մեծ Բրիտանիայում բնակուող հաւարատոր հայորդիներին, միաժամանակ շարունակելով ուսումնառութիւնը երկրի բարձրագոյն կրթական հաստատութիւններում:

Մեծ է Ձեր վաստակը յարկապէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգեան Հոգեւոր Ճեմարանի կեանքում: Երկար տարիներ անխոնջ նուիրումով ծառայեցիք որպէս ճեմարանի փոխտեսուչ եւ դասախօս, իսկ այնուհետեւ որպէս տեսուչ՝ Ձեր աւանդը բերելով հոգեւոր մեր մայր կրթօջախի պայծառութեանն ու հոգեւորական նոր սերնդի պատրաստութեան

անչափ կարևոր գործին: Այսօր Ձեր սաներից շարերը ձեռնադրուած հոգեւորականներ են, ովքեր ի սփիտս աշխարհի ծառայում են մեր ժողովրդին՝ երախտագիտութեամբ յիշելով ու բարձր գնահատելով Ձեր ջանքերը ի նպաստ իրենց հոգեւոր պատրաստութեան:

Գոհունակութիւն է Մեզ համար, որ ներկայիս Ձեր ծառայութիւնը բերելով ԱՄՆ հայոց Արեւելեան թեմում, որպէս առաջնորդի փոխանորդ եւ Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ Եկեղեցու հոգեւոր եովիւ, շարունակում էք ամբողջական նուիրումով Ձեր կարողութիւնները, փորձն ու գիտելիքները ներդնել Տիրախնամ թեմում հոգեւոր կեանքի շինութեանն ու պայծառութեանը: Ձեր ծառայութեան բարի արգասիքներով Դուք արժանապէս վայելում էք հաւատարմորէն Ձեր հօտի յարգանքն ու սէրը, ինչը ուրախութիւն է նաեւ Հայրապետիս համար: Վստահ ենք, որ Ձեզ յատուկ խանդավառութեամբ ու եռանդով պիտի շարունակէք սպասարդել Աստուածասէր մեր ժողովրդին. «ինչպէս վայել է այն կոչմանը, որին կոչուեցիք. կատարեալ խոնարհութեամբ, հեզութեամբ եւ համբերութեամբ» (Եփես Դ.1-2):

Միեւնի Հայր Սուրբ, Ձեր յոբելեանի առիթով Հայրապետական Մեր բարձր գեղեցկութեան ենք յղում Ձեզ՝ հոգեւոր առաքելութեան իրականացման գործում երեսնամեայ Ձեր արդիւնաշատ ծառայութեան եւ լուսայ խորան Սուրբ Էջմիածնի նկատմամբ մշտապէս դրսեւորած սիրոյ ու հաւատարմութեան համար: Ի խորոց սրբի աղօթում ենք առ Աստուած՝ հայցելով, որ Տէրը հանապազ գորացնի Ձեզ Ձեր կոչման մէջ եւ պարգևի երջանկութիւն ու նոր ձեռքբերումներ՝ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ ի բարօրութիւն հաւատարմորէն մեր ժողովրդի:

Այլեւ մաղթում ենք, որ Տէրը Աստուածային խնամքի ու հովանու ներքոյ պլանի եւ պահպանի Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ եկեղեցին եւ Իր օրհնութիւնը առաւարապէս բաշխի եկեղեցու բոլոր հաւատարացեալներին:

«Ե՛կնայէ լուսաւորեացէ լոյս Ձեր առաջի մուրդկան, որպէսզի տեսցին զգործս Ձեր բարիս, եւ փառաւորեացին զՀայրն Ձեր որ յերկինս է» (Մատթ. Ե. 16):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 31-ե Օգոստոսի
յարմի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆՃԴ
ի Ի հայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 592

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՀԱՍՄԻԿ ՊԱՊԱՅԱՆԻՆ
«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ-ՍԻՐԵՅԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱԲԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱԶՆԻԻ ՏԻԿԻՆ ՀԱՍՄԻԿ ՊԱՊԵԱՆ,
ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, ԱԲՍՏՐԻԱ**

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական ԼԴԻՐ օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ մեր ժողովրդի հաւաքաւոր գառակիդ:

Սիրելի Տիկին Պապեան,

Երիտասարդ տարիքից մուտք գործելով երգարուեստի յայնահուն ասպարէզ եւ հանդես գալով Էրեւանի մայր բնում՝ Ալ. Սպենդիարեանի անուան պետական օպերայում, Դուք կտրճ մամանակում կարողացաք հաստատուել արդեն ճանաչուած մեծութիւնների կողքին՝ արժանանալով նրանց գնահատանքին ու վաստակելով ջերմ սէրը արուեստասէր մեր ժողովրդի: Հայ հանդիսատեսը քաղցրութեամբ է յիշում Ձեր անմոռանալի ելոյթները եւ միշտ սիրով սպասում ունկնդիր լինելու Ձեզ եւ վերստին հիանալու Ձեր տաղանդով, աստուածալարգել ծայնի գեղեցկութեամբ ու կատարողական մեծ վարպետութեամբ:

Շնորհաշատ հայուհուդ բերած գնահատելի աւանդը երգարուեստի ասպարէզում քաջաւճանօթ է դարձրել Ձեր անունը նաեւ համայն աշխարհում: Այսօր Ձեր արուեստը արժանաւէտ գնահատուած է հայրենական ու միջազգային ամենաբարձր մակարդակներով Պերճախօս է հանրայայտ այն բնմերի թուարկումը, որտեղ արդեն փոսնեակ տարիներ մեծ յաջողութեամբ հանդես էք գալիս Դուք՝ աշխատելով նշանաւոր խմբավարների ու աշխարհում լայնօրէն ճանաչուած բազմաթիւ երգիչների հետ: Գոհութիւն Աստուծոյ, որ մեր ժողովրդին պարգևել է Ձեզ պէս տաղանդատու գառակ, ով իր գործունէութեամբ յաւելում է փառքը հայ երաժշտարուեստի:

Մեծագնի տիկին Պապեան, երգարուեստի անդաստանում Ձեր աւանդի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրբի Հայրապետիս աղօթքն ու մաղթանքն է, որ մեր մեծ Ոստոցապետերի՝ Սուրբ Մահակի եւ Սուրբ Մեսրոպի բարեխօսութեամբ Բարձրեալն Աստուած Իր ամենագոր եւ ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահի եւ պահպանի ՝ Չեզ՝ պարգեւելով քաջամոռջ արեւշարութիւն, սրեղծագործական նոր յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լիւրութի Տէր, զօրացնալ շնորհօք Սուրբ Հոգոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Կոնգակս ի 12-ն Յուլիսի
յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց **ՌՆԾՂ**
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ըկդ համարաւ 306 .

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԴՈՐԱ ՍԱԳԱՅԱՆԻՆ
«Ս. ՄԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱՒ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱԶՆԻՒ ԴՈՐԱ ՍԱԳԱՅԱՆ,
ՈՐ Ի ՄՈՆԹՐԵԱՒ, ԿԱՆԱԳԱ**

Սիրելի Տիկին Սազայան,

Ուրախությունն ունենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունը յղելու Ձեզ և զնախարանքի Մեր խօսքը բերելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանատու ու փառանդաշատ գաւալիդ:

Մեծ է ու զնախարելի Ձեր գիտական վաստակն ու մանկավարժական գործունեությունը: Լեզուաբանության ասպարեզում Ձեր անդուլ ու անյոգնարեկ ջանքերը առաջի պարուզներ են պարգևել շնորհաշատ հայուհուդ և մեծ ճանաչում բերել ինչպէս Մայր Հայրենիքում, այնպէս և նրա օտանաններից դուրս:

Տարիներ շարունակ Դուք նուիրուել էք մանկավարժական առաքելությանը՝ դասաւանդելով և պատրասխանափութ պաշտօններ վարելով Երեւանի Պետական Համալսարանում: Ուրախ ենք, որ, հաստատուելով Կանադայում, Դուք նոյն յաջողութեամբ շարունակում էք գիտական և մանկավարժական գործունեությունը՝ պեղելով ճանաչողութեան նորանոր ակունքներ և Ձեր գիտելիքները առաքօրէն բաշխելով երիտասարդ սերնդին Կանադայի կրթական հաստատություններում: Ձեր հեղինակութեամբ այսօր ընթերցողի սեղանին են լեզուագիտական բազմափափու ուսումնասիրություններ, գիտական ամսագրերում հրապարակուած մեծաթիւ յոդուածներ ու թարգմանություններ, և Ձեր վաստակը բարձրօրէն զնախարում է բազմաթիւ միջազգային պարգեւներով, գիտական կոչումներով ու շքանշաններով:

Մենք առիթ ենք ունեցել ճանաչել Ձեզ և Կեղեակ ենք նաեւ Մայր Հայրենիքի, հարազատ ժողովրդի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ Ձեր անմնացօրդ սիրուն ու նուիրումին: Գոհունակութիւն է Մեզ համար, որ Դուք գործուն մասնակցութիւն էք բերում Տիրախնամ թեմի ազգային և եկեղեցական կեանքին՝ արժանանալով բարեխնամ Առաջնորդի և հաւաքատուր հայերդեաց սիրուն ու խորին յարգանքին:

Առ ի զնախարություն փարիսների Ձեր վաստակեալ գործունեութեան, սիրով ընդառաջում ենք Կանադայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ Եպիսկոպոս Գալստրան-

եանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՂ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք, որ Բարձրեալ Տէրը մեր մեծ ուսուցչապետերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի անդադար բարեխօսութեամբ աստուածային Իր շնորհն ու օրհնութիւնը անպակաս դարձնի Ձեր յարկից ներս եւ պարգեւի Ձեզ քաջատոյջութիւն, նոր եռանդով ու ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր:

Ողջ լինուք ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգոյն եւ յաւեր օրհնեալ ի Մենջամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Բուլխի

Յաւի Տեառն 2005 եւ ի թուին Հայոց ՌՆՇՂ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարսու 309

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԳՐԻԳՈՐ ՇԵՆՅԱՆԻՆ
«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՇԷՆՅԱՆ,
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ**

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէր-
փրկեանից փնդեկացանք, որ այս փարի լրանում է Ձեր գրական և հասարակական գործու-
նեւթեան 50-րդ փարեղարձը: Այս առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ
բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնից:

Մեծարգոյ պէս Շէնեան, ճանաչում ենք Ձեզ անձնապէս և քաջափնդեակ ենք ազնիւ
հայորդոյ նկեղեցասէր ու լազանուէր ոգուն և Սուրբ Էջմիածնի հանդէպ որդիական զգա-
ցումներին: Գոհունակութեամբ ենք հաստատում, որ Ձեր կեանքի յիշարժան այս հանգր-
ւանը Դուք դիմաւորում էք ազգօգույ ծառայութեան հարուստ վաստակով, ճանաչում ու
սիրում հաւատարմը մեր ժողովրդի կողմից: Ձեր հեղինակած գրքերն ու յղուածները ըն-
թերցողի սեղանին են արդէն փաստեակ փարիներ և ուրախալի է, որ Ձեր գրական և լրա-
գրողական գործունեւթեան 50-ամեայ յորելեանին նուիրում այս հանդիսութիւնը նշանա-
ւորուած է նաեւ Ձեր նոր՝ «Մեր օրհնութիւն հետ» մեծածաւալ գրքի շնորհանդէտով, որ Ձեր հեղ-
թական ընծան է ընթերցողներին:

Տարիներ շարունակ Դուք սիրով ու րարեխղճութեամբ վարում էք հայ կեանքում յայտնի
«Նոր կեանք» շաբաթաթերթի խմբագրի պաշտօնը՝ Ձեր ջանքերն ու կարողութիւնները
ներդնելով, որպէսզի պարբերականը մեր ժողովրդի գաւակներին հաղորդ դարձնի սփիւ-
քահայ համայնքներում, Մայր Հայրենիքում և մեր Սուրբ Եկեղեցու կեանքից ներս փնդի
ունեցող կարեւոր իրադարձութիւններին: Վստահ ենք, որ «Նոր կեանք» շաբաթաթերթը, իր
կոչմանը հաւատարիմ, շարունակելու է ծառայել հայ ինքնութեան ու նկարագրի պահ-
պանմանը՝ հայորդեաց հոգիներում բորբոքելով սէրը ազգային մեր սրբազան արժէքների
նկատմամբ:

Ի գնահատութիւն ազգային մեր կեանքում Ձեր երկարամեայ արդիւնաշատ գործունեւ-
թեան, սիրով ընդառաջում ենք բարեջան ձեր առաջնորդի ազնիւ խնդրանքին և Հայրապե-
տական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորաց սրտի Մեր աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք
 հայցում Ձեզ՝ շարունակելու Ձեր ծառայութիւնը հաւաքաւոր մեր ժողովրդին:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարին Աստուած Իր Հայրական հովանու ներքոյ միշտ բա-
 ջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յարանորոգ
 յաջողութիւններ պարգեւելով Ձեզ սրեղծագործական Ձեր գործունէութեան մէջ:

*Ողջ լիւրուց ի Տէր. զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգոյն եւ յաւեր օրհնեալ ի Մեկը
 ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Յուլիսի
 յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
 ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
 ընդ համարաւ 305

ՆԱՅԻՐԱԴԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի կոնդակով հուլիս-օգոստոս ամիսներին

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյան (Իրաքի հայոց թեմ)

Պերճ սարկավազ Լույսեճյան (Կանադայի հայոց թեմ)

Արփինե Աթունյան (Լիբանան)

Պեննիլոպե Զեյն Իվենսոն (Սևանի Վազգենյան հոգևոր Դպրանոցի ուսուցչուհի)

Խաչիկ Ճանոյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Տիգրան Թևրիզյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Պըրթա Խավլիճյան-Մորիարթի (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Վարդգես և Լեզլի Նալբանդյաններ (Ավստրալիայի հայոց թեմ)

Տիրան Ակիևյան (Դամասկոսի հայոց թեմ)

Օրհնության գիր է տրվել.

հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանին (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Արրահամյան ընտանիքին (Գուգարաց թեմ)

Ուրֆայի հայրենակցական միությանը (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

համազգային մշակութային միության ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի մասնաճյուղին

«Ռադիո Արմենիա» ռադիոկայանին (Ուրուգվայի հայոց թեմ)

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք է տրվել.

Սարգիս քահանա Պետրոսյանին (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Լանջախաչ կրելու իրավունք է տրվել.

Երեմիա քահանա խաչատրյանին (Արգենտինայի հայոց թեմ)

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով ու ջերմորեն ողջունում և հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում մեր ժողովրդին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Օրվա առիթով:

Սահմանադրությունը պետության հիմնաքարն ու հիմնականությունն է: Սահմանադրության Օրվա խորհրդով մենք հաստատում ենք մեր հոգիներում գերակայությունը այն արժեքների ու սկզբունքների, որոնցով առաջնորդվելով ի գործ ու պիտի լինենք շինուցնելու մեր հայրենի երկիրը և գորացնելու մեր երիտասարդ պետականությունը: Մենք հավատում ենք, որ առավել պիտի ամրագրվեն ու բարի պատդերն ունենան իրավունքի ու մարդասիրության արժեքները մեր հասարակական կյանքում՝ իբրև արտաքինություն քրիստոնյա մեր ինքնության ու ավանդների և վկայություն՝ բարեշեն ու երջանիկ գալիքի մեր հույսերի: Մեր ժողովրդի դարավոր ձգտումն է՝ ապրել ապահով ու օրինասեր հասարակական կյանքով, ազատորեն ստեղծել և կառուցել:

Աղոթում ենք, որ Տերը խաղաղ պաշտպանի աշխարհը համայն, մեր հայրենիքն ու ժողովրդին և պարզևի մեզ նախանձավոր ու հավատավոր հոգի, սեր ու նվիրում հայրենաշինության ճանապարհներին:

Ողջ լինուք ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յստեղ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Ա. Էջմիածին,

4 հուլիսի 2005 թ.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից նոր ուսումնական տարվա վերսկսման առիթով ողջունում ենք ձեզ, սիրելի դպրոցականներ, ուսանողներ, մանկավարժներ, կրթության գործի բոլոր նվիրյալներ, և հղում ենք ձեզ Հայրապետական Մեր օրհնությունը:

Քարիք Լ ուսումը, գիտելիքն ու կրթությունը և գովելի առաքինություն՝ այն մարդկանց կյանքին ու առաջընթացին ծառայեցնելը: Մեր ժողովրդի դժվարին պատմության դարավոր փորձությունների մեջ գիրն ու դպրությունը եղել են նաև փրկության ուղի՝ հայ և բրիսպոնյա մնալու, սպրելու և վերածնվելու: Այս տարի տոնախմբում ենք Հայոց Գրերի սրբոժման 1600-ամյա հորեկանը, որի խորհրդով առանձնահատուկ պայծառ ու ոգեշունչ է Նոր ուսումնաշրջանի բացումը: Սուրբ Սահակ և Սուրբ Մաշտոց մեր մեծ ուսուցչապետների գործին և անմահ սովանդին հավատարիմ՝ գորացյալ եղեք առ Աստված հավատով, սիրով՝ հանդես Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու Հայրենիքը:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Փրկիչ Տերը իր ձեռքի առավել լույս, առավել կորով, նուսնդ ու ջանասիրություն պարգևի ձեզ՝ ուսանելու և ուսուցանելու, փոխադարձ սիրով ու նվիրումով, արգասավորությամբ աշխատելու, որպեսզի Նոր ուսումնական տարին մեծ հաջողություններ բերի բոլորիդ և Նոր ուրախություններ:

Թող աստվածային ամենաազատ սերն ու շնորհները մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի միշտ ձեզ հետ լինեն ու բոլորի. ամեն:

Ս. Էջմիածին,

1 սեպտեմբերի 2005 թ.

ԱՄՆ ԵՊԻՄԿՈՂՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՅԸ Ս. ԷԶՄԻԱՄԻՆ

(4-9 հուլիսի 2005 թ.)

Սույն թվականի հուլիսի 4-9-ը Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ամերիկայի Եպիսկոպոսական Եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Նորին Սրբազանություն Ֆրենկ Գրիստուոլդ եպիսկոպոսի:

Պատվիրակությանը մաս էին կազմում Եպիսկոպոսական Եկեղեցու Էկումենիկ հարաբերությունների պատասխանատու Զրիստոֆեր եպիսկոպոս Էիթինգը, Նյու Յորքի՝ Զրիստոսի Եկեղեցու հոգևոր հովիվ Հայր Պիտեր Ֆրանսյուս Գասպարյանը, Ամերիկայի Եպիսկոպոսական Եկեղեցու Էկումենիկ-միջեկեղեցական հարաբերությունների բաժնի Առըվա-ծաբանական հարցերով խորհրդական Կանոնիկոս Հայր Ռոբերտ Ռայթսը և լրատվամիջոցների ու փեդեկատվության գծով նախագահող եպիսկոպոսի օգնական Կիկ. Բարբարա Լեյգ Բրեյվերը:

Հայ Առաքելական Եկեղեցին ԱՄՆ հայոց Արևելյան թեմի միջոցով ավելի քան հարյուր տարի միջեկեղեցական հարաբերությունների մեջ է այս Եկեղեցու հետ:

Եպիսկոպոսական Եկեղեցին Համաշխարհային Անգլիկան Միաբանության անկախ՝ ավտոկեֆալ Եկեղեցիներից մեկն է, որն սկզբնավորվել է Անգլիկան Եկեղեցուց և պահպանում է հաղորդությունական կապը վերջինիս հետ, ինչպես նաև «Անգլիկան» անունը: ԱՄՆ Եպիսկոպոսական Եկեղեցին ունի 2-3 մլն. հավատացյալներ և շուրջ 7500 ծուխ ԱՄՆ-ում և ԱՄՆ-ից դուրս իր մի քանի թեմերում:

ԱՄՆ Եպիսկոպոսական Եկեղեցին կոչվում է Եպիսկոպոսական, որովհետև իր կառավարման ձևով եպիսկոպոսական է, այսինքն՝ բաղկացած է թեմերից, որոնք ղեկավարվում են թեմական եպիսկոպոսների կողմից: Թեմից դուրս եպիսկոպոսն իշխանություն չունի, ուստի յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ բոլոր եպիսկոպոսները հավաքվում են ըննարկելու Եկեղեցուն հուզող հարցերը, իսկ տարին երկու անգամ էլ՝ միասին աղոթելու և հաղորդակցվելու համար:

Ինը տարին մեկ անգամ բոլոր եպիսկոպոսները հավաքվում են և ընտրում նախագահող եպիսկոպոս, որն էլ նախագահում է Եպիսկոպոսական խորհրդաժողովները: Եկեղեցին կառավարվում է սահմանադրությամբ և կանոններով:

Եպիսկոպոսական Եկեղեցու ներկայիս նախագահող եպիսկոպոս Ֆրենկ Գրիստուոլդը ընտրվել է 1997 թ. 9-ամյա ժամկետով:

Հուլիսի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստան ժամանած ԱՄՆ Եպիսկոպոսական Եկեղեցու նախագահող եպիսկոպոս Ֆրենկ Գրիստուոլդի ղեկավարած պատվիրակությանը:

Ողջունելով Գրիստուոլդ եպիսկոպոսին՝ Ամենայն Հայոց Հայրապետը հանգամանորեն ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անցած պատմական ուղին և հայ ժողովրդի կյանքում ունեցած առաքելությունը: Վեհափառ Հայրապետը հյուրերին ներկայացրեց նաև Հայոց Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերները, ինչպես նաև ներկայիս

վործունեությունը եկեղեցականների պարասպարախության, ժողովրդի քրիստոնեական դաս-
պիարակության, եկեղեցաշինության և սոցիալական ոլորտներում: «Հաճելի է մեզ համար,
որ այցելել եք աստվածաշնչական մեր երկիր՝ ծանոթանալու մեր ժողովրդի և մեր Եկեղեցու
ներկա կյանքին»,- նշեց Նորին Սրբությունը՝ գոհունակությամբ արձանագրելով այն հարա-
բերությունները, որ առկա են ԱՄՆ Արևելյան թեմի և Եպիսկոպոսական Եկեղեցու ու եկե-
ղեցական կառույցների միջև:

ԱՄՆ Եպիսկոպոսական Եկեղեցու նախագահող եպիսկոպոսն իր հերթին ուրախություն
հայտնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցի առիթով՝ վստահություն հայտնելով, որ հա-
րաբերություններն ապագայում առավել կսերտանան: Հայոց ցեղասպանության ընդուն-
ման առնչությամբ Գրիստոլդ եպիսկոպոսը հույս հայտնեց, որ ԱՄՆ իշխանությունները
կճանաչեն և կդատապարտեն Հայոց Մեծ եղեռները:

Հավարտը հանդիպման Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ աշխարհում վերհասարա-
վի խաղաղությունը, ժողովուրդներն ապրեն եղբայրության և սիրո մեջ, իսկ Եկեղեցիները՝
Քրիստոսին. Նրա պարգամներին ու պարավիրաններին հավատարիմ առաքելության մեջ:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրա-
սենյակի պատասխանատու Ս. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, Մայր Աթոռի դիվանապետ
Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Միջեկեղեցական հա-
րաբերությունների պատասխանատու Ս. Վիգեն եպիսկոպոս Ալթազյանը, Մայր Աթոռի Միջ-
եկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Ս. Հովակիմ արքեպ Մանուկյանը:

Նույն օրը հյուրերն այցելեցին Ս. Գայանե և Ս. Հռիփսիմ վանքեր, իրենց խոնարհումը
բերեցին սրբերի մասունքներին, հանդիպեցին հայ հավատացյալներին, իսկ հուլիսի 5-ին
այցելեցին Նոր Վիրապի վանք, ապա Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճար, ուր երկրպա-
ղեցին Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքներին, ապա հարգանքի փուրջ մատուցեցին
Մեծ Եղեռնի գոհերի հիշատակին՝ ծաղկեպսակ դնելով և ծնկած աղոթելով Հայոց ցեղա-
սպանության գոհերի հոգիների հանգստության համար:

Երեկոյան Արարաթյան Հայրապետական թեմում հյուրընկալվելով առաջնորդական փո-
խանորդ Ս. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի կողմից՝ հանդիպում ունեցան Երիտասար-
դական Միության անդամների հետ, որոնց հարցերին պատասխանելիս նշեցին, որ իրենց
վերադարձին կրնդունեն Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև:

Հայաստան կատարած այցի օրերին ԱՄՆ Եպիսկոպոսական Եկեղեցու պարավիրակու-
թյունն այցելեց նաև Գեղարդա վանք, Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն, Սևանի
Վազգենյան Հոգևոր Դպրանոց, Հաղարծին, ՎՎ-ում ԱՄՆ դեսպանատուն, հանդիպում
ունեցավ ՎՎ Ազգային ժողովի նախագահ փար Արթուր Բաղդասարյանի հետ:

ԳՄՅԱՆԵ ԱՄԵՐՍՄՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների քաժին

ԿԱՆԱԴԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԱՅՅԸ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

(25-30 օգոստոսի 2006 թ.)

Ի նշան Կանադայի Եկեղեցիների և Կանադայի հայոց թեմի երկարամյա բարեկամության՝ Կանադայի Ուոդափառ, Կաթոլիկ և Անգլիկան Եկեղեցիների առաջնորդները, ինչպես նաև Կանադայի Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ Եպիսկոպոս Գալստյանյանի ուղեկցությամբ, այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ որպես հյուրերը Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Կանադայի եկեղեցական առաջնորդների պատվիրակության կազմում էին Կանադայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Մերոտալիս Սոթիրիոս արքեպիսկոպոսը, Կանադայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանսի նախագահ Բրենդոն արքեպիսկոպոս Օբրայենը, Կանադայի Անգլիկան Եկեղեցու պեյր Էնդրյու արքեպիսկոպոս Հաբչիսոնը և Կանադայի Եկեղեցիների Խորհրդի նախագահ դոկտոր Ռիչարդ Շնայդերը:

Հայաստանում գրևվելու ընթացքում հյուրերին ուղեկցում էին Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ Եպիսկոպոս Պետրոսյանը, նույն բաժնի աշխատակից Տ. Հովակիմ արեղա Մանուկյանը, իսկ ուխտագնացությունների ընթացքում նաև միաբաններ Ս. Էջմիածնից:

Այս այցելությունը նվիրված էր Հայոց Գրերի Գյուպի 1600-ամյակին: Հյուրերը, որպես ուխտագնացներ, եկել էին իրենց հարգանքի փոքր մատուցելու բրիտանական հին մշակույթ ունեցող մեր երկրին ու Եկեղեցուն, ինչպես նաև ամրապնդելու և էլ ավելի զորացնելու համագործակցությունը Հայ Եկեղեցու և Կանադայում գործող Եկեղեցիների միջև:

Հյուրերն այցելեցին Ս. Հռիփսիմն և Ս. Գայանն վանքեր, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Կնչատիսի, Խոր Վիրապի, Նորավանքի վանական համալիրներ, ինչպես նաև եղան Սևանի Վազգենյան հոգևոր Դպրանոցում:

Օգոստոսի 25-ին նրանք ծանոթացան Ս. Էջմիածնին ու Մայր Աթոռի ծավալած գործունեությանը՝ այցելելով «Շողակաթ» հեռուստաընկերություն և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան «Կլոր Սեղան» Միջեկեղեցական բարեգործական հիմնադրամ, ապա հանդիպեցին Մայր Աթոռի միաբանության հետ:

Օգոստոսի 26-ին Կանադայի Եկեղեցիների առաջնորդների պատվիրակությանը ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը:

«Ձեր ներկայությունն այստեղ՝ Ամենայն Հայոց Սրբություն Սրբոցում, մեծ գորակցություն է մեր Եկեղեցուն մեր առաքելության իրականացման ճանապարհին: Մեզ համար Ձեր ներկայությունը վկայությունն է այն ջերմ հարաբերությունների, որ առկա են ոչ միայն միջեկեղեցական հարաբերություններում, այլև Ձեր պետքի մակարդակով, այլև թեմական կառույցներից ներս: Եվ Մենք ուրախ ենք այդ համագործակցության համար, այն եղբայրական համագործակցության համար, որ առկա է մեր Եկեղեցիների կյանքում բոլոր մակարդակների վրա»,- ասաց Հայոց Հայրապետը՝ ջերմորեն ողջունելով Կանադայի փարբեր

ՄԱՍՏՇԵՐԸ ԵՆՆՈՒՄԱՆԻՆԻՍՏԱՆԻ ՍԳԱՆ ԿԱԳԼԱՍՊՈՏԻՄԻ
 ՍԻՐԻԱԿԱՆ ԿԱԳԼԱՍՊՈՏԻՄԻ ԵՎ ՍԻՐԻԱԿԱՆ ԵՊԱՐԽՈՍԵՐՆԻ ՄԱՍՏՇԵՐԸ



ԿԱՌԱՐԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ



Եկեղեցիների թեմակալ առաջնորդների և միջեկեղեցական կառույցների նախագահների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Նորին Սրբությունը հյուրերին հանգամանորեն ներկայացրեց Հայ Եկեղեցու անցած պարմական ուղին և ներկայիս գործունեությունը հասարակական կյանքի փառքեր ուղարկելով: Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը հայրենց Կանադայի հայոց թեմի առաջնորդ Բագրատ Սրբազանին՝ եկեղեցանվեր արդյունաշար ծառայության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաև Կանադայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը և մասնավորապես իր գնահատանքը հայրենց Եկեղեցիների առաջնորդներին՝ այդ հարցում գործուն աջակցության, ինչպես նաև Յեղասպանության զոհերի հիշատակման արարողությանը մեր ժողովրդին աղոթակից լինելու և մասնակցություն բերելու համար:

Իրենց հերթին ջերմ ընդունելության և ցուցաբերած հոգածության համար Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհակալական խոսք ուղղեցին Կանադայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Մետրոպոլիտ Ստեփանոս արքեպիսկոպոսը, Կանադայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանսի նախագահ և Ս. Զոնի արքեպիսկոպոս Կարդինալ Բրենդն Օբրայենը, Կանադայի Անգլիկան Եկեղեցու պետ արքեպիսկոպոս Էնդրյու Յաթչիսոնը և Կանադայի Եկեղեցիների Խորհրդի նախագահ դոկտ. Ռիչարդ Շնայդերը:


Հանդիպմանը անդրադարձ նեղավ նաև 21-րդ դարում Զրիստոսի Ս. Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերներին և քննարկվեցին դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:

Հանդիպմանը ներկա էին Գուգարաց թեմի առաջնորդական փեղապատի Ս. Սաաուն ծ. վրդ. Զմրուխտյանը, Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի աշխատակից Ս. Հովակիմ աբեղա Մանուկյանը:

Օգոստոսի 27-ին պարավիրակությանն ընդունեց ՀՀ Ազգային ժողովի նախագահ փար Արթուր Բաղդասարյանը, իսկ օգոստոսի 29-ին՝ ՀՀ Արտգործնախարար փար Վարդան Օսկանյանը:

Այցելության օրերին հյուրերն իրենց հարգանքի փուրքը մատուցեցին Մեծ եղեռնի զոհերի հիշատակին ծաղկեպսակ դնելով Ծիծեռնակաբերդի Ամմար կրակին և ապա այցելեցին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա և Մաշտոցի անվան Մարենադարան:

ՀՈՎԱԿԻՄ ԱԲԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին



«Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆ ՏԻՐԱՆ ԱԿԻՆՅԱՆԻՆ

Նույսի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն: Ամենայն հայոց հայրապետը, ընդառաջելով Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Նոգեշնորի Ս. Արմաշ վարդապետ Նալբանդյանի և Ազգային Գավառական Ժողովի խնդրանքին, հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» հանդեպ հայ ժողովարվո բարձր շքանշանով պարգևատրեց պրն Տիրան Ալիկյանին՝ հանդեպ հայ ժողովուրդը, Առաքելական Սուրբ Եկեղեցին և համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դրսևորած իր որդիական անկեղծ և անմնացորդ սիրո ու ծառայության պարտաստականության համար:

Արարողությանը բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի երիցագույն միաբաններից Ս. Ներսես արքեպս. Պողոսյանը. «Տիրա Ալիկյանը մեզ համար շատ հարգելի անձ է և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վաղեմի և ամենաեղավարարիմ բարեկամներից, նվիրյալներից մեկը, որ, սկսյալ 60-ական թվականներից, գրեթե ամեն տարի գալիս էր Ամենայն հայոց հայրապետի օրհնությունը ստանալու և գորակցելու նրան», - նշեց Սրբազան հայրն իր խոսքում: Այս Կենտրոնական վարչության արեւնադարի Թորոս Թովմանյանը ներկայացրեց Տիրան Ալիկյանի ազգային և հասարակական գործունեությունը:

«Էջ Միածինն ի Կօրե» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց հայրապետական Սրբապատ Կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Ս. Արշակ Նախկոչյոս հաջապրյանը:


«...ճանաչում ենք Ձեզ անձնապես և ուրախ ենք նշելու, որ Դուք տասնյակ տարիներ լծված եք ազգաշեն և եկեղեցաշեն ծառայության՝ Ձեր շնորհներն ու կարողությունները ամբողջական նվիրումով ի սպաս դնելով Բրիստոսասեր մեր ժողովրդին:

Ազգանվեր Ձեր ծառայությունը, որն սկսվեց մանկավարժական երկարատև գործունեությամբ, Տիրոջ օրհնության ներքո արդյունավորվել է երկուստեք վաստակով: Զառուղ դար պաշտոնավարելով Դամասկոսի Ազգային Ս. Թարգմանչաց Դեմարանում՝ որպես դաստիարակ և տնօրեն, Դուք իմացության լույսն եք փոխանցել Ձեր սաներին և խանդավառել նրանց Ձեր ազգասիրությամբ ու եկեղեցասիրությամբ, մայրենի մեր լեզվի և սրբազան մեր արժեքների հանդեպ Ձեր անկեղծ սիրով, Մայր հայրենիքին ու հարազատ ժողովրդին օգտակար լինելու նախանձախնդրությամբ:

Գեոմետրությամբ ենք անդրադառնում նաև Ձեր հասարակական երկարամյա գործունեությանը: Լինելով անդամ ՄԴ Հնչակյան կուսակցության, Դուք եռանդաշատ հոգով ծառայել եք հայ Սփյուռքի գորացմանն ու մասնավորաբար՝ Միլիտանայ համայնքի ազգային կյանքի շինությանն ու պայծառությանը: Հայաստանի անկախացումից հետո Դուք կարևոր մասնակցություն եք բերում հայրենաշինության նվիրական առաքելությանը՝ ձեր ներդրումը բերելով վերագաղթողների շնչով ապրող մեր երկրի բարգավաճմանը, հայրենիք-Սփյուռք և



ՏԻՐԱՆ ԱԿԻՆՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՀԱՅՈՒՆԵՄԻՆԻ ՆԱԽԱՅԵՐԻՄ ԸՆԹԱՍՏԵՐԻՄ





ԳԱՄՆԵԳԻՆ Ե ՄԱՏԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵՐ ԵԴԻՍԿՈՒԹՅՈՍՄԱՎՈՆ ԵԿԵՂԵՑՈՒ-ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹԵԱՆ
ՆԵՏ ՆԱԽԴԻՄՈՒՄՆ ԸՆԹԱՅԷՈՒՄ

Հայաստան-Սիրիա հարաբերությունների գորացմանն ու արգասավորմանը»,- մասնավորաբար ասվում է Հայրապետական հոնդակում:

Հոնդակի ընթերցումից հետո Ամենայն Հայոց Հայրապետը մեծարյալի կուրծքը զարդարեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով: «Սա ինձ պետք է քաջալերի, որ նոր թափով ու ճիգերով իմ նպաստը բերեմ Հայ Եկեղեցու պայծառացման գործին»,- ասաց պրն Ակինյանը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը գնահատանքի համար:

Իր Հայրապետական օրհնության խոսքն ու պատգամը ներկաներին ուղղեց նաև Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «*Վստահ ենք, որ նմանապիսի պարգևները որքան որ հոգեկան ուրախություն են պարգևում շնորհընկալ անձներին, այնքան և գեղեցիկ առիթ հանդիսանում, որպեսզի նոր սերունդը իր հայացքը ուղղի դեպի ազգի նվիրյալները, սպասավորներն ու մշակները և փորձի իր կյանքով, իր աշխատանքով ու գործով նմանվել մեր ժողովրդի այդ արժանավոր գավակներին*»,- նշեց Նորին Սրբությունը՝ վերստին իր գնահատանքը բերելով Ս. Ակինյանին և մաղթելով, որ Բարձրյալ Տերը հանապազ գորավիզ ու աջակից լինի մեծարյալին և նրա ընտանիքի անդամներին՝ պարգևելով քաջատուջ երկար կյանք և ազգօգուտ ու եկեղեցավեր գործոց մշտանորոգ հաջողություններ:

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

**Տ. ՀՈՎՆԱՆ ԱԲԵՂԱ ՀՄԿՈՐՅՈՒՆԻ ՔԱՐՈՁԸ
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅԻ ՏՄԵՆՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(10 հուլիսի 2005 թ.)

*«Ճշմարիտ, ճշմարիտ համառոտ ձեզ, ինչ
որ խնդրեք Իմ. Հորից Իմ ականամբ, կտրվի
ձեզ»:*

(Յովհ. ԺՁ 23)

«Ցանուն Հոր եւ Արդույ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Մարդկային գերագույն պարականությունների մեջ իր արժեքն հորով ամենանվիրակա-
նը իր սրբությամբ և իր ներգործությամբ՝ սրտաբուխ աղոթքն է: Այն մեր հոգու մարմնի ան-
ատիկ բերդն է, երկնքից մեզ փրկած եզակի ատանձնաշնորհումը, որը իրավունք է փալիս
մեզանից յուրաքանչյուրին հաղորդակցվելու գերագույն իմաստության հետ, որն է երկնա-
վոր Հայրը: Անգնահատելի պատիվ է, որը չի բաղդալվում աշխարհային պատիվների հետ,
անկողողալու զանձ է, որը չի չափվում երկրի գանձերի հետ:

Բարոյական արժեքները գնահատող հավատացյալի համար որքան մեծ պատիվ է խո-
սել Աստծո հետ, յուրաքանչյուր վայրկյան մեր ուզած չափով ու մեր ուզած կերպով: Արա-
րածը իր Արարչի հետ խոսում է առանց նախօրոք ժամադրվելու, օրվա ցանկացած պահին,
և դա մեծագույն պատիվ է աղոթող մարդու համար, որի սիրտը լցվում է մեծ ուրախությամբ
և ցնծությամբ, խոսել ազատորեն և մտքեմոտեն թագավորների Թագավորի հետ, և գիտե՛ք,
ով է այդ խոսողը: Անշուշտ, մահկանացու մարդն է խոսում անմահ Աստծո հետ:

Աստվածային այս ունկնդրությունը հոգիների համար մեծագույն շնորհ է: Ամենագոր
Տեղը իրավունք է փվել երկնքի բոլոր արարածներին, որ Իրեն Հայր կոչեն, իրավունք է փվել,
որ մեծ ու փոքր բացեն իրենց սրտերը Իր առջև, պատմեն իրենց նեղությունները, խոստո-
վանեն իրենց մեղքերը և ապավինեն Աստծո պաշտպանությանը: Ուրեմն վստահենք Աստծո
սիրուն, հնազանդվենք Տիրոջ կամքին և սրբությամբ գործադրենք Տիրոջ իսկ կողմից փրկված
պատվիրանները:

Թագավորի հետ խոսելու համար պետք է արքունություն ստանալ, մինչդեռ Աստծո հետ
կարող ենք խոսել ցանկացած պահի՝ եկեղեցում թե փանը, ճանապարհին թե աշխարա-
վայրում, ճանապարհորդության ընթացքում կամ դաշտի մեջ, խոսել անկաշկանդ սրտով:
Աստված միշտ եռօր է լսել մեր աղոթքները, ուր և ինչ պայմաններում էլ կապարվեն
դրանք: Լսում է անձանձրությամբ, որքան էլ երկար լինի և քանի անգամ էլ կրկնվեն դրանք օր-
վա մեջ: Եթե ավագակր թալանում է մեր փունը, հուզվում ենք, ջանք և եռանդ չենք խնայում
մեր ունեցվածքը եւ վերադարձնելու, սակայն ուշադրություն չենք դարձնում, որ մեր մեջ
թողնում ենք սատանային ազատ գործելու: Իր ուզածը վերցնում է, մերկացնում է մեր հոգի-
ները երկնափու շնորհներից: Ավագակին ձերբակալելու համար օգնում ենք իրավապահնե-

րին, մինչդեռ սափափանքի ազատ ու անպարտք ենք թողնում և թաքցնում ենք մարդկության փոփոխությունից:

Առաքինություններից կողոպտված մարդը կուրանում է: Կուրանում է խղճով և արդարությամբ, չի կարողանում ճանաչել անանց արժեքները, որը Աստուծոյ լույսի մեջ է պահում իրեն: Աստուծոյ է բարին, անարգում է սրբությունը, ծաղրում է աղոթքը և անփոփոխ է կյանքը գեղեցկացնող ամեն փոփոխության, մոլորություններով հալածվածում է, հակառակություններով սնվում, անհավատարմությամբ պարծենում և հավիշտակությամբ պահում է ինքն իրեն: Նախընտրում է առաքինության փոխարեն՝ արարքը, սրբության փոխարեն՝ մեղքը, և մաքրության փոխարեն՝ ցեխը:

Սրբաբույս աղոթքը մեր բարոյական առաքելության է, որը երբեք չի պակասում, աճում է օրըստօրե և դառնում անկշռելի՝ իր արժեքով, և անզերպագանցելի՝ իր ներգործած ուրախությամբ: Աղոթքը յուրօրինակ առանձնաշնորհում է, որի արժեքը Քրիստոսի հավատարիմ հետևորդները միայն կարող են հասկանալ և գնահատել: Ահա դա է պարզապես, որ մահկանացու մարդիկ կյանքի մեջ դարձել են մեծ, սուրբ, հաղթական և անմահ: «Ո՛վ է համարձակվում ասել, թե ինքը աղոթքի կարիք չունի»,- հալածվածներից ֆրանսիացի մեծանուն մտածողը, որը նախապես թերահավատ էր եղել և իր գրած գրքերի մեջ արտահայտել էր այն միտքը, թե աղոթքը ժամանակի կորուստ է, աղոթքը ժամանակի վատնում է, բայց իր կյանքի ունեցած ծանր փորձությունը նավահանության ընթացքին երկյուղի մեջ նա առաջինը եղավ, որ ծնկի եկավ և օգնություն հայցեց բազմազույգ Փրկչից:

Աղոթելը ճշարիտ քրիստոնյայի համար ամենանվիրական պարտականությունն է: Աղոթողի սիրտը լցվում է հավատքով, հույսով և սիրով, և ով աղոթել գիտի, նա երջանիկ մարդ է, որովհետև նա ունի իր դժբախտության պահին մի անփոփոխականի բարեկամ, Ով լսում է իր աղոթքը, մխիթարում և օգնում է իրեն, բայց աղոթքի այս վերջնականում հասնում է նրան, ով աղոթում է: Աղոթքը երջանկություն է շնորհում նրան, ով իսկապես կարող է աղոթել:

Այդ, սիրելի հավատավոր և հավատակից ներկաներ, եկեք՝ աղոթենք սուրբ սրտով ամեն օր, թե՛ ուրախության և թե՛ փոխության պահերին, որպեսզի ողորմած Տերը խրախուսի և գորացնի մեզ օրըստօրե: Այժմ և հավիշտանս հավիտենից, ամեն:

Տ. ՌՈՒԲԵՆ ԱԲԵՂԱ ԶԱՐԳԱՐՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 օգոստոսի 2005 թ.)

«Որդիակ, թողեալ լիցին քեզ մեղք քո...
Արի, ա՛ն զմահիճւ ըո՛ւն երթ ի տուն քո»:
«Որդյակ, քո մեղքերը քեզ հերկած են...
Վե՛ր կաց, ա՛ն քո մահիճը և զնա՛ք տուն»:
(Մարկ. Բ 5, 11)

Միրելի հավաքացյալներ,

Ավերարանից քիչ ուռաջ ընթերցված այս կենսագրու խոսքերը Քրիստոսին են, որ հոգու և մարմնի կարարյալ բժշկություն են պարգևում անդամալուծին: Աստուծո պապագամախոս Մարկոս ավերարանիչը մեզ Տիրոջ կողմից մի հրաշագործ բժշկության մասին է պատմում: Երբ Տիտոս վերադառնում է Կափառնայում, քաղաքում մեծ իրարանցում է սկսվում. ոմանք հեկտում են Նրան Աստուծո խոսքը լսելու, ոմանք՝ բժշկվելու, ոմանք էլ՝ լրտեսելու նկատառումով:

Ահավասիկ, Քրիստոս տան կենտրոնում կանգնած խոսում և վարդապետում էր հավաքված մարդկանց: Ժողովուրդը լեփ-լեցուն էր, տան մուտքն ու ելքը փակված: Բժշկվելու եկած հիվանդներից շարքերը Քրիստոսի մոտ մուտք չունենալու պատճառով մնացել էին հուսահատ: Այդ հիվանդների շարքում երևում է մի անդամալուծ, որին նրա մարմնի մեծությամբ բերել էին պապագարակով և ուզում էին ներս փանել, սակայն որևէ հնարավորություն չունեին: Դեռից մտնելու դժվարության առջև չընկրկելով՝ նրանք փանիքից մտնելու միտք են հղանում և անդամալուծի պապագարակը պարանոցով կապելով՝ երդիկից իջեցնում են ճիշդ Տիտոսի առջև: Տեսնելով նրանց հավաքը, հավաքից բխող հաստատարականությունը՝ Տիտոս դառնում և անդամալուծին բաղցրաբար ասում է. «Որդյակ, քո մեղքերը քեզ հերկած են», ապա քիչ հեկտ ավելացնում է. «Վեր կաց, ա՛ն քո մահիճը և զնա՛ք տուն»:

Ավերարանական այս գողտրիկ դրվագը կենսական խորհուրդ և խմաստ է բովանդակում: Նախ, դարձելով Քրիստոսի խոսքից, պարզ է դառնում, որ հաշմանդամությունը, հիվանդությունն ու մարմնական ախտը հեղուկանք են մարդու մեղսագործության: Մեղքի ու հիվանդության պապադառնալիքն անհրաժեշտ է ախտից, որքան մեղքի ու մահվան: Մեղքով մահն աշխարհ մտավ, մեղքով հիվանդությունն աշխարհում փարածում գտավ: Անդամալուծի մեղանչումն ապականիչ կերպով ներազդել էր նրա ողջ գոյության վրա թե՛ հոգեպես և թե՛ մարմնապես: Խախտվել էր նրա մարմնական կազմվածքի առողջ կենսագործունեությունը: Հոգին մարմնի հետ ներդաշնակությունը չպահելով՝ կորցրել էր մարմնի վրա իր կենդանացուցիչ ազդեցությունը: Տառապանքը, ցավը, մարմնական ու հոգեկան թերխարժեքությունն անդամալուծի մոտ երջանկության կորստյանն էին հան-

գեցրել: Տեղեկացես, կասկած չկար, որ այս անդամալուծը չէր կարող բռնկվել, մինչև համոզված չլինեիր, որ իր հաշմանդամության սկզբնապատճառը, այսինքն՝ մեղքը, վերացված չէր: Տե՛ծությանը նայում էր երբ, ուզում էր վերադառնալ դեպի իր բնական վիճակը: Եվ, ահավասիկ, ամբողջապես վերանորոգվելու ճիգը փշրում է հուսահատության պարտնեշը: Մեկ ակնթարթ Տիրոջ ներկայության մեջ, և լսելի է դառնում փրկչական ձայնը. «Որդյակ, ըո մեղքերը բեզ ներված են... վեր կաց, ա՛ռ ըո մաքիճը և գնա՛ ըո քուն»:

Բռնկության փաստով վերաարարչագործության իրողության հաստատագրումն է փեղի ունենում: Վերստեղծվում է մարդու անկախար կազմվածքը, ինչպես որ արարչագործության ժամանակ Աստծու կողմից հողից մարդու ստեղծումը: Անդամալուծի մարմինը կատարելապես չէր կենսագործի, եթե Քրիստոս չվերականգնեիր և նրա ներաշխարհը, ինչպես որ մարդու հոգակերպ մարմինը կենդանություն չէր ունենա, եթե Աստված չպարգևեր հոգին: Վերադարձ դեպի մարդկային նախնական անմեղության ու կատարելության վիճակ: Սա էր բռնկության հիմնական իմաստը: Իսկ ինչպե՛ս և ո՞րմ օգնությամբ:

Ասում է՝ Տիտոս Կրեստվ նրանց հավաքը. պարզաբանը Կրանդ մարդիկ հաստատապես հավատացին, որ Քրիստոս, որպես Աստծու մարդեղացյալ ներկայություն, կարող էր և բռնկել անդամալուծին, այլապես հրապարակավ և այդօրինակ դժվարությունների միջով չէին փորձի անցկացնել հիվանդին:

Ահա մեզ մի ցայտուն օրինակ, երբ մեկը թե՛ մարմնապես և թե՛ հոգեպես փրկվում է ուրիշների հավատի շնորհիվ: Աստծու հանդեպ որքան հավատ, ընկերոջ հանդեպ որքան սեր, գալիքի հանդեպ որքան հույս էր գերիշխում նրանց հոգիներում:

Միրելի հավատացյալներ, երկհազարամյա հեռավորությունից այսօր մեզ նույն և անփոփոխ պարզամտ է փոխանցում Ավետարանը: Նավապ, հույս և սեր: Ինչպե՛ս կարող ենք ասել՝ սիրում ենք, եթե մեր մտերիմը, ընկերը, բարեկամը չի ճանաչում Քրիստոսին, չի ընդունում Նրան, և մենք էլ թույլ ենք տալիս նրան ավելի հեռանալու Տիրոջից: Մենք չենք կարող որևէ մեկին ստիպել ընդունելու Քրիստոսին, ոչ էլ կարող ենք հարկադրաբար որևէ մեկին քրիստոնյա դարձնել, բայց կարող ենք մեր սիրտ, մեր հավատի, մեր մարդկային կյանքի օրինակով միջավայր ստեղծել մեր մերձավորի համար Աստծու շոշափելի ներկայությունն ու բուժիչ ներազդեցությունն զգալու, թեկուզ և դժվարությունների միջով անցնելով և անհեծարիմության պայմաններում: Չէ՞ որ Քրիստոս ասաց. «Ահա Ես ձեզ հեղ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վերջը» (Մատթ. ԻԸ 20):

Ինչպե՛ս կարող ենք ասել՝ հավատում ենք, եթե Քրիստոսին չապրեցնենք մեր մեջ և մեր օրերում, որպեսզի մեր մերձավորը կարող լինի փեսնելու, զգալու մեր մեջ ապրող Քրիստոսի գորավոր ներկայությունը: Չէ՞ որ հավատը, թեկուզ և ուրիշի հավատը, մարդու մեջ դուռ է բացում դեպի Քրիստոսի աստվածային գոյության ներգործության: Ինչպե՛ս կարող ենք ասել՝ հույս ունենք, եթե մեր մերձավորի հոգու բուժման վստահությունը չունենք:

Անդամալուծի մերձավորները իրենց հավատով, հույսով ու սիրով արմատապես փոխակերպեցին նրա կյանքը: Նապա ո՞րն է մեր քրիստոնյաներիս առաքելությունը: Չէ՞ որ այս աշխարհն իր կենսակերպով ու կենցաղավարությամբ չի հավատում և չի ընդունում Աստծուն: Չէ՞ որ մեր մերձավորներից շատերը հավատում և սիրում են միայն իրենց եսը, անձնական միտումով իրենց կտրել են Արարչից, նմանվել այն ծառին, որ կտրվել է իրեն

կենդանություն տվող ջրից: Ներքինը բացորոշ է՝ մեղքից մեղք ծնելով՝ հոգեպես անշար-
կապել են: Եթե հավատում ենք Տիրոջ գործությանը, եթե սիրում ենք մեր մերձավորին, եթե
մեր միջավայրն առողջ ու երանելի ենք ուզում պահել, ապա Տիրոջ գործությամբ վերափո-
խենք մեր և նրանց կյանքը:

Նրանք, հավաքով, հույսով ու սիրով առաջնորդված, քանդեցին տան տանիքը՝ անդա-
մալույծին Տիրոջ առջև իջեցնելու, մենք էլ մեր հավաքի, հույսի ու սիրո գործությամբ քանդենք
մեր մերձավորի քաղաքած հոգու պատկերը՝ Տիրոջ ներկայությունը հաստատելու նրա հո-
գում: Եկեղեցին մենք ենք՝ Զրիստոսի մարմնի անդամներս, որ գործակից ենք Տիրոջը՝ աշ-
խարհում Նրա արքայության հաստատման: Չէ՞ որ Զրիստոս հավաստում է. «Աստծո ար-
քայությունը դրսից պեսանելի կերպով չի գալիս... որովհետև ասեա Աստծո արքայությունը
ներսում, ձեր մեջ է» (Ղուկ. ԺԷ 20-21): Միայն այսպես կարող ենք, որպես Եկեղեցի, լինել
Աստծո փրկագործության միջոցը:

Միեկի հավաքացյալներ, Անդամալույծի բժշկության պատմական իրողությունն ուսա-
նելի է նաև մեր իսկ հոգիների բժշկության համար:

Մարմնով անդամալույծ այս մարդն այսօրվա կյանքում մեր մեղքերով անդամալույծ հո-
գիների մանրակերպն է: Զրկված էր մարմնի որոշ անդամների կենսունակությունից, մենք էլ
զրկված ենք հոգու որոշ առաքիլություններից, զրկված էր քայլելու կարողությունից, մենք էլ
երբեմն զրկված ենք լինում դեպի Աստված գնալու ունակությունից: Դժբախտ էր, որովհետև
զրկված էր ուժակալությունից, մենք էլ դժբախտ ենք, որովհետև կտրված ենք մեր գործու-
թյան ակնադրությունից: Սակայն անհույս չէր, այլ հավատում էր: Մենք էլ անհույս չենք, որով-
հետև հավատ ու սեր ունենք Աստծո և մեր նմանի հանդեպ:

Անդամալույծի մերձավորները չսպասեցին Զրիստոսի գալուն, այլ՝ արհամարհելով բո-
լոր դժվարություններն ու փակուղիները, իրենք եկան՝ հիվանդին հանձնելու Տիտոսի խնամ-
քին: Մենք ևս չսպասենք ինչ-որ փրկության, այլ մեր հոգիները հանձնենք Աստծո խնամ-
քին, չէ՞ որ Զրիստոս այսպես է, տանը, այս սրբավայրում և իր սրբաբար գործությունն է փո-
խանցում բոլոր նրանց, ովքեր ծնկադրեալ աղոթում են իրենց և իրենց մերձավորների անդա-
մալույծ հոգիների համար. և ով հավատում է, լսում է. «Որդավ, քո մեղքերը քեզ ներված
են... վեր կաց, գնա՛ քո տուն»:

**Տ. ՆԱՐԵԿ ԱՔԵՂԱ ՄՎԱԳՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՇՈՂԱԿԱԹ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(13 օգոստոսի 2005 թ.)

*«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի Քո ւսնալո՛ւ
պահեաւ...»:*

*«Երկնաւոր Թագաւոր Քո եկեղեցին ւսնալո՛ւ
պահիր...»:*

(Շարական)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Տօգոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ և բարեպաշտ քույրեր և եղբայրներ, այսօր մեզ համար համագ-
գային տոն է: Այսօր ազգովին կանգնած ենք աստվածային ու հրաշափառ տեսիլքի առջև,
երբ Աստծո Միածին Որդին իջավ Հայաստան աշխարհ և ոսկե մուրճով հարվածեց սան-
դարամերի մեկյանին ու հաստատեց հայոց եղևոր ինքնությունը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմի-
ածինը:

Աստվածորդու իջման այս տոնը կապվում է Սուրբ Գրիգոր Լասավորչի տեսիլքի հետ,
որի մասին Ագաթանգեղոսն այսպես է գրում. «Գիշերվա կեսին հանկարծակի սաստիկ
ծայն եղավ, որոտման թնդուն: Բացվեց երկնքի հաստատության խորանաշեն ծածկը և
...տեսա մարդկային մի ահավոր կերպարանք, բարձր ու ահեղ, որն առջևից էր ընթանում և
վերևից մինչև ներքև վայրէջքի առաջապան էր: Նա ձեռքին ուներ ոսկե մի մեծ մուրճ, և բո-
լորը Նրա երևից էին գալիս: Ինքը գալիս էր սլանալով, խոյանալով արագաթև արծվի նմա-
նությամբ ու իջավ հասավ մինչև երկրի հատակը, քաղաքի մեջտեղը, խփեց լայնատարած
գետին, որից մեծ ու անչափ թնդուններ հնչեցին անդունդների սանդարամետից»:

Ըստ տեսիլքի՝ երկնքի հաստատաշեն խորանի բացվելը նշանակում է՝ Աստծո մարդա-
սիրության հայտնումը երկրայիններին: Մեծ թնդունը նշանակում է, որ աստվածային
ողորմության անձրևը վերստին ջրովում է մարդկանց վրա: Լույսի սաստիկ եեղումը բար-
ձունքից, որը լցնում է ամբողջ երկիրը, նշանակում է՝ Լույսի քարոզությունը և Ավետարանի
տարածումը երկրավորների մեջ: Իսկ լուսեղեն գորքը, որ իջնում է լույսի հետ միասին, երևաց
ի պարիվ նահապտակների, նաև մարդկանց խրախուսելու ու մեզ հետ լինելու եամար:

Իսկ ահավոր ու շքեղ Այրը, Ով գնում էր լույսի առջևից և Իր ձեռքի ոսկի մուրճով հար-
վածեց սանդարամետին, Աստծո Տեսչությունն է, Ում հայացքից դղրդում է երկիրը և ան-
դունդներում սուզվում են սալանայի ողջ մուրազնեղերը: Երկրի հեջելը նշանակում է՝
մարդկանց հնազանդությունը Կենաց խոսքի քարոզությանը:

Եվ ապա Տերը Գրիգորին հրամայում է ցույց տված տեղում Աստծո անվան համար տա-
ճար կառուցել:

յունից: Քրիստոս երանց համար եկավ, և եկեղեցին էլ նրանց համար կա: Եկեղեցու սրբության այս գործնական հանգամանքի դրական փաստերը կարող ենք գտնել այն սրբակյաց անձերի մոտ, ովքեր դարերի ընթացքում և մինչև այսօր Եկեղեցու փառքի լուսաշող պսակն են կազմում:

Եկեղեցին Ընդհանրական է կոչվում դարձյալ նրա համար, որ Քրիստոս իր մեջ ունի համայն մարդկությունը: Եկեղեցին կոչվում է նաև կաթողիկոս համաժողով, որովհետև Սրբադատ Նոգին լուսարար մկրտությամբ ավագանից երկնեց Աստծուն ժառանգներ և նրանց հնազանդությամբ մի պնդում ժողովեց:

Եկեղեցին նաև Առաքելական ենք անվանում գլխավոր երկու իմաստներով. առաջին՝ առաքյալներից է սկիզբ առել իր ծագումը, և երկրորդ՝ առաքյալների հավատքի և ավանդության ժառանգորդն է այն:

Եկեղեցին նաև երկինք է երկրի վրա, որովհետև Աստված մարդացավ, Երկնավորը դարձավ երկրավոր, և մենք, որ մի ժամանակ հեռացած էինք Աստծուց, Քրիստոսի Արյամբ եղանք մերձավորներ: Քանի որ մարդուն Աստծուց մեղքն է բաժանում, Տերն Հր խաչով քանդեց Աստծո և մարդկանց միջև եղող այդ միջնորդը, վերացրեց թշնամությունը, մարդուն Աստծո հետ հաշտեցնելով խաղաղություն հաստատեց և մեզ արտոնություն տվեց Աստծուն հայր կոչել:

Սիրելի հավատացյալներ, որպես հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու անդամներ և հայ ժողովրդի գավակներ, հավատարիմ մնանք մեր արմատներին և մեր Մայր Եկեղեցին անշարժ պահենք մեր կենցաղավարությամբ ու մեր բարի գործերով և մեկ անգամ ևս միասին աղոթենք Աստծուն մեր Ս. Եկեղեցու անսասանության և հաստատության համար՝ ասելով. «Թագաւոր երկնաւոր զեկեղեցի -Քո անշարժ պահեա...»:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեւանս. ամէն»:

**Տ. ԱԴԱՄ ՔԱՎԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՆԻ ՄԵՌԵԼՈՑԻՆ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(15 օգոստոսի 2005 թ.)

*«Կա ծնվելու ժամանակը և կա մեռնելու
ժամանակը»:*

(Ժող. Գ 2)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացյալներ, անցյալ շաբաթ ղաաքի հնգօրյա շրջան էր, կիրակի օրը՝ Մուրբ Աստվածածնի Վերափոխման փոնը, իսկ այսօր՝ մեռելոց: Ուրախ փոնից հետո մեռելոցը մեզ կադծիւ հիշեցնում է, որ այս կյանքում ուրախություն ու փխրություն այսպես լի-նում են կողք կողքի, իսկ այն, որ Եկեղեցին կարգել է ամեն անգամ պահեցողությամբ պար-րասպիւղ եկեղեցական մեծ փոնակափարության, մեզ հիշեցնում է, որ այսպես պահեցողու-թյամբ, մեղքերի համար գղջալով ու ապաշխարությամբ պիտի պարքսարվենք նաև հան-դերձյալ կյանքին:

Պահեցողությանն ու մահվանն առնչվող մի խրափական և հեղաքրքիր պարմություն կա Հին Արականում: Դավիթ թագավորի նորածին որդին մահամեծ էր: Եվ Դավիթը մանկան համար աղաչեց Աստծուն, ծոմ պահեց ու գիշերը գեղնին քնեց: Պալատականները ելան-գնացին նրա մոտ, որ նրան գեղնից բարձրացնեն, բայց նա չուզեց վեր կենալ և նրանց հետ հաց չկերավ: Յոթերորդ օրը, երբ մանուկը մեռավ, պալատականները վախենում էին Դավիթին հայրենի, որովհետև ասում էին. «Քանի դեռ մանուկը կենդանի էր, այսպես խիստ էր, իսկ հիմա ի՞նչ կանի, եթե ասենք՝ մեռավ»:

Դավիթը փեսնելով, որ պալատականները փսիսում են և հասկանալով, որ մանուկը մահացել է, ասաց պալատականներին. «Մի՞թե մանուկը մեռավ»: Նրանք ասացին. «Մե-ռավ»: Եվ Դավիթը գեղնից վեր կացավ, լվացվեց, օծվեց, փոխեց իր զգեստները, մտավ Աստծո փոնն ու երկրպագեց Նրան: Ապա նա իր փունը մտավ և ուզեց հաց ուտել: Պալա-տականները նրան ասացին. «Այս ի՞նչ արեցիր մանկան համար, քանի նա կենդանի էր, ծոմ էիր պահում, լալիս ու փանջվում, իսկ երբ մանուկը մեռավ, վեր կացար, կերար ու խմեցիր»: Եվ Դավիթն ասաց. «Քանի մանուկը կենդանի էր, ծոմ էի պահում ու լալիս, որովհետև մտածում էի. «Ո՞վ գիտի, գուցե Տերը ողորմի և մանուկն ապրի»: Հիմա, որ մանուկը մեռավ, ես ինչո՞ր ծոմ պահեմ, մի՞թե կարող եմ նրան երբ կյանքի կոչել: Ես եմ նրա մոտ գնալու, իսկ նա ինձ մոտ չի վերադառնա»:

Ահա այսպիսի իմաստուն խրատ է փալիս մեզ աստվածաշնչյան այս պարմությունը: Սակայն եթե այդպես է, ուրեմն մենք ի՞նչ անենք, այլևս չլացնե՞ք մեր մահացած սիրելիների համար. չէ՞ որ նույնիսկ Քրիստոս Ինքը արտասովեց Իր սիրելի Ղազարոսի համար: Կամ

Աստվածաշնչում կարդալով հարության մասին՝ չվախենանք մահից. չէ՞ որ անգամ Ջրիստոս Ինքը որպես մարդ վախեցավ՝ Իր Հորը ասելով. հետագրու այս բաժակը ինձանից: Կամ խնդրենք Աստծուն, որ երկար կյանք փա մեզ. բայց Աստված անգամ Իր սիրելի Որդուն երկարամյա երկրային կյանք չընտրեց, մե՛զ արդյոք պիտի շնորհի ձերության երջանկությունը, մե՛զ, որ Ջրիստոսի անմեղության համեմատ ծանրաբեռնված ենք մեղքերով և բարձրաձայնելու համար ամոթալի ահավոր հանցանքներով:

Այս հարցերն էին հավանաբար հուզում նաև եկեղեցական մեր Սուրբ Հայրերից Սուրբ Հովհան Ոսկեբերանին, ով այս մասին մարտելով՝ մեզ ասում է. «Կյանքը Աստված է փալիս: Ու երբ Աստված Իր փածն է առնում, ոչ ոք չի կարող Նրան մեղադրել, որովհետև Իրենն է և իշխանություն ունի: Երբ մեզ պարտքով փող են փալիս, շնորհակալություն ենք հայտնում այն ժամանակահատվածի համար, որ փալիս են, և չենք մեղադրում այն բանի համար, որ վերցնում են մեզանից իրենց սեփականությունը: Մի՞թե պիտի մեղադրենք Աստծուն, որ վերցնում է Իր սեփականությունը»,- ասում է Հովհան Ոսկեբերանը:

Այսպես նաև Հորը չմեղադրեց Աստծուն իր գավակների անժամանակ մահվան համար: Իսկ՝ բոլոր մարդկանց աչքին իրենց սիրելիների մահը միշտ էլ անժամանակ է երևում, ու վշտացած սիրտը չի սփռվում միայն մեկ պատրասխանով: Եվ ահա մեզ մխիթարելու է գալիս նաև Սուրբ Գրիգոր Տաթևացին իր իմաստուն խոսքերով. «Ունանք Աստված թույլ է փալիս՝ վաղաժամ մեռնել՝ ազատելով նրանց հեկազա կյանքի ահավոր ընթացքից կամ դժոխքի դադապարտող դեպքերից»:

Նգրևաբար, ոճանցից Աստված նրանց իսկ օգտի համար վերցնում է այս կյանքը՝ փալով հանդերձալ կյանքը, վերցնում է ժամանակավորը՝ փալով հավիտենականը: Մակայն ահա անօրեններ կան, որ գովում են և հափշտակում, հանիրավի ծնծում են և սպանում ու դեռ ապրում են, և ահա կյանքեր, որոնք հանգչում են կիսավատ մոմերի պես: Շատ ամբարիշտների Աստված դեռ թույլ է փալիս երկրի վրա մնալ հիմնավոր պատճառներով: Նախ՝ չարերից երբեմն բարի մարդիկ են ծնվում, և բարի գավակների համար Աստված պահպանում է չար ծնողներին: Ինչպես որ Աստծո հրեշտակն ասաց Սուրբ Գրիգոր Լուսավորչի շառավիղներից Հուսիկ Կաթողիկոսին նրա չար և ամբարտապան որդիների մասին, «Հուսիկ, որդի Գրիգորի, մի՛ երկնջիր, ահա ըո գավակներից այլ գավակներ պիտի ծնվեն, որոնք Հայաստան աշխարհի համար հոգևոր իմաստության աղբյուրներ կլինեն, որոնք Եկեղեցու սյուներ կլինեն, հավաքի հիմքեր, Ջրիստոսի պաշտոնյաներ»: Եվ գիտենք, որ Հուսիկի ամբարիշտ որդի Աբանագինեսից ծնվեց Սուրբ Ներսես Կաթողիկոսը, ով նոր լուսավորություն բերեց Հայաստան աշխարհին:

Դարձյալ չարերին Աստված երբեմն չի սատակեցնում, որովհետև նրանց ձեռքով հոգևոր բարիք է լինում, ինչպես քրիստոնեության վաղ շրջանում չար բռնավորները նեղում էին քրիստոնյաներին, իսկ նրանք համբերելով՝ բազմացնում էին իրենց վարձն ու պսակը: Եվ մեկ այլ պատճառն այն է, որ Աստված չի կամենում մեղավորի մահը, այլ նրա դարձի գալը և ապրելը, ինչպես ասվում է Սուրբ Գրքում, որպեսզի բազում հանցանքներից հեքո ապաշխարի և չզրկվի Երկնքի Արքայությունից, ինչպես մեր Սուրբ Տրդատ թագավորը, ով սրբերի չարչարեց ու նահապտակել փվեց, բայց վերջում դարձավ հեզ և խոնարհ գառ:

[illegible]

«Կա ծնվելու ժամանակը և մեռնելու ժամանակը»,- ասում է աստվածաշնչյան իմաստունը: Եկեղեցին հոգևոր ծննդյան ու կյանքի վայր է, իսկ գերեզմանապուրը՝ մեռելավայր: Եվ ծննդյան ու մահվան նույն հերթականությամբ պետք է լինի նաև հաճախելը նախ եկեղեցի, ուր կյանքն է և աղոթքը ննջեցյալների կենդանի հոգիների համար, և ապա՝ գերեզմաններ, որտեղ Զրիստոսի նկարագրմամբ «դրսից գեղեցիկ են երևում, մինչ ներսից լի են մեռելների ոսկորներով և ամենայն ապականությամբ» (Մատթ. ԻԳ: 27):

Ղազարոսի մահվան առիթով Քրիստոս արտասովեց: Մակայն Նա լալիս էր ոչ միայն Ղազարոսի համար, այլև, ինչպես ասում է Սուրբ Եփրեմ Ասորին, Տերը նախ և առաջ արտասվում էր այն բոլոր մարդկանց համար, ովքեր մարմնով ապրում են, բայց հոգեպես մեռած են և հավիտենապես հոգևոր մահվան մեջ, այսինքն՝ Աստծուց հեռու: Մենք էլ այսօր Քրիստոսի նմանողությամբ աղոթենք և ներքին կամ արտաքին արդասուքներով լաց լինենք ոչ միայն մեր ննջեցյալների, այլև բոլոր նրանց համար, ովքեր այսօր, ցավոք սրտի, իրենց սխալ ընթացքով մեզ հասկացնում են, թե ինչ նկատի ունեն Քրիստոս, երբ ասում էր՝ թող մեռելները թաղեն իրենց մեռելներին (Մատթ. Ը 22, Ղուկ. Թ 60): Եվ ինչպես որ Դավիթ թագավորը իր մանկան մահից հետո մորավ Աստծո Տուն ու երկրպագեց Նրան, մենք էլ նրա բարի օրինակին հետևելով և աղոեն նոր իմաստությամբ խորհելով, որ կա՝ ժամանակը ծնվելու և ժամանակ՝ մեռնելու, ժամանակավոր վիշտը արգելք չդարձնենք աստվածաշնորհի՝ միշտ փառավորելով Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

Բա

ՍՐԲՈՅՆ ԹԷՈՂՈՏՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՆԿԻՒԱՅԻՈՅ Ի ԾՆՈՒՆԴ ՓՐԿՉԻՆ, ԶՈՐ ԸՆԹԵՐՑԱՆ ԱՌԱՋԻ ԺՈՂՈՎՈՅՆ ԵՓԵՍՈՍԻ՝

Պայծառ առաջիկա տառիս ստորադրութիւն՝ գիասարակաց փրկութիւնն՝ մարդկան բերելով: Պայծառ եւ առաջիկա ժողովս գոհացողաբար ընդունելով զճնորհն, եւ տունալ լինի առատապէս այնոցիկ, որք գոհութեամբ ընդունին զնա: Քանզի այնչափ իսկ որչափ ձիրս՝ շնորհի որչափ եւ մեծութիւն գոհութեան բերողաց զճնորհէն³, որպէս յորժամ ոք⁴ ձիրս⁵ ինչ առեալ գոհանայ զտուողէն, քանզի ոչ ինչ ետուր փոխանակ յաղագս⁶ որոց առերն միայն, այլ եւ պարտապան եւս քաղմաց արարել զԱրարիչն քեզ⁷: Արդ, գոհութեամբ ընկալարուք զճնորհսն՝ պայծառացուցանելով մեզ զտաւմախսութիւնս զայս: Իսկ՝ ստորադրութիւն տառիս եւ երեսուն Աստուծոյ առ մարդիկ, եկումն միշտ առ ընթեր գոյին¹⁰ ի վերայ կացումն զամենայն լցուցալոյ, ի վերայ տեսութիւն զամենայն տեսողի- «Թիւրսն եկն եւ իւրքն զՆա ոչ ընկալան մամաւանդ եթէ յաշխարհի՝¹¹ էր- աւել, եւ աշխարհ Նովաւ եղեւ¹², եւ աշխարհ զՆա ոչ ծանեաւ»¹⁴, այլ ոչ եթէ¹³ ի մարդկան¹⁴ դատախազութիւն¹⁵ ինչ էր¹⁶ այս անգիտութիւնս, քանզի ի ձեռն Աստուածութեանն բնութեան անհասանելի մարդկային¹⁷ խորհրդոց է Աստուած, քանզի ոչ բնատրեցան զնա տեսանել՝ միտք մարդկայինը, սակս¹⁸, զի փախչի ի մարդկային մտաց²⁰ աստուածային բնութիւն՝ բարձրագոյն քան զմերս է խորհուրդ: Ապա ուրեմն տուծիմք ի լաւագոյն բնութեանէն՝ ոչ²¹ աստուածածանալոք զոյ²², որպէսզի մի՛ եղիցի, առնու բնութիւն տեսանելի անտեսանելին, ընդունի մարմին շաւշափելի, որ ոչն ընթոցի շաւշափմամբ, անտեսանելին Աստուած տեսանելի լինի, Բանն շաւշափի, Միածին²³ Որդին զանխլացի ի գիտութեանէ մարդկան զերազանցեալն քան զբնութիւն մարդկան²⁴: Եւ մի՛ կարծեր ատար ինչ զոյ զառ ի մէնջ ծնանիւն Որդւոյ, քանզի վաղ ուրեմն լինիւր մախախտկումն Աստուծոյ զալստեանն միշտ մարդկային արիմակաւք երեւեալ²⁵ ծանաթացաւ միւրոց պիտանացեալ կարողաց առ ի մէնջ տեսանիլ²⁶: Ապա թէ ոչ եկեսցէ ի մէջ հրեայն եւ առ ընթեր կայցէ²⁷, որ անհաւատայ²⁸ Աստուծոյ երեսմանն երեւելոցն մարդկան մարդկային բնութեամբն²⁹ ասացէ ինչ՝ զհա՛րդ ետես Մովսէս զԱստուած, զանտեսանելի բնութիւնն ետես արդեա՞ք, ոչ³⁰ երբէք, քանզի անհասանելի է այս մարդկային խորհրդոց: Եւ արդ՝³¹ զհա՛րդ ետես, աղեւ, ասա որպէ՛ս հուր լուցանելով ի մորեմուքն եւ զմորեմնն ոչ կիզելով: Արդ, է՛ր սակս անհաւատ լինի ծնիցելոյն ի Կուսէ եւ զկուսութիւնն

* Ակիլլոր տնն «Էքմիաճիկս», 2005, ե:

A = ՄՄ, ձև. 1525, ք. 58բ-65ա:

B = ՄՄ, ձև. 7729, ք. 142ա-147ա:

C = ՄՄ, ձև. 993, ք. 41ա-43բ

1* Յովհ. Ա 10-11:

32 Է-Ը

ոչ ապականեալ. եւ կամ ընդէ՞ր դու³² լսելով. թէ ի մորեմնոյն³³ բարբառի եւ ասէ Աստուած³⁴ ցՄովսէս. «Եւ եմ Աստուած Աբրահամոյ, Աստուած Սահակայ եւ Աստուած Յակովբայ»³⁵։ Եւ եթէ³⁵ անկեալ Մովսէս երկիր պազանէր³⁶ հաստատաւ ոչ գտեսանելի հուրն զմտաւ ածե-
լու. այլ՝ զբարբառեալն Աստուած։ Իսկ յորժամ³⁷ զկուսական արգանդն լիշեմ³⁷ գարշիս եւ
ի բաց դառնաս. ո՞ր է գծմագոյն, աղէ ասա, մորեմնի՞ն եթէ՞ կուսական արգանդն³⁸ սուրբ ի
մեղսայից կրից. ո՞չ գիտես, եթէ առաջիքն խոկումն եմ նորագունիցս եւ այժմ³⁹ եղելոցս.
քանզի մախատապարտութիւն⁴⁰ խորհուրդն ի ձեռն հոցոյն⁴¹։ Վասն այսորիկ մորեմնի առ լուց-
եալ լինի. հուր երևի, եւ որ ինչ հրոյ է՝ ոչ ազդէ⁴² եւ ոչ խոշտանգէ. իսկ ապա եւ ի⁴³ մորեմ-
նոյն ո՞չ տեսանես զկոյսն։ Արդե՞ք եւ ոչ ի հոցումն տեսանես⁴⁴ զմարդասիրութիւն եկաղին.
որոշաղճ՝ յորոշելոյսն եւ որոշումն ոչ լինի, դատաւորն ի դատապարտութեանն⁴⁵ եւ խոշ-
տանգումն ոչ ուրեք է, դատաւորն ի վերայ կացեալ, սակայն ոչ ատելով, այլ՝ ուսուցանե-
լով, ոչ դատապարտելով, այլ բռնկելով։ Տեսանե՞ս զհարդ հուրն այն մեզ աստանաւոր⁴⁶
մարդասիրութիւն զգացու, մի⁴⁷ սքանչանար թէ եւ ի ձեռն կուսական արգանդի⁴⁸ Աստուած
գոյով ծնանի, քանզի ոչ վարկանի Աստուած թշնաման զայն, որ առիթ փրկութեան մարդ-
կան լինի։ Բայց դու մի՞ ինչ այնպէս գծում⁴⁹ զԱստուծոյն կարծեր զբնութիւն⁵⁰, որպէս թէ
հասանելի գոյ եւ լինել երբեք ի թշնամանաց⁵¹։ Բունդի ոչ ինչ գծում, զոր վասն մեր ետո՞⁵²,
թշնամանէ զբնութիւնն զայն, բայց ընդանացուցանէ զնուազն⁵³ մեր, որպէսզի կեցուցէ
զբնութիւն մեր⁵⁴։ Արդ, յորժամ ոչ⁵⁵ գծումքն մեր թշնամանն զերանելոյն Աստուծոյ բնու-
թիւն, բայց եւ⁵⁶ փրկութիւն եւս մարդկան յարդարէ, զիա՞րդ ասես զպատճառս փրկութեան
մերոյ առիթ թշնամանաց Աստուծոյ լինել⁵⁷։

Արդ, երևեցաւ այսպար⁵⁸ Աստուած ի ձեռն Կուսի, եւ Կոյսն մնաց Կոյս եւ Մայր եղեւ, քանզի անսպականութեան առթողն ապականութիւն ոչ գործէ⁵⁹։ Արարիչն անմահութեան ոչ ինչ ապականեաց։

ոչ ինչ ապականեաց։
Եւ վասն զի⁶⁰ Փոտիճոս սոսկ մարդ ասէ՝ զծնիցեալն ոչ ասելով Աստուած⁶¹ զոյ զծնեալն⁶² եւ զառ ի Կուսէ⁶³ յառաջ եկեալ մարդն ստորադրէ զՆա քաժանել յԱստուծոյ։ Ասասցէ ինձ այժմ՝ զիա՞րդ մարդկային բնութիւն ի ձեռն կուսական արգանդի ծնանելով եւ զկուսութիւն արգանդին պահեաց աճապական, քանզի ոչ ուրուք մարդոյ կոյս մնաց Մայրն։ Տեսանե՞ս՝ զիարդ վասն մտածութեանն, որ յաղագս⁶⁴ ձնիցելոյն, տա ինձ իմանալ⁶⁵ զծնեցեալն, զի եթէ ըստ մեզ ծնալ⁶⁶ մարդ էր սոսկ, իսկ եթէ կոյս պահեաց զՄայրն՝ Աստուած ծնեալ⁶⁷ քարեխորհիցն⁶⁸ ճանաչիւր⁶⁹։ Քանզի Աստուած եկն յաշխարհ ոչ տեղի ի տեղուջէ փոխեալ⁷⁰, այլ զիմս բնութիւն զիրեաւ եղեալ⁷¹, եւ որպէս ասացի, երեսել կամեալով, որ բնութեամբն է անտեսանելի։ Ապա ուրեմն ոչ էառ սկիզբն լինելոյ Աստուած ի ծննդեմէն, այլ՝ երեսելոյ⁷² մարդ։ Եւ վասն զի Աստուած զոյով աճապարեաց մարդ լինել ըստ մեզ⁷³ վասն մարդասիրութեան նորա⁷⁴ վասն մեր, զի մեք զդատաւորն^{74ա} որպէս զազգակից զմեք փարեցուսցուք⁷⁵, զի ունին⁷⁶ քաջակերութիւն⁷⁷, որք յիրեանց⁷⁸ ուղղութեանց ոչ ունին⁷⁹ համարձակութիւն։ Քանզի ի բեմն անեալք, որք յիրեանց առաքինութիւն⁸⁰ ոչ համարձակին⁸¹ որպէս ի յիրեանց ի յաւուսկ յազգակցէ շնորհեցին զհամարձակութիւն⁸¹։

Եւ արդ, զիմչ զայ Աստուած իբրեւ ⁸² զմարդ ոչ ի տեղի ի տեղւոջէ փոփոխելով, այլ զան-

տեսանելի⁸³ բնութիւնն ցուցանելով տեսանելի⁸⁴, եւ տեսանել որպէս մարդ եւ ազգակից մարդկան երեսնալ: Որպէս եւ⁸⁵ Աւետարանիչն քարոզէր ասելով. «Եւ Բանն մարմին եղեւ»⁸⁶ Բանն մարդ լինել: Հարցանես զյեղանակս Աստուծոյ սքանչելեացն. եթէ երթալի էր մեզ յանձնաւորութիւն⁸⁷ բանիդ՝ ոչ էր սքանչելի, այլ ըստ բնութեան իրք⁸⁸: Իսկ եթէ սքանչելի է⁸⁹ եւ նշան⁹⁰ եղեալն՝ թողացոյ՝⁹¹ զբանդ սքանչելարարի՝ Տեառն: Քանզի եղեւ կամիմ, զի գիտես եւ յեղելոյն զշահն հաւատով շահիլ⁹², բայց եթէ որպէս եղեւ⁹⁴ ազդեցաւորին լքեալ թողջիր⁹⁵: Ջի եթէ դու բժշկին հաւատաս՝ հրամայողին քեզ, եւ ոչ խուզես զյեղանակ բժշկութեանն⁹⁶ հաւատալով արուեստաւորին⁹⁷ զքոյն փրկութիւնդ: Այլ եւ ոչ այլ ոք⁹⁸ ամարուեստ զոլով զարուեստաւորին, խուզե⁹⁹ զյեղանակ, այլ ճանաչէ միայն զեղեալն, եւ զյեղանակս իրացն¹⁰⁰ արուեստին լքեալ թողու: Իսկ դու զբոլորիցն Աստուծոյ զսքանչելագործութիւնս խնդրես խուզել բանիք, այսինքն՝ զպատճառս որպէս պէտք ունեցով բանիցն, զի գնոյնս եւ¹⁰¹ դու սքանչելագործեսցես Աստուծոյ¹⁰²: Այլ, զոր ասացի¹⁰³, եւ¹⁰⁴ այժմ ասեմ. իրաց ասաց պատճառն¹⁰⁵ գիտեմք. այսորիկ բնութիւնն¹⁰⁶ ոչ սքանչելիք են եւ ոչ նշան: Այսպիսի ինչ է, զոր ասեմս. շինաւոյն շինե¹⁰⁷ տուն. զբանն գիտեմք եւ զշարադրեցեալս միւսն¹⁰⁸, եւ որովհետեւ գիտեմք՝ չեն սքանչելիք: Իսկ զաստուածային սքանչելագործութեանն տեսանեմք միայն¹⁰⁹ զեղեալն եւ ոչ ներգործեալ գոմք բովանդակ վասն անկարութեան եւ անարուստութեան¹¹⁰: Եւ ստեղծ ի ծնէ կորին աչս ի կառոյ Մենածինն. այս ի վեր է, քան զմեր բան¹¹¹, եւ սքանչելիք կոչին, քանզի¹¹² մարդկային միտք¹¹³ եւ խորհուրդք ոչ կարեն որոնել¹¹⁴: Իսկ նշան կոչի եղեալն ի¹¹⁵ վեր քան զսովորական բնութիւն: Եւ զի եղեւ, գիտեմք: Իսկ ասել զյեղանակն ոչ ունինք, քանզի ի կառոյ խեցի եւ աղիւս¹¹⁶ միւսաւորի, այլ ոչ եթէ աչաց բարետոհմութիւն ստեղծանի, ոչ թաղանթք մուրքք լինին, ոչ տեսութեան զամազանութիւն բաղկանայ, ոչ պարբերութեան ստուգութիւն այնչափ քաշագոյնութեամբ¹¹⁷ ճախարակի¹¹⁸: Կաւ ոչ բնաւորեցաւ ի յաչս փոփոխիլ¹¹⁹, զոր եւ ոչ բնութիւն հողոյ ընդունի, քանզի եւ¹²⁰ ոչ բնաւորեցաւ ընդունել զտեսական¹²¹: Իսկ զայն ընկալաւ զսքանչելագործողին¹²² յիւր կամսն քարշեալ¹²³ զբնութիւնն, եւ ոչ իւր ծառայեալ Բանի բնութեանն:

Արդ, մի՛ երբեք ի տկարութիւն մարդկանոյս¹²⁴ անկանիւր բնութեան, եւ մի՛ ասեր թէ¹²⁵ զիա՞րդ Աստուած մարդ եղեւ, եւ զիա՞րդ եւ Աստուած Բանն մարմին եղեալ¹²⁶ հաւատայ, իսկ զյեղանակ մորին գիտել¹²⁷ Արարողին տուր: Իսկ եթէ կամիս եւ ի ցուցակէ հաւատաւեսցուցուր¹²⁸ քեզ զառաջիկայս, ես ցուցից քեզ¹²⁹ զիա՞րդ անմարմինն մարմնանայ, անտեսանելին տեսանի, անշառափելին շառափի^{129ա} ոչ իւրով¹³⁰ բնութեամբն փոխարկեալ, այլ քեւ¹³¹ առեալ տեսանելի եւ շառափելի: Բանս¹³² այս մարդկային զառաջաբերական ասեմ, որով միմեանց հաղորդիմք ի պէտս եւ զստածութիւնս միմեանց մեկնեմք: Բան է ոչ տեսանելի, այլ եւ ոչ շառափելի ձեռամբ, բայց հնչող միայն լսելութեան, այլ որովհետեւ զառաջաբերական բան ցուցակ յանձնաւորին Աստուծոյ Բանի¹³³ քերեմ, մի՛ կարծեր զինքն առաջաբերական ասել եւ¹³⁴ զԱստուծոյ Բանն ի քաց տար, քանզի Բան ասի Մենածինն՝ մեկնելով աստուածային Գիրք զանախտութիւն ծննդեան մորայ: Վասն զի եւ միտք մարդոյ անախտաբար ծնանին¹³⁵: Եւ է ուրեք, ուր Բան անուն է, եւ այլուր դարձեալ ճա-

յորժամ տակալից¹⁵⁶ ձեռն տպատրէր զգիրն, այլ այն, ինչ ծնեալ գոյր ի մտացո: Իսկ զերեւելոյն սկզբն ի ձեռանն ընկալաւ¹⁵⁷, որ զգիրն տպատրեաց: Եւ արդ, վասն զի ցուցակդ հանդերձ արիճակատ հաւաստի¹⁵⁸, եւ ծանաթագոյն քեզ¹⁵⁹ ցուցաւ, բեր այսուհետեւ յարիճեացոյզ զարիճակն¹⁶⁰ առ նախատիպն. աստ միտք անդ զՀայր իմացիր, աստ բան ի մտաց զիտես ծնեալ, իսկ անդ զոյեղուտ¹⁶¹ եւ անծնատր Բան իմացիր առ ի Հարե ծնցեալ¹⁶²: Աստ ձեռն տեսանես ի ձեռն գրոյ ծնեալ¹⁶³ բան, իսկ անդ կոյս իմացիր¹⁶⁴ ի ձեռն մարմնոյ երկնեալ զԲանն¹⁶⁵ ոչ սկիզբն տրեալ¹⁶⁵ Աստուածութեանն ի ձեռն Աստուածութեանն. քաւ լիցի, այլ երեւելոյն զԱստուած ի մարդկան մարդ եղեալ¹⁶⁶: Եւ¹⁶⁷ քանզի եղեւ որպիսի ինչ ես եմ¹⁶⁸, կարեւորաբար ծնեալ¹⁶⁹ որպէս եսս¹⁷⁰ կարեւորաբար ըստ¹⁷¹ բնութեանս իմոյ, եւ զծնունդն իմ¹⁷² էառ, վասն այսորիկ եւ զծնունդն իւրացոյց Աստուածն Բանն: Եւ Մայր ողջունէր¹⁷³ զկոյսն, եւ ի ձեռն արգանդի եկն զարդարեցելոյ կուսութեամբն, քանզի ոչ ինչ, յորոց¹⁷⁴ ստեղծ Աստուած, գարշ համարի, վասն զի¹⁷⁵ ոչ ինչ¹⁷⁶ անարժան նմա յիւր¹⁷⁷ գործոցն եղեւ, այլ ամենայն ինչ բարի¹⁷⁸ յոյծ: Եթէ¹⁷⁹ այսուիկ տեսանեմք որպէս Ստեղծիչն ետես եղեալս. «Բանգի ետես, ասէ, Աստուած զամենայն, զոր արար, եւ ահա բարի են յոյծ»⁴: Անախտաբար տեսանեմք զամենայն ինչ աչաք, եւ եթէ որպէս զԱստուած տեսանեմք զնոսա յոյծ բարի: Հեռասահմանեա՞ ի քէն զախտս եւ ճանաչես զբարեւորութիւնս եղելոյն: Արդ, զի՞նչ սքանչելիք եթէ յիւրում տան եւ ի գործ տաղաւարեաց Աստուած: Իսկ դու արժանատրաբար համարիս բնակել յերկինս եւ անարժան նմա հաշտիւս զմարդն միայն. որոշեա զիրսն ոչ ճշմարտութեամբ, այլ՝ ախտիւ եւ ընտրութեամբ, քանզի զի՞նչ բարձրագոյն է՝ երկի՞ն եթէ՞ մարդ, զի՞նչ պատուականագոյն թոյն Աստուծոյ՝ արեգա՞կն եթէ՞ մարդ: Բանգի մի՞ ինչ զպայծառութիւնն տարեց ունիր, եւ մի վասն քաջագունութեանն նախընտրեք զբնութիւնն, եւ մի՞ ի վազելն շողիցն արեգակն զարհուրիր, եւ մի՞ զի՞ «ես միս եւ մորթ զգեցեալ եմ»⁵, ըստ աստուածայնոյն Յովբայ, այլ զբարեւորութիւնս բանականի անձինս դիտես: Տես զմարդոյն ստեղծումն եւ սքանչացիր ընդ կենդանին. միտս ունի, որ ամենայն կենդանեաց ունի եւ իշխել կարող գոյ, պէտս էառ սպասատրիչս իմաստութեան մտաց, գործարանս ամենարուեստից հաստիչս միայն ազատ եղեալս յամեն ստեղծեալսն յերկրի:

Տէր կամաց իւրոց զմարդն միայն ստեղծ Աստուած յերկրի: Ոչ տեսանես զարեգակն հարկատր ընթացս ընթացեալ, ոչ տեսանես միատեսակ զնորա բերումն. վասն է՞ր. վասն զի ոչ եղեւ իշխան կամաց իւրոց: Իսկ դու յառաջագայիս ազատ գործես, զոր ինչ կամիս. ոչ ունիս զհարկատրն առ ի մղել զքեզ բռնութեամբ, ազատ հոգսով կացուցար: Արեգակն ծառայէ կարեաց, իսկ մարդ ազատ է կամաք: Արդ, ո՞ր լաւագոյն է, ասա ինձ, ծառա՞յն եթէ՞ ազատն, որ ընդ լծով կարեա՞ցն է, եթէ՞ որ ազատն է յամենայն կարեաց: Արդ, ոչ ինչ սքանչելի եւ հրաշալիառ է, թէ ի մարդում տնտրի՞ւն Աստուած, զոր ի կոյսն իւր պատկեր ստեղծեալ համբուրեաց, քանզի զմարդոյն յաղագս յաւժարութիւն իսկոյն ի նախաւտանս լինելութեան եցոյց Աստուած հող առեալ՝ յերկրէ եւ տեղծեալ զնա պատկեր իւրոյ աստուա-

* Զիք ՆԱՇ:

4* Ծնեղ. Ա 31:

* Զիք ՆԱՇ (բայց՝ հեռասահման. ՆԱՇ, Բ, 88):

5* Թովր. Ժ 11:

ծուրեանցն հաստատեաց: Արդ, է՞ր սակս. զոր հանդերձեալ էր ստեղծմամբն պատուել, յայնպիսի գծում բնութեմէ ստեղծ. վասն է՞ր ոչ ի պայծառութեմէ արեգական առեալ արար զմարդն, այլ յերկրէ եւ հող զնա գոլով ստեղծու ի գետնակա՞ն եւ ի կոխան տարրերէն. ո՞յր զմարդն, այլ յերկրէ եւ հող զնա գոլով ստեղծու ի գետնակա՞ն եւ ի կոխան տարրերէն. ո՞յր վասն. կամի՞ս ուսանել, վասն զի. մինչ հանդերձեալն էր պատուել զնա պատկերան իւրով, գծում բնութիւն տայ մնա, որպէսզի գերազանցութիւն պատուոյն մի՞ վերացուցէ զնա ի մեծամտութիւն. զի յորժամ առաւել քան զբնութիւնն պատուեսցի ամփոփեսցի յիշե-լութեամբ բնութեանն եւ ծանցից զմեծութիւն բնութեանն եւ ոչ զարժանաւորութիւնն իւր. լութեամբ բնութեանն եւ ծանցից զմեծութիւն բնութեանն եւ ոչ զարժանաւորութիւնն իւր. այլ՝ զշնորհ ստացողից: Ապա ուրեմն եւ այս մարդասիրութիւն Ստեղծչին էր՝ պատկերին Աստուծոյ ունել յերկրէ զբնութիւն, քանզի գրաւ ունէր զբնութիւնն խոնարհամտութեանն: Աստուծոյ ունել յերկրէ զբնութիւն, քանզի գրաւ ունէր զբնութիւնն խոնարհամտութեանն: Ապա ուրեմն բարեւտոհմ կենդանի է մարդն, թէպէտ եւ վերջոյ թշնամանցեալ մտելովքն ի նա յախտիքն մի՞ տեսանէր զնա ի վիատութեանն, այլ յառաջ քան զյանցանել զյարիմաւ զթարեւտոհմութիւն պատկերին Աստուծոյ հաշուեալ: Արդ, զի՞ առաւելաբանես՞ զանկանց մոռացեալ զառաջին ստեղծումն նորա ոչ վարկամելով եւ ոչ զսկզբնային պատիւն, զոր դարձեալ ետ մնա Աստուած հանդերձ բազում պատուասիրութեամբ միացուցեալ ինքեան զհիւր պատկերին: Արդ, ոչ ինչ ապականացու Նորա մարդասիրութեանն եղեւ, քանզի ոչ եւն թշնամանք բարի Տեառն հաղորդութիւն առնել առ ծառային ծառայականաւքն յազուտ ծառային յաղագս գթալոյ ի նա: Քանզի ոչ այսոքիւք թշնամանի բարին, այլ որ էն նովիմք եւ ճանաչի: Եւ մի սքանչանար ընդ առաւելութիւն յովորութեան իրացն, քանզի եւ այժմ եթէ զքեզ ինքն տուց յարիցեսցես Աստուծոյ եւ ի քեզ բնակէ, թէպէտ եւ ոչ այնպէս որպէս ի Քրիստոսումն, քանզի «ի Քրիստոսի բնակէ ամենայն լրումն Աստուածութեանն մարմնա-պէս»^{6*}: Այլ, ո՞վ սքանչելեացս. ամենայն լրումն Աստուածութեանն ի միում մարմնաբար բնակէ եւ զամենայն լնու եւ բարեգործէ զարարածս՝ բոլորապէս գոլով ի միումն, եւ յարա-րածս ոչ որոշի: Եւ մի՞ երեւեսցի քեզ ասացեալդ անկարելի, քանզի եւ ես, որ այժմս առա-ջաբերեմ բան, սա ի միում է բան, եւ դարձեալ նոյն բան յամենեսին լինի, եւ զբոլոր բանն տարաւ յինքեան մինն եւ ի բազմութեմէն ոչ պարագրեցաւ բանն: Արդ, է իրք մի, որ լինի եւ ապականի եւ ի միում կարող փոյ բնակել բոլորապէս եւ յամենեսին՝ զի՞նչ սքանչելի քեզ երեւի, թէ Աստուած Բանն եւ ի միումն միատրեալ բնակեաց եւ յամենեսեան գտանի՞¹⁸⁰:

Արդ, թելադրութիւն այսաւրեան տաճախմբութեանս է լինելն Աստուծոյ մարդ՝ առե-լոյն¹⁸¹ զմարդկայինսս, զի տացէ զաստուածայինն ընտանեցուցանելոյն¹⁸² զկիրս, զի տա-ցէ զանախտութիւն անկելոյն ընդ մահուամբ, զի զանմահութիւն պարգեւեսցէ, որ¹⁸³ իւր ստացեալ արար¹⁸⁴ զմարդկային¹⁸⁵ կիրսն ոչ զհիւր բնութիւնն փոխարկեալ¹⁸⁶, այլ կամաւք¹⁸⁷ զայս¹⁸⁸ ընտանեցուցեալ, եւ յոյժ¹⁸⁹ իրաւաբար զայստակ արար, որովհետեւ ուշ եղ¹⁹⁰ կե-ցուցանել զմարդն: Արդ, վասն որո՞յ պատճառի իւր արար¹⁹¹ զմարդկային կիրս. վասն զի կամէր¹⁹² կրիւք զկիրս ի բաց բառեալ եւ մահուամբ զմահ խաւիանել եւ ի ձեռն համատե-տակաց զհամատեւանակն¹⁹³ ընդդիմագատեալ՝ ընտանեցոյն զխաչն, իւր արար¹⁹⁴ զապ-տակսն, յինքեան¹⁹⁵ արար զկապանսն¹⁹⁶. որպէսզի Աստուծոյ¹⁹⁷ կիրքն ընդդէմ կրից առ-

• Զիբ ՆԱՇ:

• Զիբ ՆԱՇ (բայց՝ առաւելարանութիւն. ՆԱՇ, Ա. 296):

6* Կողոս. Բ 9:

• Զիբ ՆԱՇ:

ցեց իշխանութիւն, քանզի¹⁹⁴ ոչ եթէ բնութիւնն Աստուծոյ վնասեցաւ, քանզի ոչ եթէ յայլ բնութիւն փոխարկեալ զինքն ընկալաւ զկիրսն, այլ զարութիւն առին կիրքն առ ի լնատուծոյ ընդդէմ¹⁹⁴ համատեხակացն կրից, ապա եւ մահն որպէս Աստուծոյ եղեալ խափանէ զմահ: Քանզի մեռեալ եղոյժ զգոտագութիւն մահու վասն զի Աստուած եւ մարդ էր²⁰⁰, զի ոչ եթէ²⁰¹ սոսկ մարդ խաչեցից հրեայքն, եւ ոչ եթէ զտեսանելի²⁰² միայն բեռեցիցն զբնութիւն, այլ մինչեւ որ ի մնայն Աստուած զյանդգնութիւնն մեղելոյ բնութեանն ընտանեցուցեալ զկիրսն: Եւ զի այս եւս եղիցի քեզ հաւաստի, ի սկզբան ասացեալ ցուցակն անցուք զբան: Կայց թագաւոր ոք բարբառելով բան ինչ եւ տպաւորելով զբան ի քարտիսի ուրեք եւ առաքելով ի քաղաքս զգեստաւորեալ քարտիսի եւ գրով զբանն՝ ազատութիւն շնորհել տպաւորեալ եւ կամ²⁰³ այլ ինչ պարգեւ թագաւորական կարատելոց բերել²⁰⁴: Արդ, զբանս զայս ի քարտիսին, որ իտաղիացոց բարբառտովն «սակր»²⁰⁵ ասի, ընկալցի ոք անհաւատ եւ անհաւան՝ քաղաքին²⁰⁶ թշնամի եւ թագաւորին ընդդիմամարտ²⁰⁷, եւ առեալ զքարտեւն պատահեցէ²⁰⁸: Արդ, զի՞նչ է²⁰⁹, որ պատահեցան աստանաւոր²¹⁰, ասա ինձ, քարտէսն միայն թէ՞ եւ բանն թագաւորական. զի թէ զքարտեւն միայն գոյր պատահեալ՝ դիրագին²¹¹ էր ապականեալն եւ անդատապարտ պատահաւն: Իսկ եթէ բանն թագաւորական ցեղաւ²¹², թէպէտ եւ հիմզ մանուցն²¹³ էր, ոչ եղիցի անպարտ, այլ զյետինն տացէ դատաստան, եւ խոշտանցի եւ ի մահ ածի ոչ որպէս թէ²¹⁴ զքարտեւն միայն պատահեալ²¹⁵, այլ որպէս թէ²¹⁶ զթագաւորական բանն²¹⁷ ցեղեալ: Եւ սակայն թագաւորի²¹⁸ բանն անզիր գրով²¹⁹ ոչ ձեռաւք ըմբոնի, ըստ իրում բնութեան²²⁰ եւ ոչ պատկառիլ կարող գոյ, բայց սակայն ասի պատառիլ²²¹ քարտիսին եւ զգրոյն տանելով²²² զկիրս: Տեսանես՝ զհարդ անկիրն կիրս ընդունի²²³, վասն զի կրականի²²⁴ հաղորդի բնութեան, քանզի եւ ոչ բանն իւր բնութեամբն ընդունակ գոյով²²⁵ կրիցն պատահեալ, այլ զկիրս քարտիսին եւ տառիցն ընկալաւ²²⁶: Մի՛ վատահամար այստիկեալ, ով հրեայ²²⁷, որպէս թէ սոսկ մարդ խաչեցեր, քանզի որ երեւիրն քարտեւ էր, իսկ²²⁸ ի մնա թաքուցեալն՝ բան թագաւորական՝ ծցիցեալ ի բնութեանն եւ ոչ եթէ ի ձեռն լեզուի²²⁹ յառաջ ածեալ²³⁰: Քանզի Բան ասի Մէնածիմ, բայց²³¹ ոչ յառաջաբերական, այլ գոյեղուտ եւ անձնաւոր²³² ոչ ինչ իւրով բնութեամբն կրելով՝ գոյով անկիր Բանն²³³, բայց իւր առնելով զերեւելոյն կիրս: Եւ որպէս թագաւորական բան եւ²³⁴ զգրոյն միւթ, ինքն ընկալաւ եւ կիրք քարտիսին²³⁵ իւր բանին եղեւ, այսպէս եւ Աստուած. Բանն զբեռեւելոյն կիրսն իւր արարեալ գոյ²³⁶: Վասն այսորիկ որպէս յորժամ ոք²³⁷ զթագաւորական սակր ապականելով²³⁸ որպէս անարգող թագաւորական բանին ի մահ ածի, այսպէս եւ հրեայն, որ խաչեաց զերեւելին դատաստան տաց որպէս ի մահ իսկ Աստուած Բանն կարկառեալ զյանդգնութիւնն, քանզի որպէս Աստուած իւրոյ եղելոց կրիցն վրէժխնդիր լինի:

Բայց բաւական եղիցին ասացեալքս, քանզի պարտ է եւ հոգալ վասն յիշողութեանն ձերոյդ, զի բազմութիւն ասացելոց առաւել քան զմիտս անյիշու առնէ զմիտս յաւղացն: Այլ եղիցի շնորհաւքն Աստուծոյ զասացեալս ձեզ յիշողութեամբ պարտուել եւ զայլս անցտեցուցանել եւ զարքայութիւնն երկնից փոխանակ այսոցիկ ժառանգել, զի եղիցի ամենեցուն մեզ հասանել շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեսա՞ն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որում փառք եւ զարութիւն յաւիտեանս. Ամէն²³⁹:

ՏԱՐԱՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՈՐԱԳԻՐ՝ B Վեցերորդ ատյան. հրամանում Թեղորոսի Անկիտաա նախկոպոսի ասացել է Մեռնդ Փրկչին, զոր ընթերցան յառաջին ժողովն եփեսոսի: C — զոր ընթերցան ի ժողովն եփեսոսի:

ընթացում ի ծողովակ փետուսի:

ԲՆԱԳԻՐ՝ 1 B մաքրութիւն փխ. փոկութիւն: 2 A ձորցին: C իսկ է չափ ձորցին: փխ. իսկ — ձիր շներմի: 3 C գշտորհին: 4 B որ նործամ: 5 B ձրիս: 6 C չիջ յաղագս: 7 AC զատիչն (C — ձիր շներմի) արարեր բեզ: 8 AC գշտորհին: 9 B Զի փխ. իսկ: 10 AC գողապէլին: 11 B յաշխարհս, գտտիչն) արարեր բեզ: 8 AC գշտորհին: 9 B Զի փխ. իսկ: 10 AC գողապէլին: 11 B յաշխարհս, դաստապարտութիւն: 16 A է, C չիջ էր: 17 B մարդկան: 18 C տեսամել զմա: 19 B մարդկան, վասն զի փխ. մարդկայինը, սակս: 20 B ի մտաց մարդկայանց փխ. ի մարդկային մտաց: 21 B ոյ որպէս թէ: 22 C աստուածածնաբ գտով: 23 C Մենածին: 24 B զմարդկային Ընությունս փխ. զքնության մարդկան: 25 C երեւելով: 26 B տեսամելոյ: 27 B կացցէ: 28 C ոչ բռատաւ: 29 B մարդկան կերպարանաւք փխ. մարդկային բնութեամբն: 30 C եւ ոչ: 31 B հաստաւ: 32 B չիջ դոս: 33 B մորենունք: 34 B չիջ Աստուած: 35 C չիջ եթէ: 36 B երկիր պագանէր Մովսէս փխ. Մովսէս— պագանէր: 37 B չիջ յիշեմ: 38 B որովայնն փխ. աղգանդ: 39 B այծմու: 40 B ճախտապատիր: 41 B հրոյն փխ. հնոցն: 42 B ոչ գործելով ըստ գործոց հրոյ, այլ սրբէ փխ. եւ որ ինչ— ազդէ: 43 B զըստ փխ. եւ ի, C իսկ եթէ փխ. ապա եւ: 44 B տեսանես ի հնումն (AC հնումն— միգշդեռ հունարեանում— τω παρ – ի հրոյնն): 45 B դաստապարտեալս: 46 C չիջ աստամառի: 47 B եւ մի: 48 B որովայնին: 49 B չիջ զծուն: 50 B ծննդեան բնութենէն փխ. կարծէր զքնությին: 51 B թշնամանեալ: 52 B առ: 53 B զնուաւտսն: 54 B զմերս կեցուցէ զքնության փխ. կեցուցէ— մեր: 55 B ոչ ինչ: 56 B չիջ եւ, այլ եւ ի: 57 BC լեալ: 58 B չիջ այսաւ: 59 B գործեաց: 60 AC վասն զի եւ: 61-62 A Աստուծոյ գոյ ասելով զծնունդն փխ. ասելով Աստուած— զծնեալն, C զծնունդն: 63 BC յարգանդէ փխ. կուսէ: 64 B չիջ որ յաղագս: 65 BC չիջ իմանալ: 66 A ծնեցաւ: 67 A ծնիցեալն: 68 AC բարեխոհիցն: 69 AC ճանաչի: 70 C փոփոխելով: 71 B ծննդեանն ոչ եթէ որպէս ի տեղուցէ ի տեղի փոփոխեալ, այլ Աստուած եկեալ յաշխարհ փխ. Աստուած եկն— եղեալ: 72 B երեւելով: 73 B չիջ ըստ մեզ: 74 B իւրոյ, C որ փխ. մորա: 74ա հուն– τὸν ἁγιοπνεῦμα (Արարչին): 75 B մեր փարեսցուք, պարփակեսցուք: 76 BC ունիցիմք: 77 B քաջախերութիւնս: 78 C ի մերոց փխ. խելանց: 79 C ունիմք: 80 C առաքինութեանց: 81 BC որպէս յիւրեանց (յատուկ ի յիւրեանց) ազգակցէ ջահեսցին զհամարձակութիւն փխ. քանզի ի թեմն— զհամարձակութիւնն: 82 AC որպէս: 83 B այլ զի փխ. այլ զամտեամելի: 84 A զամտեամելի, C տեսամելի ցուցանելով: 85 C եւ ասէ: 86 B չիջ Աստուծոյ: 87 B անհասութիւն: 88 B չիջ իրք: 89 B սքանչելիք փխ. սքանչելի է: C չիջ է: 90 B ճշման է: 91 B թողցուք: 92 B սքանչելադար: 93 B շահել: 94 B չիջ եղև: 95 B թողցուք: 96 B լեղանակս արուեստին փխ. զլեղանակ բժշկութեանն: 97 B բժշկին, արուեստին փխ. արուեստաւորին: 98 A չիջ այլ ոք: 99 B խնդրէ փխ. խուզէ: 100 B չիջ իրացն: 101 B եւ գնոյն: 102 C ՎԱստուծոյ: 103 AB ասէին: 104 B չիջ եւ: 105 B գորո պատշաճ փխ. ստաց պատճառն: 106 B ըստ բնութեան փխ. բնութիւնը: 107 C շինաւըն շինէ /// (շար. չիջ): 108 B միւսն: 109 B

չիք միայն: 110 B չիք եւ ամարութեամբ: 111 B զբան մեր: 112 A չիք քանզի: 113-114 A մտաւք եւ կամ խորհրդովք ոչ որոնելով փխ. միտք—որոնել: 115 B որ ի: 116 B աղիւս եւ խեցի: 117 B քաջութեամբ: 118 B ճախորկել: 119 B աչս փոխիլ փխ. ի—փոփոխիլ: 120 A չիք եւ: 121 B գտեաւարան: 122 B սքանչելագործութիւն: 123 B շարժեալ փխ. քարշեալ: 124 B մարդկայնոցս: 125 A եւ թէ: 126 B չիք եւ զիա՞րդ եւ աստուար—եղեալ: 127 B նորա եւ զգիտելն փխ. նորին գիտել: 128 B աստի ցուցուց փխ. հաւատեցուցուց: 129 B եթէ փխ. քեւ: 129ա Արտահայտություն (սանարմին մարմնանա— անշաշափելին շաշափելի) բացորոշ արձագանքն է Ս. Գրիգոր Նազիանզացի Աստվածաբանի «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառի «Անարմին մարմնանալ Բանն թանձրանալ, անտեսանելին տեսանի, անշաշափելին շաշափի (ՄՄ, ձեռ. 948, թ. 177բ)» բառերի: Պարագա, ինչը վկայում է, որ սրբազան հայրը հետևորդն է ոչ միայն Ս. Կյուրեղի, այլև կապաղովկյան հայրերի քրիստոսաբանության: 130 B եթէ փխ. իրով: 131 B ձեւ փխ. քեւ: 132 B Արդ, բան: 133 B չիք Աստուծոյ Բանի: 134 B չիք եւ: 135 B անախտաբար միտք մարդոյ ծնանի փխ. միտք մարդոյ—ծնանին: 136 B աստուածային Գիրք կոչեն: 137 B յալնց փխ. յալսոցիկ: 138 B որպէսզի: 139 B նորին փխ. առին: 140 A չիք յալս: 141 B ասեմքս: 142-143 B չիք Որդի—տանապագորդաբար: 144 B յետս փխ. ի վերջոյ: 145 A չիք եւ: 146-147 B Իսկ զի Որդի նորա համադրութեամբ ծանուցեալ է փխ. Արդ—զգեցաւ: 148 B հաւաստիւ է: 149 B Միածին: 150 B չիք Աստուած, Բան: 151 A չիք կուսածին բնութեան եւ: 152 B չիք եթէ վասն: 153 B տնայնութեամբ փխ. վասն տնայնութեան: 154 B աղիմակ: 155 A չիք սկիզբն: 156 B չիք տակալին: 157 A կալաւ: 158 B հաւաստեալ: 159 B ձեզ: 160 B զարիմակն յարինեսցուք: 161 A գոյնդուստ: 162 B ծնեալ: 163 B ստեղծեալ: 164 B չիք իմացի: 165 B առեալ փխ. տուեալ: 166 B կեդարարան փխ. մարդ եղեալ: 167 B չիք եւ: 168 B սենս փխ. ես եմ: 169 B որպէս զիս փխ. ծնեալ: 170 B զիս փխ. եսա: 171 A ընդ փխ. ըստ: 172 B չիք իմ: 173 B ողջունէ (մինչդեռ հուն. ὁρθόσαστο = ընտրէր): 174 B զոր փխ. յորոց: 175 B քանզի: 176 B չիք ինչ: 177 B յիւրոյ: 178 B բարի է: 179-180 B չիք եթէ զայսոսիկ տեսանեմք որպէս Ստեղծիչն—ի միտմն միատրեալ բնակեաց եւ յամենեսեան գտանի: 181 B առեալ: 182 B ընտանեցուցեալ: 183 B չիք որ: 184 B արարեալ եւ ստացեալ: 185 B զմարդկան: 186 B փոխարկեաց: 187 B կամաւ: 188 B զսոսոսիկ: 189 B չիք եւ յով: 190 B եղեալ: 191 B արար իւր: 192 B կամէր: 193 B համակաց զհամատեսակսն: 194 B արարեալ: 195 A ինքեան: 196 B զկապանսն տարեալ փխ. արար զկապանսն: 197 B ահեղ փխ. Աստուծոյ: 198 B զի: 199-200 ընդդէմ—մարդ էր: 201 A չիք եթէ: 202 B գտեսանելիսն: 203-204 B չիք եւ կամ— բերել: 205 հուն. 206 B եւ քաղաքին: 207 B ընդդիմաբան: 208 B պատահիցէ: 209 B Արդ զի՞նչ է. կրկնվում է: 210 B չիք աստանար: 211 B դիւրագոյն: 212 B թագաւորաւանն ցելաւ բան փխ. բանն—ցելաւ: 213 B մատուսն եւս էր: 214 B թէ որպէս: 215 B բան թագաւորականն (չիք թէ): 216 B չիք թէ: 217 B բան թագաւորական: 218 B թագաւորական: 219 B գոլով փխ. գրով: 220 A բնութեան: 221 B պատառեալ: 222 B ըստ քարտիսոյն եւ ըստ գրոյն ընդունելով փխ. քարտիսին— տանելով: 223 B ընդունել: 224 B ծառայականի փխ. կրականի: 225 B գոլով ընդունակ: 226 B չիք եւ— ընկալաւ: 227 B ով հրեայ այսումեստե: 228 B եւ փխ. իսկ: 229 B յեզուաց: 230 B եկեալ փխ. ածեալ: 231 B այլ փխ. բայց: 232 A անձնատուր: 233 B անկերպարան փխ. անկիր Բան: 234 B չիք եւ: 235 B

8* Հմմտ. Եղբ. Դ 12:

ԲՐ

**ՆՈՐԻՆ ԹԷՈՂՈՏՈՍԻ ԵՊԻՄԿՈՂՈՍԻ ԽԱԽԱՔ ԵՐԿՐՈՐԴ՝
Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ
Ի ՔՆՆՈՒԹԻՒՆ ԴԻՄՈՂԱՅ,
ՅՈՐՈՒՄ ԹԷ ՄԻ ԱՍՏՈՒԱԾ ՏԵՐ ՅԻՍՈՒՄ**

Պայծառ է մերձակայ տառնիս պատճառ եւ հասարակ փրկութիւն մարդկան բերեալ:
Պայծառ է եւ մերձակայս ժողով գոհութեամբ ընկալեալ զշնորհն եւ տուեալ լինի առատա-
պէս շնորհն, որոց գոհութեամբ ընդունին զնա, քանզի այսքան շնորհեալ լինի չափ պար-
գեւին որքան է մեծութիւն գոհութեան ընդունողացն զշնորհն, որպէսզի յորժամ առեալ
զպարգեւն գոհասցիս զտուողէն ոչ միայն փոխարէն ետուր, որոյ առերն, այլ եւ առաւելա-
գունից պարտապան արարեր քեզ զտուաւոյն: Արդ, գոհութեամբ ընկալարուք զշնորհն
պայծառացուցեալ մեզ տաւնս զայս: Եւ պատճառս տառնիս է երեւումն Աստուծոյ առ մար-
դիկ. զայլուստ, որ միշտ մերձն է. մերձակութիւն⁹, որ զամենայն լնու, ի վեր հայեցողու-
թիւն, որ զամենայն յոսանէ. քանզի «յիւրսն եկն, ասէ, եւ իւրքն զնա ոչ ընկալան»^{9*}: Յա-
ւելտ՝ «զի յաշխարհի է, ասէ, եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ»^{10*}: Այլ ոչ է ամբաստանութիւն
մարդկան անգիտանալն ասիլ: Քանզի աստուածաբանութեան բնութեան անհասանելի է
խորհրդոց մարդկան Աստուած, զի ոչ բնատրեցան միտք մարդկան տեսանել զԱստուած ի
բաց փախչի ի մարդկայնոցն մտածութեանց, աստուածային բնութիւն գերամբարձեալ է
քան զմերս խորհուրդս: Արդ, զրկեալ էաք ի վերագումին բնութեան յաստուածածանաւթու-
թեանէն, որ զի մի՛ եղիցի. առնու բնութիւն երեւելի աներեւոյթն, ընդունի մարմին շաւշափելի
շաւշափմամբ ոչ ըմբոսնալն: Աներեւոյթն Աստուած երեւելի լինի, Բանն՝ շաւշափելի, Մի-
ածինն Որդին Աստուծոյ ազգակից ծառայիցս լինի, զի մի՛ զանխլասցի գիտութեան մարդ-
կան՝ գերազանցեալն քան զմարդոյ բնութիւն: Եւ մի կարծեսցի աւտար յԱստուծոյ եղեալ
զՈրդի, քանզի եւ յառաջնումն զայլուստն Աստուծոյ տպաւորեալ լինի արիմակաւք եւ միշտ
ծանուցաւ մարդկան երեւեալ միւթովք, որով մարդ էր տեսանել առ ի մէնջ: Ապա եթէ ոչ
յառաջ եկեսցէ հրեալ եւ ի միջի կացցէ, որ անհաւատն լինի երեսման Աստուծոյ յայտնեցե-
լոյ մարդկան մարդոյ բնութեամբ, ասասցէ ինձ՝ զիա՞րդ ետես Մովսէս զԱստուած. զբնու-
թիւնն ետես զաներեւոյթն, եւ ոչ երբեք, քանզի անհասանելի է նա խորհրդոց մարդկան: Եւ
զիա՞րդ ետես, ասա ինձ ի մորեմոյն վառեալ հուր եւ զմորեմին ոչ ապականեալ: Արդ,
վասն է՞ր ոչ հաւատաս ի Կուսէ ծմիցելոյն եւ զկուսութիւն ոչ ապականողին: Եւ դու լսելով
եթէ ի մորեմոյն բարբառի Աստուած եւ ասէ ցՄովսէս: Ես եմ Աստուած Աքրահամու եւ

* ՄՄ 2594, ք. 201 ս-203ա:

* Զիք ՆԲՇ:

9* Եղվի. Ա 10:

* ԹԼԴԻՆ՝ յաւել:

10* Եղվի. Ա 11:

ցիս: Իսկ եթե զիարդ եղե՝ ներգործողին թող: Եթե դու հաւատաս բժշկի եւ ոչ խնդրես զեղանակ բժշկութեան, հաւատով արուեստին զփրկութիւն, այլ եւ ոչ այլ ոք յամարութեանցն քննէ զարուեստաւորին յեղանակն, այլ ճանաչէ զեղեալն, բայց թէ զիա՞րդ՝ արուեստաւորին տա թոյլ: Իսկ դու ամենայն սքանչելեացն զսահման խնդրես որպէս պէտս ունեղով Բանին, զի զնոյն սքանչելագործիցս Աստուծոյ եւ դու: Այլ զոր ինչ ամենեւին աշտ՝ ասեմ Բանին, զի զնոյն սահման ճանաչեմք այսուիկ բնութիւն ոչ է սքանչելի եւ ոչ նշան: Որպէս զիր ի զորոց սահման ճանաչեմք այսուիկ բնութիւն ոչ է սքանչելի եւ ոչ նշան: Որպէս զի՞նչ ասացից. Գաղատոս շինեաց տուն. զբանն ճանաչեմք զմիւթն եւ զշարադրութիւնսն եւ ասել զեղանակն կարեմք, թէ եւ վասն ամարութեանսն զործելոյ եմք բաւական: Ստեղծ ի ծնէ կտրին աչս Միածինն ի կտոյ. այս ի վեր քան զմեր բան է սքանչելիք կոչին խորհրդովք մարդկան ոչ քննեալ: Նշան կոչի ի վեր քան զսովորութիւն բնութեան եղեալ: Եւ զի եղե՞ գիտեմք, բայց ասել զեղանակն ոչ ունիմք, քանզի ի կաւոյ խեցի եւ աղիւսք կազմին եւ ոչ աչաց բարետոհմութիւն ստեղծանի, ոչ յինին պարտականք մատուցեալ եւ ոչ բիր զարդարին, եւ ոչ բոլորակութեան ճշգրտութիւն այսքան զեղեցկագոյնութեամբ ճախարակեալ. կաւ ոչ բնատրեցաւ յաչաց պարկեշտութիւն մտանել: Ապա ուրեմն, զոր ինչ բնութիւն կաւոյ ոչ ընդունի, այն սքանչելագործութեամբ յինի եւ որ ոչ բնատրեցաւ ընդունել զական տեսութիւն, զայն ընկալաւ սքանչելագործութիւն առ իւրն քարշէ զբնութիւն եւ ոչ հնազանդեալ սահմանի բնութեան: Արդ, մի՞ եւս անկանիր ի տկարութիւնս մարդկայնոյս բնութեան, մի ասեմ, թէ զիա՞րդ տարաւ մարդոյ բնութիւն զԱստուած, զիա՞րդ Աստուած մարդ եղեւ, զիա՞րդ Աստուածն Բան մարմին տեսանելի եղեւ: Այլ զի եղեւ, հաւատայ, բայց զեղանակն եւ զսահման տուր Արարողին: Իսկ եթէ կամիս եւ յարինակէ հաստատել քեզ առաջիկայս, եթէ զիա՞րդ ամնաբմինն մարմնանա, ամերեւոյթն երեւի, անշաւափելին շաւափի ոչ յիւրոյն բնութենէն փոխադրեալ, այլ առեալ ծեւ երեւի եւ շաւափելի բանս այս, որ յառաջագայ ի մարմնոյն, որով վարեալ խաւիմք բան երեւելի եւ ոչ ձեռին շաւափելի, այլ միայն ի յեղիս հնչեալ, բայց վասն զի յառաջս եկեալ ի մէջ բան յարինակ զոյեղէն Բանին Աստուծոյ բերեմ, մի՞ կարծեր յառաջ բերեալ բան ասել զԱստուածն բան: Ի բաց տար: Այլ զի Բան ասի Միածինն, զոր ասէ աստուածայինն զիր զանախտութիւն նորայն ծննդեան, վասն զի եւ միտք մարդոյ անախտաբար ծնանին զբանն: Վասն այսորիկ է ուրիշք, զի Որդի կոչէ զՆա Հայր, եւ է ուրիշք, զի Բան անուանէ, եւ այլուր ճառագայթ կոչէ աստուածայինն զիր զիւրաքանչիւր ինչ յագոցիկ անուանցս ասէ վասն նորա, զի իմասցիս զյաղագս Քրիստոսի ասացեալսն առանց հայհոյութեանց, քանզի այլուր այլովք անուանակոչութեամբք հպի ի նա պատշաճիւք փառացն Աստուծոյ զվարդապետութիւն առնել կամեցեալ: Որպէս զի՞նչ ասացից. Որդի կոչէ Հայր զՈրդի՝ զհամագոյնութիւն յայտնել կամեցեալ, քանզի եւ քո որդի ի նորին բնութենէն ծնանի: Կամեցեալ բանի ցուցանել միութիւն Հայր եւ Որդոյ, ասէ Որդի Հայր զառ ի նմանէ ծնեալն Միածին: Իսկ վասն զի ծնունդ եւ որդի, որ ի մէջ պատճառ ունի զծննդեանն ախտի, զայս Որդի կոչէ եւ Բան: Ջանախտութիւն ծննդեանն այսու բանի յայտնեալ. այլ վասն զի Հայր ոչ եղեալ մարդ, խոստովանելի է, եթէ երիցագոյն ցուցանի քան զիւրն Որդի: Այսու անուամբ զնախամտածութիւն՝ տուեալ Հայր քան զՈրդի: Եւ զի մի՞ զնոյն եւ յաղագս աստ-

դու ասես յերկինս արծաճապէս բնակեալ ի մնա եւ անարծաճ մնա միայն զմարդն վարկացիս՝ դատելով իրս ոչ ճշմարտութեամբ բանից, այլ ախտիւ եւ չարահաւանութեամբ¹⁵։ Զի՞նչ է բարձրագոյն. աղէ, ասա ի՞նչ երկի՞ն եթէ՞ մարդ, զի՞նչ պատուականագոյն է Աստուծոյ. արեգա՞կն եթէ՞ մարդ։ Մի՞ հայիր ի տարերն պայծառութիւն եւ մի՞ վասն գեղեցկագունութեան պատուէր զբնութիւն։ Մի՞ ընդ պայծառ ճառագայթն արեգական զարմանար եւ մի՞ «վասն զի ես մորթ եւ միս եմ զգեցեալ»¹⁵, ըստ աստուածայնոյն Յոբայ անարգէր, այլ զբանաւորական հոգւոյս զբարեւորութիւն տես։ Հայեաց ընդ մարդոյս կազմութիւն եւ զարմացիր ընդ կենդանին. միտս ունի կարող տիրել եւ իշխել ամենայն կենդանեաց, ձեռս էառ ամբողջակ մտացն իմաստութեան գործարան ամենայն արունստի արարչագործ։ Միայն յամենայնի հարկէ ստացուածոցս ազատ եղեւ, տէր իւրոցն կամացն միայն զմարդն էստեղծ Աստուած. ո՞չ տեսանես զարեգակն ի հարկէ ընթացեալ զընթացսն, յոր կարգեցան, ո՞չ տեսանես միատեսակ զբերումն մորա։ Ընդէ՞ր, վասն զի իւրոցն կամացն ոչ եղեւ տէր, բայց դու շրջիս ազատացեալ, գործես զինչ եւ կամիս, ոչ ունիս հարկ, որ մղէ զքեզ բռնութեամբ, ազատ հոգւով կարգեցար։ Արեգակն ծառայ ի հարկէ, իսկ մարդ ի կամաց ազատ։ Արդ ո՞վ է վեհագոյն, աղէ, ասա ի՞նչ. ծառայ՝ եթէ՞ ազատ, որ ընդ լծով հարկի է եթէ՞ որ յամենայն հարկէ ազատն, ոչ ինչ է ուրեմն սքանչելի եւ ոչ հրաշափառ, եթէ ի մարդում բնակեաց Աստուած եւ ընկալաւ, զոր ըստ իւրումն պատկերի ստեղծ, քանզի զպատիւ մարդոյն Աստուած անդէմ ի սկզբանն արարչութեան եցոյց հող առեալ յերկրէս ստեղծեալ զնա եւ պատկեր կազմեալ իւրոյ Աստուածութեան։ Արդ, վասն է՞ր զոր հանդերձեալն կազմութեամբն պատուել, սոյնպէս յանարգ բնութեան ստեղծ, ընդէ՞ր ոչ ի պայծառութեանն արեգական առեալ արար զմարդն, այլ ի յերկրէ եւ ի հողոյ ստեղծանէ. ի միւրոյ, որ ի ներքոյ անկեալ եւ կոխի։ Կամիս ուսանել, թէ է՞ր աղագաւ, վասն զի պատկերաւն կամէր պատուել զմարդն, անարգ եւ մնա բնութիւն, զի մի՞ զերազանցութիւն պատուոյն բարձրացուցէ զմարդն յապարասանութիւն, զի յորժամ ի վեր քան զբնութիւն պատուեսցի անփոխեսցի յիշմամբ բնութեան եւ ծանիցէ զմեծութիւն պատուոյն ոչ զիրոյն արծաճատրութեան, այլ՝ ըստ շնորհի տուողին։ Ապա ուրեմն եւ այս մարդասիրութեան կազմողին էր՝ պատկերին Աստուծոյ յերկրէ ունել զբնութիւն եւ զչափաւորն խորհելոյ, որպէսզի բարեւորութիւն ի կենդանիս զոլ զմարդն, թէ եւ յետոյ թշնամանեցաւ ի մտանել ախտիցն, մի՞ տեսաներ զնա զայնակողեալ, այլ նախ քան զանցանել ընդ արեւնսն զպատկերսն Աստուծոյ զբարեւորութիւն ամ զմտաւ, զոր դարձեալ բազում բարեբարութեամբ ետ մնա Աստուած՝ միաւորեալն ընդ մնա զիւրն պատկեր։ Արդ, ոչ ինչ անպատշաճ մորոյն մարդասիրութեան եղեւ, քանզի ոչ եւն թշնամանք բարի Տեառն հաղորդել ծառայի ի ծառայականացն յազուտ, քանզի ոչ թշնամանի այսոքիւք բարին, այլ որ ինչէն՝ այսպիսեալն ճանաչի։ Եւ մի՞ զարմանար ընդ իրին զերաբուն մտածութիւնս՝։ Քանզի եւ այժմ թէ զքեզ ինքն տուն կազմեսցես Աստուծոյ, եւ ի քեզ բնակի, եթէ եւ ոչ այսպէս որպէս յորդոջ, քանզի եւ «ի հրիստոս բնակէ ամենայն լրումն աստուածութեան մարմնապէս»¹⁶։ Այլ, ո՞վ սքանչելեացս։ Ամեն-

* Զիք ՆԱԿ։

15* Թովբ. Ժ 11։

* Հոնարենուս բապտիստոմ I. «զերարուն մարածութիւն»։

16* Կողոս Բ 9։

40 Լ-Լ

նայն լրումն Աստուածութեան ի միում բնակի եւ զամենայն լնու եւ պարունակէ զարարածս
բոլորն զոլով ի միում եւ ստացումնոցն ոչ ոմեք տանելի: Եւ մի՛ երեսացի քեզ ասացեալս
անմարդ, քանզի եւ ես այժմ յառաջ բերեմ բան: Եւ է բանս այս ի միում բոլորն յամենսին
եղեւ եւ բոլոր բանն տարեալ եղեւ ի միում, եւ ի բազմութենէն բան ոչ պապացրի: Արդ, եթէ
իբ եղեալ եւ սպականեալ եւ ի միում բնակէ բոլորն եւ յամենսին լինի՝ զի՞նչ երեւի քեզ
սքանչելի, եթէ Աստուած բոլոր ի մարդոսն բնակեաց՝ եւ յամենսին գտանի:

Աստուած ի միում բնակէ բոլորն եւ յամենսին գտանի: Աստուած ի միում բնակէ բոլորն եւ յամենսին գտանի:

[illegible]

1* «ի մագդոմ բնականաց»-ի դիմաց եռու. ոսկի, ըն նքոսն մեղոս = երկերում ընկնվեց:

2* Խոն. Դժ ԽԵՅ (կրթւո, սպարիւն բնագոննր):

3° հավելյալ տեղեկություն:

4. 2hp 1.4L:

թագաւորական ծնեալն ի բնութեանն եւ յեզոտվ յառաջ եկեալ. քանզի բան ասի Միածինն ոչ իբրեւ զմերս բան յառաջ քերեալ, այլ էապէս եւ գոյեղէն ոչ իւրովն բնութեամբ չարչարեալ, այլ իւր արարեալ զերեւելոյն չարչարանս: Եւ որպէս թագաւորական բանն եւ զգրոյն թշնամանս ինքն ընկալաւ եւ կիրք քարտիսին բանին իւր լինի, այսպէս Միածինն Աստուծոյ, Աստուածն Բան բեռեցեցելոյն չարչարանս իւր աղարեալ, վասն աղտորիկ որպէս հրովարտակ թագաւորին ապականեալ որպէս զբան թագաւորին///:

* Ի լրումն ուսումնասիրությանն հարկ է նկատել, որ Թեոդոտոս Անկյութացու երկերը, առաջին անգամ լինելով, վկայակոչվել են Տիմոթեոս Կուզի Հակաճառության մեջ: Բնականաբար, վկայակոչված հատվածները բնագրագիտորեն էապես տարբերվում են առկա ամբողջական թարգմանություններից: Այսպես, «Երանելոյն Թեոդոտայ եպիսկոպոսի Անկիրայ» անվան տակ Կուզի երկում քերված են հետևյալ վկայությունները.

Ա. Բանզի անկարելի համանգամայն եւ՝ պահել զմիատրութիւնն, եւ՝ զիրաքանչիւր ըստ յատկութեան դիտել (այսքան, էջ 69, տ. 22-24)*:

Բ. Իբր զմի եւ զնոյն աստուածաբար փառաւորեալ եւ կրելով զմարդկայիննսն, եւ զայս մեզ խոստովանակից եղիցին ամենեքեան, որք միատրութիւն խոստովանեն եւ՝ աստուածութեան եւ՝ մարդկութեան — զի՞ եւս վերլուծանես զտնաւորեալիսն փրկական, երկուս իմանալով եւ զմիատրութիւնն անգոսնելով (էջ 96, տ. 8-22):

Ա. վկայությունը մասն է Բ-ի: Բ-ն քաղված է Ա ճառից. տարրերը երգում 136-142:

Գ. Եթե միատրեցուցանես բանիւ, մի՞ հատցես իմացութեամբ, իսկ եթէ հատանես իմացութեամբքն, զմիատրութիւնն ուրացար... մի՞ քննեք մտածութեամբ զեղեալն, մի՞ քակեսցես զսքանչն, զտանել զԲանն հակառակելով, քանզի ոչ մնայ հրաշափառ Բանն, եթէ ճանաչի (էջ 96, տ. 24-31):

Քաղված է Ա ճառից. տարրերը երգում 387:

Դ. Թեոդոտայ եպիսկոպոսի Անկիրայ

Ուր բաժանիչն զՔրիստոս, որ զխորհուրդս մեր հոսանանութիւն գործաւոյն եւ Քրիստոս մի ասելով, իսկ երկուս ենթադրելով. զոմն ծառայ, իսկ զոմն տէր, զոմն ախտակիր, իսկ զոմն ոչ ախտակիր. զի՞նչ շահ մի առաստութեանն երկուց կացելոց իրաց (այսքան, էջ 104-105, տ. 35-4):

Ե. Նորին

Իբր աղքատացաւ վասն մեր, ասասցեն մեզ, որք յԱստուծոյն Բանէն բաժանեն զմարդն եւ զմիացեալն որոշեն, յիշելութեամբ («լինելութեամբ») բնութեանցն, որք երկու ոմանս ասեն զՔրիստոս, եւ զմին իմացմամբ միայնի (?) առաւելաբանութիւն բերեն (այսքան, էջ 105, տ. 5-10):

* Այս ե հետագայ Լքանամբներն ու Կրթականութեանն ըստ «Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Անկիրայի Հակաճառութիւն աստ սահմանադրոս ի ժողովոյն Քաղկեդոնի, ի յոյս յնձնեղն աշխարհութեամբ Կարապետ Ը. վարդապետի եւ Երուսաղ վարդապետի», Ա. Էջմիածին, 1908:

Դ. Ե վկայությունները բացակայում են ճառերի այսօր հայտնի թարգմանության մեջ:

Զ. Թեոդոտայ նախկնպոսի Անկիրայ, որ ի ծնելութիւն Բրիստոսի
երո՞ւմ անհաւատիս ի կուտէ ծնիցելոյն եւ զկուսութիւնն ոչ ապականողի, եթէ դու յսելով
(?) զի ի մորենոյն քարքառէ Աստուած. Արդ, յորժամ նուաստագոյնքն զերանելոյ Աստու-
ծոյ բնութիւնն ոչ յշմամանիցեն այդ փրկութիւն մարդկան գործիցէ. իբր ասեն զպատճառ
մերոյն փրկութեան անարգանաց առիթ Աստուծոյ եղանիլ (Էջ 112-113, տ. 14-11):

Քաղված է Բա ճառից. տարընթերցում 32-57:

Է. Երանելոյ Թեոդոտի նախկնպոսի Անկիրայ, որ ի Ծնունդն Բրիստոսի
Խրեւեցաւ այսուհետեւ Աստուած այսար ի կուտէ, եւ կոյսն մնաց կոյս եւ մայր եղեւ, քանզի
անապականութեան առիթն ապականութիւնն ոչ գործէ — Քանզի եթէ ըստ մեզ ծնիցաւ,
մարդ էր, իսկ եթէ զմայրն կոյս պահեաց, Աստուած ծնիցեալն քաջախորհրդոցն ճանաչի
(Էջ 126, տ. 16-30):

Քաղված է Բա ճառից. տարընթերցում 57-60:

Ը. Երանելոյ Թեոդոտայ նախկնպոսի Անկիրայ ի խաւսից, որ ի Ծնունդն Բրիստոսի.
Որո՞ւ վարդեք պատճառաւ իւր զախտակրութիւնս մարդկան օտարեալ, վասն զի կա-
մեր ախտիւ զախտ ի բաց բառնալ եւ մահուամբ խափանել զմահ... ուխտն զհոմատեսա-
կացն առնուն, յետ այսորիկ եւ մահն՝ իբր Աստուծոյ եղեալ, խափանէ զմահն, եւ մեռեալ
լուծանէ զգոռոզութիւն մահուն (Էջ 270-271 տ. 31-8):

Քաղված է Բա ճառից. տարընթերցում 191-199:

Նրապարակության պատրաստեց՝
ՎԱԿՈՒ ՔՅՈՍԵՅԱՆԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕԶՆԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՂԱՔԻՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ

Հայ Եկեղեցու պատմության մեր շրջանի մշակավոր դեմքերից է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, ինքնատիպ մի անձնավորություն, քարձրաստիճան հոգևորական, որը 12 տարի ամընդմեջ եղել է Կ. Պոլսի հայոց Պատրիարք համիդյան բռնատիրության պայմաններում, իր իսկ արտահայտությամբ եղել «զազանազուսպ և լարախաղաց» և միևնույն ժամանակ զբաղվել գիտական գործունեությամբ՝ իրենից հետո թողնելով պատկառելի գիտա-գրական ժառանգություն, որում առանձնանում է հատկապես եռահատոր «Ազգապատում» կոթողային աշխատությունը, որը ունի հետևյալ խորագիրը. «Հայ Ուղղափառ Եկեղեցույ ամցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմութեամբ»։ Նշված «յարակից ազգային պարագաները» հայ ժողովրդի պատմությունն է քրիստոնեությունը ընդունելու ժամանակից, գրված մի անհատի կողմից, որը սակայն պատիվ կրեքեր և մի ուրիշ գիտական հաստատության։

Աշխատությունն սկսվում է քրիստոնեության առաջին դարով և Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների՝ Հայաստանում քարոզության ներկայացմամբ։ Ա հատորի «Նախագիտելիք» հատվածում հեղինակը գրում է, որ իր «աշխատութեան մէջ պէտք չէ փնտռել ոչ քննադատական հետազոտութիւններ, ոչ գիտական ուսումնասիրութիւններ և ոչ կազմաւորեալ բանավէճեր»¹։ Սակայն եղելություններն ու իրադարձությունները շարադրելու ընթացքում Օրմանյանն ի հայտ է բերում վերլուծող և քննախույզ գիտնականի մոտեցում իր շարադրած նյութի նկատմամբ։ Հայոց Եկեղեցու պատմությունը մա շարադրում է՝ մեծապես օգտվելով և հենվելով հայ պատմիչների աշխատությունների վրա։ Փաստերը վերցնելով տվյալ ժամանակահատվածի պատմիչների գործերից, շարադրանքի ընթացքում Օրմանյանը ցուցաբերում է հմուտ գիտնականի մոտեցում, երբեմն՝ համաձայնվելով, հաճախ՝ ժխտելով ու տարակուսելով, ապա և վերլուծելով տարբեր պատմիչների հայտնած տեղեկությունները։

Օրմանյան հետազոտողի այս մոտեցումն է մեզ հնարավորություն տալիս տարբեր հարցերի վերլուծության ընթացքում անդրադառնալ հոգևորական-գիտնականի տեսակետների քննությանը։ Նման մի համեստ նպատակ է հետապնդում այս հոդվածը Հովհաննես Օձնեցի կաթողիկոսին տրված նրա գնահատականների մասին։ «Ազգապատում»-ի Օձնեցուն նվիրված բաժինը կազմում է 45 էջ, որտեղ Օրմանյանը կատարում է 129 հղում 20 հեղինակներից՝ միջնադարյան պատմիչներից և մեր շրջանի պատմաբաններից։ Գնահատելով Օձնեցուն որպես «Հայրապետական Աթոռի փառքերէն մէկ», որն իր վարչական և գիտական հմտության շնորհիվ ստացել է «իմաստասեր» բնորոշումը, Օր-

¹ Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ազգապատում, Ա հատոր, Երևան, 2001 թ., էջ 1։

մացնում է արևելյան շքեղ ընդունելության: Ե՛վ պատմիչները, և՛ Օրմանյանը բարձր են գնահատում Հայոց Հայրապետի հրաժարումը անձնական մպատակ ունեցող խնդրամբ-ներից: Կաթողիկոսի ամենամեծ խնդրամբն էր՝ Հայոց Եկեղեցին ազատել հալածանքներից, հայ հոգևորականների՝ հարկերից, հայոց դավանանքին տալ ազատություն: Հրա-ժարումն անձնական շնորհներից բարձրացնում է կաթողիկոսին ամիրապետի աչքում, և նա ազատում է մահ խրամի և Նախիջևանի եկեղեցիներում այրված հայ մախարաբների գերի ազգականներին՝ վերականգնելով նրանց մախարաբական իրավունքները:

Օրմանյանը բարձր է գնահատում Իմաստասեր Կաթողիկոսի դիվանագիտական և քաղաքական կարողությունները, նրա նոր մարտավարությունը՝ «վերջնապես և կատարե-լապես խզել Յունաց հետ հարաբերությունները, և ամրոջապես կապուիլ արաբական տի-րապետության հետ»³: Այդ հարաբերությունները վերաբերում են և՛ կրոնական, և՛ քաղա-քական ասպարեզին: Քաղաքական տեսանկյունով Օձնեցուն օգնեց ամիրապետը, և ոս-տիկանի ձեռքով Հայաստանից հեռացվեցին հույն վերականգնումն ու զինվորները: Կրո-նական տեսակետից Հայոց Հայրապետը «խստիւ հետապնդեց, ջնջել և վերցնել քաղկէդո-նիկ դաւանութեան և յունական ծէսին համակերպութիւնները»⁴, որոնք տեղ էին գտել եզր Կաթողիկոսի զիջումների պատճառով:

Քննադատելով «Սակս ժողովոց» գրվածքը, Օրմանյանն ապացուցում է, որ Եզրից մին-չև Եղիա ընկած վեց կաթողիկոսները, որոնք դիտվում են որպես քաղկեդոնականություն ընդունած կաթողիկոսներ, չեն եղել քաղկեդոնիկ, և Հայոց Եկեղեցին նրանց ժամանակ ոչ թե շեղվել էր իր հնավանդ դավանությունից, այլ ունեցել «յունաց հետ համակերպելու տկարությունը»⁵: Ռրանք «տկարություններ ու շեղումներ» էին, որոնք բխում էին քաղաքա-կան թելադրանքից և մկատվում էին ոչ թե ողջ Հայաստանում, այլ «յունաց տիրապետած» գավառներում: Օձնեցին հասավ նրան, որ մույնիսկ այդ գավառներում գերակա դարձավ Հայոց Հայրապետի իշխանությունը:

Կաթողիկոսի ձեռնարկած գործերից Օրմանյանը բարձր է գնահատում Հայ Եկեղեցու հնավանդ ծեսերն ու սովորություններն ամրապնդելու, սպրդած զեղծումները վերացնելու համար հրավիրված ժողովը: Հետագոտելով Օձնեցու ժամանակի և հետագա շրջանի պատմիչների աշխատությունները, Օրմանյանը փաստում է, որ նրանցից ոչ մեկը չի նշում ժողովի գումարման վայրը, թվականը և մասնակիցներին: Համադրելով փաստերը, նա հանգում է այն եզրակացության, որ ժողովը գումարվել է Օձնեցու՝ Դամասկոսից վերա-դառնալուց հետո, այսինքն՝ 720 թ., իսկ ժողովի գումարման վայրը, առանց տառամկելու, համարում է Ռվինը, որովհետև այնտեղ էր Կաթողիկոսական Աթոռը, և այնտեղ էին գու-մարվում ազգային եկեղեցական ժողովները: Մեր ժամանակի պատմաբանները համա-միտ են այս հարցում ևս:

Օրմանյանը բարձր է գնահատում Օձնեցու՝ ժողովի բացման կապակցությամբ ունե-ցած ելույթը՝ «այն գեղեցիկ ճառը, ... զոր խօսած է Իմաստասեր Կաթողիկոսը, ժամանա-կին պետքերը բացատրելու եւ կարեւոր խնդիրները ժողովականաց մտադրութեան յանձ-

³ Նույն տեղում, էջ 960-961:

⁴ Նույն տեղում, էջ 961:

⁵ Նույն տեղում:

ճարարելու համար»⁶։ Նշելով, որ նախընթաց ժողովներում մյան ատենաբանություններ չեն եղել, Օրմանյանը դրանով ընդգծում է Օձնեցու արժանիքները, իմաստասիրական, աստվածաբանական և ծիսական -կենտրոն խորին հմտությունը»։ Բայց ակսոսանք է հայտնում, որ այդ ատենաբանությունից սերունդներին չի հասել չորս գլուխ՝ Ժ-ից ԺԵ, դա համարելով հետագա պատմիչների կամ գրիչների մեղքը։

Մանրամասն վերլուծելով Դավիթի ժողովում ընդունած և Կանոնագրքի մեջ մտած 32 կանոնները, մա մեկ առ մեկ բացատրում է ծիսական ողջ համակարգը, ապա շեշտում կանոնական և Պավլիկյան աղանդների դեմ պայքարելու միջոցները և անհրաժեշտությունը։ Կանոնների վերլուծությունից ամենահետաքրքիրը Օրմանյանի եզրակացությունն է. «Օձնեցիին կանոնները մեզի կ'իմացնեն, թե ինչ տեսակ գեղծումներ կը լանախեն այդ միջոցին Հայ Եկեղեցու մեջ, և պետք է հետևեցնել, թե հակառակ ժամանակին շփոթ կացություն, բացարձակապես ծանր կենտր չեն յիշուածներ»⁷։

Գնահատելով Օձնեցու ձիրքերը, Օրմանյանը նկատում է, որ Հայոց Կաթողիկոսը «գատելով և գտելով Հայ Եկեղեցու կանոնագիրքը կազմեց»։ Օձնեցու ժամանակից ի վեր այն ծառայում էր իբրև Հայ Եկեղեցու օրինագիրք, որի ամենամեծ արժանիքը Օրմանյանը համարում էր այն, որ «Հայ Կանոնագիրքը Արևմտեանը կը կանխէ, և առեի առաջ է, քան Իսիդորոս Մերկատորի գործը, որ Թ (9-րդ) դարում կազմուած է և ոչ թէ Է (7-րդ) դարու հեղինակ Իսիդորոս Հիսպաղիոյ եպիսկոպոսին գործն է, որով մեր Օձնեցին Իսիդորինէն դար մը առաջ յորինած կ'ըլլա Հայոց Կանոնագիրքը»⁸։

Հոգևորականներին և իրավունքի պատմության մասնագետներին թողնելով Հայոց Կանոնագրքի հոդվածների վերլուծությունը, անդրադառնալով «Գիրք թղթոց»-ին տված Օրմանյանի գնահատականին, ուր վերջինս ապացուցում է, որ այդ աշխատությունը, անտարակույս, պատկանում է Օձնեցուն. «Եւ ո՞վ առեի յարմար կրնար ըլլալ հայրապետանոցի մեջ հմաւանդ դաւանութեանց վաւերագիրներու արձանագրութիւնը բանալու, եթէ ոչ մա ինքն, որ աւանդական բարեկարգութեան վաւերագիրները արձանագրելու գաղափարը յղացաւ և գործադրութեան ձեռնարկեց»⁹։

Մերժելով մինչ այդ եղած կարծիքները, որոնք «Գիրք թղթոց»-ի հեղինակ են համարել Մովսէս Յուրտալեցուն, Օրմանյանն ապացուցում է, որ այդ եպիսկոպոսը հայրապետանոցի մեջ պաշտոնական արձանագրություն գրելու իրավունք չուներ, բացի այդ, «Գիրք թղթոց»-ում տեղ գտած օրենքների մեծ մասը նրանից հետո է ընդունվել։

Հայ Եկեղեցու դավանության մախանձահույզ պաշտպան Օրմանյանը բարձր է գնահատում Օձնեցու այն ճառերը, որտեղ հերքվում են Պավլիկյանների և երևութականների մոլորությունները և բացահայտվում իմաստասեր Հայրապետի հմտությունները ոչ միայն Աստվածաշնչի, այլև Եկեղեցու հայրերի և տարբեր փիլիսոփաների երկերի իմացության մեջ։ Քննելով Օձնեցու մեզ հասած ճառերը, Օրմանյանը հաճախ մշտում է, որ տվյալ ճառը չնայած պարունակած նյութով հնարավոր է, որ Օձնեցուն լինի, սակայն գրության

⁶ Նույն տեղում, էջ 965։

⁷ Նույն տեղում, էջ 967։

⁸ Նույն տեղում, էջ 968-969։

⁹ Նույն տեղում, էջ 971։

ոճը չի կրում իմաստասերի վեճությունը, ուստի և նրա հեղինակությունը չէ:

Օձնեցու գործունեության կարևոր դրվագներից է հայ և ասորական հարաբերությունների մեր զարկ տալը և այդ նպատակով հրավիրած Մանազկերտի ժողովը, որը հատուկ քննության է ենթարկել Օրմանյանը: Պարզություն մտցնելով ժողովի վայրը Մանազկերտը ընտրելու հարցում (դա արաբ ոստիկան Վալիդի պահանջն էր), ընդգծելով, որ ժողովի հրավիրման գլխավոր նպատակը եղել է կրոնական անապականության խնդրի շուրջ ծագած ծայրահեղ մոտեցումները և երևութականությունը հերքելը, Օրմանյանը ճիշտ է համարում նաև Սամվել Աճեցու կարծիքը, որ այդ ժողովը հրավիրվել էր «վասն Քաղկեդոնի»: Այդ ժողովում մի անգամ ևս հաստատվեց հայերի և ասորիների միաբանությունը՝ անկախ այն ծիսական կետերից, որոնց մեջ երկու եկեղեցիները տարակարծիք մնացին:

Մանազկերտի ժողովը Օրմանյանը համարում է Օձնեցու գործունեության վերջին դրվագը, որից հետո նա առանձնացավ իր ծննդավայրում և Սոթից լեռան մոտ իր կողմից կառուցված եկեղեցում նվիրվեց աղոթական կյանքի՝ «խաչաչարչար ճգնութեան»: 728 թ. ապրիլի 17-ը (ըստ Հայսմավուրքի) համարվում է նրա մահվան օրը, իսկ Արդվի օյուղը՝ նրա ամփոփման վայրը: Օրմանյանը այսպես է գրում Օձնեցու մասին. «Օձնեցին կաթողիկոսական Գառազնագիրքին լուսաւոր պարծանքներէն մեկն է իր ուսումնական զարգացմամբ, եկեղեցական նախանձալուգութեամբ և վարչական կարողութեամբ, որով նոր կեանքի նուիրագործումը կատարեց ազգին մէջ, խաղաղ կենցաղ մը պատրաստելով քաղաքականապես և անխառն եկեղեցական կացութիւն մը եկեղեցականապես»¹⁰:

Ինչպիսի՞ վերաբերմունք են դրսևորել Օձնեցու նկատմամբ հոռմեադավան հայերը: Օրմանյանն այդ հարցին տալիս է հետաքրքիր պատասխան. նրանք չեն համարձակվել զովեստով արտահայտվել հակաքաղկեդոնիկ Հայրապետի մասին, քայքայ և չեն ցանկացել վիրավորել այդպիսի մի պայծառ անձնավորության: Նրանց փոխարեն այդ գործն իր վրա է վերցրել Կղեմես վարդապետ Գալանոսը: Հայ և Հռոմեական եկեղեցիների միացման հարցերին նվիրված իր աշխատության մեջ նա Օձնեցուն փորձում է անարգել տարբեր արտահայտություններով, անգամ զարմանալով, որ նրան սուրբ են համարել:

Մխիթարյան միաբանության անդամները խորշելով հետևել Գալանոսին, Օձնեցուն քարձրացնելու համար նրան ներկայացրել են որպես քաղկեդոնիկ: Չամչյանն իր «Պատմություն Հայոց»-ի մեջ 102 էջ է նվիրել այդ տեսակետն ապացուցելու համար: Նա փոխել է Մանազկերտի ժողովի հրավիրման ժամանակը, ստեղծել ժողովը հրավիրող նոր անձ՝ Հովհաննես Մանազկերտցի: Չամչյանի աշակերտները նրան փոխարինեցին Հովհաննես Տեկորեցիով, իսկ քննարկելով Օձնեցու ճառերը, նրան համարել են ուղղափառ և պաշտպանել Պրոպագանդայի գրաքննության հարձակումներից:

Այսօր էլ, երբ օրվա հրամայականն է պայքար մղել զանազան աղանդների դեմ, որոնց գործունեությունը միտված է ազգային միասնությունը քայքայելուն, Հովհաննես Օձնեցու գործունեությունը մի նոր խորհուրդ է ստանում, որովհետև պաշտպանելով Հայ եկեղեցու ինքնությունը, իմաստասեր Հայրապետը պաշտպանել է և հայության ինքնությունը, ազգության ինքնությունը:

¹⁰ Նույն տեղում, 1,9 583:

րից և կյանքում դրանց գործադրողներից մեկն էր⁶։ Մ. Արեղյանը գրում է. «Նա ոչ միայն ուրիշներից հորդորել է գիտությամբ պարապելու և դպրոց ունենալու, այլև ինքը շարունակ սիրով ու անխոց հետևել է դրան՝ նշանաբան ունենալով «պատարում ընթերցմամբ... լուսաւորել գանձ»⁷։ Ուսումնական համակարգը պետք է հետևյալ առարկաները ներառեր իր մեջ.

1. Հիմ և Նոր կտակարանների ուսուցում և առասպելավարժություն.

2. Քառյակ արվեստներ՝ խստադաքաշություն, երաժշտություն, երկրաչափություն, մաթեմատիկա/.

3. Եռյակ արվեստներ՝ քերականություն, հոնտորական արվեստ և դիալեկտիկա⁸, թարգմանությամբ հանդերձ «...և ապա սահմանացն պարունակելալ»։ Այստեղ նկատելի է, որ սարքական կրթությունը, որպես պարտադիր ուսուցման պահանջ, ամբողջացում է Ս. Գրքի և առասպելաբանության ուսուցմամբ։ Այդ մակարդակում հանձնարարվում է «հոմե-րական», ինչպես և «ալատոնական», «արիստոտելական», «պիթագորական» ու այլ «արտաքին» հեղինակների մատյանների ընթերցումը։ Միջնակարգի ծրագիրն ավարտվում է քառյակի ուսուցմամբ, որին Մագիստրոսն ավելացնում է նաև թարգմանության տեսությունը, ինչը բոլորովին նոր մոտեցում է։

Գիտնականը կանգ չի առնում և այս սահմանի վրա։ Ուսման հետագա ընթացքը պայմանավորում է եռյակ արվեստների ուսուցմամբ։ Այստեղ էլ նա լրացում է կատարում՝ եռյակին հավելելով Դավթի «Սահմանաց» գրքի ուսումնասիրությունը։ Այս ծրագիրն անտիկ դպրոցի յոթ ազատ արվեստների ուսուցման տեսությունն է, որը լրացված է նոր առարկաներով։ Այն ոչ միայն առաջադիմական էր, այլև բավարարում էր ժամանակի պահանջներին, բխում էր միջնադարյան կրթության ու գիտության հիմնարար սկզբունքներից։ Լայն առումով Գր. Մագիստրոսը միջնադարյան նոր դպրոցի հիմնադիրներից մեկն է։

Ըստ Մագիստրոսի՝ ուսուցումն ավելի դյուրին կլինի, եթե դասավանդվող առարկաները մատուցվեն տարբերակված ձևով, այլապես բուն նպատակին հասնել հնարավոր չի լինի, և սովորական աշակերտը չի կարող դառնալ իմաստասեր։ Հարկ է նախ բնական գիտություններն ուսանել և հետո՝ աստվածաբանությունը, «զի երկին ճեմարան լիցի մոցա»⁹։ Մի շատ կարևոր հանգամանք ևս. 10-11-րդ դարերի թուր տիպի դպրոցները տալիս են բազմակողմանի կրթություն և ընդհանուր զարգացում։ Մյուս կողմից՝ այդ հարցերում խիստ նախանձախնդիր եկեղեցական ու հոգևոր գործիչներն առաջնային տեղ են հատկացնում ավետարանական մեկնություններին՝ դրանցում տեսնելով սուրբգրային խոսքը ճիշտ հասկանալու և վերծանելու ճանապարհը¹⁰։

Հայ մանկավարժական միտքը առաջադիմել է մտավորականության շնորհիվ։ Վերջինս,

⁶ Լ. Խաչերյան, Գրիգոր Պառլավունի Մագիստրոս, Լոս Անջելես, 1987, էջ 259-329։

⁷ Մ. Արեղյան, Երկեր, հ. Դ, էջ 37։

⁸ Ս. Մխիթարյան, Գր. Մագիստրոսի կյանքը և գիտարվեստական մատակությունը, Ե., 2001, էջ 25։

⁹ Թղթյուր, էջ 8։

¹⁰ «Մեկնութիւն վամակարգութեան արաբնայ կրանկլոյն խոսքովու Անձնացնաց Եպիսկոպոսի, և կարգաւորակ Մովսէսի գիտնական վարդապետի», Օրբագիտ. 1840, էջ 5-7։ Նաև Տ. Տ. Թամրազյան, Նաղթնական դրաբոգր, Ե., 1999, էջ 43-45։

որպես Ռոզետր դասի կարևոր մաս, անեց ձեռք գրա մեքսան՝ Եկեղեցու միջոցով զարգացնելով գիտությունը և կրթությունը¹¹: Հոգևորական-մտավորականը մաս ստանում էր վարդապետի գիտական աստիճան քարոզում Լուսավորչի ուսմունքը¹², կրում վարդապետական զավագան, որպես մշամակ Հայ Եկեղեցու կողմից տրված քարոզելու և վարդապետելու իրավունքի¹³:

Սամահնի վանքի իր ուսուցչապետերին ու մաս գործընկերներին Մագիստրոսը խոնարհաբար գրում է. «իշելով զճայրական ծերոցդ ծայրագունից խմամս առ մեզ և խրատ և ողորմութեամբ բարեկարգութիւնս, և զերիտասարդացն, որք ի վարժարանսն, հոնտորական և երաժշտական զմոցայն զմտաւ ածեալ համդէս և զմրցումն և զգեղեցիկ մոլութիւնս.....վերառեցեալ»¹⁴:

Այսպես են ճեմարանակները գեղեցիկ մոլությամբ մրցում իրար հետ և այսպես ստանում կրթություն ու դաստիարակություն, ինչն անգամ չկա ո՛չ սկյութների, ո՛չ թեքեացիների մոտ: Մագիստրոսը ստեղծում է մաս այդ համեստ, բայց իմաստուն ճգնակյացների դիմակարը, որոնք թեթև մորթիներով են մարմինները ծածկում, սակայն դիմանում են ձմռան ցրտին ու ամռան տապին, հաճախ սնվում «թթիկով» միայն, կրում ծանր երկաթյա խարազանագցեստ ու քուրձ, որպեսզի երբեք չմոռանան իրենց Ռոզետր կոչումը, իրենց պատասխանատվությունը Տիրոջ առաջ, որը զայիս է «ի մերոյն Պարթևն Սրբոյն Սահակայ»: Բայց որքա՞ն հոգատար են նրանք իրենց սաների մկատմամբ, ինչպե՞ս են սիրում նրանց, անմնացորդ մվիրումով տալիս իրենց անբավ գիտելիքները, ինչը սաները խորացնում են իրար հետ բանավեճերի և մրցությունների միջոցով:

Որպես ուսուցչապետ՝ Մագիստրոսը մվիրված է իր սիրելի աշակերտներին: Նա առանձնահատուկ քնքշամեղով է խոսում Բարսեղ և Եղիսն եղբայրների, Սարգիս գիտնականի /Ս. Կարապետի վանք/, իր որդի վեստ Վահրամի և ուրիշների մասին:

Լսելով, որ Պետրոս Կաթողիկոսը Բարսեղին և եղբորը համձնարարել է Արիստոտել ուսումնասիրել, տազմապում է, քանզի նրանք տարիքային առումով փոքր են ու դեռևս չեն անցել այն անհրաժեշտ դասընթացը, որպեսզի կարողանան ուսումնասիրել իրենց ուսուցչի համձնարարածը: Այդ մասին գրում է. «Արդ լուրս եթէ Աստուծոյ փոխանդ մեր տունեայ է ձեզ Արիստոտել, կամի՞ք եթէ առաքէք դա մեզ, քանզի մախ պարտ է զքերականութիւնն հանդերձ թարգմանութեամբն ուսանել..... և զկնի այսր զհոնտորականն»¹⁵: Հետաքրքիր է, որ դրա փոխարեն Գր. Մագիստրոսը ցանկանում է նրանց համձնարարել Արիստոտելի տիեզերագիտությունը, որտեղ «ասացեալն է յաղագս երկնային մարմնոյն և զմղատեսութեան երկրի կամ յաղագս օրինադրութեան կենցաղոյն»¹⁶:

Այնուհետև անդրադառնում է Պոպիյոտրի փոխտապալական աշխատություններին, որ կապված են հասկացությունների սահմանումների հետ: Ուրեմն մա խստագույնս հաշվի է

¹¹ Ջ. Եվեթյան, Մարտի Ե դարի հայ գրականության մեջ, Էջ 119-122:

¹² Մ. Արևոյան, Երկեր, հ. Դ, Էջ 175:

¹³ Տ. Տաճար Ետրորենան, «Վարդապետ»-ը հայ Եկեղեցու մրտաճողութեան մեջ, Վենետիկ, 2001, Էջ 52-71:

¹⁴ Թեթև, Էջ 136-137:

¹⁵ Նույն տեղում, Էջ 105:

¹⁶ Նույն տեղում, Էջ 106:

առնում աշակերտների տարիքային առանձնահատկությունները՝ նյութի բարդության հաշվառումով: Այս ամենի հետ միասին նա կարևորում է աշակերտների մտավոր ունակությունները, հետևում Պլատոնի խորհրդին, թե «Անեղկրաչափական ոք մի՛ ներամտեսցե, ...զի մի՛ ոք անկատար ի քառիցն ենթակայե մտցե ի լսարան»¹⁷: Լսարան մտնողը պետք է տիրապետի քառյակին, այլապես նա տեղ չուի: Թող նրանցից յուրաքանչյուրը հետևի հյուսնի բարի օրինակին, որն ինքն անձամբ չի կտրում փայտն ամտառում կամ տեղափոխում: Նրա գործն է սղոցել ու հարթել այն, որից հետո գործիքներ պատրաստել: Ուսյալ մարդիկ էլ իրենց աստվածաբանական գործով պետք է զբաղվեն, այլապես ոչինչ չի ստացվի:

Իսկ ծուլ ու հեղձ աշակերտներին բարդ ու խրթին հանձնարարություններ է տալիս, որ նրանք տքնեն ու այդ ճանապարհով հասնեն արդյունքի: Նման դեպքերում իր թղթերին հաղորդում է հանելուկային թմույթ¹⁸, որ նրանք փորձեն վերծանել դժվարին գրվածքը: Մագիստրոսյան ուսուցման գործընթացում կարևորվում է նաև երեխաների կամային հպտկությունների դաստիարակումը, ուր ամենաառաջնային տեղում է հայրենասիրությունը: Այդ պարագայում միշտ կարևորվում է նախնիների հիշատակի նկատմամբ առանձնահատուկ հարգանքը: Քաջալերելով որդուն՝ հորդորում է.

Արդ միլարեայն դու պնդեա՝ զլայնալիճ հայրենին,
 Զերեքթևեանն դու մխեա՝ յառաջ մատի՛ր և քաղեա՛.
 Այս քեզ Բելայն հաս հանդէս և Թորգոմեանն Հայկայ.
 Աճապարեա՛ և փութա՛, զի ես կադմեանն Արամեան.
 Ահա հրոսակք անցի՛ն, ահա հասի՛ն քեզ քաղդեայք.
 Այլ դու Տերամբ գորացի՛ր և Թիսուսի պարծեցի՛ր¹⁹:

Որդուն սովորեցնում է նախ իր հզոր նախնիների քաջագործությունները: Լինել նրանց պես ուժեղ ու կորովի, չերկնչել թշնամուց: Հաղթել պետք է ոչ թե թվաքանակով, այլ ոգով: Դրա օրինակն առասպելական նախնին է՝ Հայկը: Զի մոռանում սովորեցնել պատանի վահրամիճ նաև քանաստեղծական արվեստի սկզբունքները՝ այս դեպքում ևս մնալով որպես իմաստասեր-ուսուցչապետ: Նա մշտապես հոգում է աշակերտների գիտելիքների համալրման համար: Անկախ տարիքից՝ մարդ պետք է մշտապես ընթերցի և զբաղվի իր ինքնակրթությամբ, իսկ եթե ծուլանում է, ապա նրան պետք է պատժել: Կիրակոս Ռոյն դարին, որ իր նամակագիրներից մեկն էր, զայրացած գիտնականը հանձնարարում է ծերության հասակում լրացնել գիտելիքների պակասը՝ ընթերցելով. «զմատեանն երրորդ Գաղիանոսի ի չորրորդում տառի իրում եպիդիմական տիմի տրամաբանութեան, որ ի սակս կազմութեան մարդոյ, և զՍիսալիոսին, որ յառաջնումն մատենի ի բաղկացութեմէ

¹⁷ Նույն տեղում. Լ. 9:

¹⁸ Ա. Այնթապեան, Հայ միջնադարյան եսմակը /4-14-րդ դարեր/, Ե., 1997, Լ. 186-187, Գ. Մենեխյան, Գրիգոր Մագիստրոսի «Գամակրականի» ամբողջական լուծումը, Վիեննա, 1912, 157 Լ:

¹⁹ Թղթեր, Լ. 9 234:

սերմնատառնում»²⁰։ Լավ տիրապետելով ման բժշկագիտության սկզբունքներին ու տեսական գիտելիքների աղբյուրագիտական մասին՝ մա կարող է դասեր տալ և սկսմակ գիտնականներին։

Գր. Մագիստրոսը և մյուս ուսուցչապետերը մշտապես մտաճգված էին ման հայ դպրոցի դասագրքերի հարցով։ Իր ուղի վետս վահրամի խնդրանքով մա գրում է իր հասունի «Մեկնութիւն քերականին» աշխատությունը²¹, որը ներառում էր մախորդ քոյոր հայ քերականների մեկնությունները և բավարարում ժամանակի պահանջներին իբրև դասագիրք²²։

Գր. Մագիստրոսը միջնադարյան Հայաստանի նշանավոր գիտնական-մանկավարժներից է, մեծ նորարար և դպրոցաստեղծ։ Նրա գործը շարունակել են նրա սաները և հետագա ժամանակների նշանավոր մանկավարժները՝ գիտակցելով իրենց կատարածի կարևորությունը, հարստացնելով հայ միտքը նոր ձեռքբերումներով։

²⁰ Նույն տեղում, էջ 113։

²¹ Լ. խաչերյան, Գրիգոր Պաղյալանի Մագիստրոս, էջ 348, բնագիրը էջ 357։

²² Գ. Զախուկյան, Ջերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում /5-15-րդ դդ./, Ե., 1954, էջ 61։ Նաև՝ Дюбинский Фракийский и Армянские толкователи, Петроград, 1915, с. XLII-LXX, 221-250.

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

*Պատմական գիտությունների թեկնածու*ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ
ԱՆՈՒՄ

Հայ միջնադարի ամենամշանավոր գործիչներից էր Հովհաննես Սարկավագը՝ բացի-
քում վարդապետ, աստվածաբան, փիլիսոփա, մատենագիր, տոմարագետ, մանկավարժ,
երաժշտագետ, բանաստեղծ։ Սկզբնաղբյուրները նրան ծագումով համարում են Փառխոս
գավառից, քառամայական տոհմից։ Վաղ հասակից ուսանել է Հաղբատի վանքում, իր քե-
ռու մոտ, ապա աշակերտել Գեորգ Ուռնացի մշանավոր վարդապետին¹։

Հովհաննես Սարկավագի բազմարդյուն կյանքը կապված է եղել երկու կենտրոնների
հետ՝ Հաղբատի վանք և Ամի քաղաք։ Հաղբատում ուսում է առել, հետագեղ գիտության
մեջ, այնուհետև եկել է Ամի, գլխավորել տեղի վարդապետարանը, գրել իր երկերի մի մա-
սը, որոնք ամհրաժեշտ էին ուսումնական գործընթացի համար։ Եղել է ժամանակի ամե-
նահեղինակավոր վարդապետներից մեկը, հանրագիտակ անհատ։ Վարքագիրը նրա մա-
սին ասում է. «Յամենայն դեմս բացի եւ գործոյ, տեսութեան եւ յառաջբերութեան, գրելոյ եւ
ընթեռնոյ, պատմագրութեան եւ վարդապետական վերլուծութեան, մարգարէականին եւ
առաքելականին այնպէս կատարելագոյն գտաւ, որպէս եւ ո՛չ ոք ի մինն միայն համբաւ-
եալ...»²։ Նրա մասին մեծարանքով են խոսում պատմիչներ Սամվել Անեցից, Վարդան
Արևելցի, Կիրակոս Գանձակեցի, Մխիթար Այրիվանցի և ուրիշներ։ Կյանքի վերջում
Հովհաննես Սարկավագը կրկին վերադարձել է Հաղբատ, մահացել ձեր հասակում 1129
թվականին։ Հաղբատում պահպանվել է նրա տապանաքարը։

Հովհաննես Սարկավագը մատենագրական հսկայական ժառանգություն է թողել, որը
դեռևս չի ուսումնասիրվել ամբողջությամբ մեջ։ 1956 թ. Ա. Աբրահամյանը հրատարակել է
«Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» ժողովածուն, ուր տեղ են գտել Սարկա-
վագի պատմագիտական, մաթեմատիկական, տոմարագիտական, փիլիսոփայական և
գրական որոշ երկեր, սակայն զանց են առնված «կրոնական հայտնի և անհայտ գործե-
րը»³, որոնք պիտի հրատարակվեին առանձին գրքով, բայց չհրատարակվեցին։

Սարկավագի կյանքի ու աշխատությունների մասին (ըստ գործունեության և գիտական
ուղղությունների) բազմաթիվ հրապարակումներ են եղել⁴։ Ստորև մեր նպատակն է պահ-

¹ Հովհաննես Սարկավագի վարքում նշված «Ուռնացի» վարդապետին իրավապիտրև Գեորգ Ուռնացու ենթ
վ երկուսնալում Կ. Մխիթ-Օհանջանյանը։ Մարթնոս Ռոմայնցիև և Վարդան Արևելցիև Գեորգ Ուռնացուն կոչում
են «վարդապետ Հայոց», «յուսարդիջ Տան Հայոց»։ Ապրել է շուրջ 100 տարի, մահացել 1091 կամ 1093 թ. և
թաղվել Կամրջանորի վանքում։ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մխիթ-
Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 2։

² Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 120։

³ Նույն տեղում, էջ 350։

⁴ Լ. Միլիան, Սարկավագ ստիկոսը, Յուրիկ Խայրենյան Հայոց, հ. Բ., Վենետիկ, էջ 279-307։

ռուցված և ամբողջովին գտնվում էր արքունիքի հովանավորության ներքո»⁹։ Մինչդեռ Հովհաննես Սարկավագի ապրած ժամանակներում Շեղադյան ամիրաների իշխանության տակ գտնվող Անիում համառակական ճշմարտություն ունեցող բարձրագույն դպրոց կարող էր բացվել միայն եկեղեցական բարձր հովանավորության պայմաններում։ Ինչ վերաբերում է դպրոցի ուղղվածությանը, ապա այն տալիս էր հոգևոր բարձրագույն կրթություն, որը ներառում էր ժամանակի գիտության բոլոր հիմնական ուղղությունները։

ԺԱ դարի վերջերին Անիում կարճ ժամանակով վերականգնվեց կաթողիկոսական Աթոռը, երբ Գրիգոր Վկայասերի (կթղ. 1066-1105 թթ.) համաձայնությամբ Հաղբատում կաթողիկոս ձեռնադրվեց ու հանդիսավոր երթով Անի եկավ Բարսեղ Ա Անեցից (կթղ. 1081-1113 թթ.)։ Նրա կատարած կարևոր գործերից մեկը պիտի համարել Անիում կաթողիկոսարանի վարդապետարանի վերաբացումը։ Դեռևս Արգիճայից սկզբնավորվող, ապա մայրաքաղաքում գործող բարձրագույն հոգևոր դպրոցն էր, որ կրկին կյանք առավ Բարսեղի հոգածությամբ և ժամանակի ճշմարտ վարդապետ Հովհաննես Սարկավագի ուսուցչապետությամբ։ Այս էր պատճառը, որ բարձրագույն կրթություն ստանալու համար Սարկավագի մոտ էին գալիս Հայոց երկրի տարբեր ծայրերից, վարքագրի բնորոշմամբ՝ որպես «իմաստութեամբ զանազան վաճառականք», Անիում ուսանելով՝ դառնում «ուսուցիչք և լուսաւորք ոգով», և վերադառնալով իրենց գավառները՝ վարդապետի պատգամները տարածում ողջ Հայաստանում՝ «...ճորայն առասացութիւնք լցին զոլորտս Հայաստանեայց»¹⁰։

Կենսագրի վկայության այս մասնում ոճով է արձանագրվում նաև Հովհաննես Սարկավագի ընդօրինակած, խմբագրած Սաղմոսարանի տարածումը՝ «գոր վերահասու եղեալ մեծ իմաստաւերն Հայոց հոգեխառն վարդապետն սուրբ Յովհաննէս մականուն Սարկաւագ, որ... գտեալ... թաղմանցազիր Սաղմոսարանն և պարապեալ ի յայնմ յաւորս բազումս, ի լոյս էան... և ցրուեաց ընդ ամենայն սահման Հայաստանեայց»¹¹։

Այն, որ Հովհաննես Սարկավագը զբաղվել է ոչ միայն տեղական (Հաղբատ, Անի), այլև համահայաստանյան խնդիրներով, երևում է տոմարական բարեփոխման ուղղությամբ նրա կատարած աշխատանքից։ Հայոց տոմարի մախըմբաց պատմությունը ցույց է տալիս, որ տոմարական խնդիրները, որոնք եկեղեցական տոների կարգավորման տեսանկյունից առաջնային ճշմարտություն ունեին, միշտ էլ լուծվել են Հայոց կաթողիկոսի և ժամանակի ճշմարտ վարդապետներից մեկի համագործակցությամբ։ Ջ դարում մեծ գործակցության մեջ էին Մովսես Բ Եղիվարդեցից և Աթանաս Տարոնացի, Է դարում՝ կաթողիկոս Անաստաս Ակոռեցի և Անանիա Օիրակացի, ուստի ԺԱ դարում էլ Հովհաննես Սարկավագ վարդապետի կողքին պետք է տեսնել Բարսեղ Ա Անեցուն։ Իրավացի է Մ.

⁹ Ա. Մովսիսյան, Եզվ. աշխ., 19 243։

¹⁰ Ա. Սրբախամյան, Եզվ. աշխ., 19 120։ Անիի դպրոցում դասավանդվող առարկաների, ուսումնական գործընթացի և այլ հարցերի մասին Եզվում Լ վարդապետի վարքում, որի ենթիկապը այդ մասին տրվելուց էլ Սարկավագին ծանոթ անձանցից։ Այս հարցերի մասին ավելի հանգամանորեն տրևն Ա. Սրբախամյան, Եզվ. աշխ., 19 26-27, 120-121, Ա. Մովսիսյան, Եզվ. աշխ., 19 410-420։

¹¹ Ե-ԺԱ դդ. հայերեն ձևապատկերի հիշատակարաններ, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, 19 157։

¹⁹ Մ. Օրբանյանը տոմարի կիրառության ամենադանդաղ գրքում է՝ «գուրգ գործը Վկայասկիս ներկայացուցին, իսկ նա պաշտօնական հրամանը գանգ թրա...» (Մ. Օրբանյան, Խշվ. աշխ., էջ 1530): Գրիգոր Վկայաների թույլ վարչադատության և այլ պատճառներով 1070-90-ական թվականներին առաջացել էին մի բանի հակառոտ կաթո-

Այսպիսով, Հովհաննես Սարկավազն Ամիում զբաղվում էր մանկավարժությամբ, նաև տոմարական հարցերով և իր սաներին էլ այս ուղղությամբ անհրաժեշտ գիտելիքներ տալիս, որի մասին ճշվում է նրա վարքում. «...կրթեր, արկաներ ի գիրս նուրբս եւ դժուարալուրս..., Յետ այսորիկ ի խոյզ եւ ի քնին ընթացից լուսաւորացոյ մտեալ, տայր զտմարել ի միատեսակ եւ յանստերիւր թիւս տոմարի, զուշ եւ զակն ոգոց: Եւ տեղեակ առնէր տօմից կարգաւորաց եւ փոփոխմանց ամսոց եւ ամսնակաց եւ եղանակաց...»²⁰: Այս գիտելիքները լավագույնս կիրառեց նրա սաներից մեկը՝ հետագայում Ամիի Մայր տաճարի ավագներեց դարձած Սամվել Ամեցիւն, որը Եփեսքոս Կեսարացու Քրոնիկոնի սկզբունքով կազմեց Ադամից մինչև իր օրերը հասնող ժամանակագրություն, նաև գրեց տոմարագիտական աշխատություն՝ «Մեկնութիւն տոմարի»²¹: Սարկավազի՝ Ամիի աշակերտներից պատմության մեջ հիշվում են նաև Երեմիա Աճռիկ և Սարգիս Կունդ վարդապետները, նաև անցիկներ Նաչատուրը, Գրիգորը, Հովհաննեսը²²:

Ամիում Հովհաննես Սարկավազն առաջին հերթին պատրաստել է գրքեր, որոնք անհրաժեշտ էին ուսումնական գործի համար: Ինչպես կենսագիրն է ճշում՝ «ամենայն մտեմացեալ և խաւրացեալ գիտութիւնք, որ ի տգիտութենէ... ծածկեալ աղաւաղեցան, որ ի մախմեացն, սորին աշխատաջան երկովք եւ արագութեամբ մտաց զարդարեցան եւ ցնծացան անձիմք տեսասէր եւ լսասէր արանց»²³:

Ամցյալի գիտամշակութային ժառանգության վերհանումը կարևորում էր դեռևս Գրիգոր Մագիստրոսը, երբ Ամիում մտող Պետրոս Գետադարձ Կաթողիկոսին գրած թղթերում հորդորում էր ուսումնական գործընթացում կիրառել Ամանիա Օիրակացու Քննիկոնը, որը գտնվում էր կաթողիկոսարանում: Ընդհանրապես Ամիի կաթողիկոսարանում, արքունիքում, եկեղեցիներում բազմաթիվ արժեքավոր մատյաններ էին պահվում²⁴, պակաս հարուստ չէր նաև Հաղթատի վանքի մատենադարանը: Սակայն 1045 թ. Բագրատունյաց թագավորության անկման, ապա սելջուկյան ներխուժման ու երկրի ծանր վիճակի հետևանքով այդ գրավոր հարստությունը անուշադրության էր մատնվել: Այն վերստին կյանքի կոչելուն էին ուղղված Հովհաննես Սարկավազի ջանքերը: Ջեռագրերում պահպանված մատենագրական տարբեր միավորների խորագրեր, հիշատակարաններ ու այլ տվյալներ

դիկտություններ: «Ակայասերն անգամ կայուն աթոռանիստ չունեն և որոշ իմաստով կաթողիկոսական լիազորությունները հանձնել 1ր Բուրսեղ Անեցուն: Վերջինս ինագանդկյուն կամ վերացրեց հակաթոռ կաթողիկոսությունները: 1105 թ. մանամեծը Վկայասերի կանչով Բարսեղը գնաց Ջնսունի հայկական իշխանություն: Գրիգոր Վկայասերի մահից հետո նա մինչև կյանքի վերջը (1113 թ.) այլևս Ամի չվերադարձավ: Հաջորդ կաթողիկոսը՝ երիտասարդ Գրիգոր Գ Պապականի (կթղ. 1113-1166 թթ.), որոշ ժամանակ անց Ջնսունից տեղափոխվեց Խովք ամրոց, երկու անգամ փորձ կատարեց հաստատվել Ամիում, սակայն ապարդյուն: Ի վերջո 1150 թ. հաստատվեց Հոմկլայում:

²⁰ Ա. Արրահամյան, ԼՂՎ. աթխ, 19 121:

²¹ Ա. Արրահամյան, Սամվել Անեցու տոմարական և քրիստոնեական աշխատությունները, «Էջմիածին», 1952, Ա. 19 30-36:

²² Սամուել Անեցի, Հաւարմուք ի գրոց պարմագրաց, աշխատասիրությամբ Ա. Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893, 19 128 (այսուհետև՝ Անեցի):

²³ Ա. Արրահամյան, Հովհաննես Իմաստասերի..., 19 120:

²⁴ Կ. Մաթևոսյան, Ամի, Ս. Էջմիածին, 1997, 19 225-240:

յաճ» պոեմում մշակված է մի թարմ թեմա՝ մարդու և բնության հարաքերության հարցը. ա) Բնությունը ի դեմս Սարյակի, արվեստների սկզբնաղբյուրն է, որից սովորել ու սովորում է մարդկությունը, ք) Մարդկությունն անադղապ է, որ հալածում է բնության ստեղծագործ ուժերին: ...«Բաց իմաստության» պոեմի մեջ քննված արվեստի հարցերը ծնվել են Ամիի միջավայրում զարգացած մշակութային ըմբռնությունների հիման վրա³²:

Եկատեմք, որ, ի հարկե, Անիի Հովհաննես Սարկավագի ժամանակ Բագրատունյաց շրջանի փայլը չուներ, սակայն դա մի ժամանակ էր, երբ իր ուրույն դիմագիծն էր ձեռք բերում քաղաքային դասը: Քաղաքի մահմեդական տերը՝ մոր կողմից ծագումով հայ Մանուչե ամիրան (1065-1110 թթ.), իր իշխանության առաջին տարիներին քայլ առ քայլ վերացնում էր Ալփասլանի գործած ավերածությունների հետքերը և քաղաք հրավիրում հեռացած հայ ազնվականներին³³: 1072-ից քաղաքի եպիսկոպոս դարձած, իսկ 1081-ից կաթողիկոս ձեռնադրված Բարսեղ Անեցիի ավելի մեծ թափ հաղորդեց Անիի քաղաքացիության դիրքերի ամրապնդմանը: Այս շրջանում Անիի շարունակում էր պահպանել արհեստավորական ու առևտրական, մաս եկեղեցական ու մշակութային կենտրոնի համբավը, հայության գիտակցության մեջ մնում էր որպես «քաղաքամայր»: Իրավացի է Մ. Արեղյանը, երբ գրում է. «Արդարև Բագրատունի թագավորների օրով արդեն Անիում... մեծ ձգտում և ջանք կար գիտությունը նորոգելու հայերի մեջ և այդ ձգտման ու ջանքի ներկայացուցիչն էր Գրիգոր Մագիստրոսը, բայց իսկական կատարողը, գլուխ բերողը եղել է Սարկավագ վարդապետը: Նա շարունակել է Անի քաղաքի գործը, ամպայման մասն այս քաղաքի ազդեցությամբ...»³⁴:

Այժմ ավելի մանրամասնորեն անդրադառնանք Հովհաննես Սարկավագի պատմագիտական գործերին կամ, ինչպես սովորաբար նշվում է, «կորած պատմությանը»:

«Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» գրքում Ա. Աբրահամյանն առանձին մի ենթավերնագրով անդրադառնում է հեղինակի «պատմագիտական աշխատություններին»: Նա գրում է. «Հովհաննես Իմաստասերի աշխատություններից, ըստ մատենագրական տեղեկությունների, արժեքավոր գործ է հանդիսացել նրա Պատմությունը: ...Հովհաննեսի այդ կորած Պատմությունը, Ալիշանի կարծիքով, բաղկացած է եղել երկու մասից. առաջին մասում շարադրված է եղել սկյութացիների պատմությունը՝ սելջուկների հանդես գալը, նրանց արշավանքները, Տուղրիլ բեկի, Մահմուդի, Ալփասլանի պատմությունները և այլն, իսկ երկրորդ մասում շարադրված է եղել Մելիքշահի պատմությունը»³⁵: Այնուհետև նա գրում է, որ այդ կարծիքը ճիշտ չէ, քանի որ կարծեցյալ առաջին մասը Սամվել

³² Աս. Մնացականյան, ԼՊՎ. աշխ., էջ 38:

³³ Վարդան Արևելյան Մխիթար Անեցու օգովելով այս մասին հաղորդում է. «...դրեք անը բաղաբն զՄանուչե... յանկու ի պարիսպս Անույ և յամրութիւնս նորա: Եւ ուն ի բաղաբն զամենա ի մնացեալ իշխանս: Եւ որպէս մեծա իստեղնայ ընդ լառաց կնալ մուծանի ի ներքս Գորիզորն գորդին Վասակայ գթոն Ապիրապին... պի փոլ իր մեծ գարաց և բագտմ ազապաց: Եւ իր եղբայր փոլ Բագտի, որ ... ձեռնադրեսա ի հաղարա կաթողիկոս երամանա և կամօք Մանուչի ի ամենայն հայոց: Եւ չինեցաւ բաղաբն Անի օչինչ պակաս բան զառաջինս»: Վարդան Արևելյան, Տիեզերական պարմություն, Երևան, 2001, (րեսադր) էջ 108:

³⁴ Մ. Արեղյան, ԼՊՎ. աշխ., էջ 70:

³⁵ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի..., էջ 34:

Անեցիցն չի գտել, ուստի դա առանձին գործ է տել. և եզրակացնում է. «Ինչպես տեսնում ենք... Հովհաննեսի պատմական աշխատություններից մենք ունենք ո՛չ թե մեկ, այլ երկու կորուստ»³⁶: Կորած առաջին գրքի մի հատված, ըստ Ա. Աբրահամյանի, տեղ է գտել Հաղկորուտի «Ջյոթուկում»: Այստեղ պատմվում է, որ 1110 թվականի օգոստոսի 13-ին Հաղբատում միսրամաները ենթարկվել են սելջուկների ամակնկալ հարձակմանը, սակայն կարողացել են ամվմաւ վանքից դուրս քերել իրենց մոտ գտնվող Կյուրիկյան Դավիթ թագավորին³⁷: Միանգամից ասեմք, որ 1110 թվականի դեպքը չէր կարող ընդգրկվել Ալփախլանի (մահ. 1072 թ.) թագավորությանը ավարտվող երկում:

Հովհաննես Սարկավագի սելջուկներին վերաբերող գրությունների մասին առաջինը հայտնում և դրանցից մեջբերումներ է կատարում նրա սան Սամվել Անեցիցն: Նա իր «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտ ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ» վերնագրով ժամանակագրությունը գրել է Կաթողիկոս Գրիգոր Գ Պաճկավունու (կթդ. 1113-1166 թթ.) պատվերով: Ժամանակագրությունն ավարտում է 1163 թվականով³⁸: Անեցիցն թեև ընդհանրապես գրել է շատ համառոտ, իր խոսքերով՝ «կարճ ի կարճոյ», սակայն պատվիրատուի պահանջը կատարելով (Կաթողիկոսն այդ ժամանակ հարաբերությունների մեջ էր Ամիի ամիրայի հետ և սելջուկների պատմությանը իմացությանը կարիքն ուներ) ավելի հանգամանորեն է անդրադարձել սելջուկներին և մասնավորապես Մելիքշահին: Վերջինիս մասին պատմիչի հաղորդումներն ուղղակի մեջբերումներ են Հովհաննես Սարկավագի գործերից:

Սամվել Անեցիցն իր պատվիրատուին սովորաբար բացատրություններ է տալիս Սարկավագի գրություններից քաղվածքներ ներկայացնելիս: Արաքներից հետո սելջուկների գերիշխանության հաստատման մասին գրում է. «Սկիթացոցն (սելջուկների, Կ. Մ.) առնուլ զբռնակալութիւն այսպիսի պատճառաւ: Ընթերցաք գրեալ վարդապետին մեծի, որ Սարկաւագ վերակոչի անուանեալ, զի ասէ...»³⁹: Հատվածի վերջում ավելացնում է. «Ջայսսիկ նշանակաւ գրոյ եցոյց մեզ իմաստասէրն մինչև ց/Մելիքշահն, զոր յիրում տեղւոյն գրեցից, սորին ձեռնտութեամբ»: Շարունակելով և Մելիքշահի նախնիների անունները տալով՝ Անեցիցն նշում է, որ ինքը ժամանակին տեսել է Սարկավագի գրությունը նաև նրանց մասին և եթե մատյանը գտնի, կվերաշարադրի. «Իսկ զհաւրն նորա (Մելիքշահի, Կ.Մ.) ժամանակ՝ զարիւնայանձին Ալփախլանայ եւ զնորին հաւրն եւ հաւուց, զոր Տուղլուպէկ եւ Մահմուտ եւ Սարչուկ անուանք են նոցա, տեսաք երթեմն գրեալ սորին (Սարկավագի, Կ. Մ.) ձեռաւք, ստոյգ գտակաւ, եթէ համդիպիմք մատենին եւ մեք շարագրեսցուք եւ թէ ոչ, լքցուք...»⁴⁰: Ինչպես երևում է, Սամվել Անեցիցն Սարկավագի այդ գրությունը չի գտել: Հետաքրքիր է, որ Սամվելի՝ Մելիքշահի նախնիների պատմությանը

³⁶ Լույս տեղում, էջ 35:

³⁷ Լույս տեղում, էջ 35, 136:

³⁸ Կ. Մաթևոսյան, Սամուել Անեցու «Ժամանակագրության» ավարտման թվականը և պատվիրատուն, «Պատմա-րանսիական հանդես», 1992, թիվ 1, էջ 156-162, Սամուել Անեցի (կենսագրական լրացումներ), «Էջմիածին», 2003, Ձ, էջ 47-57:

³⁹ Մաթևոսյան, ձև. թիվ 5619, էջ 88թ, Անեցի, էջ, 97:

⁴⁰ Մաթևոսյան, ձև. թիվ 5619, էջ 89թ, Անեցի, էջ, 98:

փնտրտուքը շարունակել է նրա կրտսեր ժամանակակից պատմիչը՝ Մխիթար Անեցի⁴¹:

Ալփապաղի մահվան մասին նշելուց հետո Սամվել Անեցի գրում է. «Աստուծո զխոստացեալ պարտսն հատուցից զմացուածս բանից, զոր եղող հարկ տեղոյն այնորիկ այսու պատշաճեալ ժամանակի: Զի ասէ Իմաստասէրն աստուածային՝ թէ «Իբրեւ առնոյր զփառս իշխանութեան բարեբաղուն Մելիքշահ...»⁴²: Ծարունակությունն ընդարձակ մեջքերում է Սարկավագի այժմ կորած երկից, ուր հիմնականում փառաբանվում է Մելիքշահը: Հատվածի վերջում պատմիչը նշում է, թե այս ամենն Իմաստասերն ասաց Մելիքշահի կյանքի մասին (որը տիրեց 20 տարի), իսկ հետո ինքը կգրի մասն նրա մահվան մասին ասածը. «Այդ՝ ասաց զայս զկենաց մորա, որ տիրեաց ամս Ի (20) իսկ զկմի գրեցից զոր ինչ վասն մահուան է ասացեալ»⁴³: Քիչ անց, խոստովանելով, պատմիչը գրում է Մելիքշահի մահվան, բայց նաև՝ քրիստոնյաների և մասնավորապես հայերի նկատմամբ նրա ունեցած բարյացակամ վերաբերմունքի մասին: Անեցին դարձյալ մեջքերում է կատարում Սարկավագի՝ չմոռանալով մեծարանքով հիշել նրան. «Ախորժելի եղև բամիւք դրուատիւք վարդապետին արքոյ գրել եւ խոստանալ դարձեալ գրել արուեստարան եւ երկայն ճառիւք: Եւ ... այսպէս է գրեալ, թէ ...»⁴⁴:

Ինչպես տեսնում ենք, Սամվել Անեցին կատարել է պատվիրատուի պահանջը և հնարավորինս նյութեր քաղել սելջուկների մասին: Համառոտաբան ժամանակագրի երկում այդ հատվածներն այնքան նկատելի են, որ հաջորդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին իրավացիորեն գրում է. «...մինչեւ ցՄելիքշահ սուլթանն գրեալ էր զպատճառ տիրելոյն նոցա մեծիմաստ վարդապետին, որ Սարկաւագն կոչէր, եւ երկրորդեալ էր Սամուէլ քահանայ...»⁴⁵:

Անեցին Սարկավագի քաղած ևս մի տեղեկություն ունի՝ 1097 թ. խաչակրաց առաջին արշավանքի և նրանց նկատմամբ բյուզանդական Ալեքսիոս Ա կայսեր ցուցաբերած թշնամական վերաբերմունքի մասին, որը գրելուց հետո նշում է. «Եւ այս բանքս գրեալ էր վարդապետին Սարկաւագին»⁴⁶:

Այսպիսով, Հովհաննես Սարկավագը Սամվել Անեցու ժամանակագրության մեջ առա-

⁴¹ Մխիթար Անեցու այժմ կորած բնագրից մնջերնում անկում՝ Վարդան Արևելյան գրում է. «Պատմական երկն Մխիթար Անեցին. . . այսպիս ասէ. «Ծովով աշխարհ եղև զտանկ գորպիսն ռուստանացն, որ ի բուրբաց և զտի շնորհօքն Մատուռնայ, այսպէս՝ Մաննուրն...Արքանայ որդի, յանկանից մեծացեալ...: Իսկ յառաջադէմն ի բուրբացն՝ որում անուն էր Մուսնափառայ Սաքսաբեալ որդի...: Եւ փոխ. գնա Մքիստայան իօրեղորորդի հօգորդին, որ նից զամենայն աշխարհ արևմտ եւ... հասանել յաթոռ թագաւորութեանն Մելիքշահն, բարի եւ խաղաղարար...»: Վարդան Արևելյան. (բնագիր) ԼԳ 99-102: Ինչպես տեսնում ենք, Մխիթար Անեցին ղեկավարությամբ 1 զգրկ սելջուկների պատմությունը, որը և իր երկում մեջ է ընդել: Այն հասցնում է մինչև հուլիսի Բ (1177-1187 թթ.). «որ կայր միւս ի պատմագիրս», ներառվում է Արևելյան նկարի ունենալով Մխիթարին: Դասկարով ոճից ու ժամանակագրական ընդգրկումից՝ այս պատմությունը Սարկավագի գրածը չէ:

⁴² Մատենադարան, ձև. թիվ 5619, էջ 98ա, Անեցի, էջ 115:

⁴³ Մատենադարան, ձև. թիվ 5619, էջ 99ա, Անեցի, էջ 116:

⁴⁴ Մատենադարան, ձև. թիվ 5619, էջ 99բ-100ա, Անեցի, էջ 118-119:

⁴⁵ Կիրակոս Գանձակեցի, էջ. 84:

⁴⁶ Մատենադարան, ձև. թիվ 5619, էջ 101ա, Անեցի, էջ 120, Հովհաննես Սարկավագի մասին Անեցու հայտնած վերջին տեղեկությունը վերաբերում է վարդապետի մահվանը. «ԵՏԸ (1129) Փոխնցս Ի Քրիստոս մահուամբ մեծ վարդապետն Սարկաւագն ի հաղարտ», Մատենադարան, ձև. թիվ 5619, էջ 105բ, Անեցի, էջ 129:

կարողար պատմիչի խոսքերը՝ «առեալ վարդապետ զհետ իւր», ոչ մի կասկած չէր ունենա վարդապետի ով լինելու վերաբերյալ: Ուռնայեցից այստեղ նրա անունը չի տալիս, քանի որ Բարսեղից ու Մելիքջառից բացի ընդհանրապես ուրիշ մեկի անունը չի նշում: Սակայն հատուկ շեշտում է, որ պատվիրակության կազմում է եղել նաև «վարդապետը», որն այս դեպքում, մեր կարծիքով, Հովհաննես Սարկավագն էր:

Նման ենթադրության օգտին է խոսում նաև հենց Սարկավագի գրածը Մելիքջառի մասին: Սամվել Անեցու միջնորդմամբ մեզ հասած Սարկավագի գրության մեջ Մելիքջառի մասին նշվում է. «Էր եւ ազատաբարոյ եւ մեծախորհուրդ, այլ եւ տեսիլ մարմնոյն արժանի թագաւորութեան. ըստ որում հեզութիւն ի քաղցրութիւն բարոցն լծակցեալ առնէր սիրելի ամենեցուն, գոր միայն կոչեցից թագաւոր եւ փարթամ: ...Սիրէր զազգս մեր այնքան, մինչ զի աղաթս հայեցէր եւ արհնդութիւնս, յորմէ եւ անդ երբեմն չոգաւ հայրապետն՝ աւ'ջ թէ միայն էր աշակերտեալ Քրիստոսական կրտսնից եւ կարգաց»⁴⁹: Այս տողերը գրված են ակամատեսի, մասնակցի ամփոփականությամբ ու զգացականությամբ:

Կարող է հարց առաջանալ, թե ինչո՞ւ Հովհաննես Սարկավագի վարքում չի նշվում նրա՝ Մելիքջառի մոտ զմայլու մասին: Բանն այն է, որ վարքը ոչ թե կենսագրության շարադրանք է, այլ «երիցս երանեալ ամենեւեցանիկ» վարդապետին որպես «մարգարէութեան եւ սքանչելեաց»⁵⁰ շնորհ ունեցող սուրբ անձ ներկայացնող գործ, ուր կենսագրական տրվելովները հաճախ երկրորդական են, եթե դրանք չեն կապվում կրոնական, հոգևոր գործերի հետ: Օրինակ, Հովհաննես Սարկավագի մասին հայտնի է նաև կիրակոս Գանձակեցու վկայությունը, թե վրաց Դավիթ Օհնարար թագավորը սիրով ու ակամածանքով էր վերաբերվում նրան, հետիտուն ընդառաջ գնում ու զուխը խոնարհելով՝ օրհնություն խնդրում՝ «Կարի յոյժ սիրէր զսա թագաւորն Վրաց Դաւիթ... այնքան զի մինչ լսէր զգալուստ նորա, յոտն յառնէր և եղանէր ընդ առաջ նորա եւ խոնարհեցուցեալ զզուխն՝ խնդրէր ի մմանէ օրհնութիւն»⁵¹: Այս մասին, զրեթե նույն խոսքերով պատմում է նաև վրացի հեղինակը՝ ոչ մի կասկած չթողնելով դրա ճշմարտացիության վերաբերյալ⁵²: Սակայն այս իրողության մասին նույնպես ոչինչ չի ասվում Հովհաննես Սարկավագի վարքում:

Վերադառնալով Սարկավագի պատմական թղթերին՝ պետք է նշենք, որ Սամվել Անեցին դրանցից չորս մեջբերում է արել, մինչդեռ Ա. Աբրահամյանը «Հովհաննես Իմաստաւերի մատենագրության» մեջ «Պատմության հատվածը Սամուել Անեցուց» վերնագրի տակ միայն երկու հատված է բերել⁵³: Դուրս թողնվածները ծավալով ավելի փոքր, բայց

⁴⁹ Մատենադարան, ձև. թիվ 5619, Լք 98ր. 100ր. Անեցի, Լք 115, 119: Նկարագրի 1, որ այսպիսով կ Սարկավագի կողմից է, հայրապետի, առանց անունը տալու (ինչպես Ռոմայնցիի վարդապետին): Ոճի հարց է:

⁵⁰ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստաւերի..., Լք 121, 124:

⁵¹ Կիրակոս Գանձակեցի, Լք 114:

⁵² «(Դավիթը) սիրով... գտնւ հոնկոր վարդապետ ի Հաղթար՝ Սարկավագ անուն. խոստովանելու նմա պատգանս իւր եւ կորուստեալ զպատուական գլուխն՝ որինք ի նման. եւ ետրլոր բնդ նմա եւ փարէր զպարսնոցաւ տուրա...»: Լ. Մելիքսեան-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հ. Ա. Երևան, 1934, Լք 219: Այս պատմական փաստին այս պատմական իրողության հետ կապը մեր պատմության մեջ կարելի է տեսնել ոչ միայն հայր-գլուխ սրբալից վարդապետի, այլև մի հեղինակավոր մարդու նկատմամբ, որն առնչվել է աշխարհի մեծամեծների հետ:

⁵³ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստաւերի..., Լք 129-130:

եան...»⁵⁹:

Հայտնի է, որ Աճիի Մայր տաճարը 1064-ին սելջուկները մզկիթի էին վերածել: Այն կրկին օծվեց 1124 թ., երբ վրաց Դավիթ Օիմարար թագավորը գրավեց Աճին: Թեև 1126-ին նա հարկադրված քաղաքը վերադարձրեց Օեղդադյաններին, բայց պայմանով, որ Կաթողիկեն մշտապես պետք է հայերին պատկամի: Փաստորեն, Հովհաննես Սարկավազը Աճիի Մայր տաճարում կարող էր սպասավորել միայն 1124 թվականին հետո:

Այսպիսով, եթե ընդունենք, որ նա Հաղբատից Աճի է եկել 1081 թվականին, ապա այս հիշատակարանի շնորհիվ կարող ենք ասել, որ քաղաքում է մնացել նվազագույնը մինչև 1124 թվականը: Ահավասիկ այս շուրջ չորս տասնամյակը գերազանցող ժամանակաշրջանը նկատի ունենալու դեպքում միանգամայն հասկանալի են դառնում վարքագրի՝ Հովհաննես Սարկավազի մասին ասած խոսքերը, թե նա իմաստության գանձերը բերում էր «ի քաղաք իւր եւ տեղի սննդեան» ի քաղաքամայրս Աճի»: Մ. Արեղյանը գրում է, թե հիշյալ խոսքերից կարելի է եզրակացնել, «որ Սարկավազ վարդապետն Աճեցի է եղել: Բայց նրա ծնողները կարող էին Փառիսոս գաւառից լինել և Հովհաննեսի մատաղ մանկության ժամանակ Աճի տեղափոխված, և Հովհաննեսն այստեղ մեծացած ու սնված, ուստի և Աճին նրա համար կարող էր համարվել «քաղաք իւր և տեղի սննդեան»: Այդպիսի եղելությունները ոչ սակավ են»⁶⁰:

Կարծում ենք, որ անհական ողջ շրջանում Հովհաննես Սարկավազը սերտորեն կապված է եղել նաև Հաղբատի հետ, որպես այդ վանքի միաբան⁶¹: Ռա մի ժամանակ էր, երբ Աճին, Հաղբատն ու Սանահինը վեր էին ածվում Հայ Եկեղեցու ինքնուրույնությունն ու սկզբնական անփոփոխությունը պաշտպանող գաղափարական կենտրոնի, որի հայրենասեր գործիչներն ավելի ուշ կոչվեցին «Հայոց հյուսիսային կողմանց վարդապետներ» կամ «արևելյան վարդապետներ» ընդհանուր անվանումով:

Հովհաննես Սարկավազի գործունեության անհական շրջանը նրան ներկայացնում է ոչ միայն որպես ուսուցիչ, գիտնական, արդյունաշատ հեղինակ, այլև երկրի ապագայով մտահոգ գործիչ: Ավելի հասկանալի են դառնում նրա երկերում առկա հայրենասիրական տոգորը: Կիրակոս Գանձակեցին նշում է, որ Սարկավազը «արար շարական Ղևոնդեանցն քաղցր եղանակաւ և յարմար բանիւ...»⁶²: Իսկ այդ խոսքերում հեղինակն Աստծուց խնդրում է ժողովել Հայ Եկեղեցու ցրված զավակներին, արտասուքն աչքերին երկրից

⁵⁹ Ա. Արքաեամյան, Հովհաննես Իմաստասերի..., էջ 126, հմմտ. Ե-ԺԱ դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 282: Հիշատակարանի ռովանդակությունը կասկած չի բոլո՞ւմ, որ խոսքը Հովհաննես Սարկավազի մասին է, որի սովորությունն էր հայրենի եկեղեցիներին գործերի համեմատական ճշգրտումն ու մատչելի վերաշարադրումը: Այն, որ մեր եկեղեցակր կոչվում է քահանա, անտվո՞ր չէ, բանի որ այդպես է անվանվում նաև իր մի շարք աշխատությունների խորագրերում՝ «Յովհաննու քահանայի յաղագս անկիւնաւոր թուոց», «Յոհաննու քահանայի յաղագս նդանակազ նւ տաւեհից նւ քանիստութեան ամաց...», «Յոհաննու քահանայի առ Սարգիս, վասն տաղիցն» և այլն: Ա. Արքաեամյան, Հովհաննես Իմաստասերի..., էջ 148, 252, 327, 330, Մխարաթ քն. Արամյան, Եղվ. աթխ., 55:

⁶⁰ Մ. Արեղյան, Եղվ. աթխ., էջ 446:

⁶¹ «Հաղբադի առաջնորդ նև համարել... Հովհաննես Սարկավազին, բայց այդ չի հաստատվում մատենագրական և վիճակիտ արձանագրությունների փյույսներով»: Կ. Ղաֆադարյան, Հաղբադ, Երևան, 1963, էջ 275:

⁶² Կիրակոս Գանձակեցի, էջ 113:

տարագրվածներին (վարատվածներին), և փրկել նրանց. «Հեղմամբ արեան սրբոց Քոց Ռօտապետաց զեկեղեցոյ Քոյ ցրուեալ մանկունքս ժողովեա՝ յուրախութիւն, ըզվարատեալս տրտմութեամբ եւ արտասուաց յորդափոս բըղխմամբ փրկութեան մերոյ պարգեւաց բաշխող»⁶³:

Իսկապես ողբերգական ժամանակի պարտադրանքով են զոված այս խոսքերը, որոնք եկեղեցում կատարվող կրոնական երգին մի նոր իմաստ են հաղորդում: Մ. Արեղյանն այս առնչությամբ գրում է. «Սառկավագ Վարդապետի այս աղոթքը շատ փոքր, իր ձևով շատ հասարակ... բայց իր բովանդակությամբ մեծ ու վսեմ է և անկեղծորեն քիսած լինելով իրականությունից, խորն ազդու է մանավանդ, երբ իր «քաղցր եղանակով» երգվում էր եկեղեցում...»⁶⁴: Ի մի բերելով հայ գրականությանն Ռիշյալ շրջանի պատկերը՝ նա ավելացնում է. «Իսկապես ծնվում է զրկած հայ ժողովրդին ի մի հավաքելու և փրկելու ձգտումը որոշ գաղափարախոսությամբ, որի առաջին արտահայտիչը գրականությանն մեջ՝ է մեծիմաստ Սարկավագ Վարդապետը»⁶⁵:

Այսպիսով, վանական միաբանությանն զրկում ուսում առած և գիտությամբ զորացած Հովհաննես Սարկավագը, զալով «իր քաղաքը»՝ Անի, ծառայեց որպես ուսուցիչ, կազմեց ու խմբագրեց դասագրքեր, դարձավ տոմարի բարեփոխիչ, առնչվեց ժամանակի հզորների հետ, բայց և ապրեց ժողովրդի հոգսերով: Նրան շատերն են կոչել իմաստասեր, սովորեցնող, սուրբ վարդապետ, իսկ մահվան մասին նշելիս կիրակոս Գանձակեցին գրում է. «Եւ այսպիսի բարոյք քաղաքավարութեամբ կեցեալ յաշխարհի՝ փոխեցաւ ի Քրիստոս աշխատասերն ի Հաղբատ»⁶⁶:

⁶³ Մ. Արեղյան, Եզվ. աղյւս., էջ 71:

⁶⁴ Նույն տեղում, էջ 71-72:

⁶⁵ Նույն տեղում:

⁶⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 115:

ՆԵՐԻՔՆԱԶ ՈՐՍԿԱՆՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ԸՆՈՐՀԱԼՈՒ «ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ» ՊՈԵՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐԸ

1152 թվականին «Բամ հաւատոյ» պոեմից հետո Ներսես Օճորհալին գրում է 4 հազար տողից բաղկացած «Տեառն Ներսէսի մուէր մաղթամաց մերչափական տաղիւ տուողին բանից ըղծումն աղօթից մերամձնական հոգւոց զարթուցելոց մտօք ի թմբրութեմն կրից յիշատակաւ անցելումն իրի, մերկայի և ապագայի, ողբումն հեծութեան սրտի խօսք ընդ Աստուծոյ» վերնագրով պոեմը, որ հայտնի է «Յիսուս Որդի» խորագրով:

Համաձայն ուսումնասիրողների այն կարծիքի, թե՛ «Բամ հաւատոյ» երկը իր թեմայով, թովանդակությամբ ու ձևով «իրեն» հեղինակին, երևի չի բավարարել¹, և «Մի ամբողջ տարի՛ մա որոնումներ կատարելուց հետո ստեղծագործության թեմա է ըմտրում Հիմ ու Նոր Կտակարանների համեմատաբար շատ լայն թովանդակությունը»², «Բամ հաւատոյ»-ն դիտվել է իբրև «Յիսուս Որդի»-ի նախնական տարբերակ: Մինչդեռ այս ստեղծագործությունները տարբեր են իրենց նպատակադրումներով և հասցեագրված են տարբեր լսարանների: «Բամ հաւատոյ»-ն ուսուցողական պոեմ է, որի նպատակն է ընթերցողին ծանոթացնել Ավետարանի թովանդակությամբ, «Յիսուս Որդի»-ն, ժամաշյամի ձևակերպմամբ, «կուզայ հոգեկան ապրումներէն, մարդկային զգացողութիւններէն, մեղքի եւ ցաւի մէջ տառապող մարդու մը անձկութիւններէն, փարելով աստուածային շնորհքէն կաթող լոյսին եւ վերականգնող զօրութեան»³:

Ըստ Մ. Ավդալբեգյանի՝ Օճորհալին «Յիսուս Որդի»-ն ևս գրել է՝ եղնելով մանկավարժական նկատառումներից: Այն «կանոնական գրքերի հեմքի վրա հյուսված ստեղծագործություն է, որ նպատակ ունի ամրապնդել Հիմ ու Նոր Կտակարանների էական դրվագներն ընթերցողի մեջ, հստակել այլաբանություններն ու տպավորել մատչելի մեկնություններով»⁴: Նրան համակարծիք է Ա. Մադույանը: Նա գրում է. «Օճորհալու երկը ուսուցողական նպատակներ է հետապնդել»⁵: Վկայակոչելով այն հանգամանքը, որ երկը երգվող հատվածներ է ունեցել, նա ընդգծում է, որ «դա ևս պիտի նպաստեր նրա նյութի ընկալելի, մատչելի լինելուն»⁶:

Ամշուշտ, Օճորհալու «Յիսուս Որդի»-ն ունի ուսումնականական նպատակադրում, ինչպես և նրա ողջ ստեղծագործությունը: Սակայն «Յիսուս Որդի»-ն փոխտոփայական խորքով, գաղափարական լայն ընդգրկումներով բազմաշերտ ստեղծագործություն է, իսկ

¹ Մանուկ Արևույան, Երկեր, հ. Դ., Երևան, 1970, էջ 119:

² Գր. Հակոբյան, Ներսես Օճորհալի, Երևան, 1964, էջ 141:

³ «Բազմավեպ», 1974, N 3-4, էջ 380:

⁴ «Ներսես Օճորհալի (Հոգվածների ժողովածու)», Երևան, 1977, էջ 53:

⁵ Ա. Մադույան, Միջնադարյան հայկական պոեմը (ԺԱ-ԺԶ դարեր), Երևան, 1985, էջ 160:

⁶ Նույն տեղում, էջ 160:

«Բան Բաւատոյ»-ն քաղաքացիական վարդապետության յուրօրինակ դասագիրք է, ուր բաժանտեղծական երևակայությունը միտումնավոր ստորադասվում է մտքի պարզությանը: Ծնորհալի՜ն Բստակ է ձևակերպել իր նպատակը:

Փոքրը քանի կարճ ի կարճոյ

Միայն ըզմիտսըն ցուցելոյ,

Ընթերցողաց վերծանելոյ

Արագ մըտացըն հասելոյ⁷:

«Յիսուս Որդի»-ն գրված է Հիմ ու Նոր Կտակարաններին քաջածանոթ ընթերցողի համար: Դրա վկայությունն է նաև այն, որ Ծնորհալի՜ն, բացառությամբ հիշատակարանի, երկը գրել է իմ հանգով, իսկ նա սովորաբար միահանգություն է նախընտրում այն դեպքերում, երբ ստեղծագործությունը հասցեագրում է լուրջ, գիտակից ընթերցողին:

Երկի ծրագրի, նպատակի վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Ըստ Ալիշանի՝ «Այս գրութիս թելադիր և պատճառ՝ որչափ ալ ժամանակացաց և մեր յետազայից օգուտ էր և յիշատակ՝ իր հարազատաց և ցեղին, որոց կը նուիրէ զսա հեղինակն՝ անելի իմն գործվամօք քան զայլ քերդուածն, (որոց մէջ երկարութեամբն ալ առաջին է), այլ բուն շարժիչ ինքնին իրեն խորագրած բաղձամքն և սիրտն է, մանաւանդ թէ շնորհագարդ սրտին շարժող Ս. Հոգին»⁸: Արեղյանի բնորոշմամբ՝ նպատակն է «Մարդկային զանազան վիճակների մասին պատմվածքների մեջ՝ «Աստծու հետ խոսքը»⁹: Մարդյանի կարծիքով՝ «Գրվածքի նպատակն է եղել՝ մարդկայն գգաստացնել, նրանց մեջ արթնացնել աստվածային սերը, որ տրված է բնությունից»¹⁰, ըստ «Քիպարյանի»՝ «կը դիմէ Աստուծոյ՝ հայցելու իր գթութիւնը եւ սէրը, որպէսզի փրկուի անկումներէ ու կը փորձէ ալ քարծրանալ դէպի Աստուած»¹¹:

Անշուշտ, երկի հիմքում ընկած է խոստովանելու, ապաշխարելու ճանապարհով Աստծու ողորմածությանն արժանանալու զադախարը: Բանաստեղծը խնդրում է Աստծուն օգնել իրեն, բուժել, փրկել, արժանի դարձնել երկնային արքայությանը: Երկն ունի ընդհանրացնող նշանակություն: Ստեղծագործությունը բովանդակում է աշխարհի արարչագործությունից մինչև վերջին դատաստանի օրվա պատմությունը, այլ կերպ ասած՝ մարդկության անցյալը, ներկան և ապագան՝ ըստ քրիստոնեական պատկերացումների: Այս մտահղացումը խոր իմաստ ունի իր մեջ. մարդու էությունը, սկսած Ադամից, դարեր շարունակ չի փոխվել. նա հակված է դեպի չարը, դեպի երկրային վայելքները: Եվ բանաստեղծը հանդես է գալիս իբրև ողջ մարդկության մեղքի ու հանցանքի, հույսի ու տագնապի կրող, հայցում է Աստծու գթությունը ոչ միայն իր, այլև բոլորի փրկության համար: Պատմելով աստվածաշնչական այս կամ այն դրվագը՝ Ծնորհալի՜ն ի ցույց է դնում թե՛ դրվատելին, թե՛

⁷ Ներսես Շնորհալի, Բանք չափա, Բ տպ., Վենետիկ, 1928, էջ 243:

⁸ Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իր, Վենետիկ, 1873, էջ 239:

⁹ Մանուկ Արեղյան, նշվ. աշխ., էջ 124:

¹⁰ Ա. Մաղոյան, նշվ. աշխ., էջ 40:

¹¹ Կիրենդ Քիպարեան, Պարմութիւն հայ էին գրականութեան, Վենետիկ, 1992, էջ 386:

պարսավելիմ. նա հետամուտ է ընթերցողի բարոյակրթմանը, ուստի պատվիրում է.

*Քաջ իմանալ զհմաստ քանին,
Որ ամբարեալ կան ի սոսիմ¹²:*

Քերթվածի հիշատակարանում Օմորհային մի շարք խնդիրների հետ մեկտեղ հանգա-
մանորեն ամդրադառնում է նաև իր երկի նպատակին: Ըստ նրա՝

*Սոյնպէս և ես յայս յարակալ
Ջալս մաղթանաց քան խօսեցալ,
Թէպէտ և ոչ յիս ազդէ սա,
Սակայն արթնոց մաքրիչ մընայ¹³:*

Օմորհային խորապես համոզված է, որ բանաստեղծությունը իր հուզական լիցքով կա-
րող է ազդել ընթերցողի վրա.

*Զմիտս անմաքուրս աշխարհական,
Որ ըստ ծովու ալեաց ճըփման,
Սա՛ վերքերէ ճրոյ նըման,
Որպէս բնութիւնն է վերնական:
Ջանձն ըզգածեալ և հոգեկան
Ի պատճառէ ինչ տըրտմական,
Սա՛ ներգործէ ուրախական
Ի թախծութեանցըն հիւթական:
Եւ որք արբեալ են թըմքական,
Ըմպողք գինոյն յիմարական,
Սովաւ զարթնուն և զգաստանան,
Թէ ընթեռնուն մըտառական:
Որք Աստուծոյ տեսոյն քաղձան,
Գերագունին լուսոյն ցանկան,
Սորին թևօք վերապանան,
Մերձին ի տիպն անտեսական¹⁴:*

Ահա թե ինչու Օմորհային զուր չէ համարում իր չարչարանքը՝ «Գորել չափով ըզբանս
ի սմա»¹⁵:

Երկը ծրագրելիս Օմորհային հետապնդել է մեկ այլ նպատակ. նա հույս է փայփայում,

¹² Ներսես Զեքեայի. Տիտու Որդի, Երևան, «Ապոլոն», 1991, էջ 212:

¹³ Նույն տեղում, էջ 218:

¹⁴ Նույն տեղում, էջ 214, 216:

¹⁵ Նույն տեղում, էջ 216:

որ այդ գրքով չի մոռացվի թե՛ իր, թե՛ իր հարազատների հիշատակը.

*Համարեցիս միշտ ընդ մոսիմ
Զիս ըզ Նեքսէս մաղթել սովին:
Եւ առ հոգիս իմ յաւանդիմ
Եւ ի մարմինս ի տապանիմ¹⁶:*

Հենց այս միտումով էլ մա քերթվածի վերջում հիշատակում է իրեն հարազատ մարդկանց անունները:

• • •

«Զիտա Որդի»-ն բաժանված է երեք գրքի: Ա. Մադոյանը համակարծիք է Պ. Ֆետտերի ենթադրությանը, որ բաժանումը հեղինակինը չէ, բայց և ընդունում է որ «առհասարակ քերթվածը նկատելիորեն երեք մեծ հատվածից է բաղկացած, որոնցից առաջինը նվիրված է Հիմ Կտակարանին, երկրորդում ավելի շատ Նոր Կտակարանն է առկայվում, երրորդը, ուր հեղինակի ստեղծագործական տարրերն ավելի զգալի է, վերաբերում է վերջին դատաստանին»¹⁷: Իրոք, կառուցվածքային մեմանտիկա բաժանումը չի վնասում երկի բովանդակության, իմաստի ճիշտ ըմբռնմանը: Իսկ ընդհանրապես՝ Օմորհային նյութը տվել է առանց հատվածաբաժանումների, միահար: Նա Աստվածաշնչից-ըմտրում է այս կամ այն դրվագը, ավետարանական այս կամ այն առակը, դեպքը, իրադարձությունը, հիշում աստվածային այս կամ այն պատվիրանը՝ եղնելով իր գաղափարական-գեղագիտական սկզբունքից:

Քերթվածում Օմորհային դիմում է իր սիրած գրական հմարանքին՝ դիմառությանը, որի շնորհիվ անմիջական կապ է ստեղծվում ընթերցողի և հեղինակի միջև, և առաջանում է կենդանի հաղորդակցության ջերմություն և մտերմություն:

Խոստովանությունը դառնում է երկի հիմնական մոտիվներից մեկը: Քերթվածի հենց առաջին էջերում բանաստեղծը խոստովանում է, որ ժխտել է Տիրոջ պատվիրանը, վատնել է նրա ունեցվածքը, անարգել է նրա պատիվը, մասն է դարձել Ադամի և Եվայի գործած մեղքի և կապվել է մեղքի կապով, թեև շատերն են քարոզել մարդուն սպանող մեղքերի մասին: Ավագանում հազած պատմությանը դեն է մետել և չարից խաբված՝ մաշկեղեն հանդերձ հազել: Նմանվել է Կայենին, միայն թե իր եղբորն սպանելու փոխարեն կամովին սպանել է իր հոգին: Ենովս մահապետի ու Ենովքի նման հուսալու, հավատալու, մտքով երկինք վերաճալու փոխարեն ընկել է խոնավ ու գեջ տղմի գութը և բանտարկված մնացել վիհերում, ինչպես հին դարերում՝ Նոյի ժամանակ ապրող մարդիկ, «Որք ուտեին և ըմպեին, / Անասնաքար խառնակեին» (էջ 20):

Ավելին՝ եղել է կողո չար անոթի հոգով և մտքով, որովհետև հետևել է նրանց, ովքեր հաբեղոնում աշտարակ էին կառուցում՝ նոր ջրհեղեղից փրկվելու կամ էլ Աստծուն հասնե-

¹⁶ Նոյն փեղում, 19 212:

¹⁷ Ա. Մադոյան, Եզվ. աշխ., 19 42:

լու համար: Ինքն էլ, համակված մեծամտությամբ ու գոռոզությամբ, մեղքի բուրգի շուրջը պարիսպ է բարձրացրել, սատանայի օգնությամբ հպարտությամբ շարել գոռ ամբարտակի քարերը: Եսավի մեծն ծնված լինելով առաջինը՝ հոգով վերջինն է դարձել, որովհետև նրա մեծն անգին զանձը վաճառել է համուն իր որովայնի հագեցման և կամովին եղծանել երկնից տրված գիրք անդրանկի:

Ջուզահետները, համեմատություններն ու հակադրությունները, որոնց դիմում է Օնոր-հալին, հերոսի հույզերն ու խոհերը միահյուսում են պատումին՝ քացահայտելով նրա մեքաշխարհը, հոգեկան ապրումները: Ձևավորվում է տառապող մարդը, որ տարուբերվում է կակածներին, չունի հոգեկան հանգստություն («Ուստի շրջիմ երեքալի, /Միտը և խոր-հուրդը իմ տատանին» (էջ 18), ցավագին տանջվում է չերևացող խորհուրդներից: Մերթ մահագույժ քունն է պատում նրան, մերթ այսահար լուսնոտի հետ այրվում է ցասման հրում, մերթ ամհմարին անդունդներն են պաշարում հոգին:

Խորապես անկեղծ ու գեղեցիկ է Օնորհալու խոստովանությունը: Իր անցո գոչությամբ ողբերգական գիտակցությունը ցավով է լցնում հոգին, ու ներսում լեռնացած այդ ցավից են ծնվում բառերը, հոգեցունց պատկերները: Նա խոստովանում է մեղքերը այնքան բարեխղճորեն, այնքան մանրակրկիտ, որ թվում է, թե յուրաքանչյուր խոստովանություն, արցունքի յուրաքանչյուր կաթիլ մոտեցնում է նրան դեպի երկինք ձգվող լուսակազմ սանդուղքին: Բազում են մեղքերը, որովհետև փակել է հոգու աչքի թիթը և խցել ակամեները Աստծու խոսքի առջև, բարու առաջ կարկամ է եղել, չի ներել պարտապանին, չի հոգացել քաղցածների, մերկերի, տնանկների կարիքները, օտար հյուրին օթևան չի տվել, չի այցելել հիվանդին, վշտացողին տրտմակից չի եղել և մախացնով վառված՝ ուրախացողի հետ չի խնդացել և այսպես շարունակ¹⁸:

Խոստովանությունը, սակայն, չի վաճում բանաստեղծի հոգուց անհուսությամբ խավալոր, ավելին՝ խորանում է ողբերգությունն այն գիտակցությունից, որ իր թիկունքում, իր մեջ գործում է աներևույթ մի ուժ, որ շարունակ իրեն մղում է դեպի մեղքը: Ինչպես էլ բանաստեղծը որակի նրան՝ մեծապիտ, նեղիչ, մարդախողխող բռնակալ, հոգու թշնամի, անզգամ, օձ, խավարի աշխարհակալ, այդ ուժը մույն ինքն է՝ սատանան, որ շարունակ մարդուն զգացնել է տալիս իր ներկայությունը: Այդ նա է իր գաղտնաձիգ նետերով խոցում մարդու հոգին, խորտակում մարդու սրտի հավատը: Նրա կերպարը թանձրանում, որոշակիանում է բոլոր այն արարքներում, որ գործում է մարդը: Բանաստեղծն իր ամբողջ ուժով ծառանում է սատանայի դեմ, փորձում պատերազմել, սակայն մարտադաշտում թուլանում է, և չարի նետերը շարունակում են խոցել իր տիրասեր սիրտը:

Առաջ է գալիս հոգու և մարմնի այն հակադրությունը, որը հուզել է միջնադարի բոլոր հեղինակներին: Վերլուծելով իր անցած ուղին՝ բանաստեղծն ըմբռնում է, որ ինքն է հյուսել իր ճակատագիրը, ինքն է մեղավոր իր անկման համար:

Ջորեղ է սատանան. նա կարող է մարդու հոգին բանտարկել խոր զնդանում, սակայն մարդն ինքն է թույլ տալիս, որ նա բնակվի իր մեջ. մարմինը, իբրև կացարան, պատշաճ հարդարում ու հարմարավետ է դարձնում օձի համար և իր կամքով հայտնվում վիհում:

¹⁸ Նույն տեղում, 19-90:

Աստված մարդուն ստեղծել է այնպես, որ մարմինը լինի հոգու ծառան.

*Որպես կարգեալ է Աբարյին՝
Հոգւոյ ծառայ լինել մարմնին¹⁹:*

Մարդը, սակայն, մարմնավորով տարված, մեղցնում է հոգին մարմնում, մեղքեր գործում
ի սեր երկրամյութի.

*Վասն աշխարհի ազարակին
Եւ վասն եզանց զգայականին
Եւ ընդ կրնոջ հեշտասիրին՝
Որով կապեալ կա ի սոսիւն²⁰:*

Ընշտ այդպես էլ մեկ դար ամց Ֆրիկն է խոստովանում, որ մեղքեր է գործել հանուն
աշխարհի սիրո.

Մարմինըս սիրեց զաշխարհս, ի նորոյ ես մեղք գործեցի...²¹:

Ջորեղ եմ ցանկությունները: Ֆրիկը պատկերավոր է ներկայացնում հոգու և մարմնի
կոիվը.

*Ջանցի՝ թե զհոգիս սիրեմ, նա՛լ, մարմինըս
հանց կու տայ խափ,
Ջինչ որ խոյանայ քազան ու կաքաւըն
ատնու ի յափ²²:*

Նույնպիսին էր հոգու և մարմնի փոխհարաբերության շնորհալիական ըմբռնումը:
Քերթվածի հերոսը գոչում է.

*Մեղցին անդամք իմ երկրային,
Կեցցե՛ հոգիս իմ վերըստին²³:*

Բանականությունը հուշում է, որ մահիմ կարելի է հաղթել միայն հոգին նախընտրելով,
սակայն համեմատությունները ծովի խորքում տարուքերվող քեկված մավի կամ էլ աշման

¹⁹ «Տիտու Որդի», էջ 146:

²⁰ Նույն տեղում, էջ 118:

²¹ Ֆրիկ, Դիան, ի տյս բնծայեց առաջին անգամ ամբողջական քնագրով, ուսումնասիրությանը, ծանոթու-
թիւններով, յանկուածներով և քառարանով Տիրացր արքեպիսկոպոս, Նիւ Եորք, 1952, էջ 364:

²² Նույն տեղում, էջ 484-485:

²³ «Տիտու Որդի», էջ 50:

Ռողմաճար խոիվ խոտի հետ ի ցույց եմ դնում հերոսի Ռոզում տեղի ունեցող պայքարը: Մարդն իր աղանային թնությանը ու մարմնով ձգվում է դեպի անցավորը՝ խորացնելով անքրպետը իր և Աստծու միջև:

*Ընդ մեծատան փափկասիրին
Ես փափկացայ յառօրէին
Մարմնովս այսու անասնային
Ի փափկութիւն անըզամի՞ճ²⁴:*

Դրաման սրվում է, որովհետև մարդն անհագ է իր ցամկություններում.

*Ի յարածել խոզերամին
Չյագիմ մեղօք քաղցր եղջերի՞ճ²⁵:*

Հերոսի բարոյական ցկարագիւրը բացահայտվում է լիովին: Նա հոգեպես թույլ, տկար, կամագորկ էակ է, անզոր ընդդիմանալու Սատանային: Այդ պայքարում նրա միակ ապավենը մնում է Հիսուսը: Բամաստեղծն ամբողջ Ռոզով փարվում է նրան, որ նա զորեղացնի իրեն, մաքրի Ռոզիձայն ամենից, ինչ աննշան է ու չնչին: Փորձում է աղոթքով հաղորդակից դառնալ Աստծուն, պահքով ճնշել մարմինը, արտասուքներով հանգցնել իր մեջ բորբոքված Ռուրը, վառել աստվածային լույսը: Զղջման արցունքներով աղերսում է գթասրտություն, որովհետև միայն նա՝ Աստված, կարող է իրեն մաքառելու ուժ տալ, ընդդիմանալու կամք ու իմաստություն:

*Այլ տուր աստէն զղջումն անձին,
Ապաշաւել, զոր գործեցին:
Ընդ լըդփութեան որովայնին,
Պահօք ճընշել ըզստուար մարմին՞²⁶:*

Ստեղծագործության առանցքային խնդիրներից մեկը դառնում է մարդու գոյության իմաստի, մարդու ճակատագրի առեղծվածը: Ծնորհային արտահայտում է այն միտքը, որ երկրային կյանքը տրված է մարդուն իբրև փորձություն: Աստված ոչնչից ստեղծում է աշխարհը՝ «Կենդանականը, որը բուսանին», «Եւ անկենդանը, որը ոչ շարժին»՝ իր արարչագործության բարձրագույն արժեք դարձնելով մարդուն: Աստված շնորհում է մարդուն իր արքայական պատկերը, տալիս խոսքի շնորհք, օժտում նրան Ռոզու աչքով, որ է՝ աստվածային իմաստություններն ընկալող մարդկային միտքը: Մարդը սատանայի դողմամբ գայթակղվում է արգելված պտղով: Աստված, արձակելով մարդուն դրախտից, այնուհանդերձ, հմարավորություն է տալիս նրան վերականգնելու իր նախամեղսական վիճակը:

²⁴ Նույն տեղում, Լ. 9 140:

²⁵ Նույն տեղում, Լ. 9 134:

²⁶ Նույն տեղում, Լ. 9 144:

Բանականությունը թող առաջնորդի մարդուն դեպի լույսը, խոտորվելու դեպքում պարզևի մրան արթնացումի պահը: Երկրի վրա այնպես՝ հոգու գերակայությամբ ապրողները վերջստի՞ն կարժանանան դրախտում ապրելու շնորհին, իսկ չարով զայթակղվածները կմատնվեն կորստյան:

*Թե որ կարողքն եմ՝ տանիցիմ,
Եւ որք տըկարք՝ ոչ պահանջիմ²⁷:*

Իմաստավորվում է երկրի վրա մարդու ապրած կյանքը՝ դառնալով անմահության հասնելու ձգտում: Մարդը, հանուն այդ բարձրագույն մարտակի անխոտոր ապրելով, կհաղթահարի մահվան, դժոխքի սարսափը:

*Ու՛ր, ասէ, մահ, քո յաղթութիւն,
Կամ ու՛ր, դժոխք, խայթոց քոյիմ²⁸:*

Հիսուսի ծնունդը, կյանքը և մահը լավագույն հիմնավորումն են Շնորհալու այդ մտայնության: Հիսուսը խոստանում է մարդուն շնորհել հոգևոր ըմպելիքը, ահա թե ինչու բանաստեղծը Նրան անվանում է «Աղբիւր կեանք» (էջ 102): Տաղերից մեկում Շնորհալիմ գրում է.

*Նորահրաշ արեգակն այսաւր ծագեցաւ աշխարհի
Ի գթոյ խաւարէ,
Եւ կեանք անվախճան տըլաւ մահացու քընութեանս
Ի ստուերաց մահու²⁹:*

Սա է Հիսուսի առաքելության խորհուրդը: Մարդը մարմին է և հոգի, երկրային է և աստվածային: Աստված կամենում է, որ մարդը բացահայտի իր մեջ աստվածայինը, դառնա աստված: Հիսուսը ծնվում է՝ մարդու մեջ հոգևոր սկիզբը լուսավորելու համար: Աստծու կարևորագույն ստորոգելիներից է փրկագործելու կարողությունը: Ի տարբերություն Հին կտակարանի մարգարեների, որոնք «Դեղով բամից» չկարողացան բուժել տկար մարմին ունեցողներին, Հիսուսը Փրկիչ է կոչվում՝ չհակադրվելով, սակայն, մարգարեներին, ինչպես որ Ավետարանում է ասվում. «Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ՝ լնուլ» (Մատթեոս Ե 17): Ըստ Շնորհալու՝ հզոր ցավը հզոր դեղի կարիք ունի:

²⁷ Նույն պեղում, էջ 116:

²⁸ Նույն պեղում, էջ 72:

²⁹ Ներսէս Շնորհալի, Տաղեր և գանձեր, աթխարասիրտությամբ Արմինե Բյուշեկեյանի, Երևան, 1987, էջ 117:

Ջի ըստ հրգօր ցաոց վիրին

Հրգօր դեղոց պիտանային³⁰:

Հիսուսը Քաստատում է Նոր Օրենքը, ապա պահանջում ավելի արդար լինել, քան օրենսգետները:

Պահանջեցեր ըզկնի մորին

Առաւելոյ յարդար մասին,

Քան ըզդպրաց Հին Օրինին,

Ջաշակերտացըն Մովսիսին³¹:

Հիսուսը չի լքում մարդուն՝ չնայած վերջինիս անարժան լինելուն:

Քերթվածում արժարժվում է մարդու ապերախտության գաղափարը: Աստված ազատում է իսրայելցիներին եզիպտացիների բռնությունից, ճանապարհ քացում անապատում մրացց համար, կերակրում երկնային հացով, սակայն իսրայելցիներն անարգում են Աստծուն իրենց կռապաշտությամբ: Երկի քմարական հեղուքը, համեմատելով իրեն մրանց հետ, խոստովանում է, որ ինքն առավել ապերախտ է մրանցից, որովհետև Աստված իր համար ավելին է արել, քան մրանց համար (Էջ 42):

Մարդը ինքնակամ մատնվում է ավազակին, և, այնուհանդերձ, Աստված երես չի թեցում մրանից:

Ծնորհայտ Հիսուսը տոգորված է մարդկային կյանքի ողբերգության զգացողությամբ: Նա մույնքան դրամատիկ կերպար է, որքան քերթվածի հեղուքը: Մարդուն ոտքից գլուխ համակած ցավը, որը մրան անհմարին տանջանքների է ենթարկում, կարծես հաղորդվում է Հիսուսին: Նա տառապում է մարդու հետ և տառապում է մարդու համար: Նրան մտահոգում է մարդու ճակատագիրը: Հերոսի՝ Հիսուսին ուղղված խոսքերում կարծես հանդիմանություն է հնչում, թե ինչու է Աստված մարդուն կամքի ազատություն շնորհել, եթե մարդը հնազանդ չէ մրան:

Ջիշխանական կամս իշխողին

Բարձ, որ Քոյունդ ո՛չ հնազանդին³²:

Աստված, լինելով «կարող յամենայնին» (Էջ 112), և «հընար անհմարից» (Էջ 108), մի՞թե չէր կարող մարդուն ստեղծել քաջ ու զորեղ կամ էլ թույլ չտար փորձողին փորձել ծովլին՝ իբրև քաջի: Այդ տկար էակին պակասում է Աստծու զորեղ ձեռքը, որ մրան համի մեղքի ծովից, ինչպես այն ժամանակ խեղդվող Պետրոսին, պակասում է աստվածային սերն ու ջերմությունը, որ ինքն էլ սիրով լցվի:

³⁰ «Հիսուս Որդի», 19 80:

³¹ Նույն տեղում, 19 88:

³² Նույն տեղում, 19 132:

*Հեղեր յերկիր զհուրդ երկնային,
Որով մարդկան հոգիք մաքրին,
Բորբոքեցո՛ւ յամձն իմ ցըրտին,
Զհոգիս ջեռո՛ւ սիրով Քոյիմ³³:*

Միայն Աստված կարող է վերջ դնել մարդու ցավի պատճառին, նրան հաստատել ամ-
շարժ վեճին, որ տուժող ավագուտի վրա չկառուցի:

Ծնորհալի՞ն գծում է Հիսուսի անցած ճամայարհը ծննդից մինչև մահ: Հիսուսի կենսա-
գրությունը հյուսվում է Աստծու և մարդու հակադրության բացահայտումով. մարդն իր բա-
րոյական ակարագրով աստվածային մտակերտվածքի հակապատկերն է: Աստված վեճ է,
արդար, անաղարտ, մաքուր՝ ցածր ու ստոր, ամենից վերջինը՝ նման ոտքի զարշապարին:
Աստված երկնային անապական աղ է, մարդը՝ անհամ, Աստված լույս է, մարդը՝ խավար
անգիտության և կույր, Աստված բարու սերմանողն է, մարդը՝ անպտույլ բարու համար:

Ծնորհալին մարդու բարոյական անկման պատճառը բացատրում է դեպի չարը նրա
հակվածությամբ: Բերթվածի հերոսը բազմիցս է խոստովանում իր՝ բարուց զուրկ լինելը.

*Եւ ես կըրտսեքս առ ի բարին
Եւ կատարեալ զոլ ի չարին³⁴:*

*Չեմ արժանի նայիլ յերկին,
Զի կափուցի զայս ի բարին³⁵:*

Կարևորելով բարու և չարի խնդիրը՝ Ծնորհալին փորձում է բացահայտել չարի ակունքը.

*Թե՛ արտաքոյ է բնականին,
Զոր շնորհեցեր բանականին.
Այլ զի պատճառ է ինձ չարին
Ի թուլութեան թըշուառս ամձին³⁶:*

Այսինքն՝ չար է այն, ինչ դուրս է բնականից, որ շնորհել է Աստված բանական էակին:
Թվարկելով բոլոր այն մեղքերը, որոնք գործողները ենթարկվում են Աստծու պատժին՝
Ծնորհալին նույն ոգով էլ բանաձևում է բարին: Վերջին դատաստանի օրը լուրաքանչյուրն
իր կատարած բարին՝ իբրև ծաղիկ, կընծայի Աստծուն. մեկը՝ ամբողջությամբ պահքի, կերակ-
րի և լեզվի չափը, մյուսը՝ առատ տուրքը աղքատին, մեկը՝ պաղ ջրի բաժինը, մյուսը՝ ուրա-
խության խիղճը, մեկը՝ այնք հիվանդին, բանտարկյալի խնամքը, մյուսը՝ մերկին հագուստ
ու տնամկին պատսպարան տալը, մեկը՝ որբերի հայրությունն ու գթությունն առ այրին,

³³ Նույն տեղում, էջ 126:

³⁴ Նույն տեղում, էջ 30:

³⁵ Նույն տեղում, էջ 62:

³⁶ Նույն տեղում, էջ 132:

մյուսը՝ չարի դեմ իր զգայարանի փակելը, մեկը՝ պարկեշտ ամուսնությունը, մյուսը՝ անբիծ ու կույս հոգին, մեկը՝ մարմնի չարչարանքները կամ արյունը պանծալի, մյուսը՝ ցերեղու և թշմամուն լավությունը անելու կարողությունը: Բարիք է գործում այն մարդը, ով ապրում է ըստ Աստծու պատվիրանների, ով արածի դիմաց չի ակնկալում որևէ վարձատրություն:

Հիսուսի գործերի վերապատմումը նպատակաուղղված է նաև նրա բարոյական մկառագրի անադարտության գաղտնիքը բացահայտելուն: Հիսուսը բարոյական կատարելության մարմնացում է. որովհետև երբևէ չի գայթակղվում չարով, չի խախտում Աստծու պատվիրանները: Հիսուսը ծնվում է մարդում հոգևոր նեցուկ լինելու, բարձրացում է սուրբ խաչը՝ վեր առնելու «գլանցանքս մարդկային», սակայն նրա կյանքը շատ ավելի իմաստավորված է. այն ուղեցույց է բարոյական ինքնակատարելագործման ձգտող մարդու համար, թե ինչպե՛ս վերջինս պետք է ապրի իր համար նախասահմանված երկրային կյանքը, որ հասնի աստվածային բարձունքին: Այն, որ Հիսուսը ցանկանում է մարդում տեսնել այնպիսին, ինչպիսին ինքն է, դրա վկայություններն են բանաստեղծի կողմից իրեն՝ Հիսուսին տրված բնութագրումներն ու Հիսուսի՝ աշակերտներին ուղղված պատվիրանների համադրությունը: Հիսուսը աշակերտներին պատվիրում է լինել երկրի աղը, Օմորհալին Նրամ անվանում է երկնային անապական աղ, Հիսուսը նրանց պատվիրում է լինել աշխարհի լույսը, Օմորհալին Նրամ դիմում է «Լոյս ի լուսոյ Հօր միածին» բառերով: Հիսուսը պատվիրում է գանձ չծողովել, Օմորհալին նրան կոչում է երկնային գանձ («Ըզ-Քեզ, որ գանձը ես երկնային»):

Հիսուսը մատնանշում է այն ուղին, որը տանում է դեպի Աստված՝ աղոթքը և սերը: Հայհոյությունը, մատնությունը, նենգությունը, խաբեությունը, դժգոհությունը, անզթությունը, կեղծավորությունը և այլ արատներ ծնվում են մարդու հոգում սիրո բացակայությունից /-Ոչ սիրեցի ըզթշմամին /եւ ոչ ցուցի գութ ատողին- (էջ 96), սեփական թերությունների անտեսումից /-Ոչ նրկատեմ յիս գերամին, /Արատես լինիմ յայլում շիղին- (էջ 100): Հիսուսը սեր էր քարոզում՝ ձգտելով երկրի վրա հաստատել սիրո կեցությունը: Նրա երկրային կյանքը հիացնում է իր մարդկայնությամբ: Նա քարոզում է մարդկանց եղբոր մեղքը ներել ոչ թե 7 անգամ, այլ «չորս հարիւր ընդ ինըսուն», ինքն էլ անձրևի ցողն ու արևի լույսը հավասար է բաշխում ապաշնորհ չարերին և բարիով լի արդարներին:

Օմորհալին քերթվածում առկաչում է բազում սրբերի ու մահատակների, որոնք, ցուցաբերելով մեծ կամք ու տոկունություն, իրենց հոգեկան աշխարհը ստորադասելով Աստծուն, կարողացել են դիմակայել չարի փորձություններին, հաղթահարել մարդկային բնության տկարությունը: Միմչդեռ երկի հերոսը փորձել է ծառայել երկու տիրոջ, այդ իսկ պատճառով ծուլացել է թե՛ երկրի, թե՛ երկնքի հարցում: Երկի էջերում բազմիցս ձևչում է սեփական անձի կշտամբանքը: Ահա, օրինակ, հիշելով Պողոս առաքյալի խոսքերը Ավետարանը քարոզողների մասին (Ա. Կորնթ. Թ. 16-17)՝ Օմորհալին գրում է, որ մարդիկ տնտեսներ են կարգված Աստծուց, ոմանք՝ նյութական գոյերի, ոմանք՝ «ամմիթ պարզեալ բանին»: Իրեն վիճակվել է տնտես լինել Աստծու տան վրա: Բանաստեղծն ակնարկում է իր հոգևորական լինելը: Միմչդեռ աստվածային խոսքը բաշխելու, ժամասացության ժամանակ կեցաց հացի կերակուր տալու փոխարեն սովամահ է թողել մարդկանց: Համոզված լինելով, որ կգա այն օրը, երբ կմերկանա ներքին մարդը և կծանակվի, Օմորհալին հայտարարում է, որ իրականում ինքն այնպիսին չէ, ինչպիսին կարծում են մարդիկ. երանելի ու բարի է կոչվում, երբ չար է, լույս է համարվում, երբ գործերն են խավար (էջ 202, 204):

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԳՐԻԳՈՐ Դ ՏՂԱ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԺԱՄԱՆԱԿԻ
ԴԱՎԱՆԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՉՈՒՂՆԵՐՈՒՄ

1173 թ. օգոստոսի 13-ին իր մահկանացուն կնքեց Ներսես Դ Շնորհալի Կաթողիկոսը: Մահվան մահճում նա պատվիրեց իրեն հաջորդ նշանակել իր եղբոր՝ Վասիլի ավագ որդի «տղա» մականվանված Գրիգոր արքեպիսկոպոսին¹: Ըստ Վարդան Արևելցու, Ներսես Շնորհալու վախճանվելուց հետո «Առնու զքօղն Գրիգոր եղբորորդի իւր ձեռնտոտութեամբ Նորադմին»²: Փաստորեն Գրիգոր Դ-ը գահակալել է Հայեպի ամիրա Նուր-ադ-Դինի օգնությամբ: Կաթողիկոսական գահաձիստ Հռոմկյան Նուր-ադ-Դինի ամիրայության սահմաններում էր, ուստի հնարավոր է, որ Գրիգոր Դ-ի և ամիրայի միջև առկա էր որոշակի մերձակցություն, որում, հավանաբար, որոշակի նշանակություն ունեցավ նաև Գրիգոր Դ Տղայի քրոջ ամուսնու՝ Կիլիկիայի Հայոց իշխան Մլեհի (1169-1175) և Նուր-ադ-Դինի միջև կնքված գինադաշինքը³, որը չէր կարող չանհամաձայնեցնել Բյուզանդիայի Մանուել կայսրին: Վերջինս, տեղեկանալով Ներսես Շնորհալու մահվան մասին, չվարանց նրան դասել տալ Ուղղափառ Եկեղեցու սրբերի կարգը, իսկ մորըմծա Գրիգոր Դ Կաթողիկոսին առաքեց «Թուղթ մխթարութեան»՝ հույս հայտնելով, որ նա հետևելու է Շնորհալու ուղեգծին⁴:

Ստեղծված պայմաններում, երբ թե՛ Բյուզանդիան և թե՛ հայությանը քոլոր հատվածները ենթակա էին թյուրքական ցեղերի հարածուն ճնշմանը, որոշակի հող էր ստեղծվել միջեկեղեցական կնճիռները վերացնելու համար: Բյուզանդիան, ի դեմս հայերի, կամենում էր ձեռք բերել հուսայի դաշնակիցներ ընդդեմ թյուրքերի: Դրանում, անշուշտ, շահագրգռված էին նաև հայերը: Կողմերը փոխադարձաբար ջանում էին միմյանց նկատմամբ գիշումների գնով հասնել երկուստեք համաձայնության: Այս հետմախորքի վրա թվում էր, թե ուրվաճշվում են երկու Եկեղեցիների միավորման համար որոշակի պայմաններ: Միության կայացման էր նպատակաուղղված նաև Բյուզանդական Եկեղեցու կողմից Հայոց Եկեղեցու որդեգրած դավանանքն աղանդ համարելու կարծրացած տեսակետի ժխտումը: Այնուամենայնիվ, Գրիգոր Դ Կաթողիկոսը չաճապարեց իր համաձայնությունը տալ միությանը՝ նկատի առնելով կայսրության հույն բնակչության հարուցած հալածանքները, նաև Մանուել կայսեր կողմից Հայոց Եկեղեցուն պարտադրված ծիսադավանական պահանջները, որոնք հակասում էին Հայոց հայրենավանդ հավատքի հիմունքներին: Հայ հոգևորականության մտահոգության դրսևորումն էր 1174 թ. Գրիգոր Դ Կաթողիկոսի կողմից Մանուել

¹ Տե՛ս Սմբատյ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 191:² Համարումն պատմության Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 129:³ Տե՛ս Սմբատ Սպարապետ, էջ 187:⁴ Տե՛ս Ա. Բագրյան, Բյուզանդիայի արևելյան բաղադրականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 246:

բանաձևը, որը համագոր համարվեց մետոքական հերձվածին⁹:

Գրիգոր Դ-ը քաջ գիտակցում էր, որ Բյուզանդիան այլևս ազդեցություն չունի Մեծ Հայքում, ուստի հնարավոր չէ նրա վարդապետներին պարտադրել կայսեր և պատրիարքի կամքը: Բայց քանի որ Փոքր Ասիայում կայսրության ազդեցությունը տակավին զգալ էր տալիս իրեն, ուստի Հայոց Կաթողիկոսի համար դժվար էր Եկեղեցիների միության առաջարկին ընդդիմանալը: Այնուամենայնիվ, նա փորձեց տարահամոզել արևելահայ առգևոր հայրերին, որոնց հղած թղթում նա հորդորեց ընդունել Եկեղեցիների միության առաջարկը՝ չմոռանալով նշել նաև Բյուզանդական Եկեղեցու կողմից խոստացված հնարավոր գիշումների մասին¹⁰:

1178 թ. ապրիլի 9-ին գումարված Հոռմկլայի եկեղեցաժողովը պետք է պատասխաներ երկու Եկեղեցիների միության վերաբերյալ Մանուել կայսեր առաջարկին: Ժողովին մասնակցում էին արևելահայոց հոգևոր առաջնորդները Անիի Բարսեղ Պահլավունի արքեպիսկոպոսի գլխավորությամբ, ինչպես նաև Հարավային Հայաստանի վեց եպիսկոպոսներ, նաև Աղվանից կաթողիկոսը և ուրիշ եկեղեցականներ: Սանահին վանքի հոգևոր այրերը Գրիգոր վարդապետ Տուտեորդու (Ջաքարե ամիրսպասալարի քեռորդու) գլխավորությամբ հրաժարվեցին մեկնել Հոռմկլա և դատապարտեցին կայսեր կողմից առաջարկված միությունը: Գրիգոր Տուտեորդին այդ առնչությամբ նամակ է ուղարկում Գրիգոր Դ Տղային: Նամակը թեև մեզ չի հասել, բայց կաթողիկոսի կողմից Գրիգոր Տուտեորդուն ուղարկած պատասխանից երևում է, որ վերջինս դատապարտել է Եկեղեցիների միության և կրոնական մորամուծությունների կողմնակիցներին և պաշտպանել Հայոց Եկեղեցու հայրենադիր դավանությունը: Կաթողիկոսը Գրիգոր Տուտեորդուն մեղադրում է որպես խոտվարարի, կոպագանի, կաթողիկոսական իշխանությանն ընդդիմացողի և փորձում է հերքել իր և մյուս ժողովականների հասցեին նրա կողմից հնչեցրած մեղադրանքները¹¹: Այնուամենայնիվ, Գրիգոր Տուտեորդու հղած թուղթն ունեցավ իր ներգործությունը, և Հոռմկլայի ժողովը, անսալով Հայոց քնաշխարհից հնչած զգուշացնող ձայներին, մերժեց միության վերաբերյալ Մանուել կայսեր առաջարկը և դատապարտեց Քաղկեդոնի ժողովի ընդունած հավատոթ բանաձևը («Լեոնի տոմարը»)¹²:

Գրիգոր Դ Տղան և նրա հետևորդները Հայոց Եկեղեցու միասնությունը վեր դասեցին հզորագոր կայսրության Եկեղեցու հետ միության հետանկարից: Մանուել կայսեր հաջորդները հրաժարվեցին Եկեղեցիների շուրջ բանակցությունների դիմելուց: Իսահակ Ա Ազգելոս կայսրը (1185-1195 թթ.), ավելորդ համարելով խաղաղ եղանակներով հայերին դավանափոխելու, Բյուզանդական Եկեղեցուն ենթարկելու ձեռնարկումները, որոշեց թոնի միջոցներով նրանց պարտադրել քաղկեդոնական երկաթնակությունը: Նա, ինչպես վկայում է Վարդան Արևելցին, «յարոյց հալածանս և չարչարանս հալադաւան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա»¹³: Պատմագիրը քաղկեդոնականությունը որակում է իբրև աղանդ՝ ան-

⁹ Տե՛ս Ընդհանրական թուղթը Սրբոյն Ներսիսի Ընորհարոյ, Լթ 308-311:

¹⁰ Տե՛ս Նույն տնդում, Լթ 314-315:

¹¹ Տե՛ս Գրիգորի Կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի, Վննսրիկ, 1838, Լթ 5 և հլո:

¹² Տե՛ս Ընդհանրական թուղթը Սրբոյն Ներսիսի Ընորհարոյ, Լթ 190-196:

¹³ Վարդան Վարդապետ, ՀԹ, Լթ 133:

Ռդում Գրիգոր Դ Տղային՝ խնդրելով գորակից լինել խաչակիր գործին¹⁹։ Պապի այս քայլն ամօշուշտ ունեն որոշակի դրդապատճառներ։ Կղեմես Գ-ին չէր կարող չանհամաձայնացնել խաչակիրների համդեպ Բյուզանդիայի Իսահակ Բ կայսեր թշնամական դիրքավորումը, որը հատկապես ցայտուն դարձավ Հայոց Կաթողիկոսին նրա ուղարկած նամակից մոտ մեկ ամիս հետո, որ կայսրը պայմանագիր կնքեց Եգիպտոսի հզորագոր սուլթան, խաչակիրների երդվյալ հակառակորդ Սալահ ադ-Դինի հետ²⁰, որը գրավել էր Երուսաղեմը։ 1189 թ. Գրիգոր Դ-ը նամակ է ուղարկում խաչակրաց երրորդ արշավանքի դիմած գերմանական Ֆրիդրիխ Բարբարոսա կայսեր, որն այդ պահին արդեն գրավել էր Իկոնիայի թուրքական սուլթանության տարածքները²¹։ Իր հերթին կայսրն արդեն երեք անգամ դիմել էր Լևոն Բ Ռուբինյանին՝ խնդրելով գորակից լինել իրեն²²։ Ֆրիդրիխ Բարբարոսա կայսրը Գրիգոր Դ Տղային գրավոր կերպով իրազեկում է, որ շուտով ժամանելու է նրա մոտ և թագադրելու է Լևոն Բ-ին՝ համաձայն Կաթողիկոսի ցանկության։ «Ահա,- գրում է նա,- ունիմ թագ և զգեստ. գի օճես թագաւոր Հայոց՝ զո՛վ ընտրես»²³։

Այդպիսով կայսրը Ռույս ուներ ձեռք բերել Կիլիկիայի հայության զինական աջակցությունը խաչակիր գորագնդերին։ Կայսրը չհասցրեց դաշինք կնել Լևոն Բ-ի հետ, քանի որ նույն թվականի ամռանը խեղդվեց գետում լողանալիս։ խաչակրաց երրորդ արշավանքը ձախողվեց, քանի որ նրանց գործին կարողացավ ճեղել Եգիպտոսի տիրակալը, որի ուժերը գնալով ավելի էին աճում։ Վերջինս սպառնում էր նաև Կիլիկիայի հայկական պետությանը։ Փխրում էր նաև Կաթողիկոսանիստ Հռոմկլայի դրությունը, քանի որ այն շարունակում էր մնալ Եգիպտոսի Էյուբյան սուլթանության գերիշխանության ոլորտում։ Ստեղծված պայմաններում Գրիգոր Դ-ը նամակով դիմում է նաև Սալահ ադ-Դինին²⁴։

Սալահ ադ-Դինի օրոք Եգիպտոսի բանակի ղաղի (դատավոր), արաբ պատմագիր Իբն Շադդադն իր «Սալահ ադ-Դինի պատմության» մեջ գրում է, որ վերջինս «մի նամակ ստացավ Հայոց առաջնորդ Կաթողիկոսից, որը Եփրատի կողմը գտնվող Հռոմկլայի տերն էր»²⁵։

Նամակում Գրիգոր Դ Տղան սուլթանին հորջորջում է «հավատացյալների պետ, որ բարձր է բոնում արդարության և բարեգործության դրոշը, որ ինքնին խաղաղության հաստատումն է աշխարհի և կրոնի»։ Այնուհետև Կաթողիկոսը հաջողություններ է մաղթում Եգիպտոսի տիրակալին՝ գրելով. «Թող Աստված տևական դարձնի իր բարգավաճումը, կրկնապատկի իր վեհությունը և հաջողությամբ պսակի իր բոլոր հույսերն ու նպատակները և պահի նրան ճոխության և կատարելության մեջ»։ Կաթողիկոսը տվյալներ է հաղորդում անգամ «Ալամանների թագավորի» (Ֆրիդրիխ Բարբարոսայի) զխաղաղաժ խաչակիր գործի արշավախմբերի մասին, ինչպես նաև Բյուզանդիայի կայսեր, Իկոնիայի

¹⁹ Տե՛ս Ի. Զամչևան, Պապմոթիկոս Հայոց, Գ. 19 155-156։

²⁰ Տե՛ս Исаакиос Византинос, т. II, Москва, 1967, с. 341.

²¹ Տե՛ս Սմբատ Սպարապետ, 19 201։

²² Տե՛ս Դ. Микелетти, ур. соч., с. 144.

²³ Վարդան Վարդապետ, 19 136։

²⁴ Այս մասին տե՛ս Յ. Ֆիրսևան, Գրիգոր Տղայ և Սալահ Էդ-Դին («Բազմավեպ», 1975, 19 172 և հր.)։

²⁵ Արաբական աղբյուրները Հայաստանի և Խարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965, 19 294։

սուլթանի դեմ խաչակիր զորքի մղած մարտերի, Լևոն Բ-ի հետ Ֆրիդրիխ Բարբարոսայի առաջակցության վերաբերյալ: Ավելին, Գրիգոր Դ-ը սուլթանին խոստանում է մահ տեղեկացնել առաջիկա եղելությունների մասին²⁶:

Սալաի ադ-Դիհի Գրիգոր Դ Տղայի հղած մամակի մասին որոշ տվյալներ է հաղորդում մահ դեպքերին ժամանակակից արաբ մեկ այլ մատենագիր՝ Աբու-Օամարը՝ գրելով. «Հալաստանի պետը՝ Կալաթ ար-Ռումի տերը, ապահովված (լինելով) այդ ամուր դոշակի մեջ, շրջապատված եփրատի հարկատու բնակչությամբ, սուլթանին ուղղեց մի մամակ՝ լի խորհուրդներով ու հոգածությամբ. որի մեջ մա ցույց է տալիս մուսուլման երկրների մկատմամբ իր մտադրությունը՝ վեր հանելով արշավող բանակի ուժը և մրա դեմ գնացող բանակների թուլությունը»²⁷:

Դեպի ուժեղը կողմնորոշվելու դիրքավորումը բնորոշ էր ոչ միայն Հայոց Հայրապետին: Հերոսն պատմիչն իր «Տարեգրության» մեջ վկայում է, որ 1192 թ. Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծափորտն «արար սէր ընդ Սալահատինն», որը քրիստոնյաներին հանձնեց Միջերկրական ծովի արևելյան ափին գտնվող չորս քաղաք²⁸: Գրիգոր Դ Տղայի դիրքորոշումը մրա խաղաղասիրական միտումների դրսևորումն էր: Հայոց զգոմամիտ Հայքորոշումը մրա խաղաղասիրական միտումների համերաշխության ու խաղաղակեցության՝ անկախ կրոնական, դավանական և այլ բնույթի խտրոցներից: Նա ելնում էր ամենից առաջ տարբեր ազգերի հետ կողք կողքի ապրող իր հայրենակիցների անվտանգության շահերից, համոզված էր, որ խաղաղության եմ հակված մահ մյուս ազգերը: «Ամենայն ողբգրում է Գրիգոր Դ-ը, ծարախ է խաղաղութեան և սիրոյ Աստուծոյ, Ֆրանկը, Յոյնը, Սուրիացիք, Նեստորականք և Իսմայելացիք...»²⁹:

Սակայն Սալաի ադ-Դիհի մվաճողական ձեռնարկումները հետզհետե ընդլայնվեցին՝ սպառնալով Արևելքի քրիստոնեական աշխարհին, մահ Կիյիկիայի հայկական պետությանը: Սալաի ադ-Դիհը կարողացավ իր շուրջը համախմբել Արևելքի մահմեդական իշխանությունները, միմյնեռ քրիստոնեական աշխարհը մնում էր մասնատված: Գրիգոր Դ Տղան ցավով է արձագանքում դրան: Նա «Ողբ Երուսաղեմի» պոեմը գրեց 1189 թ.՝ խաչակրաց երրորդ արշավանքի տարում, երբ քրիստոնյաների առջև վերստին ծառացավ այլահավատների դեմ միավորվելու անհրաժեշտությունը: Հայոց Հայրապետը միավորման մեջ էր տեսնում Արևելքի քրիստոնյաների, այդ թվում մահ հայերի գոյատևման երաշխիքը: «Ողբ Երուսաղեմի» պոեմում 1187 թ. Սալաի ադ-Դիհի կողմից գրավված Երուսաղեմ քաղաքը բողոքում է, որ քրիստոնյա տիրակալները գորակից չեղան իրեն, ի հետևանս որի՝

*Թողեալ լքայ որպէս գայրիմ,
Աշխատեցայ միայն լոհիմ,
Եւ ող չհասաւ ինձ ի թիկին...*

²⁶ Տե՛ս Լույս Կոնդում, Իջ 295-297:

²⁷ Արաբական աղբյուրները, էջ 302:

²⁸ Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., կազմեց Վ. Հակոբյան, Խ. 1, Երևան, 1951, էջ 77:

²⁹ Ներսիս Շնորհալի, Թուրք ընդհանրական, Էջմիածին, 1865, էջ 454:

Սուրբ քաղաքը բողոքում է նաև այն քանի համար, որ քրիստոնյաները խախտեցին իրենց երդմնադաշինքը, «չիշեցին զուխտս դաշանցն, զոր եղին»³⁰:

Երուսաղեմի դառն ճակատագիրը կարող էր կիսել նաև Կիլիկյան Հայաստանը: Դա լուրջ մտահոգության տեղիք էր տալիս նաև Հռոմկլայի հայրապետանոցի հոգևոր հայրերի միջավայրում: Տագնապահարույց էր հատկապես 1193 թ. Սալահ ադ-Դինի վերջնագիրը, որով նա Լևոն Բ-ից պահանջում էր իրեն համձնեղ Կիլիկիան և հեռանալ այնտեղից: Կտրուկ մերժում ստանալով Լևոն Բ-ից, սուլթանն իր ահեղագոր քանակը շարժեց Կիլիկիայի հայկական պետության դեմ³¹: Դժվար է ասել, թե ինչ արհավիրքներ էր կրելու Կիլիկիայի մեկ միլիոնի հասնող հայ բնակչությունը, եթե Սալահ ադ-Դինի համկարածահաս մահը չկասեցներ այդ արշավանքը³²:

Ժամանակակից գրչի թողած հիշատակարանում Երուսաղեմի գրավումն աղերսակըցվում է Կիլիկիայի Հայոց պետության դեմ Սալահ ադ-Դինի և նրա արքայակների ձեռնարկած արշավանքների հետ: Հիշատակարանում արտացոլվ է գտել Գրիգոր Դ Տղայի վերաբերմունքը նվաճողների հանդեպ: Նա ըստ հարկի գորակից էր հայ ռազմիկներին և իր մարտասանույց հորդորներով ոգեվառում էր նրանց, կատարում այն, ինչ ցանկանում էր իր-չարչարաբեկ հոգին: Եվ երբ Սալահ ադ-Դինը գործով դիմում է Կիլիկյան Հայաստանի վրա՝ «մոյնպէս կարծելով զնոսա անարիս գոլ», Գրիգոր Դ Տղա Հայրապետը, որը բազում տառապանքներ էր կրել «ի շրջաբնակ այլազանիցն... խրատէր և զաւրացուցանէր զթագաւորն և զզաւրսն Կիւղիկեցոց»՝ ընդդէմ կալ նորա չարութեանն որ և ոչ եւս կարաց ձեռն արկանել ի նոսա»³³: Գրիգոր Դ Տղայի «Ողբ Երուսաղեմի» պոեմում խաչակիր զորքին հաղթած թշնամիները գրոհում են Կիլիկիայի վրա, սակայն Լևոն Բ-ը «որպէս զարծիս» մըտնում է մարտադաշտ և պարտության մատնում ոսոխին: Պոեմի հեղինակը Լևոն Բ-ին մեղացնում է աստվածաշնչական հերոս Մակարեին, հայերի մախահայր Հայկ դյուցազմին, Տիգրան Մեծին և ուրիշների³⁴:

Վերը նշված հիշատակարանի հեղինակի հավաստմամբ, Գրիգոր Դ Կաթողիկոսը, ականատես լինելով քրիստոնյաների կրած անլուր տառապանքներին, «զառումն սրբոյ քաղաքին և զաւերումն սրբոյ տաճարացն և զգերութիւն ժողովրդեանն Աստուծոյ, և զայլանդակ գործ պղծութեան մոցա... խնդրէր զփրկութիւն սրբոյ քաղաքին և ժողովրդեանն Աստուծոյ, գրէր և ցուցանէր զամենայն թագաւորացն Յունաց և Հռովմայեցոց, զի թէ իցեն ինչ ձեռնհաս, եկեսցեն յաւգնութիւն քրիստոնէից»³⁵:

Դժնդակ այս ժամանակներում Գրիգոր Դ-ը հոգածու վերաբերմունք էր ցուցաբերում նաև Մեծ Հայքի հոգևորականներին հուզող խնդիրների նկատմամբ: Ստեփաննոս Օրբելյանի վկայությամբ, Սյունիքի եպիսկոպոս Ստեփաննոս Գ-ը որոշում է իր աթոռանիստը Տաթևից տեղափոխել Վայոց ձոր գավառ, Ամաղուի նորավանք, քանի որ սելջուկ-թյուր-

³⁰ Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1972, էջ 268-271:

³¹ ՏՆՆ Սմբատ Մալաթյան, էջ 204:

³² ՏՆՆ նույն տեղում:

³³ Գ. Յովսէփեան, Թիւրքականքանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 568:

³⁴ Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, էջ 303-305:

³⁵ Գ. Յովսէփեան, Թիւրքականքանք ձեռագրաց, Ա, էջ 568:

[illegible][illegible]

Տարասիտիված հայ զանգվածներին միասնական իրավակեցությամբ օժտելու, Հայոց պետականության ավանդույթները վառ պահելու նպատակով Գրիգոր Դ Տղան սատարեց Մխիթար Գոշին՝ ստեղծելու իր «Գիրք դատաստանի» կոթողային աշխատությունը, որի հիշատակարանում հեղինակը, դիմելով Գրիգոր Դ Տղային, գրում է. «Ջսուրք և զաստուա՝ ճարեալ գլխոյդ եկեղեցացս Հայաստանեայց և հանուրց կարգաց պետի ամուսնակրութեամբ, Տեառնդ մերոյ հոգեւորի եւ Լուսաւորչին մերոյ սրբոյ կոչման եւ արօրոյ ժառանգաւորի, զհարկ հոգեւոր հրամանի նուաստս լամենայնի ամենայնի: Մխիթար ընկալայ զոր վասն ցրոցս էր դատաստանի ի ձեռն եղբար եկելոյ ի Զեմք... Աստուծոյ վարկանելի է

³⁶ Արևիկանոս Եղեկեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 351:

¹⁷ Տե՛ս Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, էջ 179-243, 334-425:

³⁸ ՏՆ՝ Գ. Բաղդասարյան, «Հայաստանի օր», Երևան, Լամբրոնյանցի, Պարիս, 1907, էջ 5, Ն. Ալիևեան, Երևան, Լամբրոնյանցի, էջ 246: Ներսես Լամբրոնյանցու թարգմանած օրենքները մտադրելով որպես ճեռապիշ արվում է:

գծերդ վճիռ»³⁹։

Գրիգոր Դ Պառլավուցիին հովանավորում էր ման ակամավոր թծիշկ և բնագետ Մխիթար Հերացուն, որը մրա պատվերով 1184 թ. շարադրեց «Ջերմանց մխիթարություն» աշխատությունը։ Այդ առթիվ Հերացին գրում է. «Հաւաքեցի, և թարգմանեցի ի Ռայ բառ։ Պատճառ ունելով այսմ աշխատութեան և գտէր և՛ գլոժարութիւն սրբոյ և աստուածապատիւ Կաթողիկոսին Հայոց, տեսաւ Գրիգորի, որ մակակոչի Տղայ... որ և պատճառն է գրոցս»⁴⁰։

Գրիգոր Դ Տղան ման մեծ գրասեր, գրահավաք էր։ Այս փաստը շեշտում է Մխիթար Հերացին։ Հատկանշելի փաստ է, որ Սանահին վանքի վանահայր Գրիգոր Տուտերդուն ուղարկած նամակներից մեկում Գրիգոր Դ Տղան գիրքը վեր է դասում զանձից և հավաստում, թե որևէ այլ ցանկություն չունի, բացի «զաստուածային գրեանս ժողովելոյ»⁴¹։ Նա անդուլ հետևողականությամբ հարստացնում էր Հոռմկլայի Հայրապետանոցի գրատունը, մտավոր եռանդ էր հաղորդում հոգևոր դասին, ներշնչում հարգանք հայրենավանդ մտավոր արժեքների նկատմամբ և կորովամտություն՝ ընդդեմ օտարամտյծ հոսանքների։

Գրիգոր Դ Պառլավուցիին վախճանվեց Կիլիկիայի հայոց պետության մայրաքաղաք Սիսում, 1193 թ. մայիսի 16-ին։ Նրա աճյունն ամփոփվեց Սիսի հարավ-արևմտակողմում գտնվող նշանավոր Դրազարկ վանքում⁴², որը Ռուբինյան զահակավանքի դամբանատեղին էր։

Գրիգոր Դ Պառլավուցին իր նախորդների պես մեծ ավանդ ունեցավ իր սերնդի հոգևոր ձևավորման գործում, լիաքուռն ջանքերով կոփեց մրա հույսն ու հավատը։ Հարևան հզոր պետությունների ամենակույլ քաղաքականության պայմաններում կարողացավ իր հոտը պաշտպանել սպառնացող տարբեր զորեղ հորձանքներից, կանխեց քաղկեդոնական ծիսաձևերի մուտքը Հայոց Առաքելաշափղ եկեղեցի։ Նա իր մեջ զուգորդում էր ազգային ու համամարդկայինը, մշտապես ջանում թեթևացնել հարազատ ժողովրդի ուսերին ծանրացած փորձությունների բեռը։

³⁹ Յուրակ հայերեն ձևապատկեր Ջմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, Լ. 425։ «Գիրք դարաստանի» գործի եխարակարանում հեղինակը գրում է. «...Հրաիրեցաք ի ձեռնարկութիւնս զորոց դարաստանիս և յորդորմամբ ի ձեռն թղթոյ Տեսաւ Գրիգորիսի հայոց կաթողիկոսի ձեռնարկի և սկսաւ ևս՝ արտապնայս Մխիթար, որ և Գոշ, և յսրին ի գիտնականս...» (Մխիթար Գոշ, Գիրք դարաստանի, աշխ. ևս. Թորոսյանի, Երևան, 1975, Լ. 172)։

⁴⁰ Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832, Առաջարան։

⁴¹ Ա. ՏԼՐ-Միքելեան, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումները եկեղեցական խաղաղության համար («Արարադ», 1893, Լ. 232-233)։

⁴² ՏՆՆ Սմբատ Սպարապետ, Լ. 204, Սամուել Սեկեի, Լ. 139, 164։

ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐԻՉ ԱՊԱՐԱՆԵՐՅՈՒՄ «ԳԻՐԲ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ

(Նեղիմակի գրած և սրբացած ձեռագրերը)

Ժ. Ժ. Ժ. դարերի մատենագիր Մխիթարիչ Ապարանցերցու (շուրջ 1345-1417 թթ.) ա-
նունը և 1410 թ. ավարտին հասցրած նրա «Գիրք տրամաբանության ուղղափառաց»¹-ը
հայագիտության մեջ հաճախ են հիշատակվել, սակայն երբևէ հատուկ ուսումնասիրու-
թյան չեն արժանացել: Նախորդ հետազոտողների տեղեկություններից հայտնի է, որ նա
«ամս յիսուն դեգերեալ էր լընթերցմունս հին մատենից գրութեան նախնեաց մերոց»², նաև
որ՝ «գատ ի թարգմանութեանց, Հայոց յատուկ գրածներն զանազան կողմէ եթէ մեկտեղ
բերուին՝ հազար բեռն եւ անելի կ'ըլլան, եւ թէ մինակ Մակուայ բերդի (կամ Ծակին) մէջ ի
Աղսոյ բերուած են յիսուն լիտր ձեռագիրք»³:

Այս հակիրճ, բայց աղբյուրագիտության համար կարևոր տեղեկությունները քաղված
են հեղինակի գրառումներից. նա իր մասին գրել է. «այժմ Ծ. (50) ամ մերձ է, որ ի դրունս
Սուրբ Գրոց դեգերեալ կամք, եւ ի հին եւ ի նոր թարգմանեալ գրեանք՝ ի յայլոց ազգաց, եւ
յերկաթագիր մատենան եւ ի յայլ պատմութիւնս, եւ ի սուրբ եւ ի նախնի վարդապետաց ա-
սացուածս խում մի վարժեալ» (Ա.10ա) և ապա՝ «իմ կուս Ծ. (50) լիտր գիրք անելի կա միայն
ի Արսա բերած», «զհին եւ զնոր թարգմանեալ գրեանք, զմերո եւ զայլ ամենայն կողմանց եւ
տեղեաց աշխարհիս, որ եթէ հնար էր ժողովել զամենայն ի մի վայր, անելի գոյր՝ քան զհա-
զար բեռն» (Ա.4ա), իսկ մասամբ կրկնելով՝ գրել է. «միայն ի Մակուա դեռակն Ծ. լիտր
գիրք անելի զո ի Արսա բերած» (Ա.319ա):

Բերված հաղորդումների հիման վրա հասկանալի է դառնում, որ Ապարանցերցին հե-
տամուտ է եղել ձեռքն ընկած գրքերը ուսումնասիրելուն և օգտագործելուն, ընդ սմին
մրանց մի մասը՝ երկաթագիր: Տրամաբանական է նաև ենթադրելը, որ Մխիթարիչի գրած
կամ պատվիրած (ստացած) գրքերը ևս պետք է որ քիչ չլինեին: Իր «Գիրք տրամաբանու-
թեան» գործի ինքնագիրը և նրանից արված ընդօրինակությունը չհաշվելով, աներկբայո-
րեն⁴ նրան պատկանած (իր իսկ գրած և ստացած), այլ կերպ՝ նրա ունեցած կամ ժամանա-

¹ Պահպանվել է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանին պատկանող նրկու օրինակով՝ Ա. ձեռագիր
Հ⁶ 334 (նեղիմակի՝ երկիցս վերամշակված և լրացված ինքնագիրն է), Բ. ձեռագիր Հ⁶ 1663 (նախորդից արված
անկախորդ ընդօրինակություն): Շարադրանքի մեջ, փակագծված, հղում ենք Ա. օրինակը՝ Լքահամարով (օրինակ՝
Ա.4ա):

² Պատմություն Հայոց, ի սկզբանև աշխարհի միջևն ցամ Տեան 1784... Թորինեայ ի Հայոց Միջոյն վարդա-
պետը Չամչեանց Կոստանդինուպոլսեցոյ... Յամի Տեան 1786, հ. Գ., ի Վենետիկ, Լք 398:

³ Հայապատմ. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Թորինեայ եւ իտալեայ ի Հ. Անունդնայ վ. Մ. Ալիշան,
Վենետիկ, 1901, հ. Ա. Պատմիչք Հայոց, Լք 123. այսպիսի Ալիշանը պատգաբանել է «իսկորն այլ ծանր Լքի մի իմա-
նայու Լք»:

⁴ Հավանական ենթադրություններով վերագրումներից ձեռնպահ ենք մնացել: Օրինակ՝ Երևանի Մաշտոցյան

կին մրա գրադարանի մաս կազմող և այսօր մեզ հասած գրքերի քանակը 11 միավոր է: Ինքնին մակաբերելի է, թե այս գրչագրերը ամփոփում են Ապարաներցու մատենագրական հետաքրքրությունների շրջանակի գեթ մեկ մասը, և անկասկած է՝ սրանք ևս աղբյուր են հանդիսացել իր գլխավոր երկի համար:

Գրչագրերի այս սակավությունը առաջին հերթին, մեր համոզմամբ, պայմանավորված է հենց Նախիջևանի Միաբանողների կարգի ճակատագրով. մրանց մի մասը շարունակեց մնալ Նախիջևանում և հարկադրյալ մահմեդականությունը ընդունելով՝ ձուլվեց շրջակայքի թուրքական ցեղերին, իսկ մյուս մասը ժԸ դարի երկրորդ կեսին Ղրիմի կամ Զմյուռնիայի ճանապարհով անցավ Եվրոպա և ժամանակի ընթացքում կրկին ապագայումացման ենթարկվեց⁵: Մասամբ մույն կերպ եղավ նաև մրանց գրական-մշակութային ժառանգության ճակատագիրը. մրանց ստեղծած ձեռագրերի զգալի մասն անհետացավ, մանավանդ որ հայոց հիմնական զանգվածին խորթ էր իր քարոզած գաղափարներով: Լավագույն դեպքում՝ պահպանված փոքր մասը մնաց շրջակա վանքերում և հետագայում անցնելով Էջմիածին՝ այսօր Երևանի Մատենադարանում է: Միարարներին պատկանած ձեռագրերի մյուս մասը, որ հասավ Եվրոպա, մասամբ հավաքվեց Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում⁶: Այս պատճառով էլ Մխիթարիչի գրադարանից պահպանված և մեզ հասած ձեռագրերից 5-ն այսօր Երևանում են, 4-ը՝ Վենետիկում, մեկական՝ Երուսաղեմում ու Նոր Զուղայում:

Ստորև փորձենք ժամանակագրական կարգով ներկայացնել բոլոր վերոհիշյալ ձեռագրերը՝ անհրաժեշտության դեպքում տալով որոշակի պարզաբանումներ: Նկարագրելիս բերել ենք մրանցում գոյություն ունեցող՝ մեր խնդրի համար կարևոր դիտված հիշատակարանները, չենք կրճատել օրհնաբանական և աղերսական ոչ երկար մասերը:

1.

Երևանի Մատենադարան ձեռ. Հ^Կ 6920.

Պետրոս Արագունացի, Գիրք առաքինութեանց,

ԺԳ. դար, գրիչ՝ ձեռա Մխիթարիչ:

178 թերթ, թուղթ, 16,3x13,5. երկայուն, բոլորգիր, 24-40 տող:

Մատենադարանի Հ^Կ 1656 ձեռագիրը (Թարգմողիմես Մարադացի, Մեկնություն վնգորկից, 1382 թ., գրիչ՝ Մխիթար) թևկուզ լսող իր բովանդակության գրված է անպայման Միարանողների միջավայրում և համապատասխանում է Ապարաներցու ժամանակին, բայց գոյություն ունեցող փաստարկները այս գործը նրան վերագրելու համար բավարար չեն:

⁵ Տևն Լ. Խաչիկյան, Զոնայի իզգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Զոնեցու գիտական գործունեությունը - Յովհաննես Զոնեցի, Թաղապետ քրականին, Երևան, 1977, էջ 35. նույնը՝ Լ. Խաչիկյան, Աշխարհություններ, հ. Բ, Երևան, 1999, էջ 348:

⁶ Վենետիկի ձեռագրապահումում մեր մատենագրին առնչվող բոլոր ձեռագրերի, այդ թվում Մխիթարիչի «Գիրք պրամարանության» գործի նկարագրություններում «Տեղեկություն» հարցի դիմաց գրված է. «Ունեցած ենք 1791-ին ստաց», ինչը նշանակում է, որ ձեռագրերը հավաքվել են Արևելյան Եվրոպայի իտալական վայրերից: Հայտնի է նաև, որ «Տրամարանության» գրքի նրկրորդ օրինակը 1790 թ. Հունգարիայում ձեռք է բերել Մ. Չամչյանը:

Հիշատակարանը⁷ -

- 142ա *Կատարեցաւ գիրք եւթն պարգեւացն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերո, որ է օրհնեալ յափտեալս յափտեմից. ամէն: Զֆրա Մխիթարիչ ամարժան քահանայ յիշեցէ՛ք ի Քրիստոս Յիսուս, որ բազում աշխատեցաւ ի գրեղն վասն ժամանակիս դառնութեանն. զոր կրեցաք ի հերձուածողաց եւ ցրտութեան ձմերայնոյս. եւ օրհնակն էր դժվարալոյծ մօտր եւ տղիսայ. եւ տեղիքն՝ հրապարակածողով, եւ մեք՝ նորուսումն եւ առանց ուսուցչի: Օրհնեա՛ ինձ Տէր իմ Յիսուս Քրիստոս !!! [հ]ատ՝ զիս ի յաւարտ սմին. եղիցի, եղիցի:*

Մաճ. Միաբանողների միջավայրում Մխիթարիչ անունը հաճախադեպ էր, ու թեև այս գրիչն իրեն կոչում է քահանա (ո՛չ վարդապետ), սակայն ձեռագրի գիրը վստահաբար Ապարաներցունն է: Ուստի, նկատի ունենալով, որ այստեղ նա «նորուսումն» է «եւ առանց» երևի թե գրչության արվեստի «ուսուցչի», այս ձեռագիրը համարում ենք Մխիթար Ապարաներցու գրածներից պահպանված հնագույնը:

2.

Երևանի Մատենադարանի ձեռ. Հ^ա 3938.

Թուվմա Աքլիմացի, Յաղագս տնօրինութեանն Քրիստոսի,

ԺԳ. դար, գրիչ՝ Ֆրա Մխիթարիչ:

270 թերթ, թուղթ, 16x13. երկայուն, բոլորգիր, 34 տող⁸:

Հիշատակարանները.

- 165ա *Զֆրա Մխիթարիչս յիշեցէ՛ք ի Տէր:*

- 185ա *Ո՛վ բարի ընթերձող, յիշեա՛ զնուստ զֆրա Մխիթարիչս՝ զծրող սմին, որ առաքին եմ ի մեղատրացն եւ յեռին ի կարգատրացն:*

- 209ա *Զֆրա Մխիթարիչս յիշե[ցէ՛ք]:*

Ման. Սա եւ Մխիթարիչի վաղագույն գրչություններից է՝ գրված երևի հաջորդ՝ Հ^ա 68 ձեռագրից առաջ: Իսկ այս երկուսի թվանդանությամբ (Թուվմա Աքլիմացու նույն գործը) նույնությունը կարող է պայմանավորված լինել այդ շրջանում Աքլիմացու գործի ուսումնակամ կամ գործածական մշանակությամբ:

⁷ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հատոր Բ. Կազմեցին՝ Օ. Եղանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Ցանկերն եւ համեմատական տախտակները՝ Օ. Եղանյանի. խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի. Երևան, 1970, պրտ 421. այստեղ գրչության հիշատակարան է արձանագրված նաև 178ա Լքում, մինչդեռ 170ա-89 թերթերին այլ ձևերով հետագայում ավելացված «Պատմեն տումարին հայոց» բնագիրն է, որ հիշատակարան չունի: Նույն գրքի՝ Հատոր Ա. Կազմեցին՝ Օ. Եղանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան. Ներածությունը՝ Օ. Եղանյանի [«Մատենադարանի ձեռագրական հավաքածուները»՝ Լք 13-214], խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի. Երևան, 1965 (այսուհետև՝ Ցուցակ Երևանի Հմույ. Ա. և Բ.):

⁸ Ցուցակ ձեռագրաց, Ա. պրտ 1114:

⁹ ԺԳ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Կազմեց՝ Լ. Ա. Խաչիկյան, Երևան, 1950 (այսուհետև՝ ԺԳ. դ-ի հիշ-բ), Հ^ա №14, Լք 647 ունի միայն այս, ապա՝ ԺԵ. դ. երրորդ Նիկողոսի հերկայր՝ 105ր «Յորժամ կարողայք, ո՞վ կայրայք, եւ բան օգրիկ, գվերքի նորոգող գրգիս՝ գմեղուցեալ Նիկողոսն յիշեցէ՛ք». կա նաև Նույն Նորոգողի մի այլ՝ չտպված հիշատակարան՝ Յա. «Զվերքի նորոգող գրգիս գմեղուցեալ Նիկողոսն յիշեցէ՛ք»:

3.

Երևանի Մատենադարանի ձեռ. Հ^Գ 68.

Թովմա Աքուիեացի, Յաղագս տնօրէնութեանն Քրիստոսի. ՊԼԲ - 1383 թ.,
Նախիջեւան, գրիչ՝ ֆրա Յոսեփան, Մատթէոս Քոնցեցի (միայն՝ 151ա-9ա),
[ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանցերի]:

276 թերթ, թուղթ, 16,3x11,5. երկայուն (միայնում՝ 144բ-5ա, 196աբ), բոլորգիր, 36-38 տող¹⁰.
Հիշատակարանները¹¹.

- 103ա *Ի հայոց ՊԼԳ. (1384) թուին Սալիթաղեցի Սարսուն մեռաւ. ֆրա Տէրունակաճ
խոստովանաւայրն կախուեցաւ:*

- 174բ *Գրեցաւ թվիս ՊԼԲ. (1383) Հոկտեմբերի Ը:*¹²

- 256ա *Զֆրա Մխիթարիչս յիշեցէ՛ք ի Տէր*¹³:

Մամ. Ըստ վերջին հիշատակագրութեամբ՝ Մխիթարիչը, ամենայն հավանականու-
թյամբ, այս ձեռագրի ստացողն է:

4.

Վեներտիկի ձեռ. Հ^Գ 147/1363¹⁴.

Ժողովածու մեկնութեանն. 1392 թ.,

Արտագ զավառի Մակու գյուղ, գրիչ և ստացող՝ Ֆրա Մխիթարիչ Ապարանցերի:

74 էջ, թուղթ, 13,5x17. երկայուն (14x11,5. մեկը՝ 14x5,5), բոլորգիր, 34 տող: Պարունա-
կում է. վարդան Արևելցու Երգ երգոցի մեկնութեանն առաջին մասը (էջ 1-47), ժողովումն

¹⁰ Մայր ցուցակ հայերև ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի. հատոր Ա. Կազմեցին՝ Օ. Եգան-
յան, Ա. Զեյթունյան, Փ. Անթուրյան. համադրությամբ՝ Ա. Մնացականյանի, Օ. Եգանյանի. Երևան, 1984, էջ
277-82: Նույնի՝ հատոր Բ. Կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթուրյան, Ա. Զեյդիկյան. համադ-
րությամբ՝ Ա. Մնացականյանի, Օ. Եգանյանի, Ա. Զեյթունյանի. Ցանկերը՝ Վ. Դևրիկյանի. Երևան, 2004 (այ-
սուհեղին՝ Մայր ցուցակ Երևանի, Ա. և Բ.):

¹¹ Արվինացու երկի թարգմանության 1345 թ. հիշատակարանը այս ձեռագրի 276ա էջից վերցնելով տպա-
գրոված Լ՝ԺԴ. դ-ի հիշ-բ. Հ^Գ 430, էջ 343-4 (նույնը կա նաև Երևանի ձեռ. Հ^Գ 104, 398ա՝ Մայր ցուցակ Երևանի,
Ա., սին 441-2): Նույն հիշատակարանի մեկ այլ հրատարակություն և ժանրամասն քննություն տես՝ M. A. v. d.
Oudenrijn, Eine alle armenische Übersetzung der Tertia Pars der Theologischen Summa des Hl. Thomas von Aquin,
Einleitung nebst Textproben aus den Hss. Paris Bibl. Nat. Arm. 134, Wien Mech. 3323 Leiden Univ. Bibl. Or. 5494
und Vahkan Borg. Arm. 45., Francke verlag, Bern, 1955, p. 15-37.

¹² Ցուցակում այս ձեռագրի գրչության ժամանակ համարված է «ՊԼԲ-ՊԼԳ. - 1383-1384 թթ.»: Ըստ ձեռագ-
րի թերթերի կարգի 1384 թ. նախորդում է (103ա) 1383 թ. (174բ), ուստի 1384 թ. հիշատակագրությունը համարում
ենք գրչի իսկ ձևերով հեղափոխում արված գրառում: Այսինքն՝ ձեռագիրը կարող է գրված և ավարտված լինել
1383 թ.:

¹³ Տես՝ նաև ԺԴ. դ-ի հիշ-բ. Հ^Գ 686, էջ 549-50 (29ա, 51ա, 103ա, 106ա, 179ա, 186բ էջերի հիշ-ներք): գրչու-
թյան ժամանակի հիշ-ներք կուն ձեռագրի նաև 33բ, 63ա, 83ա, 67ա, 110ա, 131բ, 152ա, 174բ, 276ա էջերում:

¹⁴ Վենետիկի ձեռագրերը նշանակում ենք այսպիսի՝ կոտորակային համարներով. առաջինները ձեռագրա-
դրան գույքահամարներն են, իսկ երկրորդները՝ ցուցակի հերթական համարները:

հաաքմամբ ի սրբոյն Դիոնէսիոսէ (էջ 47-48), և [Համառօտ ծաղկաքաղ մեկնութիւն Աւետարանից Թովհաճմու, հարցմամբ եւ պատասխանիւք՝ զլ. Ա.-ի Ա.] (էջ 49-73), [Ըստ ինչ իմաստասիրական՝ էջ 74]¹⁵:

Հիշատակարանը.

- Էջ 47 *Յիշեցէ՛ք եւ զանարհեստ եւ զփծում զգծողս՝ զՔրա Մխիթարիչ սոսկ անուամբ քառանայ եւ աշակերտ քանի, ի մաքրափայլ յաղօթս ձեր եւ թողութիւն հայցել մեղաց իմոց ի հեշտալոր Տեսունէն եւ ներումն սղալանացն եւ կարճողութեան, զի շտապով զրեցի զսա ի գաւառս Արտազու, ի գեօղս որ կոչի Մակու, առ պարոնութեամբ տէր տէր Զաքարիայի մեծի երախտատրի, եւ յարունապետիս Մատթէոս վերակոչեցեալ, ի թվ. մարգեղութեան մեծի ՌԵՂԲ. (1392), Թուիս Ա. (1): Արդ, որք ընթեռնոյք կամ օրինակէք՝ յիշեցէ՛ք ի մեղ-սաքալիչ յաղօթս ձեր զմուսստ եւ զփան[աք] ||| (1 տող թափուած) եւ զամենայն երախտատրսն, զճնողսն մարմնատր, եւ Աստուածն իմ Թիւոս Բրիստոս առ հասարակ ողորմեացի ի յահագին զալստեանց իւրոյ՝ յիշողացոյ եւ յիշեցեղոցս. եւ մնա փառք¹⁶:*

5.

• Երեւանի Մատենադարանի ձեռ. Հ^Գ 354.

Աստուածաշունչ (ամբողջական), ԺԻ. դար: [Մակու],

գրիչ՝ Գրիգոր Ապարանբերցի կամ Գաւառցի (11ա-25բ, 28ա-61բ, 64ա-82բ, 84ա-126բ, 129ա-89բ, 192ա-222բ, 224ա-70ա, 272ա-334բ, 449ա-524բ), Ղուկաս (362ա-402բ, 404ա-38բ, 440ա-7բ, 530ա-52բ, 554ա-80բ, 582բ-89ա, 596ա-648ա), ստացող՝ Քրա Մխիթարիչ վրդ. (1-524՝ Հին Կտարական), տէր Զաքարիա անքեպս. (525-648՝ Նոր Կտակարան)¹⁷:

¹⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանցի ի Վենետիկ, հապոր Է., Յօրինեց Կ. Սահակ վ. ձեռնմանա՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ, Ս. Ղազար, 1996, էջ 701-6 (այսուհետք՝ Մայր ցուցակ Վենետիկի, Է., եւսյն ձեռվ եղելու ենց ցուցակի Զ՝ Վենետիկ, 1996 եւ Ը՝ Վենետիկ, 1998 հաւորները): Ըստ այս նկարագրության՝ ձեռագիրը խիստ վաղ վիճակում է՝ թերի Լ սկզբից եւ վերջից, պակասներ ունի նաեւ մեջքերէն-րից:

¹⁶ ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ. Մասն առաջին (1401-1450 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երևան, 1955 (այսուհետք՝ ԺԵ. դ-ի հիշ-ք, Ա.), էջ 61: Որպէս այս ձեռագրի հիշատակարան դրված է Երուսաղեմի ՎՊ 327-ի 1406 թ. հիշատակատանի մի հատված (տե՛ս ստորեւ), ապա ծանոթագրված է. «Ձեռագրի ընդօրինակությունը Մխիթարիչն սկսել է փարիսեր ասոց: Մի այլ հիշատակագրության մեջ նա գրում է. «*Յիշխարիս եւ զանարհեստ եւ զփծում զծողս զՔրա Մխիթարիչ... ի թուականութեան մարգեղութեան տեառն ՌԵՂԲ. (1392)*»: Ինչպէս րենում ենք, վերջինս արդեն Վենետիկի ձեռագրից է այս շփոթը ընտրւ Լ յստ ամենայնի Մկրտաչ Տեր-Մովսիսյանի «Ընդհանուր ցուցակ»-ից, որից Լ Խաչիկեանը բաղել է Վենետիկի ձեռագրերի հիշատակարանները (տե՛ս ԺԵ. դ-ի հիշ-ք, Ա. էջ ԾԶ.): Այսուհետք հստակ է, որ Վենետիկի այս փոքրածափայ ձեռագիրը գրվել է ոչ թե 1392-1406 թթ. ընթացքում, այլ՝ 1392-ին, իսկ 1406-ին գրվել է Երուսաղեմի ՎՊ 327-ը:

¹⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, Երևան, Բ., պտն 227-240: Հետագայում ձեռագիրը երկար ժամանակ եղել է Նոր Զուղայում: 1635 թ. խոջա Սարապն այն ստացել, նորոգել ու թերի մասերը լրացնել է Վրկի հապոր գրչին (83ա եւ այլն): 1660 թ. խոջա Նուրվալին ստացել եւ վերածաղմել է Վրկի հապաններին եւ Ըստարակսին (648բ), իսկ 1677-ին պարոն Դիանցի Դուստր եւ Ավետումի կին Զուղայնցի Փարասն ստացել եւ ընծայել է հոհան նախկույտսին (529ա):

650 թերթ (չգրված՝ 1ա, 27ա, 83բ, 127ա, 190բ, 361բ, 649աբ), թուղթ և մագաղաթ (72, 84, 362-447, 529-648), 26,5x20. Երկայում, քաղցրահամ, 45-46 տող¹⁸:

Հիշատակարանները (Մայր ցուցակից քաղելով՝ ընտրովի բերում ենք Աախ Գրիգոր, ապա՝ Ղուկաս գրիչներիցը, վերջում՝ ստացողներինը)։

- 101ա *Ջթարմատար* *եւ զփցուն եւ զքազմաներկ մեղաւք մակարդեալ ոգի Գրիգոր դպիր զծող յիշեսչիք ի Քրիստոս հանդերձ ծնողաւք եւ եղբարքք եւ ամենայն զարմիք եւ երախտատրոյ/ոյ/վք, ո'վ աստուածաւէր պատարհողք սմին, եւ Աստուած զձեզ յիշէ առհասարակ. ամէն. ո'հ*։

- 189բ *Զնուաստ ստացող սմին՝ զՃրա Մխիթարիչ վարդապետ յիշեսչիք ի Տէր կրկին ծնողք*¹⁹ *եւ համայն զարմիք, ո'վ պատահողք սմին, եւ Աստուած զձեզ յիշէ առհասարակ։ Ընդ նմին եւ զփցուն գրչիկս՝ զԳրիգոր սարկաւագ, յիշել աղայեմ ի Տէր՝ հանդերձ ամենայն ազգականքք եւ երախտատրքք, մաեղ զՅոհաննէս պատամենակս մեր, որ կու սպասաւորէ մեզ (նման՝ 258ա)*²⁰։

- 252բ *Զգծաւոյ սուրբ եւ աստուածեղէն տառիս՝ զԳրիգոր դպիր Գաւառեցիս յիշեսչիք ի տէրուհիս, զի եւ դուք յիշեալ յիշիք ընդ Տեառն սիրելիս*։

- 265բ *Ջտառապետ ոգի եւ զմեղօք լցեալ չարին, զթաղծեալ անձն Գրիգոր դպիր Գաւառեցի անարհեստ գրչակ յիշեցէք ի Տէր Թիսուս, ո'վ պատահողք այսմ սուրբ եւ աստուածեղէն զանձիս. եւ որ առատն է ի տուրս, պարգեւեցէ մեզ՝ յիշելոցս, եւ ձեզ՝ յիշողացդ, զիւր երկնից արքայութիւնն. ամէն։ Աւա՛յս մեղատրիս*։

- 288բ *Ջթաղծեալ ոգի՝ / զԳրիգոր դպիր Գաւառեցի / եւ զժրող այսմ տառի / յիշեսչիք ի Տէր բարի, / ո'վ պատահողք այսմ զանձի, / եւ զծնողս իմ. եւ Աստուած ձեզ յիշէ*։

- 501ա *Ջաշխատող սորին՝ զփցուն գրչակս զԳրիգոր մանուկ Ապարաներացի, յիշեսչիք ի Տէր Թիսուս ամենայն ազգականաւք եւ երախտատրաւք, ո'վ պատահողք այսմ նշանախեծի, եւ որ առատն է ի տուրս բարեաց, պարգեւեցէ մեզ՝ յիշելոցս եւ ձեզ՝ յիշողացդ առ հասարակ զիւր երկնից արքայութիւնն. ամէն*։

- 392ա (*Ղուկաս գրչի*) *Զնուաստ զծող Ղուկաս յիշեա՛*՝ *ի տէր Թիսուս Քրիստոս (նման՝ 401ա, անանու՝ 580բ, 625ա)*։

- 589ա (*Գրչի քերուած գրութեան վրայ, այլ ձեռքով*) *Զստացող սորին՝ զտառապետ եւ զնուաստ ոգիս զՃրա Մխիթարիչս սպասաւոր քանի, յիշեցէ՛ք առ Քրիստոս քարի մտօք*²¹։

¹⁸ Ձեռագրի բովանդակության նկարագրության նկարում կա հետևյալը. «Այս և հաջորդ բոլոր աստղանիշ [կրօղ] կյուբերը լրացված են 1635-ին երբեզող Հակոբ գրչի ձեռքով» (Մայր Ծուցակ, Բ., սյուն 228). Աստղանիշայուցը, ընդհանրապես, մեր հնդիկական «Գիրք քրամարանութեան» գործի կարևորագույն աղբյուրներից է։ Ուստի անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ 1635-ի լրացումներ են Հիս և Նոր Կտակարանների ո՛չ բոլոր գրքերի գլուխները, նախադրությունները, առաջարանությունները, Սիրաբի գիրքը (347ա-56ա), Եսեքի Թուղթը (525ա), Համարարար-Կանոնը (525բ-7բ), Սրբոյն Եվրեմի ի Յով. Կ' յոթ վտանգի (335ա-9բ) և Պապմութիւն Ասանթի (339բ-46բ) ընդգրկող, կամ նաև՝ այն բոլոր 19-րդ, որոնք նշված չեն գրիչների անուններին և թերթաբանակին հաջորդող «չգրված» բնորոշմամբ փակագծային թվարկումների մեջ։

¹⁹ «Կրկին ծնողք»՝ հավանաբար նկարի ունի մարմնավոր և հոգևոր ծնողներին։

²⁰ Գրչության արվեստի պարզության փոխանկյունից ուշադրավ ի հետևյալը. 205բ «Զգծողս յիշեա՛՝ *և՛ աննդադիք յնք. զի թանաքս վաղ էր և կու ախտելու ո'հ*։

²¹ ԺԵ. դ-ի հիշ-բ, Ա. 19 ճ. 61. «Ճրա Մխիթարիչը կամ Մխիթար Ապարաներցին գործել է 1360-1410 թթ. ըն-

- 641թ Ջգերաճոյակոյալ Խ զեղբայրական գլուխն մեր՝ զտէր Զաքարիա՝ ստա-
ցող սուրբ կտակիս Նորոյ յիշեցէ՛ք յաղօթս. ընդ մօին եւ զնուստ զծողս՝ զՂուկաս եւ
զծնողսն իմ:

Եւսմ. Միջնադարյան հակաճառական բնույթի որևէ աշխատության հիմնական աղբ-
յուրը պետք է լիներ Աստվածաշունչը, որից արված քաղվածքներն առավել քան առատ
են մաս Մխիթարիչի «Գիրք տրամաբանութեան» գործի մեջ: Անկասկած է մաս, որ վերջի-
նիս այդ տեսակ բոլոր (ուղղակի, վերաշարադրամբով կամ հիշատակումով) քաղումներն
արված են իր իսկ պատվերով գրված այս Աստվածաշունչից, որ, ի դեպ, «Մնացորդաց
գրքերի» մասնական թարգմանությունը պարունակող սակավաթիվ օրինակներից մեկն
է²²: Ինչպես տեսանք, այս օրինակի մեջ կային էական արակասներ, որոնք լրացվել են 1635
թ. ճորագողի ձեռքով. օրինակ՝ սկզբնապես այստեղ չկար Մխիթարի առատորեն օգտա-
գործած Սիրաքի գիրքը (247ա-56ա): Սակայն այսպիսի դեպքերում մյուս տրամադրության
տակ կարող էր լինել մաս Միաբանողների միջավայրում գրված՝ Երեանի Հ^ր 184 ամբող-
ջական Աստվածաշունչը²³:

Զեռագրացուցակներից մեկում այս ձեռագրի գրչության վայրը նշված է «Ապարա-
նե՛ր», մյուսում՝ «[Ապարաներ]»²⁴: Այսուհանդերձ՝ համոզված ենք, որ այն գրվել է Մա-
կուում, ինչի օգտին են խոսում հետևյալ փաստարկները.

ա. Կասկածից վեր է, որ այս ձեռագրի բուն պատվիրատու-ստացողը Մխիթարիչ
Ապարաներցին է, իսկ Նոր Կտակարանի մասինը՝ «արքիական գլուխն մեր տէր Զաքա-
րիա»-ն (641թ), որ, թվում է, այդ մասի գրչության ծախսի հոգացողն է, այսինքն՝ բոլոր դեպ-
քերում ձեռագրի բուն տերը Մխիթարիչն էր: Նախիջևանի զավատի առաջնորդների ցամ-
կում²⁵ 1330-1766 թթ. ամբողջ ընթացքում այս անունով որևէ եպիսկոպոս չկա, ուստի
առավել քան հավանական է, որ սա Արտազի կաթողիկ այն առաջնորդն է, որին Լ. Խա-
չիկյանը կոչել է «Զաքարիա Բ.» և որին հատկացրել է 1361-1392 թթ.²⁶: Նրա եպիսկոպո-
սության սահմանային այս թվականներից առաջինի հիմքը Մարադայում 1361-ին «ի հայ-

բացքում: Նրա կողմից գրված կամ նրա անվան հիշատակությամբ այս և մյուս հիշատակարանները փնդադրում
ենք Մխիթար գրչի կողմից 1406 թվականին Մակուում գրված հիշատակարանին առնթրելով՝ նկատի ունենալով,
որ նրա մեջ Մխիթարիչը հիշատակվում է որպես գրչի ռուսոցից-դարձումապետ: Այսպիսով են այս Աստվա-
ծաշնչի 50 ևս. 252ր. 189ր. 205ր. 589ա Լջնրի հիշատակագրությունները:

²² Տե՛ս Գր. Խաչատրյանից, Գիրք մնացորդաց ըստ հետազոյն հայ թարգմանութեան. Զեռացին ամ ի յոյս ըստ
կրկին ձեռագիր օրինակաց հանդերձ Բ. լուսագիր նմանատարութեամբ Լոցին, Մոսկուա, փայ. Վարվառե Գապ-
րուկ, 1899, էջ Գ-Դ.: Տե՛ս նաև Н. Марр, Новоткрытый армянский текст "Паралипоменонъ" (К вопросу о
переводах св. Писания на армянский язык). - Н.Я. Марр, Кавказский культурный мир и Армения,
Составитель и редактор тома П. М. Мурадян, Ереван, "Тандэсар" богословский центр, 1995, стр. 179-196.

²³ 1400-1401 թթ., Ապարաներ, գրչի, կազմող՝ Ֆրա Յովհաննես Ապարաներցի, սղացող՝ Խաչատուր քիչ. 376
թերթ, թողթ, 23,2x14,5. նրկայուն, բոլորգիր, 50-60 փող:

²⁴ Մայր Ցուցակ, Վնուր, Ա. սյուն 305, նույն փնդում, Բ. սյուն 227:

²⁵ Միսակյան, փնդագրության Միննաց աշխատի, ի Տ. Ղևոնդեայ Մ. Միչան՝ Մ. Մխիթարեան, Վննսրիկ,
ի Մխիթարապ վանս, ի Ս. Ղազար, 1893, էջ 388 (այսուհետև՝ Միսակյան):

²⁶ Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, Արտազի հայկական իշխանությունը և Շործորի դպրոցը.- Բաների Մարտնադա-
րանի, հտ. 11, Երևան, 1973, էջ 158, 162, 166. Լույսը փն՝ նաև Լ. Ս. Խաչիկյան, Աշխատություններ, հտ. Բ.,
Երևան, 1999 էջ 74, 77, 80 (այսուհետև՝ Լ. Խաչիկյան, Արտազ, ԲՄ և Աշխ., Բ.):

րապետութեան աթոռակալաց առաքելոյն Թադէոսի Տէր Տիրացոյի եւ Տէր Զաքարիայի՝ գրված Նոր Զուղայի Հ^տ 336 Աստվածաշունչի Ռիշատակարանն է²⁷, երկրորդինը՝ Վենետիկի Հ^տ 147 ձեռագրինը (տե՛ս վերը): Ծավոք, առկա աղբյուրների մեջ այս եպիսկոպոսի անվան այլ Ռիշատակություն չկա²⁸, մասն չգիտեմք որա մահվան որևէ հավանական թվական: Այսուհանդերձ, Լ. Խաչիկյանը, Տիրացու Գ. պայմանական անունով, սրա ենթադրական հաջորդն է համարել Արտագի պարոն Նուրադիմի անանուն կրտսեր որդուն և Արտագի կաթողիկ եպիսկոպոսների ցանկում այս Տիրացու Գ.-ի դիմաց նշանակել է 1404 թ.²⁹: Խաչիկյանն ասում է մաս հետևյալը. «Զաքարիա Բ. եպիսկոպոսի աթոռակալության տարիներին, մասնավորապես ժե. դարի սկզբներին»³⁰:

Այս ամենը մեզ հիմք է տալիս վստահորեն պնդելու, որ Մխիթարիչ Ապարանեցու Աստվածաշունչը գրվել է Մակուում, շատ հավանորեն ժԳ.-ժԴ. դարերի սահմանագծում, պայմանականորեն՝ 1395 թվականի շուրջ:

բ. Հիշատակարանների մեջ Մխիթարիչը մի անգամ կոչված է «*Քրա Մխիթարիչ վարդապետ*» (189ա), մի անգամ էլ՝ «*Քրա Մխիթարիչս սպասավոր բանի*» (589բ), իսկ առաջին գրիչ Գրիգորը չորս անգամ կոչվում է «*Գաւառեցի*» (252բ, 265բ, 288բ), մի անգամ՝ «*Ապարանեացի*» (501ա): Ավելին՝ մույն Մխիթարիչը Մակուում 1406 թ. իր պատվերով գրված՝ Երուսաղեմի Հ^տ 327 ձեռագրի (մեր շարքի՝ 8) մի Ռիշատակարանում կոչված է «*Մխիթարիչ վարդապետ Գաւառեցի*» (էջ 112ա), մյուսում՝ «*րարունապետիս Մխիթարիչ վերակոչեցեալ*» (էջ 285ա՝ տե՛ս ստորև): Նկատելով, որ գրչին կամ որևէ անհատի իր ծննդավայր-բնակավայրի անունով մականուն պետք է տրվեր ավելի հաճախ մեր՝ մույն իր բնակավայրից դուրս գտնվելու դեպքում, այստեղ հարկադրված ենք մասն Գավառ և Ապարաներ անունները փնտրելու մույն տեղում: Առկա տեղեկատուի թվարկմամ մեջ առաձմանում են Գավառ անունով հետևյալ բնակավայրերը՝ մերկայիս Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ(նի) քաղաքը, գյուղաքաղաք Վանի մահաճի Հիքլարի գավառում և երբեմնի գյուղ մերկայիս Մեղրիի շրջանի տարածքում³¹: Սրանցից որևէ մեկը Նախիջևանի Ապարանների հետ մերձեցնալ կամ մույնացնալ չի կարող, ուստի կարծում ենք, որ ըստ մեր շարադրած փաստերի՝ ժԳ.-ժԴ. դարերի ընթացքում Մակուում Նախիջևանի գավառը կոչում էին պարզապես Գավառ, ավելին՝ հավատացած ենք, որ սա թխում էր Միաբանողների կարգի անվան գրեթե պաշտոնական դարձած «*Fratres Armeni Unitores de provincia*

²⁷ Տե՛ս Զուգակ ձեռագրաց Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, Խ. Բ., Կապմնք՝ Լ. Գ. Միսուհան, Խմբագրութեամբ Օ. Եզգեհեանի, Վիեննա, 1972, ձեռ. Ն^տ 23՝ էջ 32 (խաչիկյանը սա վկայակոչել է Մ. Տէր-Մովսիսյանի «Ընդհանուր ցուցակ»-ի միջոցով):

²⁸ Հմմտ. նաև Ն. Վարդան վ. Հաքունի, Կարևոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պարմութենէն, Վենետիկ, 1927, էջ 310՝ «1392ին Անտարան մի. գրուած իտն՝ «*ի հայրապետութեան Զաքարիայ*» նոյն [Արտագի Թադէոս առաքելի] ուղիղիս:

²⁹ 1304 թ. Մակուի բերդ այցելած Ռուի Գոնսպես դե Կլավիխտ ասում է, թե Նուրադինը մարտիր էր իր կրքսը որդուն ուղարկելու հոռմ, որպեսզի Դուպը նրան ձեռնադրի Արտագի եպիսկոպոս. տե՛ս Լ. Խաչիկյան, Արտագ, ԲՄ. 11, էջ 162, 166, Այխ. Բ. 77, 80:

³⁰ Լ. Խաչիկյան, Արտագ, ԲՄ, էջ 159, Այխ., Բ. էջ 74:

³¹ Թ. Խ. Հակոբյան, Սպ. Տ. Մեղիք-Ռախշյան, Ն. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Չորս հատորով, Կր. 1 (Ա-Դ), Երևան, 1986, էջ 798-9:

Nachvanen.³² ձևից:

6.

Վենետիկի ձեռ. Ը^թ 863/1000.

Դատաստանագիրք լատինաց (Կանոնագիրք Է.):

ԺԴ. դար, Ապարաներ, գրիչ, ծաղկո՞ղ և ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարաներցի:

348 թերթ, թույլթ, 16,5x13. երկայուն (13x10,5. մեկը՝ 13x5), թղթորգիր³³:

Հիշատակարանները³⁴.

- 2ա (Կիսախորանի վերին հատում) - *Ֆրա Մխիթարիչ*:

- 113բ *Ջանպիտան ֆրա Մխիթարիչս յիշեցէ՞ք ի Տէր*:

- 178բ *Զգծող սորին գիսնաց եւ զանարհեստ գրիչ զֆրա Մխիթարիչ, որ յետին եւ ի կարգն եւ առաջին ի մեղաւորսն, աղաչեմ զձեզ, յիշել զմեզ բարի մտօք ի յողորմութիւն Քրիստոսի, որ յիշէ զմեզ ի բարի՝ մորա մեղաց գիրն ջնջի. ամէն*:

- 179ա *Ո՛ւ թարի ընթերձողք, վասն սիրոյն Քրիստոսի անմեղադիր լերո՛ւք վասն սխալանաց գրոցս, զի ամենայն արհեստաւոր սխալի ի գործս իւր, եւ օրինակ գրոցս խիստ սխալ էր, եւ այլ օրինակ չկայր: Աստուած ողորմի գրողիս*:

- 190ա *Զֆրա Մխիթարիչս յիշեցէ՞ք ի Քրիստոս*:

- 216բ *Գրեցաւ գիրքս Դատաստանաց ձեռամբ փծուն գրչի, որ յորջորջի մականուն տառապեալ Մխիթարիչ Ապարաներցի, ի վալելուսն ինձ եւ ծնողաց իմոց, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն: Եւ զիս ի բարի մտաց մի՛ մոռանաք. յիշողքդ յիշեալ յիշին ի կեանս յալիտեմական. ամէն*:

- 217ա *Օգնեա՛ ինձ, տէր իմ Թիսուս Քրիստոս, եւ շուտով հասո՛ւ՛ զիս ի յաւարտ ամին. օղիցի*:

Եւսն. Գլխավոր հիշատակարանը, որ վերջից թերի է, ուստի և թվական չունի, կարևոր և միակ այն վավերագիրն է, որ մանրամասներ է հաղորդում Մխիթարիչի ընտանիքի ան-

³² Հմմտ. Hierarchia Catholica Medii Aevi sive summorum Pontificum, S. R. E. Cardinalium Ecclesiarum antisistina series. Ab anno 1198 usque ad annum 1431. E documentis tabularii praesertim Vaticani collecta, digesta, edita per Conradum Eubel, S. Theol. Doct., Editio altera, I, Monasterii (Munster), MDCCCXIII (1913), p. 354. նաև՝ Սիսական, Էջ 386:

³³ Մայր ցուցակ Վենետիկի, Զ. սյուն 357-70. «Նկատած ձեռագրին արտաքին տրույալները ու պարագաները, երևանք ըսել որ ներկայ օրինակութիւնը կապարտած է ԺԴ. դարու սաարքին և կամ ԺԵ.ին սկիզբը»:

³⁴ Դիպլոմա Արազոնացու և Հակոբ Զոնեցու ձևերով Դատաստանագրի թարգմանության հիշատակարանը՝ 348աբ չկա ԺԴ. դարերի հիշատակարանների հապորտ: Հ. Մ. Ընտնեմյանը, նախապես ընդունելով, որ նրա մեջ «ելք յիշտի գրքին թարգմանութեան թուականը՝ 1361, որ հասանաքար վրիպակ լոյսայ, բանի նոյն տարին դեռ չէին կազմակերպում ունիթոոները» (Մայր ցուցակ Վենետիկի, Զ. սյուն 357), թվականը հաղորդող նրա հաղվածը տպագրել է անվտոյիտ. «*յամի ձերնդեան Փրկչին մեզու հազարներորդի երեսիարիւրներորդի առաքնե-տորդի*» (և. տ., սյուն 366), իսկ Մ. Ուղեւորիքը լուծումը գտել և իրավացիորեն տպագրել է անհրաժեշտ լրացու-մով. «*հազարներորդի երեսիարիւրներորդի [երեսներորդի] առաքններորդի*». Ondenryon M. A. v. d., Linguae Haicanae Scriptores Ordinis Praedicatorum congregationis Fratrum Unitorum et FF. Armenorum ord. S. Basilii Citra mare constantinensium quicquid huc usque unitorum recenserebat, Bernae, Apud A. Francke, 1960, p. 192-3:

դամների մասին: Սրա որոշ հատվածներ քաղվածաբար տպագրել է նաև Ալիշանը³⁵։ Արա և Հ. Ս. Շեմճեմյանի³⁶ ընթերցումների միջև տարբերություններ կան, ուստի և ձեռագրի պատճենով³⁷ վերընթերցելով և ճշգրտելով՝ բնագիրն այստեղ բերում ենք ամբողջությամբ։

- 348ր Արդ, գծագրեցաւ կամաւ ամենակարօղին լուսափայլ եւ հոգիաշահ մատեանս այս, որ կոչի Դատաստանաց՝ ի վանքս Ապարներք, ընդ հովանեաւ Սրբունի Աստուածածինն եւ Սուրբ Ստեփանոս Նախապկաին եւ՝ Սուրբ Յակոբոսի առաքել[ոյն], եւ Ամենայն Սրբոց եւ հազարապետաց խորհրդոցն Աստուծոյ եւ սպասաւորաց սոցին վե[րնոց]։ նախ ֆրա Տէրունական փրիօրի եւ վիքարի կարգ[իս]։ Մխիթարիչ վարդապետի ճշմարտի³⁸, ֆրա Գրիգորի որ մականուն կոչեցեալ Մակունց[ի], Ֆրա Մովսէսի, Ֆրա Մխիթարի, ֆրա Մկրտչի, ֆրա Սիմէոնի, ֆրա Յոհաննիսի, ֆրա Զվանի, ֆրա Ղուկասի, ֆրա Յովանէս միակեցի, Գրիգորի եւ տնտես Գրիգորի, սուրբ (՝) Աստուածատուր միակեցի, ||| (1 տող թափուած) [գրեցաւ] ձեռամբ նուաստ ոգո եւ ամարհեստ գրչի ֆրա Մխիթարչի. [յեւտ]ին եւ ի կարգն եւ առաջին ի մեղաւորսն։

Արդ, զսոսա զամենեսեան զվերո ասացեալս եւ զամենայն հնազանդեալս եկեղեցոյն Հոռմա արժանաւորեսցէ Աստուած Հայր երանութեանն յաւիտեանական, եւ ծոցածինն իւր Քրիստոս ժառանգորդս արասցէ արքայութեան, եւ մասն սուրբ եւ պարգեատու Հոգին Սուրբ կերակրեսցէ զամենեսեան անմահական կերակրովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ընդ սոսին եւ զմարմնաւոր ծնօղսն ի[մ]։ նախ զսիրելի հայրն իմ զԳորգիկ, որ հանգուցեալ է ի Քրիստոս, եւ աղայեմ զձեզ, ով բարի ընթերձօղք, զի որ ոք ընթ[եանու]՝ զխոնարհեցո Տէր զո[ւնկն] աղօթքն ասէք, նայ եւ զաղօթքն որ յետ հաղորդ[ութեան], այսինքն՝ Արձակեա՛. եւ որ ասասցէ ըստ այսմ կերպի՝ իւր մեղաց գի[րն] ջնջի. երկրորդ՝ զմայրն իմ զԵրախ, որ կու աշխատի. երկրորդ՝ զեղբայրն իմ զԵահն, եւ զքոյրն իմ զԹուխտէնիկ եւ զայլ ամենայն երախտաւորսն իմ, զազգականս եւ զօտարս։

Աղայեմ զձեզ եղբայրական սիրով, զի որ ոք ընթերձուցու զգիրքս կամ օրինակէք զսոսա, զվերո ասացեալսն յիշեսցիք յաբեմիազն Աստուած բարի. որ ոք եւ որ յիշէ զմեզ ի թառի, նորա մեղաց գիրն ջնջի։ Փառք Հին անեղի եւ Որդոյն միածնի եւ Սուրբ Հոգոյն ճշմարտի այժմ եւ միշտ եւ յաւիտեանս։

Արդ, եթէ սխալանք ինչ գտանիցէք ի սմա, վասն սիրոյն Քրիստոսի անմեղադիր լեւորո՛ւք, զի ժամանակս զայս երբ, եւ կար մեր այսչափ էր, եւ օրինակս խիստ սխալ էր, եւ յօրէ յայնմանէ՝ յորմէ սկսա զգիրքս մինչեւ ի վերջին գիրն, թալան եւ փախուստն [ոչ վերացաւ ի մէջ] ||| (թափուած)։

7.

Նոր Զուղայի Ս. Ամենափրկչի վանքի մատենադարանի ձեռ. Հ⁴ 188.
Ներսիսի Ընդհանուր [եւ Յովհաննու Մործորեցույ] Մեկնութիւն Աւետարանի

³⁵ Սիսական, Լք 370։

³⁶ Մայր ցուցակ Վեննիկի, Զ. սյուն 367-8։

³⁷ Մաշտոցյան Մատենադարան, Այլ վայրերի ձեռագրերի ժողովանների հավաքածուի 1240։

³⁸ Այդանը կապեալով եւ՝ արդո՛րս այս Մխիթարն է ինքը, թե՛ նույնատուն մայրը. Կրն՝ Սիսական, Լք 370։

Մատթեոսի.

1402 թ., Սինէական վանք (Նախիջևանի գավառ), գրիչ՝ Ֆոռանգ, ստացող՝ Ֆրա Մխիթարիչ Ապարանցի:

282 թելթ, Բուդա, 22.7x12.6. երկայուն (19x6,3), բոլորգիւր, 40, 41 տող. զարդարանք՝ խիստ հասարակ (13ա՝ ճակատազարդ սև թանաքով), վիճակ՝ վատ է պահպանվել:
Մեկնութիւն Մատթեի (Ընդրհալոյ՝ 13ա-48ա, Մործորեցոյ՝ 48ա-274բ), 276ա-9բ՝ Մեկնութիւն Թալտնութեան Թովհաննու:³⁹

Հիշատակարանները.

- 275ա Փառք անել եւ անմահ եւ անվախճան եւ գերազոյն եւ միասնական ամենասուրբ Էրրորողութեան՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, այժմ եւ անսպառ յաւիտեանս յաւիտենից, ամէն. Որ արժանի արար գիտ զանարժան զՖրա Ֆոռանգս հասանել ի վերջին գիծ գրոյս. որպէս կարի յոյժ ուրախութիւն է նաւավարին հասանել ի նաւահանգիստ իւր, նոյնպէս եւ զոյհին՝ ի յաւարտ հասանել:

Արդ, յամի մարդեղութեան Տեառն մերոյ եւ փրկչին Թիսուսի Քրիստոսի ՌՆԲ (1402) թվին եւ ի թվիս Հայոց ՊԾԱ. (1402) գրեցաւ աստուածաբոյս մեկնիչս Անետարանին Մատթեոսի, ի խնդրոյ պատուական վարդապետին Ֆրա Մխիթարչի Ապարանցոյ, ընդ ամենայն բարութեանց եւ բազում գրեմացն ստացաւ զսա յիշատակ իւր ի սուրբ կարգս Միարանողաց:

Արդ, աղաչեմ յիշել ի սուրբ մաղթանս ձեր զամենայն կարգաւորք վանից Ապարանցոյ՝ զկենդանիքն եւ զմեքեցեայքն, նաեւ զամենայն գեղեցիկ հաւատով ժողովուրդքն որ ի մեա: Նա եւ աղաչեմ յիշել զթարի մեծ ռաբունապետն, ուսման պատճառ սուրբ կարգիս՝ զկարապետ վարդապետն, այլ եւ զբարեաց պատճառն կարգիս զՍամուէլ վերախնամողն, որ բազում աշխատեցաւ վասն կարգիս մերոյ, եւ զՄատթեոս ուշիմ վարդապետն, եւ զամենայն մեքեցեայքն յիշել աղաչեմ:

Նաեւ յայսմոյ ժամանակի վերախնամող ֆր[այ] Ղուկաս, որ բազում աշխատեցաւ վասն օգտութեան կարգիս՝ զմալով առ սուրբ պապն Բոնոֆացիոսն եւ բազում շնորհք եւ ազատութիւն երբ կարգիս, մտնելով առաջին նախնեացն եւ աւելի վաստակեալ քան զամենեսեան. յիշիսքիք ի տէր: Դարձեալ ծանիք, զի գրեցաւ սուրբ տառս ի վանս Սինէական, ընդ հովանեաւ Սուրբ Թովհանէ Մկրտչիս, ի մեղութեան եւ յաղքատութեան: Աղաչեմ յիշել Սինէականի ֆրաթնիս՝ զմեքեցեայսն եւ զկենդանիք երախտաւորք մեր, այլ եւ Աստուած եւ ամենայն սուրբք եւ ձեր սուրբ աղօթք օրհնէ զՄուրատն եւ զիւր որդիքն, որ օգնական է իմ ձերութեան ի գրել բազում աշխատանօք եւ օտար աչօք. այլ եւ Առաջնաձորի⁴⁰ միաբանքն յիշեալ լիցի ի ձեմք: Եւ Աստուածն ամենակալ, որ առատն է ի տուրս քառեաց, պարգեւեցել ամենայն երախտաւորաց մերոց կենդանեաց եւ մեքեցեղոց զկեանսն յաւիտենից, ամէն:

³⁹ Ծոցակի հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենատիրկիչ վանքի, Կազմեց Սմբատ Տէր-Անդրեասն, Վիեննա, 1970, էջ 563-4 (№ 370):

⁴⁰ ԺԵ. դ-ի հիշ-ք. Ա. № 24. էջ 26-7. էջ 27՝ «առաքնացորդ», նույն էջում կա հայ իրականության մեջ «օգուար աջք» անկող գործածելու մասին արժեքավոր և ընդարձակ ծանոթություն:

Նա եւ աղայեմ յիշել զքարի ծերունին ֆրա Աստուածատուր վարդապետ մեր ուսուցիչ եւ ֆրա Գալուստն եւ զՏէր Տիրատուրն մեր նրախտաւորքն, եւ զծնողսն մեր յիշել աղայեմ եւ ամենայն սղալանաց եւ խոշորութեան գրոցս ամմեղադիր լերո՛ւք, զի կերակուրն ճաթորուր էր եւ ջուրս ցուրտ: Եւ այն, որ գրեացն, գրեսցէ եւ միշտ եւ համապագ ընդ Տեառն կացցէ օգնականութեամբ եւ աղաթիւք ծերուիք, ամէն:

- 48ա Զվնիմաց րաբունապետն զֆրա Մխիթարիչ Ապարաներեցի, ստացող գրոցս յիշեսցիք. նաեւ զնուաստ գծողս՝ զֆրա Ժոանգ (մնամ՝ 13ա՝ ճակատագարդի մէջ, 69ա, 81ա, 160ա, 172բ):

- 172բ ...զխաչատուր վարդապետ եւ զֆրա Գէորգ եւ զֆրա Ղուկաս աշակերտք յիշեա՛լ յաղօթս:

- 228բ Ա՛խ, վա՛յ մեղաւոր Սարգիս կարդայ՝ եւ միտ ա՛ռ եւ դատաստանին ահդի սարսիեա՛յ, զի մի՛ (մնաս որպէս) յիմար կուսանցն:

8.

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի ձեռ. Հ⁴⁰ 327.

Ժողովածու մեկնութեանց. Մակու, ՊԾԵ.-1406 թ.,
գրիչներ՝ ֆրա Գէորգ, Մխիթարիչ քհյ. ֆրա Ղուկաս,
ստացող՝ Մխիթարիչ վրդ. Գաւառեցի:

390 էջ. թուղթ, 26x18x5. երկայուն, բոլորգիր, 41 տող: Բվմդ. Մեկնություններ. Վարդան վարդապետի՝ Սաղմոսաց (էջ 1ա-241ա) և Երզ երգոցի (էջ 241բ-284բ), Յովհան Ոսկերեւրանի՝ Եսայեայ (էջ 287ա-312բ), Յովհ. Մործորեցու՝ Դանիէլի (էջ 313-389)⁴¹:

Հիշատակարանները.

- ա. Ֆրա Գէորգ գրչի. էջ 112ա. Զստացող այսմ հոգեղից կտակի / զՄխիթարիչ վարդապետ Գաւառեցի՝ / յիշեսցիք ի Տէր բարի մտօք, / ո՛վ հանդիպողք, այժմու ներկրթութեանս վարժոցի: / Նաեւ զտառապետալ եւ զթաղծեալ ոգի զֆրա Գէորգ, զոր եւ իմովս իսկ տխեղծ մատամբ գծագրեցի ի քարտիսի, աղայեմ հառաչեմ՝ զի եւ զմեզ յիշեսցիք առ բարեգութն Յիսուս, համայն զարմիւք եւ ազգայնաւ, զի եւ դուք յիշեալ լիչիք ի Քրիստոսէ Աստուծոյ յուսոյն մերոյ օրհնելոյն յաւիտեանս. ամէն: Այլ եւ աղայեմ զհանդիպողսդ սմին վասն խոշորութեան գրոյս ամմեղադիր լինել, վասն զի այսչափ էր կար մեր:

- բ. Մխիթարիչ քհյ գրչի. էջ 285ա. Թիշեսցիք եւ զգծողս Մխիթարիչ սոսկ անուամբ քահանայ, եւ աշակերտ քանի, ի մաքրափայլ յաղօթս ձեր, եւ թողութիւն հայցել մեղաց իմոց ի հեշտալուր Տեառնէն եւ ներումն սղալանացն եւ կարճոգութեան, զի ձմեռն էր, եւ մեր առաջի գիրն այս է, որ գրեցի ի գաւառս Արտազու, ի գեօղս որ կոչի Մակու, առ պարոնութեամբ պարոն Նուրադնի, եւ րաբունապետիս Մխիթարիչ վերակոչեցեալ, ի թուի հայկազեան սեռի Պ. եւ ՄԵ. (1406) ամի, յամսեանն Յունվարի ի ԻԷ. օրն⁴²: Արդ, որք ընթեռնոյք կամ

⁴¹ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Եսկերկանց, Կ. Բ. Կապմնց՝ Նոքայր եպս. Պողոսեան. Երուսաղեմ, 1967, էջ 200-202:

⁴² ԺԵ. դ-ի իիշ-ք. Ա. Հ⁴⁰ 65, էջ 61՝ որպէս Վենեթիկի Հ⁴⁰ 147 ձեռագրի ինչադրական փոփոխում է այս ձեռագրի միայն այս ինչադրականի ինքնայալ բաղվածքը. «...զգծողս Մխիթարիչ [յիշեցէք]: Զմեռն էր, եւ մեր

օրի(նակեք), յիշեցէ՛ք ի մեղսաքաւի յաղ(օթս) ձեր զՄխիթարիչ ապաստար քանի եւ զասեմայն երախտ(աւորս), զծնողս հոգեւ(որ) եւ մարմնաւ(որ)։ եւ Աստուած առհասարակ ողորմեսցի ի յահագին զալստեանն իւրում՝ յիշողացոյ եւ յիշելոցոյ ամէն։

- Գ. Զորու Ղուկաս գրչի. Էջ 389բ. Աղայեմ զպատահող այսմ աստուածային զանձիս եւ զընթերցողսդ յիշել զիս զթարմատար ոգի ֆրա Ղուկաս ծրագրող այսմ փոքր նշանախնձի, այլ եւ մաղթեմ սղաղանացն եւ խոշորութեան գրոյս անմեղադիր լինել, վասն զի ամենայն արուեստատար սղալի ի գործս իւր։ Վասն Աստուծոյ սիրոյն համար մի Տէր ող՞։

Ծան. ա. Քիշատակարանում նշված ստացողը՝ Մխիթարիչ վ. Գավառեցին, անկասկած, նույնն է, ինչ ք. Քիշատակարանի Մխիթարիչ րարունապետը։

9.

Վենետիկի ձեռ. Հ^թ 1610/1482.

Բարթողիմէոս Մարաղացի, Քարոզգիրք.

ԺԵ. դար., տեղ՝ հավանաբար Նախիջևան,

գրիչ՝ հավանաբար և ստացող՝ ֆրա Մխիթար Ապարանեցի։

73 թերթ, թուղթ, 26x20. երկայուն (22x16. մեկը՝ 22x7,5), բոլորգիր, 38-55 տող. վատ պահպանված և պակասավոր օրինակ է⁴³։

10.

Երևանի Մատենադարանի ձեռ. Հ^թ 2520:

Ժողովածու մեկնութեանց։

1306 թ., գրիչ, ստացող՝ Յովհաննէս Եզրնկայեցի։

345 թերթ, թուղթ, 16,8x12,5. միասյուն, բոլորգիր, 26-28 տող⁴⁴։ Պարունակում է՝ Մեկնութիւնը Յովհաննէս՝ Ստեփաննոս Սիւնցի, Նանա, Ամդրեաս Կապադովկացու Մեկնութիւն Յայտնութեան։

Հետագա ստացման Քիշատակարանը⁴⁵.

- 344բ (ԺԵ. դ.). Օ՛վ, վեհանձնից եւ պանծալի, / Միշտ ձեռնարկօղբ գործոց բարի, /

առաքի գիտն այս Լ որ գրեցի ի գաւառս Արարգոս, ի գիւղս որ կոչի Մակոս, առ պարոնութեանն պարոն Նուրադնի, և յարունապետին Մխիթարիչ վերակոչեցեալ, ի թուի հայկազնան սեռի Պ. և ԾԵ. (1406) ամի. յամենանն Յունիպոլի ի Ե. օրն»։

⁴³ Մայր ցուցակ Վենետիկի, Ը. սրտ 55-62. Ե. Սահակ վրդ. Ընժճճմյանը համարում է, որ այս ձեռագրի գիրը Մխիթարիչի ձեռքով է։

⁴⁴ Ցուցակ Երևանի Կնոք. Ա., սրտ 817։

⁴⁵ Գրչության՝ 143բ և 344ա էջերի 1306 թ. իշխապապարանները տնն ժ՛. դ-ի իիշ-ք, Վ^թ 58, էջ 43-44. այսպիսով տպված չէ 236ա էջի եկեղեցւոյ իշխապապարանը. «Ով բնթնրոցոյդ տառիս և աստուածային մարգարանիս, յիշեսցիք զնովկնի գրիչս Յոհաննէս կարօտ բաւի, նա և զծնողսն մեր և զեղարան զհոգևորսն, որ բանին են պարճատ ծննդեան, որ ծնան զմեզ յերկն հոգևոր, և զմարմնոյն ըստ արեան փոխանորդութեան և ազգակցութեան, և զայս յիշումն առաքի սխրալի և մեծ խորհրդոյն, և դուք յիշօրդ զմեզ սնուն աղբիս և կարարեալ կամօք յիշեալ յիշիք ի նոյն ի նմանէ, առ որ և զմեզ յիշատակեք հանդիսի, որ և ի մէք և ի մէք անդադար փառաբանի օրհնեալս ի բնասա»։

Յորժամ յառեալ իմանդիպիք այսմ տառի, / Յիշման արարէք զիս արժանի, / առ Յիսուս զթաճ պարգեւիչն ամենայնի, / եւ միշտ առատն ի տուրս բարի / Ջֆրա Մխիթարիչս՝ խնդրող բանի, / Զվերջին ստացող զորոցս իրաշալի, / զփճուն տարապեալս եւ ողորմելի, / զծոյլ յամառեալս եւ ինկզալի, / զտարտամ մեռեալս մեղօք ի լի, / զկարօտս աղօթից եւ զորճոց բարի, / ակն ունողին ձերոյդ շնորհի, / կարկար ձեռօք ցանկ բաղձալի, / զի արժանաւոր իեռտեղոյքս Քրիստոսի / ձիր իճճ շնորհէք դուք պտղալի / եւ որպէս կամիք եւ խնդրէք սիրով ի լի, / զնոյնն պարգեւեցէ ձեզ Փրկիչն ամենայնի⁴⁶:

II.

Վեցնետիկի ձեռ. Հ⁴⁶ 884/1634.

Նիկողայոս Լիւրացի, Մեկնութիւն Աւետարանին Յովնանու⁴⁷:

ԺԵ. դար, տեղ՝ Ռափանաբար Նախիջևան, գրիչ՝ ֆրա Ղուկաս Ապարանցի,
ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանցի:

249 թերթ, թուղթ, 25,6x17,5. երկայուն (19,5x13,5. մեկը՝ 19,5x6,3), քոլորգիր, 41 տող:

Հիշատակարանները.

- 119ր *Զստացող սուրբ զորոցս զՖրայ Մխիթարիչ խնդրող բանի եւ տեղեալ Ապարանցի, աղաչեմ յիշել առ Քրիստոս:*

- 167ր *Ջֆրա Ղուկաս Ապարանցի զծող սորա յիշեսցիք ի Տէր բարի մտօք. Սամուր տատն յիշեսցիք ի Տէր, զի հայցէր զգրել զանունն ի թղթիս:*

- 249ա *Յիսուս Քրիստոս, բարեխօսութեամբ ամենայն սրբոց ողորմեալ՝ զճողացս. ամէն:*

ՁԵՌԱԳՐԵՐԻ ՈՒՐՎԱԳԾԱՑԻՆ ԱՄՓՈԹԻԶ ՊԱՏԿԵՐ

1. ԺԴ. դար - Երևանի ձեռ. Հ⁴⁶ 6920. Պետրոս Արագոնացի, Գիրք առաքինութեանց. գրիչ՝ Ֆրա Մխիթարիչ:

2. ԺԴ. դար - Երևանի ձեռ. Հ⁴⁶ 3938. Թովմա Աքուինացի, Թաղազս տնօրինութեանն

⁴⁶ Լ. Խաչիկյանը (ԺԵ. դ-ի հիշ-ք, Ա. Հ⁴⁶ 67, էջ 62) ձեռագրի հետազոտ ստացող այս ֆրա Մխիթարիչին իրավացիորեն նույնացրել է Մխիթար Ապարանցեցու հետ և նրա չափաժող հիշատակարանը մասամբ (6 տող) տպագրելով՝ տեղադրել է 1406 թ. ներքո:

⁴⁷ Մայր ցուցակ Վեցնետիկի, Ը. սյուն 515-8. լատիներենից թարգմանված է *«ի խնդրոյ եւ ի հարկեցուցիչ հրամանն արհիսական զիսոյն եւ մեծ դիւտապետին Տէր Զարաթիայի, ապաստորին սուրբ առաքելոյն Թուղէտոս»*: Այս գործի՝ 1341 թ. առաջ կապարված թարգմանության և նրա կառուցվածքի մասին տրևս Լ. Խաչիկյան, Արտազ, ԲՄ, էջ 204-6 և Աշխ., Բ. էջ 117-20 (որոնք հայտնի օրինակներն են՝ Երևանի Հ⁴⁶ 6903-ը և 10539-ը, Երուսաղեմի Հ⁴⁶ 789): Նման. Սուրբ Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն, պատրաստվելիս՝ Եգեհիկ Եպս. Պետրոսյան, Արմեն Տեր-Ստեփանյան, Հայաստանի Աստվածաբանական ընկերություն, [Երևան], 2002, էջ 123. ներկայացված է «ԲՄ 202, Ա. էջ Ե.-ԼԱ. 1-503» և Երուսաղեմի Հ⁴⁶ 187 (Պոլիս, 1755 թ.) ձեռագրերով: Երկրորդը ճիշդ է. իսկ Երևանի Հ⁴⁶ 202-ը («Ա., էջ Ե.-ԼԱ. 1-503» ցուցումներն անհասկանալի են) ամբողջական Աստվածաբան է և այդպիսի կյութ չունի (տրևս Մայր ցուցակ Երևանի, Ա. սյուն 885-9). փոխարենը այս մեկնությունը կա Երևանի ԺԴ. դարի ձեռագիր Հ⁴⁶ 5701-ում (Յուզակ Երևանի, Նմուր, Բ. սյուն 166-7):

Քրիստոսի, գրիչ՝ ֆրա Մխիթարիչ:

3. 1383 թ. - Երևանի Հ^ա 68. Թովմա Աքուիմացի, Յաղագս տնօրէնութեանն Քրիստոսի. Նախիջևան, գրիչ՝ ֆրա Յովնանիս, Մատթէոս Քոնցեցի, [ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանցի]:

4. 1392 թ. - Վեներտիկի Հ^ա 147/1363. Ժողովածու մեկնութեանց. Արտագ գալատի Մակու գլուղ, գրիչ և ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանցի:

5. Ժ. դար - Երևանի Հ^ա 354. Աստուածաշունչ (ամբողջական). [Մակու], գրիչ՝ Գրիգոր Ապարանցի կամ Գաառցի. Ղուկաս, ստացող՝ ֆրա Մխիթարիչ վրդ. (1-524), տէր Զաքարիա (525-648):

6. Ժ. դար - Վեներտիկի Հ^ա 863/1000. Դատաստանագիրք լատինաց (Կանոնագիրք Է.), Ապարանցի, գրիչ, ծաղկող և ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանցի:

7. 1402 թ. - Նոր Զուղայի Ս. Ամենափրկչի վանքի մատենադարանի Հ^ա 188. Ներսիսի Շնորհալու [և Յովնանու Մործորեցու] Մեկնութիւն Աւետարանի Մատթէոսի. Սիմեական վանք (Նախիջևանի գալատ), գրիչ՝ Ֆոանգ, ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանցի:

8. 1406 թ. - Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի ձեռ. Հ^ա 327. Ժողովածու մեկնութեանց. Մակու, գրիչ՝ ֆրա Գեորգ, Մխիթարիչ քնչ, ֆրա Ղուկաս, ստացող՝ Մխիթարիչ վրդ. Գաառցի:

9. Ժ. դ. - Վեներտիկի Հ^ա 1610/1482. Բարթողիմէոս Մարաղացի, Քարոզգիրք. տեղ՝ Բավանաբար Նախիջևան, գրիչ՝ Բավանաբար, և ստացող՝ ֆրա Մխիթար Ապարանցի:

10. Ժ. դ. - Երևան Հ^ա 2520. Ժողովածու մեկնութեանց. Մեկնութիւնք Յովնանու՝ Ստեփաննոս Սիւնցի, Նանա, Անդրէաս Կապադովկացու Մեկնութիւն Յայտնութեան: 1306 թ., գրիչ, ստացող՝ Յովնանցն Եղեմկայեցի, Բետագա ստացող՝ Մխիթարիչ Ապարանցի (Ժ. դ.):

11. Ժ. դ. - Վեներտիկի Հ^ա 884/1634. Նիկողայոս Լիւրացի, Մեկնութիւն Աւետարանի Յովնանու. Բավանաբար Նախիջևան, գրիչ՝ ֆրա Ղուկաս Ապարանցի, ստացող՝ ֆրա Մխիթարիչ Ապարանցի:

Եվ որպէս ընդհանուր պատկերի ամփոփում՝ նշենք, որ Մխիթարիչի գրած ձեռագրերի հարդարանքի համեստությունը, տառաձևերի անհամաչափությունը և համառոտագրությունների առատությունը ցույց են տալիս, որ նա արհեստավարժ ապրուստը զրչությանը վաստակող գրիչ չի եղել: Այս հանգամանքի օգտին է խոսում նաև այն փաստը, որ Ապարանցու գրած մեզ հայտնի վերջ թվարկված ձեռագրերից որևէ մեկը չունի առանձին պատվիրատու: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ ձեռագրերի մեծ մասը շատ գործածվելուց բավական մաշված է կամ վատ պայմաններում պահպանված լինելու պատճառով վնասված է և թերի: Այս պատճառով էլ մեզ հայտնի ձեռագրերից ճշգրիտ թվական ունեն միայն 4-ը, իսկ ամթական են մնացել 7-ը, որոնցից 4-ը Ժ. դարի են, 3-ը՝ Ժ. դարի: Իսկ որոշակի թվական ունեցողները վերաբերում են 1383, 1392, 1402 և 1406 թթ.: Գրչության հայտնի վայրերն են. Բավանաբար Նախիջևանի գալատ՝ 3 միավոր, Ապարանցի՝ 1, Նախիջևանի գալատի Սինեական վանք՝ 1, Մակու՝ 3:

Բովանդակության առումով բոլոր ձեռագրերն ունեն գիտական-գործնական բնույթ: Դրանք մեր հեղինակի գլխավոր երկի՝ «Գիրք տրամաբանության»-ի աղբյուրներն են, ինչը նկատվում է նաև նրա շարադրանքում բազմաթիվ մեջքերումների առկայությամբ: Այդ ձեռագրերը հետևյալներն են՝ Աստվածաշունչ (5⁴⁸), Պետրոս Արագունացու «Գիրք առաքինության» (1), Թովմա Աքվինացու «Հաաքումն աստուածաբանության» երկի երրորդ մասը՝ «Թաղազ տնօրինությանն Քրիստոսի» (2 և 3), «Դատաստանագիրք լատինաց» (6), Բարդուղիմեոս Մաբաղացու «Քարոզգիրք» (9), Հիմ և Նոր կտակարանների գրքերի մեկնություններ՝ Վարդան Արևելցու «Երգ երգոց»-ի (4 և 8) և «Սաղմոսաց» (8), Հովհ. Ոսկեբերանի՝ «Եսայեայ» (8), Հովհ. Մործորեցու՝ «Դամիելի» (8), Ներսես Օհորհալու և Հովհ. Մործորեցու՝ «Մատթեոսի» (7), «Ծաղկաքաղ մեկնություն Յովհաննու» (4), Ստեփանոս Սյունեցու և Նանայի՝ «Յովհաննու» (10), Նիկողայոս Լյուրացու՝ «Յովհաննու» (11), Ամդրեաս Կապադովկացու՝ «Թայտնության» (10):

⁴⁸ Ըստ մեր ցանկի համարների:

ԳԱԹԱՆԵ ՊՈՂՈՍԵԱՆ

Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐԵՐԻ ՆԱՐՅԱԼ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հայոց Այսուրեանի և Ռոմանյան Բանակարգի բուն բնագիտական վերամեկնաբանությունը սկսվում է XIII դարի Ռայ Զառնավոր մատենագիր, Ռանրագիտակ վարդապետ Սրեկեցու «Մեկնութիւն քերականի» աշխատությամբ: Վարդապետ Սրեկեցին արդեն Ռոգու և մարտնի փոխադարձությունում միջնադարյան ըմբռնումների շրջանակում է գրում, որ տառը (Ռոմանյան) անմարմին է, որպես Ռոգին, և գիրը մրա նյութական արտահայտությունում է, որպես այդ Ռոգու թանձրացյալ մարմինը⁴⁰: Այնուհետև այս միտքը առավել էր խորացնելու Եսայի Նչեցի (1260-1338 թթ.): «Ի սկզբանե էր Բան» (Հովհ. Ա. 1) խոսքերի հետևողությամբ գրի և Ռոմանյան փոխադարձությունը մա այսպես է ներկայացնում. անմարմին ձայնը լեզվի և շուրթերի բաբախմամբ Ռոմեղով, այնուհետև մարմնավորվում է գրով: Ինչպես Նչեցի է ասում՝ «Անմարմին ձայն, որ ի գրոյն տառ կոչի, որ ի բաբախմանն լեզուից և շրթանցն լայլակալ տեղիսս Բանեղով զանազան ձայն»՝ ծնանի զբան»⁴¹:

Թրակացու քերականությունում Ռայերեն թարգմանությունում տառ բառը Ռամեմատվում է տարր-ի հետ: Արեկեցին այս միտքը զարգացնում է՝ գրեղով, որ ինչպես չորս տարրերն են միմյանց հակառակ և մրանց զուգորդումից՝ կազմված նյութական աշխարհը, այնպես էլ բաղաձայնների և ձայնավորների զուգորդումից՝ տարրեր Ռոմանյանները և բառերը⁴²: Արեկեցին այնուհետև Ռեռտորաբար Ռարց տալով, թե ինչի է մասն քերականությունը, ասում է՝ մարդու, և բացատրում այսպես. «տառն ի Ռոգի և գիրն ի մարմին»⁴³:

Թրակացու քերականությունում բերվում են Ռոմանյանի ութ ձայնավորներ: Հայ մեկնիչները այս ութից Ռանեղով օմեզան, մշում են յոթ ձայնավորներ: Արեկեցին արդեն Ռոգևոր խորհուրդ է Ռադորդում ձայնավորների յոթը լինելուն, ժամանակի մարդակազմական ըմբռնումների տեսանկյունից այն զուգահեռի մեջ դիտելով յոթ զգայարանների հետ: Ըստ Արեկեցու՝ այս յոթ զգայարաններն են. «աչքն, ականջն, քիթն, բերանն, շաշափականն, Ռոգին և մարմինն»: Այսպիսով, ձայնավորների և զգայարանների զուգահեռը յոթի խորհրդին Ռանգեցնելու Ռամար Արեկեցին Ռինգ զգայարաններին գումարում է մաև Ռոգին ու մարմինը⁴⁴:

Երբ ձայնավորներ-զգայարաններ այս զուգահեռը առավել խորացնելով՝ գրում է. «Այս

* Սկիզբը տե՛ս նախորդ համարում, էջ 87-98:

⁴⁰ Վարդան Սրեկեցի, Մեկնութիւն քերականի, աշխատախորությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1972, էջ 84:

⁴¹ Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատախորությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1966, էջ 81:

⁴² Վարդան Սրեկեցի, Մեկնութիւն քերականի, էջ 85:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում:

«... եւ թե՛ն զհրս՝ թէ ունին լծակից և թէ ոչ՝ ինքեանք զիտեանց ծայցն կու բերեն և որպէս եւթն զգայարանքն աւզենն հոգւոյն, նոյնպէս և այս եւթն զհրս՝ քերական արհեստիս»⁴⁵:

Նույն այս համաբանությամբ հոգևոր խորհուրդ է հաղորդվում և ձայնավորների երկար, կարճ և երկամասնակ լինելուն: Սկսյալ Թրակացուց՝ ասվում է, որ երկար, անընդհատ ձայնավորներն են է և օ-ն: Վարդան Արևելցին և հաջորդող շրջանի մեկնիչները այս երկու ձայնավորները անվանում են Աստվածային, քանի որ անընդհատ են, ինչպես որ Աստված է անվախճան. «Այս երկու զհրս աստուածայինն են, զի է-ն է արինակ, որ միշտ է Աստուած, և աւ-ն՝ գործոցն Աստուծոյ ի զարմացումն և ի տեսութիւն»⁴⁶:

Ո, Ե, Ի հնչյունները սուղք էին անվանվում, քանի որ ավելի կարճ են հնչում: Ահա այս պատճառով էլ Արևելցին այս հնչյունները անվանում է մարդկային, այսինքն նրանք մարդկային կյանքի մեան կարճ և սահմանափակ են:

Նույն ձևով, քանի որ Ա, Ի, Ը ձայնավորները իրենց հնչման երկակի տևողությամբ երկամասնակ են անվանվում, Արևելցին դրանք անվանում է հրեշտակային, ինչպես որ հրեշտակները երկակի բնույթ ունեն՝ մարդկային ու աստվածային: Այսինքն, ինչպես երկամասնակները միջանկյալ դիրք են գրավում երկար և կարճ ձայնավորների միջև, այնպես էլ հրեշտակները՝ Լևստծո և մարդկանց միջև⁴⁷:

Բաղաձայնները շարաձայն են անվանվում, որովհետև իրենց ձայնը չունեն, բայց միանալով ձայնավորներին, դառնում են նոր հնչյուններ: Բաղաձայնների հնչմանը տալով մեան բացատրություն, Արևելցին այնուհետև կատարում է հետևյալ զուգահեռը. ինչպես որ երկիրը չոր և ցուրտ ծնունդ է ամուլ, սակայն առնելով խոնավություն (գիշերություն) և ջերմություն՝ «պտղածին լինի», այսինքն պտղաբերում է, այնպես էլ բաղաձայններն են կերպավորվում ձայնավորների հետ զուգորդմամբ⁴⁸: Արևելցու այս համեմատությունը հիմնված է միջնադարյան այն ըմբռնման վրա, որ ջուրը և հողը իզական տարրեր էին, իսկ օդը և հուրը՝ արական⁴⁹:

Ձայնավորների, որպես հոգևորի ու աստվածայինի, և բաղաձայնների, որպես նյութականի ու մարմնավորի այս ըմբռնումները կրկնվում են ման հաջորդող շրջանի քերականական մեկնություններում: Եվ մեկնությունից մեկնություն ման հոգևոր առումով է շեշտվում ձայնավորների գերադասությունը բաղաձայնների հանդեպ: Այսպես, Եսայի Նչեցին գրում է. «Եւ արդ որոշէ զձայնատրքս ի բաղաձայնիցն իբրև պատուականս և պատճառս ձայնին յարմարման, քանզի ձայնատրքս են որպէս զգայութիւնք կամ հոգի կենդանական ի մարմնի»⁵⁰:

Նաև, թե՛ Գրիգոր Մագիստրոսը և թե՛ Հովհաննես Երզնկացին, Հովհաննես Ծործորեցին, Եսայի Նչեցին ու Առաքել Սյունեցին ձայնավորների շարքում առանձնացնում են է-ն, որպես աստվածային հնչյուն՝ է-ի մեան բացատրությունը կատարելով ամտիկ ըմբռնումների և քրիստոնեական խորհրդաբանության իրար միախառնված զուգորդմամբ:

⁴⁵ Նույն տեղում, Լջ 86:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Նույն տեղում, Լջ 86-87:

⁴⁸ Նույն տեղում, Լջ 88:

⁴⁹ Նույն տեղում, Լջ 88-89:

⁵⁰ Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, Լջ 83:

կոչի յոբելեան»⁵⁵:

Քերականական մեկնությունների շարքում Է-ին և յոթին տրված ամենածավալում մեկնությունը կատարում է Առաքել Սյունեցիին թվարկումների շարքը սկսելով Է-ի աստվածային անվանում լինելու շեշտմամբ. «Ջի ասաց Աստուած «Ես եմ, որ Էմ» (Ելք Գ. 14): Եւ ի մատանի քաճաճային գրեալ էր յակացն, թէ «Է», այսինքն՝ Աստուծոյ անունն, զոր եղին ի վերա գերեզմանին Քրիստոսի մատնաճար, զի ցուցէ, թէ Աստուած է սա, որ ի գերեզմանին կայ ի մերջոյ անուանս այսորիկ: Եւ յետ գերութեանն տարաւ Նաբուգոդոնոսոր եւ եղ ի վերայ գլխոյ պատկերին, զոր տեսեալ Քրոյն յետս ընկրկեցաւ եւ այրեաց զքաղղէացիս: Երկրորդ՝ զի Է գիրն գերորդութիւնն մշանակէ և ի մմանէ յառաջ եկեալն մերքին ծայրն եւ զլուխն ի վայր խոնարհեալ զՔրիստոս մշանակէ՝ ի մեր քնութիւնս խոնարհեալ: Եւ միջին ստեղծումն ի բնէն յառաջ եկեալ, մոյմպէս զՈրդի և զՀոգի, որ ի Հարե յառաջ եկեալ: Դարձեալ՝ զի որպէս առանց ստեղանցն ոչ ասի, այսպէս, որք զՈրդի և զՀոգի ոչ դաւանին՝ ոչ ունին զԱստուած»⁵⁶:

Որքան մեզ հայտնի է, միայն Սյունեցին է, որ Է տառի գրաֆիկական գծագրումը համեմատում է Քրիստոսի խաչելության հետ՝ ասելով, թե այս տառի մերքևի վայր հակված մասնիկը խորհրդանշում է մեր փրկության համար խաչելության ժամանակ զլուխը վար հանած Քրիստոսին, իսկ այս տառի եռամասնիկ կառուցվածքն էլ խորհրդանշում է Սուրբ Երրորդությունը, և ինչպես որ այս տառի որևէ մասնիկը հանելով այլևս Է տառը չի լինի, այնպես էլ մրանք, ովքեր չեն դավանում Որդուն և Սուրբ Հոգուն, Աստծուն չեն ընդունում:

Է-ի քաջատրությամբ մվիրված երկրորդ մասը Սյունեցին մվիրում է յոթի պարունակած խորհրդանշանների թվարկմանը. «Ի թուականացն պատուեալ էր Է-ն եւ աթեմակոյս անուանեալ, այսինքն ասէին, թէ Է-ն յաստուածոցն ծնաւ, այսինքն՝ յԱրամազդայ գլխոյն, եւ վասն այս այն ասի կոյս, զի ոչ յարուէ եւ ոչ յիգէ Է Էմ, որ է ժամանակն, զի միշտ է Է: Եւ գերթն թիւն վասն այն կոյս ասացին, զի ի մերջոյ տասանցն, միայն Է-ն է կոյս, որ ոչ յումեքէ ծնեալ է, եւ ոչ զայլսն ծնանի, վասն որոյ պատուելի էր ի մոսս և աթեմակոյս անուանեալ: Չորրորդ, զի աստեղաբաշխքն գերթն թիւն պատուէին վասն երթն մոլորակացն, այսինքն՝ Երեւակն, որ է Ջոհայն, Հրատն, Մուշթարին, Արեգակն, Ջոհրայն, Աւտարիտն, Լուսինն: Նոքա եմ միւթ մոցա իմաստութեանն եւ ի մոցա շարժմանէն լինին ազդմունք աշխարհիս: Հինգերորդ, զի Հին Արեւմտն երթն թիւն պատուեալ էր վասն երթն առաջ շարաթուն, եւ վասն երթանց երթնին, որ էր յոբելեան, այսինքն՝ ազատարար: Վեցերորդ՝ երթն թիւն պատուական է վասն երթն դար կենցաղոյս: Եւթերորդ՝ վասն երթն խորհրդոյ եկեղեցոյ: Ութերորդ՝ վասն երթնարկեան շնորհացն Հոգւոյն Սրբոյ»⁵⁷:

Ինչպես տեսնում ենք, քերականական այս մեկնություններում առանձնացվում են ծայրավորները, որպես աստվածային գրեթե, և հատուկ խորհուրդ է հաղորդվում մրանց յոթը լինելուն, և այս շարքում էլ առանձնակի պատիվ է ընծայվում Է-ին, որպես աստվածային անվան և յոթի թվային համարժեք լինելուն:

Որպեսզի տեսնենք, թե ծայրավորների և յոթի այս ըմբռնումը ինչպես էր հետադարձ ընթացքով ազդելու հինգերորդ դարին հաջորդող հայ մատենագրության վրա, մորթվի վե-

⁵⁵ Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, աշխ. Ա. Արրահամյանի, Երևան, 1956, էջ 229:

⁵⁶ Առաքել Միսեցի, Բաղագս քերականության համառար լուծմունք, Լոս Անճլիոս, 1982, էջ 103-104:

⁵⁷ Նույն տեղում, էջ 104-105:

բախմբագրելով Դանիելյան գրքերի մասին Կորյունի և Խորենացու հաղորդած տեղեկությունները, ներկայացնեմք մահ թվերի գործության և այլաբանական իմաստների պնդագրական և պլատոնական ըմբռնումները՝ դրանք հարաբերելով թվերի ու ի մասնավորի՝ յոթի մասին հայ մատենագրությունում առկա բացատրությունների հետ:

Թվերի մասին տարբեր պատկերացումները թեև ձևավորվել են մարդկության պատմության ամենավաղ շրջանից, սակայն դրանք համակարգված ձևով որպես ամբողջական տեսություն ներկայացնելը կապվում է Պյութագորաս Սամոսացու (Ք.ծ.ա. 570-500 թթ.) և տեսությունների՝ Պյութագորականների հետ: Պյութագորականությունը անվանելով թվերի փիլիսոփայություն, անտիկ փիլիսոփայության և գեղագիտության մեծ տեսաբան Է. Լոսեր գրում է. որ Պյութագորականները եղում էին այն ըմբռնմից, որ գոյություն ունեցող ամեն ինչի հիմքում ընկած էր թիվը, և նրանք ամեն ինչ բխեցնում էին թվերից⁵⁸: ունեցող ամեն ինչի հիմքում ընկած էր թիվը, և նրանք ամեն ինչ բխեցնում էին թվերից⁵⁸: Ըստ Պյութագորասի, թվերում արտահայտվել է աշխարհի՝ սկզբնական կարգավորվածությունը⁵⁹: Պյութագորասը մահ առնում էր, թե Աստվածն է ամենաեղի թիվը⁶⁰:

Թվերի ոչ միայն որպես թվային միավորների, այլև որպես բանական աշխարհի հարաբերություններն արտահայտող միավորների մասին Ա. Ստեփանյանը գրում է. «Դեռևս Պյութագորասը և նրա հետևորդները մաթեմատիկական բաժանում էին երկու կարևորագույն հատվածի: Առաջինը գործառու էր, այսպես կոչված, բնական (կամ զգայելի) թվերով՝ միտված բացահայտելու զգայական աշխարհի քանակային հարաբերություններն ու համաչափությունները, երկրորդն, ընդհակառակը, գործառու էր մտքնկալելի թվերով՝ նպատակ ունենալով վեր հանել բանական աշխարհի հարամնա էությունական հարաբերությունները՝ համակարգված ըստ մեկ-բազումի համաչափության: Այս մոտեցմամբ՝ թիվը ներկայանում էր իբրև բանական գոյացությունների հոմանիշ»⁶¹:

Մեկ այլ հետազոտող էլ մշտն է, որ, ըստ Պյութագորականների, «Աստված համաշխարհային կարգի հիմքում դրել է թվերը: Ըստ այդմ, Աստված եզակին է, իսկ աշխարհը՝ բազմակին: Որպես բազմակի, այն կազմված է հակադրություններից, և այն, ինչ որ հակադրությունները միասնության է բերում և տիեզերքում միավորում ամենայն ինչ, հարմոնիան է: Հարմոնիան աստվածային է և արտահայտվում է թվային հարաբերություններում: Ով մինչև վերջ կյուրացնի թվերի աստվածային այդ հարմոնիան, ինքը կդառնա աստվածային և ամենահ»⁶²:

Թվերի՝ որպես ինքնակա էության ըմբռնումը մի նոր աստիճանի բարձրացրեց Պլատոնը (Ք.ծ.ա. 428-348 թթ.), որն այնուհետև շարունակեցին նորապլատոնականները, որոնց ուսմունքն էլ ընկած է թվերի այլաբանական իմաստների քրիստոնեական խորհրդարանության հիմքում:

Ըստ Է. Լոսեր գրում է. որ Պյութագորականների և պլատոնականների հետևորդությանը նոր-

⁵⁸ А. Ф. Лосев, История античной эстетики, Москва, 1980, стр. 12-13.

⁵⁹ Լոսյն փնդում, էջ 18:

⁶⁰ О. Н. Ульянова, Число в истории эстетического опыта, Научные доклады, Философские труды, Москва, 1986, no. 4-6, стр. 147.

⁶¹ Պյութիսոս, Հենադներ, գիրք V, բարգմանությունը հին հունարենից, ուսմունքախորությունը և մեկնությունները Ա. Ստեփանյանի, Երևան, 1999, էջ XL:

⁶² В. Л. Виллдер Варден, Пробуждающаяся наука, «Математика древнего Египта, Вавилония и Греции», Москва, 1959, стр. 129.

պատճառակալները թվերը համարում են ոչ թե վերացական (աբստրակտ) տարրեր հաշվելու համար, այսինքն՝ ոչ միայն թվաբանական միավորներ, այլև ինքնուրույն և օրելի տիվ (ինքնակա) սուբստանցներ, որոնք իրենց անվերջության համար համարվում էին ինչ որ տեղի ավելի սկզբնական, քան ինքը գոյը (ինքնությունը) և գաղափարները, որի համար անորպատճառակալները դրանք անվանում են վերգոյական (hypercosysoi) միավորներ⁶³:

«Թվերի մասին» անվամբ մի տրակտատ ունի մորալատոնականության հիմնադիր Պլոտինը (205-270 թթ.): Ներկայացնելով թվերի Պլոտինի ըմբռնումը, Լոսեր գրում է, որ մաթեմատիկական թվերի առջև, որանց համարում աստվածներ⁶⁴: Լոսեր նաև գրում է, թե ըստ Պլոտինի, մտածողությունը իսկ խորսխված է թվերի վրա, քանի որ մտածողության ամեն մի արտահայտություն մի հասկացությունը տարբերակում է մյուսից, հարաբերում է մեկը մյուսի հետ, միավորում կամ մոլորացնում է, և այս ամենը արտահայտվում է թվային տարբերակվածության միջոցով⁶⁵:

Պլոտինը թվերին միավորված իր տրակտատում⁶⁶ գրում է, որ թիվը սկիզբն է, մերձ մաթեմատիկային, թիվը էությունն է և հոգին է թիվը⁶⁷: Պլոտինը անգամ այն միտքն է հայտնում, որ թիվը ստեղծում է գոյը⁶⁸, որի համար Լոսեր գրում է, թե Պլոտինի մոտ թիվը «բարձր է գիտակցությունից և էությունից, այն համարյա թե ինքը Միակն է»⁶⁹: Այս ըմբռնումների զարգացումը Պլոտինի հանգեցնում է այն մտքին, որ թվերի աշխարհը աստվածայինի աշխարհն է:

Այսպես դարձյալ մարդկային պատմության վաղ շրջանից և Պյութագորականներից, թվերի ուսմունքում էլ իր հերթին առանձնակի տեղ է տրվել յոթին: Հնագիտական պեղումների ընթացքում հավաքված մյուսերի հիման վրա Բ. Ֆրոլովը գրում է, թե Պյութագորականների այն միտքը, որ ամեն ինչ թիվն է (всё есть число), սկզբնապես ունեցել է ամեն ինչ, յոթ թիվն է (всё есть число 7) իմաստը⁷⁰:

Նույն ձևով վ. Ռաբինովիչը ալքիմիայում առկա ծիսա-մոգական բանաձևերի հիման վրա գրում է, որ յոթը արտահայտում է մարդու հարմոնիկ վերաբերմունքը աշխարհին, և որ յոթը խորհրդանշում է բացարձակը և որ յոթ թվի հաճախադեպ հանդես գալը ամենատարբեր կոմպոզիցիաներում արխետիպային մտածողության արտահայտություն է, որը դրսևորվել է շատ ժողովուրդների վաղ շրջանի մշակույթում⁷¹:

Այս իրողությունը հավաստելով նաև հնագիտական քննությունների արդյունքով, Ֆրոլովը գրում է, որ յոթ թվի հատուկ «մոգական» մշակութային մասին ամենատարբեր ձևերով արտահայտված պատկերացումները, կապված բնության երևույթների ու մարդկային

⁶³ А. Ф. Лосев, Самое самое, стр. 176.

⁶⁴ Նույն փնդում, էջ 290:

⁶⁵ Նույն փնդում, էջ 486-487:

⁶⁶ Плотин, О числах, Թուսինն թարգմանությունը ֆրնս հեբրեյալ գրքում. А. Ф. Лосев, Самое самое, Москва,

1999: Այս փրակտիկական վերլուծությունը ֆրնս Նույն գրքի «Диалектика чисел у Плотина» բաժնում:

⁶⁷ Տե՛ս նշվ. աղբյւր., էջ 884:

⁶⁸ Նշվ. աղբյւր., էջ 875:

⁶⁹ Նույն փնդում, էջ 912:

⁷⁰ Տե՛ս Բ. А. Фролов, Числа в греческой философии, Новосибирск, 1974, стр. 130.

⁷¹ В. Л. Равилова, Алхимия как феномен средневековой культуры, Москва, 1979, стр. 105.

կյանքի հետ. գոյություն են ունեցել քաղաքակրթության ողջ ընթացքում⁷²:

Հին աշխարհում յոթի ունեցած բացարձակ նշանակության մասին է խոսում և այն հանգամանքը, որ շումերների մոտ յոթ թիվը ներկայացվել է այն նշանով, ինչ որ տիեզերքը⁷³:

Յոթին ընծայված այս կարևորությունը և գոյությունը հնագույն հավատալիքների շրջանակում բացատրվում է լուսնային օրացույցով և լուսնի պաշտամունքով: Ինչպես հայտնի է, ճախնադարյան մարդու համար երկնքում և երկրի վրա ընթացող պարբերական երևույթները ժամանակը չափելու միակ միջոցն էին: Արևի, երկրի և լուսնի հարաբերակցությունը վեր էր հանում առավել տեսանելի ժամանակային միավորները, որոնցից օրերը հարաբերվում էին լուսնի ամսական փուլի հետ. իսկ տարին՝ արեգակի:

Իրեզակի դիրքի հետ էին կապվում տարվա չորս եղանակները և ըստ այդմ արեգակնային տարին, սակայն դրանք ժամանակային մեծ միավորներ էին, այնինչ լուսնի ամսական փուլը ոչ միայն ժամանակային առավել փոքր միավոր էր, այլև այն իր հերթին կիսվում, ապա և չորսի էր բաժանվում լուսնի սկավառակի աճելով և նվազելով կիսվելու հետ: Այսպիսով, արևը տարեկան շրջանի հետ էր հարաբերվում, լուսինը՝ ամսական:

Լուսինը երկնային ամենամեծ մարմինն է, որը կարելի է երկնքից դիտել ամբողջ աչքով: Միաժամանակ երկնային լուսատուների մեջ նա առանձնանում է իր կրած ձևերի տեսանելի փոփոխությունների բազմազանությամբ: Լուսինը մեկ օրականից սկսելով աճել (րո-լորել), այնուհետև նվազում է և 27 օր, 7 ժամ, 43 րոպե հետո վերադառնում է նախկին դիրքին: Այսպիսով, մորալուսինը տևում է 14 օր ու ևս 14 օր շարունակվում է կիսալուսինը: Առաջինում լուսինը աճում է մինչև ամբողջական սկավառակը, երկրորդում՝ նվազելով «վերանում», որպեսզի այնուհետև մորից ծնվի ամսական մոր շրջափուլում:

Նախնադարյան շրջանի լուսնային օրացույցում լուսնի 28-օրյա այս ընթացքը արտահայտվել է 28 հիշերի երկու տասնչորսների բաժանմամբ, որոնք ներկայացրել են լուսնի աճող և նվազող սկավառակները և այս երկու տասնչորսներն էլ բաժանվել են երկու յոթերի, որոնք ցույց են տվել լուսնի թե՛ աճման և թե՛ նվազման հավասարաչափ ընթացքը, և լուսնի այս չորս ենթափուլերով են կազմվել լուսնային ամսվա չորս շաբաթները⁷⁴: Լուսնային շրջանի ենթափուլը եղող այս յոթը նաև գուգահետ է գծել յոթ մոլորակների և Մեծ Արեքի համաստեղության յոթ աստղերի հետ՝ տիեզերագիտական առումով ևս ամրակայելով յոթի՝ որպես կարգավորիչի և բացարձակի ըմբռնումը:

Յոթի՝ որպես ժամանակաստեղծ թվի ըմբռնման պայմանավորումը լուսնի շրջանի յոթօրյա չորս ենթափուլերով, հավաստվում է նաև հայկական լեռնաշխարհի տվյալներով: Ինչպես գրում է Հ. Մարտիրոսյանը, ժայռապատկերներում և տարբեր առարկաների վրա լուսինը պատկերվում էր մե՛րթ հազիվ երևացող կորագծի (մորոզ լուսին), մե՛րթ կիսամահիկի, մե՛րթ կիսաշրջանի (կիսալուսին), մե՛րթ երկու կիսաշրջաններից բաղկացած (միջմորմով անջատվող) սկավառակի ձևով (լիալուսին), մե՛րթ էլ՝ արևախաչի երկու կողմերից՝ երկու կիսալուսինների ձևով և այլն: Հասկանալի է, որ այս բազմազան պատկերները պետք է արտահայտեին ստույգ դիտվող լուսնի օրական ու շաբաթական փոփոխություն-

⁷² B. A. Фролов, նշվ. աշխարհ, էջ 127:

⁷³ Նույն տեղում, էջ 128:

⁷⁴ Նույն տեղում, էջ 120:

մեներ»⁷⁵:

Հ. Մարտիրոսյանը, մկրտագրելով Գեղամա լեռների և Վարդենիսի ժայռապատկերները, գրում է. «Բոլոր նշված դեպքերում կրկնվում է երկնային մարմինների յոթ թիվը: Այսպիսի օրինակները կարելի է տասնապատկել այլ ժայռապատկերների հաշվին, սակայն զբերված փաստերն էլ աներկբայորեն հաստատում են, որ առասպելական սրբացված յոթ թիվը Հայաստանի նախաքնիկների համար ի սկզբանե տրված մի կոնկրետ հասկացություն էր, մանավանդ, որ կապվում էր ոչ միայն արևի, լուսնի և աչքով տեսանելի հինգ մոլորակների, այլև լուսնի քառորդի (յոթ օրական լուսնի) և համաստեղությունների հետ, որոնցով չափվում կամ անվանվում էին ժամանակի միավորները ամենավաղմջական էպոխաներում»⁷⁶:

Ժայռապատկերներում պատկերվել է նաև լիալուսինը, այն բոլորող 28 ճառագայթներով, որոնց համար Հ. Մարտիրոսյանը գրում է. «Եթե ճառագայթների այդ քանակը բաժանենք լուսապատկերի երկու հավասար շրջանակների վրա՝ կստանանք $2 \times 14 = 28$, այսինքն՝ մոլորաշրջանի միջև կիսալուսին և կիսալուսնից միջև լիալուսին ընկած ժամանակաշրջանը: Այդ երկու կիսամսյակներն էլ երկուսի բաժանելով կստանանք մվիրական յոթ թիվը»⁷⁷:

Լուսնի հետ կապված այս ըմբռնումները արտացոլվել են նաև հայկական տոմարագիտական աշխատություններում: Հակոբ Ղրիմեցուն փաստորեն հայտնի է եղել, որ սկզբնապես օրերի և ամիսների ընթացքը մարդիկ որոշել են լուսնի միջոցով: Ղրիմեցին գրում է. «Վարժեալքն տոմարիւն իմանան զել և զմուտ ամսոցն, իսկ անվարժքն՝ Լուսնիւն, զի Աստուած զԼուսինն անգիր տոմար արարեալ է ոամկացն և ախմարացն»⁷⁸:

Ղրիմեցին ևս նշում է, որ ամիսը որոշվում է լուսնի միջոցով, իսկ տարին՝ արեգակի. «Ջի որպէս Արեգակն զտարին կատարէ, նոյնպէս և Լուսնինն՝ զամիսն, զի ամիսն Լուսնինն է, որպէս տարին Արեգակնանն, զի հայելով ի Լուսնինն, ստուգաբանեցին զանուն ամսոյն, ասելով. «Իմ ես պատկեր»⁷⁹: «Ամիս» բառի՝ որպէս թե *իմ ես* ստուգաբանության մասին մեկ այլ տեղում Ղրիմեցին գրում է. «Տեսանելով իմաստասիրացն զայսպիսի կիրս և զներգործութիւն Լուսնին, փոխանակեցին զԱյր ընդ Ինու և զԻնի ընդ Եչի, որ ասեր «ամիս», սոքա ասացին «Իմ ես»⁸⁰: Այսինքն՝ *իմ ես* կապակցության ի-ն ա-ով է փոխարինվել, իսկ ե-ն ի-ով և դառել է ամիս:

Լուսնի փոփոխական ընթացքը մարդկային կյանքի հետ հարաբերելու և ըստ այդմ կատարված «ամիս» բառի ստուգաբանությունը գտնում ենք դեռևս Վանական վարդապետի (1181-1251 թթ.) «Թաղազս տարեմտի» գործում, ուր ասվում է. «Եւ տեսեալ զնա մարդիկ յընծաիլ եւ ի մաշիլ, ասացին, իմ ես տարինակ ծնընդեան եւ մահու»⁸¹:

Ինչպես ասացինք, թվերի այս խորհրդաբանությունը մոլորաշրջանականության միջո-

⁷⁵ Հ. Ա. Մարտիրոսյան, Նախնադարյան Հայաստանի լուսնա-արեգակնային տոմար, «Լրարեր նասարական գիտություններ», Երևան, 1973 թ., հմ. 5, էջ 27:

⁷⁶ Լույս տեսնում է, էջ 29:

⁷⁷ Լույս տեսնում է, էջ 30:

⁷⁸ Հակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ, աշխատասիրությամբ Վ. Էյնաթյանի, Երևան, 1987, էջ 175:

⁷⁹ Լույս տեսնում է:

⁸⁰ Լույս տեսնում է, էջ 211:

⁸¹ Լևոն Խաչիկյան, Աշխատություններ, հր. Ա. Երևան, 1995, էջ 183:

մի մասերից իշխանականը և առաջինը համարելով զլուխը, որպես բանականության կրողի, ամեն ինչ յոթի հանգեցնելու ճիգով վերջինիս համար էլ գրում է. «Եւթնեկին ծակտտեալ. երկու աչաւք և ակամջաւք զուգիւք, երկու ոնգամբք և երանքորդաւ բերամով»:

Այնն ինչ յոթին հանգեցնելու նույն ձգտմամբ ասում է, որ յոթն են երաժշտության հնչյունները ըստ «Եւթնադի»՝ յոթնալարյա քնարի, յոթն են կետադրության նշանները և ձայնավորները. «Արդ ի քերականութեամբ՝ լաւագոյնք տառիցն, և որք աւելի զարութիւնն ունի»՝ եւթն են թուով ձայնաւորք»⁸⁹: Այսպիսով, յոթ ձայնավորների՝ մյուս գրերից գերադաս լինելու ըմբռնման աղբյուրներից մեկն է Փիլոնի այս ճառը:

Թվերի և հատկապես յոթի պարունակած այլաբանական խորհուրդներից Փիլոնը անդրադարձել է նաև «Ծննդոց գրքի» մեկնությունում⁹⁰:

Արդեն հիմնքորոգ դարձում յոթ թվի մասին մանրամասնաբար գրել է Եղիշեն իր մի քանի գործերում: «Արարածոց մեկնությունն» աշխատության մեջ նա գրում է. «Է՛ գիր, որ ձայնանան և բազմանան: Ջի գործիք են բանի գիծքն, որ ի մեր լեզուս ԼՋ լինի: Եւ ամեն տառից առաջին և հայր Այքն է, եւ առաջին ձայնաւոր և սկիզբն բոլորից թուոց»⁹¹: Նույն այս գործում Եղիշեն նաև գրում է. «Եւթն թիւն սուրբ է եւ տաւն է ճշմարտին Աստուծոյ եւ խորհուրդ եւթն զարութեամբ՝ Հոգւոյն»⁹²: «Աստծո տոն» ասելով Եղիշեն նկատի ունի, որ շաբաթվա յոթերորդ օրը կիրակին է և այդ օրը նվիրում են Աստծուն: Նույն այս միտքը արտահայտված ենք գտնում «Մեկնութիւն Յեսայայ եւ Դատաւորաց» գործում, ուր Սամսոնի յոթ գիտակների բացատրությունում գրում է. «Վեց ի մոցամէ զվեցօրեայ արարածքս նշանակէ, որ ի սկզբամէ, իսկ եօթներորդն՝ սուրբ, փափուկ, մուրիեալ Աստուծոյ օր, որ և անաշխատելի զօրութեան հանգիստ անուանեցաւ»⁹³:

Պատահական չէ, որ թվերի խորհրդաբանությանը առաջինը անդրադարձել է Եղիշեն: Ինչպես գրում է Սեն Արևշատյանը, Եղիշեն առաջին հայ մտածողն է, որի հայացքներում իրենց արտացոլումն են գտել մորալատոնական կոնցեպցիաները, թեև ենթարկված քրիստոնեական փիլիսոփայական-էսթետիկական ըմբռնումներին⁹⁴:

«Սակս բացայայտութեան թուոց» վերնագրով թվերին առանձին մի աշխատանք է նվիրել Անանիա Նարեկացին: Այս գործի սկզբում ասում է, որ որևէ մեկը թող չմտածի, թե այստեղ բերված բացատրությունները են «վարկապարագի գիտ մտաց իմոց», այլ որ դրանք խաբսխված են Հիմ և Նոր Կտակարանների վրա⁹⁵: Ասում է, որ թվերում ծածկված են աստվածային բարձրագույն խորհուրդները: Մտաճոգվելով, որ իրեն կարող է մեղադրեն Պյութագորականներից և Պլատոնականներից հետևելու մեջ, ասում է, որ թվերի պարունակած աստվածային խորհուրդները այնքան պայծառ ու հստակ էին, որ անգամ հեթանոս փիլիսոփաները կարծեցին, թե «ի թուոյ գոյանալ զաշխարհս»: Այնուհետև թվերի համար ասում է, որ «գոն ի սոսա խորհուրդք իմաստից աստուածային գիտութեանց»:

⁸⁹ Նույն տեղում, էջ 109:

⁹⁰ Տե՛ս Փիլոնի Երբայնցոյ մտադորդք ի Հայս, աշխտ. Հ Մկրտիչ Անգլերանց, Վենետիկ, 1826, էջ 91:

⁹¹ Մարենագրութիւնք Հայոց, Անթիլիաս, 2003, հր. Ա, էջ 827:

⁹² Նույն տեղում, էջ 867:

⁹³ Արդյ Տօրն մարոյ Եղիշի վարդապետի մարենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 190-191:

⁹⁴ С. С. Арсентьев, Формирование философских идей в древней Армении, V-VI вв., Ереван, 1973, стр. 120.

⁹⁵ Ա. Ա. Արրահանյան, Շիրակագու մարենագրությունը, Երևան, 1944, էջ 237:

Մեկատմեկ մերկայացնելով թվեռո, յոթի համար գրում է. «Իսկ սքանչելի թիւ Է-երորդ-դիդ յոգնաթիւ ունի խորհրդորդ»⁹⁶։ Բազմաթիվ այս խորհրդորդներից առաջինը մշտում է տասի շրջանակում կույս լինելը, ապա Հոգու յոթ շնորհները և Արարչագործության թիվ լինելը։

Ամանիա Նարեկացին ևս հատուկ շեշտում է յոթի ժամանակային միավոր լինելը. «Եւ սովին թուով ի կարգ անկեալ վարի աշխարհ, զի շաբաթը և ամիսը և տարիք սովաւ գոյացեալ երկին մեզ»⁹⁷։

Նա ևս թվարկում է մարդկային կյանքի՝ յոթով պայմանավորված շրջափուլերը.

ա. 7 օրում աղմամավորվում է արգանդում

բ. 7-ամսյա պտուղը ծնվում է (Գրիգոր Տաթևացին խորհրդանշական է համարում և այն, որ վեցամսյա կամ ութամսյա ծնվածները չեն ապրում, իսկ յոթ ամսական ծնվածները ապրում են, որի համար յոթամսյա ծնվածներից անվանում է «շնորհաւոր» ծնունդներ, հետևյալ բացատրությամբ՝ «զի եօթն ամսեայ ծնեալ մանուկն ապրի և ի շնորհաց լինի»)՝⁹⁷

գ. 7 ամսականից ելնում են՝ «ընձիւղին ատամնոնք»

դ. 7 տարեկանից փոխվում են ատամները և գիտակցականության «ընծայի տեսութիւմ մտացն և երևութաւն կերպարանք բանից յոգին»։ Վասն որոյ է ամեայ հրամայեմ առնուլ ի վարժս կրթութիւն դպրոցաց»⁹⁸։

Յոթի կույս լինելը և տարբեր երկրներում պաշտվելը է շեշտում Գրիգոր Մագիստրոսը՝ իրեն բնորոշ խորհիմությամբ գրելով. «Իսկ Հոմերոս, լիլլադայ և լեզգիպոսս պատուեալ, լկութամագդայ ակնարկութեւն ասէ զլիդմպոս տատանեալ և զմա երկմի որդի, որպէս զկոսմոս հայր իւր, և պատուէ սա զԵօթեակն կոյս զմա իբրու զԱթենայ»⁹⁹։

Յոթի խորհրդաբանությունը իր յուրօրինակ բանաստեղծական մեկնաբանությունում է գտել Նարեկում։ Գրիգոր Նարեկացին ինչպե՞ս համեմատում է Աբրահամի հետ, ով առաջացած տարիքում ունեցավ Իսահակին, և Ամնայի հետ, ով ամուսն լինելով, սակայն հավատով դիմելով Տիրոջը, ծնեց Սամուելին (Ա Թագ. Ա. 17)։ Աբրահամի համար, որպես բազում ազգերի հայր (Հտմ. Դ. 18), գրում է, որ «ի խորին ձերութեան անհամար որդոց հայր հաստատեցաւ», իսկ Ամնայի համար ասում է.

Իսկ միւսն զանհանդերձելի երկիր որովայնին սենեկի

Եւթեակ զաւակաւք բարգաւաճեցոյց,

Որ է թիւ մի անբաւութեան՝ զբնաւն մշանակելոյ զէութիւն,

Աստուածութեանն յարակայութեան սահման անհետազատելի

Եւ աւագանին մորածին որդւոց անհատ յորդութիւն։

Այս թիւ պանծալի, որում ո՛չ է կէտ կցորդի եւ ո՛չ սպառուած վախճանի,

Այլ կոյս ոմն է՝ ուրոյն ընտրութեամբ մուիրեալ յաւէտ

Անճառ վիճակաւ համայն յաւիտեմի,

*Դժուարաբարգմանելի մերոց իմաստից*¹⁰⁰։

⁹⁶ Նույն տեղում, էջ 245։

⁹⁷ Գրիգոր Տաթևացի, Գիրք բարեգործեան, որ կոչի Ամարան հարոր, Կ. Պոլիս, 1741, էջ 364։

⁹⁸ Մ. Ա. Արրահամյան, Շիրակյացու մարտնչագրությունը, էջ 245։

⁹⁹ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, աշխտ. Կ. Կոստանեանցի, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 182։

¹⁰⁰ Գրիգոր Նարեկացի, Մաղիան եղբրգործեան, աշխատախրությամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղափլյանի, Երևան, 1985, էջ 370։

Այսպիսով, եթե Իսահակի Քամար Աթրաթամին Նարեկացին անվանում է «անհամար խորոզի հայր», ապա Ամնայի՝ որպես Սամուելի մոր համար ասում է «Եթե՞նայ զառակաք»։ Հատկանշական է, որ Հին Ուխտը խորհրդանշող Աթրաթամի համար Նարեկացին օգտաբերորեն է անհամար, իսկ Դավթի միջոցով Նոր Ուխտի հետ հարաբերվող Ամնայի համար՝ յոթը, որով այս թիվը Աստվածաշնչում ունեցած իր բացարձակ արժեքով ավելին է, քան անհամարը։ Նարեկացու իսկ բնորոշմամբ յոթը է «թիւ մի անբաւութեամ»։ Նարեկի այս հատվածի մեկնությունում յոթի պարունակած նման արժեքի մասին Հ. Գ. Ավետիքյանը գրում է, որ Սուրբ Գրքում «զեթոն թիւն առնու փոխանակ յոջնաթիւ բազմութեան»¹⁰¹։

Նարեկացին յոթը անվանելով պանծալի, ասում է, թե նրանում «ոչ է կէտ կցորդի եւ ո՛չ տպառուած վախճանի»։ Հակոբ Պատրիարք Նալյանը և Հ. Գ. Ավետիքյանը գրում են, որ այս խոսքերով Նարեկացին ցանկացել է ասել, որ Է-Ու ո՛չ սկզբից և ո՛չ վերջից երկբարբառների մաս չի կազմում և որպես կույս թիվ տասի շրջանակում ո՛չ ծնում է և ո՛չ էլ ծնվում¹⁰²։

Ամհրաժեշտ է նաև նշել, որ Մատնանում Նարեկացին այլ առիթներով ևս քանիցս անդրադարձել է թվերի պարունակած այլաբանական իմաստներին¹⁰³։

Նկատի ունենալով Արարչագործության յոթերորդ օրը, վանական վարդապետը յոթը անվանում է «հանգիստ Աստուծոյ» գրելով. «Եթե՞ն, որ է հանգիստ Աստուծոյ, զի նա ի ներքոյ տասնեկին անծին է և անծնունդ. վասն այնորիկ պատուեն երբայցիք զեթոն, զվեցն գործեալ եւ յեթոն հանգուցեալ, որպէս վասն Աստուծոյ գրեալ է»¹⁰⁴։

Յոթի՝ որպես կույս և Արամազդի թիվ լինելը, որի վրա է հիմնված նաև յոթի՝ որպես աստվածային թիվ լինելու ըմբռնումը, լավագույնս սակայն արտահայտվել է Դավիթ Ամհադթի մոտ. «Պարտ է գիտել, եթե եթոն թիւը կոյս լսի, որպէս Աթենայ և ժամանակ։ Եւ կոյս՝ վասնզի ամենայն թիւ ի ներքոյ տասնեկիդ, ծնանի զոք կամ ծնանի յումեքէ, իսկ եթոն ոչ ծնանի զոք ի ներքոյ տասնեկիդ և ոչ ծնանի յումեքէ, որ զոն։ Երկուք ծնանի զչորս ի ձեռն բազմապատկութեան և երեք՝ զինն։ Իսկ չորք ծնանի յերկուց, և ծնանին զուր ըստ երկուց բազմապատկութեան։ Նոյնպէս և հինգ ծնանի զտասն ի ձեռն երկուց բազմապատկութեան։ Իսկ վեց ծնանի յերից ըստ նորին բազմապատկութեան։ Իսկ ութն՝ ի չորից ըստ նորին բազմապատկութեան։ Իսկ ինն՝ յերից ըստ երից բազմապատկութեան։ Իսկ տասն ի հնգէ ըստ երկուց բազմապատկութեան։ Իսկ եթոն թիւը, որպէս յառաջագոյն ասացաք, ոչ ծնանի զոք և ոչ ծնանի յումեքէ ի ներքոյ տասնեկիդ։

Արդ այսպէս և Աթենայ կոյս լսի վասնզի ասեին արտաքինքն զԱթենայէ, թէ ի գլխոյն Արամազդայ ծնաւ։ Իսկ ժամանակ կոչի, վասն զի և տղայք, ծնանելով վեցամսեայք և ութամսեայք ոչ ապրին, իսկ երեքամսեայքն ապրին։ Եւ դարձեալ, վասն զի տղայքն բնատրեցան յեթմերորդ ամսեանն հանել ատամունս և յեթոն ամին փոփոխել»¹⁰⁵։

¹⁰¹ Հ. Գ. Ավետիքյան, Նարեկ աղոթից, Վենսիկ, 1827, էջ 158։

¹⁰² Տնն Հակոբ Պապրիկարք Նալյան, Գիրք մեկնութեան աղոթից Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ, Կ. Պոլիս, 1745, էջ 233 և Հ. Գ. Ավետիքյան, Նարեկ աղոթից, էջ 159։

¹⁰³ Այս մասին տնն Հրաչյա Թամրազյանի «Գրիգոր Նարեկացին և Նոր Պայքանականությունը» (Երևան, 2004) գրքի «Պայքանագործ-Պատմական թվի փոխադարձությունը Նարեկյան դպրոցի գիտա-գրական աշխատությունում» բաժնի, էջ 95-119։

¹⁰⁴ Առն խաչիկյան, հյդ Ա, էջ 182։

¹⁰⁵ Դավիթ Ամհադթ, Երկամիտությունը փոխադարձական, համահավաք քննական լուսաբերը և առաջա-

Յոթի աստվածային բնույթը, սակայն, արտահայտվում է տասնավորների շրջանակում գրաված իր դիրքով: Տասնավորների մեջ, այսպիսով, յոթը կույս և անտաճեղի է համարվում, ինչպես որ անտաճեղի է Աստված: Նման բնորոշումը, համաձայն որի, ոչ յոթն է ձևվում, ոչ էլ ծնում, պայմանավորված է յոթի հետևյալ հատկությամբ:

Մնացյալ բոլոր միավորները կա՛մ բաժանվում են և կա՛մ էլ բազմապատկվում տասի շրջանակում, որով նրանք կա՛մ ծնում են և կա՛մ էլ ծնունդ տալիս և միայն յոթն է, որ ո՛չ բաժանվում է և ո՛չ էլ գումարվում կամ բազմապատկվում:

Այսպես, մեկից ծնվում է երկուսը: Երկուսը թե՛ կիսվում է և թե՛ բազմապատկվում: Երեքից ծնվում է ինը: Չորսը թե՛ բաժանվում է երկուսի և թե՛ գումարվելով դառնում ութ: Հինգը ինըն իրեն գումարվելով ծնում է տասին: Վեցը կիսվում է երկուսի, ութը՝ չորսի: Ինըը, ինչպես ասացիք, երեքի քառակուսին է և միայն յոթն է, որ ո՛չ կարելի է կիսել և ո՛չ էլ գումարել ու բազմապատկել տասի շրջանակում:

Ինչ վերաբերվում է այն հարցին, թե յոթը անտիկ աշխարհում ինչու է համեմատվել Աթենասի հետ, բացատրվում է նրա ծննդյան պատմության հետ տարված գուգահեռով: Հունական դիցաբանությունում ասվում է, որ Աթենասը Ջևսի և Մեդիտայի դուստրն էր: Ջևսը իմանալով, որ իր կինը հղիացել է և նրա համար ծնելու է մի որդի, որը նրան կզրկի իշխանությունից, կոլ է տալիս կնոջը, որից հետո գլխի սուր ցավեր է զգում և Հեփեստոսին (մի այլ դեպքում Պրոմեթեոսին) պատվիրում կացինով ջարդել իր գլուխը, որտեղից և էլծնում է Աթենասը ռազմական ամբողջական հանդերձավորմամբ:

Աթենասն էլ իր հերթին կույս է մնում, որի համար յոթ թիվը նրա հետ է համեմատվում, որովհետև Աթենասը ըստ էության չի ծնվել, այլ միանգամից ելել է Ջևսի գլխից ու կույս է մնացել՝ ո՛չ ծնել է, ո՛չ էլ ծնվել: Նաև քանի որ-հեթանոսական գլխավոր Աստծուց էր ծնվել և ինքն էլ իմաստության և պատերազմի աստվածն էր, ուստի և յոթը համարվում է աստվածային թիվ¹⁰⁶:

Յոթի և ընդհանրապես թվերի խորհրդարանությունը շեշտված ձևով արտահայտվել է նաև երաժշտագիտության բնագավառում: Ինչպես գրում է Վ. Ռաբինովիչը, Գրիգորյան երաժշտության յոթ ձայները համարվում էին զգալական արտահայտությունը համաշխարհային հարմոնիայի և ներդաշնակության¹⁰⁷:

Նաև դեռևս Անտիկ աշխարհից եկող ըմբռնմամբ աշխարհին և մարդուն դեկավարում է տիեզերական երաժշտությունը: Երաժշտության հետ է կապված այն ամենը, ինչ որ հոսում և փոխվում է աշխարհում: Երաժշտությունն էլ իր հերթին ենթարկվում է թվին: Ահա այս պատճառով և՛ մակրոկոսմոսում, և՛ միկրոկոսմոսում իշխում են թվերը՝ որոշելով տիեզերքի կառուցվածքը և ընթացքը¹⁰⁸:

Վան դեր Վադդենն էլ գրում է. «Երաժշտություն, հարմոնիա և թվեր- այս երեք հասկացությունները անխզելիորեն իրար էին կապված Պյութագորականների ուսմունքում»¹⁰⁹:

բակր Ս. Ս. Արեշադյանի, Երևան, 1980, էջ 82-83:

¹⁰⁶ Иранославная Энциклопедия, т. IV, Москва, 2002, стр. 82, упрѣн ІІІІІ Мнѣхъ народовъ мнра, Москва, 1980, т. I-III, стр. 125-129.

¹⁰⁷ Стѣн В. П. Равновѣжч, Алхимия как феномен средневековой культуры, стр. 105.

¹⁰⁸ Стѣн А. Я. Гуревч, Категории средневековой культуры, стр. 73.

¹⁰⁹ Стѣн Ван дер Варден, Пробуждающаяся наука, стр. 129.

Թվերի խորհրդաբանությունը իր արտացոլումն է գտել մասնաճյուղային տաղանտակա մեկնություններում: Ինչպես գրում է Ամեա Արևշատյանը, «Առհասարակ թվային խորհրդաբանությունը էական տեղ է գրավում երաժշտական տրակտատներում՝ ձեռք բերելով խորքային, արխետիպային բնույթ: Դրանցում ամրնդման հանդիպում են 4, 7, 8, 10, 12, 24 սրբազան թվերը»¹¹⁰:

Եկեղեցական խորհրդաբանությունը իր շեշտված դրոշմն է դրել ոչ միայն փիլիսոփայության, գեղագիտության և բնագիտության, այլև պատմագիտության վրա. երբ պատմության շարադրանքում պատմական շատ իրադարձություններ զուգահեռի մեջ են դիտվել Աստվածաշնչային տարբեր դրվագների հետ:

Կարծում ենք, նույն այս հանգամանքով է բացատրվում և այն հարցը, թե ինչու Կորյունից, Մովսես խորենագուց և Ղազար Փարպեցուց հետո հաջորդող դարերում ստեղծագործած մի շարք հեղինակների գործերում ասվում է, որ իբրև թե Մաշտոցը ստեղծել է ոչ թե ողջ Հայոց Այթուքները, այլ միայն յոթ ձայնավորները:

Արդ, ինչով է բացատրվում մախ 7-րդ դարում Տիրակացու ժամանակագրությունում և ապա 11-12-րդ դարերից մեկեն ընդհանրացող այս ըմբռնումը, որը պատմական-սկզբնաղբյուրային որևէ հիմնավորում չունի մախորդ շրջանի պատմագրությունում:

Նման մեկնաբանության միակ աղբյուրը, որը այսօր ևս գայթակղության քար է հայագիտության համար, Դանիելյան մշանագրերն են: Կորյունը հստակորեն գրում է, որ Մաշտոցը համոզվում է, թե դրանցով չի արտահայտվում հայերենի հնչյունական ողջ համակարգը, ուստի և դրանք գործածական չեն հայերենի համար: Միջնադարյան բազմաստիճան զուգորդմամբ, սակայն, Դանիելյան գրերը մոռովի են իմաստավորվում յոթի պարունակած այլաբանական խորհրդի շրջանակում: Ինչպես տեսանք, Թրակացու քերականությունում ձայնավորները ութն էին, և Թրակացու առաջին հայ մեկնիչները հայերենի համար ևս մշում են ութ ձայնավոր՝ օմեգայի համարժեքը համարելով աւ-ը: Հաջորդող դարերում, սակայն, ութ ձայնավորների փոխարեն մշվում է յոթը, որը սակայն ավելի շատ պայմանավորված էր ոչ թե բուն հնչյունական համակարգի իրողություններով, այլ ձայնավորների թիվը յոթ դարձնելով և այդպես յոթի հոգևոր խորհրդին համապատասխանեցնելով: Եթե ձայնավորների որոշման հիմքում ընկած լինեք ձայնային հատկանիշը և ոչ թե յոթին համապատասխանեցնելու միտումը, ապա ձայնավորների շարքում չէր հիշվի վյունը: Նոր շրջանի քերականությունում, որը խառնված է հնչա-արտաբերական հատկանիշների և ոչ թե խորհրդաբանական տարբեր զուգահեռների վրա, վյունը և վեղը արդեն ձայնավորներ չեն համարվում:

Ինչպես տեսանք, յոթ ձայնավորները մեկնությունից մեկնություն դիտարկվում են հոգու և մարմնի, մշտականի և անցյալականի հարաբերակցության շրջանակում, համաձայն որի, հոգին են ձայնավորները և մարմինը՝ բաղաձայնները: Այս ըմբռնումը միանգամայն մոտ իմաստ է հաղորդում Դանիելյան գրերի մասին պատմությանը: Քանի որ, ինչպես խորենագին է գրում, Հայոց գրերը Մաշտոցին տրվեցին աստվածային տեսիլով, ուստի դրանք պետք է համապատասխանեին իրենց աստվածատուր բնույթին, որի համարժեքն են ձայնավորները: Եվ, համաձայն ձևավորված այս ըմբռնման, աստվածատուր այս յոթ ձայնավորները կենդանացնում են Դանիելյան մշանագրերը՝ այն դարձնելով Հայոց

¹¹⁰ Ա. Արևշատյան, Հայ միջնադարյան ձայնից մեկնություններ, Երևան, 2005, էջ 78:

Այբուբեն, ինչպես որ աստվածային շումչն է հոգի և կենդանություն հաղորդում մյուսին և մարմնին:

Այս ըմբռնման ձևավորմանը կարող էր նպաստել և այն համգամանքը, որ Փյունիկյան Այբուբենը, որ ընկած էր սեմական և հունական Այբուբենների հիմքում, կազմված էր 22 գրերից, ձայնավորներ չուներ և բաղկացած էր միայն բաղաձայններից¹¹¹: Նույն ձևով ձայնավորներ չուներ և հյուսիս-սեմիտական Այբուբենը¹¹²:

Այսպիսով, մեր կողմից առաջ քաշվող մեկնաբանությամբ 11-12-րդ դդ. մեր մատենագրությունում ընդհանրացող այն ըմբռնումը, որ Մաշտոցը ստեղծել է միայն հայերենի յոթ ձայնավորները, թացատրվում է յոթի և ձայնավորների պարունակած հոգևոր խորհրդով և ոչ թե այն ունի պատմական որևէ հիմք և կամ էլ խարսխված է պատմական թեկուզ և մեզ չհասած որևէ վկայության վրա: Հատկանշական է, որ Մաշտոցի կողմից միայն յոթ ձայնավորները ստեղծած լինելու մասին ըմբռնումը մեր պատմագրության մեջ հայտնվում է այն շրջանից, երբ յոթը և ձայնավորները միջնադարյան ընդունված խորհրդաբանությամբ են ներկայացվում հայ քերականագիտությունում:

Ահրարժեշտ է նշել, որ յոթ ձայնավորների այս ըմբռնումը ոչ միայն ընդհանրացել է հայ մատենագրությունում սկսած 11-12-րդ դարերից, այլև իր հետադարձ ազդեցությունն է ունեցել նախորդող շրջանի պատմագրության վրա՝ այն փորձելով ենթարկել համապատասխան վերախմբագրման:

Այսպես, խորենագին գրում է, որ Մաշտոցին տեսիլում երևաց, թե ինչպես Աստվածային Աջը՝ վեմի՝ քարի վրա գրում է հայոց գրերը: Պատմաբան մի շարք ձեռագրերում, սակայն, հետազայում յոթ ձայնավորների ընդհանրացած ըմբռնմամբ «ի վերայ վիմի» խոսքերից հետո ավելացվել է «Ա, Ե, Ը, Ը, Ի, Ո, Ի», որով այնպես է ստացվում, թե խորենագին գրում է, որ Աստվածային Աջով գծագրվել են միայն այս յոթ ձայնավորները¹¹³:

Այժմ տեսնենք, թե ինչպես Մխիթար Այրիվանեցու և Առաքել Բաղիշեցու զանձերում տող առ տող հստակորեն արտահայտվել է յոթ ձայնավորների այս խորհրդաբանությունը:

Այրիվանեցին գրում է.

*Վտմշապուռ առնեալ, Վահրին գործակցեալ, Դանիէլ շնորհեալ,
Քսան և ինըն գրեալ, նախնեսցըն արարեալ, ամս երկու չհեզեալ*¹¹⁴:

Ինչպես տեսնում ենք, այստեղ Այրիվանեցին մուլմությամբ գրում է ըստ Կորյունի և խորենագու, միայն թե Դանիելյան գրերի համար ասում է, որ նրանք 29-ն էին, որի համար էլ նրանցով գրելու երկու տարվա փորձերը արդյունք չստեղծեցին:

Ինչպես որ խորենագու մի շարք ձեռագրերում է որպես հետազայի հավելում ասվում, թե Աստվածային Աջով յոթ գրերը տրվեցին, այնպես էլ Այրիվանեցին է գրում.

*Մատամբ փորագրեալ, յարձանի դրոշմեալ, եթմ գիր յայտնեալ*¹¹⁵:

¹¹¹ В. И. Калпджак, История письменности и книги, Москва, 1955, стр. 25.

¹¹² Д. Девришер, Алфавит, Москва, 1963, стр. 261.

¹¹³ Մոյսիս խորենագի, Պատմություն Հայոց, աշխատությամբ Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Տիֆլիս, 1913, էջ 327:

¹¹⁴ Մխիթար Այրիվանեցի, Գանձեր և քաղեր, աշխատախոսությամբ Է. Հարությունյանի, Երևան, 2005, էջ 113:

¹¹⁵ Նույն տեղում, էջ 114:

Քերականագիտական այն ըմբռնումը, որ ծայնավորները կենդանություն են հաղորդում բաղաձայնական համակարգին, Այրիվանցեի արտահայտում է հետևյալ տողով.

Անդ հոգի ջահեալ, զայլ գիրսն յարուցեալ, սիղոքայք հեգեալ:

Այսպիսով, ծայնավորները որպես հոգի կենդանություն են պարզևում մնացյալ գրերին: Յոթ ծայնավորների այս խորհուրդը իր արտացոլումն է գտել նաև 15-րդ դարի հեղինակ Առաքել Բաղիշեցու՝ Թարգմանչաց նվիրված գանձում, որի՝ Հայոց Այթուքենին նվիրված հատվածը կարելի է համարել քերականագիտական աշխատությունների գրերին նվիրված բաժնի բանաստեղծական վերաշարադրանքը:

Բաղիշեցին գրում է.

*Քսան և իմն գիր էր գըրած,
Այլ անազ ուներ ընթերցողաց:
Ջի ոչ կապէր հէք բանից անւանց,
Այլ անհոգի մարմնոյ նըմանած¹¹⁶:*

Ահա այսպես դարձյալ շեշտվում է, որ այս քսանինը գրերը անհոգի մարմին էին: Աստվածային Աշով Հայոց գրերի արարվելը ևս Բաղիշեցին ներկայացնում է որպես յոթ ծայնավորների տրվելը.

*Աջն Աստուծոյ անեղին փառաց
Ըզեւթըն գիրն ի քարին գրեաց:*

Արդեն գրական ընդհանրացող կանոնով Բաղիշեցին ևս գրում է, որ այս յոթ ծայնավորները

*խառնեալ ի յայլ գրերն առաջին
Սոքա հոգի ջահեցաւ նոցին:*

Ահա այսպես ծայնավորների ինչյունական առանձնահատկությունները համապատասխան վերաիմաստավորման են ենթարկվել քրիստոնեական խորհրդաբանության շրջանակում և հարաբերվել յոթի պարունակած այլաբանական խորհուրդների հետ: Նման մեկնաբանությունը այնուհետև իր կնիքն է դրել և Հայոց գրերի գյուտի պատմության վրա՝ գրերի գյուտը ներկայացնելով որպես հոգևոր-աստվածային բնույթ ունեցող ծայնավորների արարում, որոնք այնուհետև կենդանություն են հաղորդել Դանիելյան մոռացված և անկենդան նշանագրերին:

¹¹⁶ Երևանի Մալեկյան պալատ, ձեռգ. հմր. 424, 183ա:

ԱՄԱՏՈՒՐ ՓԱՇԱՅԱՆ

Քիմիական գիտությունների թեկնածու

Հ. ԳՐԻԳՈՐԻՍ ԳԱԼԵՄ-ՔՅԱՐՅԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վեցետիկի և Վիեննայի Միախարյանները շուրջ երեք հարյուրամյա վաղեմությամբ գրական-գեոլոգիական, հոգևոր, աղբյուրագիտական, քանդակագործական, թարգմանական և հայագիտական տարաբնույթ աղբյուրաբանական գործունեությամբ զուգահեռ հետազատություններին են ժառանգել զուտ բնագիտական հսկայածավալ գրականություն: Դրանք դասագրքեր են, մեծագրություններ, հանրագիտարաններ, գիտահանրապատելի ուսումնասիրություններ, բնագիտական թարգմանություններ¹:

Վիեննայի Միախարյան միաբանության բնագիտական ժառանգության մեջ իրենց արժանի տեղն ունեն հիշյալ միաբանության անդամ, քանասեր, մամուլի տեսաբան, մատենագետ և դրամագետ Հ. Գրիգորիս Գալեմբյարյանի բնագիտական ուսումնասիրությունները:

Գ. Գալեմբյարյանը² իր բնագիտական աշխատությունները հրատարակել է երիտասարդ հասակում՝ 1887-1889 թվականներին, որից հետո այլևս չի անդրադարձել այդ բնագավառին:

«Հանդես ամսօրեայ»-ի անդրամիկ համարներում 1887-ին լույս է տեսել Գ. Գալեմբյարյանի բնագիտական առաջին ուսումնասիրությունը՝ «Լուսոյ և ջերմութեան էութիւնը»: Ընդարձակ այս հոդվածում մեղկայացվում են լույսի և ջերմությանը վերաբերվող ժամանակակի ըմբռնումները: Ահա մի հատված այդ հոդվածից. «Սպիտակ լույսը բազմագունեան ճառագայթներէ բաղկացած է, որոնց քաղաղութեան և սպիտակը յառաջ կու գայ: Բայց միայն՝ նոյնագոյն ճառագայթներ, այսինքն անոնք, որ ալեաց (ալիքների - Ա. Փ.) հաւասար

¹ Տնն. Ռ. Գաբրիելյան, Վեներիկի Միախարյանները և դպրիկիցմը, Երևան, 1948, 64 էջ: Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մրավոր մշակույթի զարգացման պատմություն, հր. 3, Երևան, 1975, 511 էջ: Ա. Փաշայան, XIX դարի բիմիան հայ բնագիտական աշխատություններում, Երևան, 1992, 160 էջ: Նույնի, 18-19-րդ դարերում Վեներիկի Միախարյան միաբանության բնագիտական հրատարակությունները, «Էջմիածին» ամսագիր, 1998, հ. ԺԲ: Նույնի, Միախարյանների բնագիտական հրատարակությունները ԺԸ-ԺԹ դարերում, «Բազմալեզու», 2001, հ. 1-4: Նույնի, Գաբրիել Մեհակիչյանը՝ նաև բնագիտական աշխատությունների հեղինակ, «Հանդես ամսօրեայ», 2000 թ., հ. 1-12: Նույնի, Մադրասի Գաբրաշյանը և իր «Նկարագիր տոմանց» աշխատությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 2004 թ., №2, էջ 130-142: Նույնի, Սիմոն Երեմյանի գիտական ու գրական ժառանգությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 2004, № 3, էջ 130-148: Նույնի, Հայր Մինաս Բոչկյանի «Ճանաչան գիտելու» հանրագիտարանը, «Բազմալեզու», հ. 1-4, էջ 463-475:

² Գրիգորիս Գալեմբյարյանը (Ավագանի անունը՝ Գեորգ) ծնվել է Կոստանդնուպոլսում, 1862 թվականին: 1875-ին մեկնել է Վիեննայի Միախարյան միաբանություն՝ այնտեղ ուսանելու եղբորավոր: 1880-ից դարձել է հիշյալ միաբանության անդամ: 1885-ից աշխատել է միաբանության դպրոցներում: 1896-1898 թվականներին «Հանդես ամսօրեայ»-ի խմբագիրն էր: Վախճանվել է 1917 թվականին Վեներիկում (Տնն. Ն. Ալիևյան, Հ. Գրիգորիս ծ. վ. Գալեմբյարյան, «Հանդես ամսօրեայ», 1917-1918, էջ 113-130):

արկայնությունում ունիմ, կրման գիրար եղծանել (այստեղ՝ մարել իմաստով - Ա. Փ.) կամ զօրացրել: Անոր համար կրմայ հանդիպիլ, որ լուսոյ բաղադրիչ մասունքներէն միայն մէկն, ինչչալես կարմիրն, այնպիսի դրից մէջ մտնէ, ուր իրարու եղծումը կամ ոչնչացումն յառաջ յղայ: Այն ատեն մէկալ ճառագայթներն անփոփոխ կը մնան: Բայց որովհետեւ կարմիրը ապիտակէն կը թաժնուի կ'ելլէ, վերջինս կամաչի կը փոխուի, վասն զի սակաւակարմիր թերմակը կանամչ կը ծնանի³:

Այստեղ քննարկված են ֆիզիկայի կարևորագույն քննազավառներից մեկի՝ սպիտակ լույսի բնույթին և, այսպես կոչված, լույսի իմտերֆերենցիային առնչվող խնդիրները: Այս իմաստով Գ. Գալեմբյարյանը առաջինն է մեզանում, որն անդրադարձել է Ռիշյալ խնդիր-ներին:

Վերը նշված հոդվածում Գ. Գալեմբյարյանը անդրադարձել է ջերմության հարցերին մաս: Նա մանրամասնորեն քննարկել է ջերմության բնույթը, չափման միավորները: Անդրադարձել է նաև մեխանիկական էներգիան ջերմայինի վերածելու խնդիրներին⁴:

Հայտնի է, որ բնության մեջ կատարվում են շատ ու շատ քնական երևույթներ, որոնցից նմարդկությունը չի կարողանում լավագույնս օգուտներ քաղել իր այս կամ այն մպատակը հիարագործելու համար: Հարյուր հազարավոր մեծ ու փոքր ջրվեժներ մոլորակի տարբեր մասերում գահավիժում են օր ու գիշեր տարբեր բարձրություններից, և մարդը ջրի մեխանիկական էներգիան օգտագործելու մասին մորամոր ծրագրեր է մախագծում: 19-րդ դարի վերջին Գ. Գալեմբյարյանին ևս հուզել է այս հարցը: Ահա այդ մասին իր արտահայտած մարծիքը. «Նույնպես Հյուսիսային Ամերիկայի Նիագարա գետին ջրվեժը՝ ուր ամեն ժամ 100 միլիոն տակառաչափ ջուր 150 ոտք բարձրութենէ կթափվի, 16800 հազար ծիու օգորության կհավասարվի, սակայն անհմար է գորության (այստեղ՝ էներգիա իմաստով - Ա. Փ.) գործել»⁵:

Գ. Գալեմբյարյանի Ռիշյալ հոդվածում չափազանց կարևոր տեղեկություն կա անգլիացի աստղագետ Վիլյամ Հերշելի (1738-1822 թթ.) աստղագիտական կարևոր մի հայտնագործության մասին. «Արդ, արդեն դարուս սկիզբը Փ. Վ. Հերշել մեծ աստղագետը գտաւ՝ որ գլխաւորաբար անդրակարմիր ճառագայթները ջերմութիւն կը ծնանին. արեգական առ մեզ արծակած ջերմութեան ճառագայթից կէսն ընդհանրապէս չերեւար: Անդրամանու-

³ Գ. Գալեմբյարյան, Լուսոյ և ճերմութեան Լուիլիւր, «Տանդէս ամսօրնայ», 1887, հ. 2, էջ 18:

⁴ Լայն իմաստով լուսոյ օպտիկական ճառագայթում է, որը, բացի սպեկտրի տեսանկյնի տիրույթից, քննարկում է նաև ուլտրամանուշակագույն և ինֆրակարմիր ալիքների լայն տիրույթները: Անգլիացի ֆիզիկոս և մաթեմատիկոս Իսահակ Նյուտոնը (1642-1727 թթ.) առաջինն է տվել սովորական սպիտակ լույսի՝ տարբեր գույների լույսերից կազմված լինելու փաստը: Լույսի ինտերֆերենցիան 19-րդ դարի սկզբին հայտնաբերել են Թ. Յունգը և Օ. Ֆրենսկը:

⁵ 19-րդ դարի վերջին Գ. Գալեմբյարյանի բերած տվյալները շար մօտ են իրականում ամպ տվյալներին: Նիագարա ջրվեժի միջին ծախսը վայրկյանում 5900 խորանարդ մետր է: Ըստ այդմ, հոդվածի ենդինակի բերած 100 միլիոն տակառաչափ ծախսը մեր բերած տվյալներին համընկնելու համար պետք է քննդունել մեկ տակառի պարունակությունը 200 լիտրին մօտ, որը տրամարանական է: Անչափ ենտարբերի Գալեմբյարյանի բերած մյուս տվյալը: Նա Նիագարա ջրվեժի լադծությունը հաղել է 150 ոտք: Իրականում այն 48 մետր է: Ուրեմն Գալեմբյարյանի տվյալով մեկ ոտքը որպես չափման միավոր պետք է լինի 32 սանտիմետրին հավասար: Այս տվյալը շար մօտ է ուրաքտական միջին ոտնաչափին, որը 31,4 սանտիմետր է:

Գրքում առկա 21 նկար-պատկերները, գիտական և պատմական թվանդակալից տեղեկությունները այն դարձնում են յուրօրինակ մի գիրք-տեղեկատու մոմի հատկությունները:

Խիստ ինքնատիպ են Գ. Գալեմյարյանի՝ քնական գիտություններից երկուսի՝ ֆիզիկայի և քիմիայի համոզիչ ունեցած վերաբերմունքը: Քաջ գիտակցելով, որ շատերի համար խիստ հայեցված քիմիական այս կամ այն տերմինը անհասկանալի կլինի, նա հայերեն տերմինի կողքին, փակագծում, միշտ դրել է դրա լատինական համարժեքը: Այսպես, ածխածին ծծմբ (sulfure de carbone), բենզին (benzine), քլորալեպ (chloroforme): Ահա և մոմի ֆիզիկական մի քանի հատկանիշները «Մոմի տեսակարար կշիռն է 0,965 մինչև 0,972: Ջուտ մեղրամոմի հալելու աստիճանն է 62 մինչև 64 կելս: Եթե առելի ջերմութեան մէջ ձգուի՝ կը տարալուծուի եւ կը շոգիանա, բայց իւղերու եւ ճարպերու պէս այրածի հոտ չի ձգեր»:

Մեղրամոմի տեսակներից հեղինակը նշել է երկու տասնյակից ավելի. ավստրիական, սելիզիական, լեհական, հունգարական, թուրքական, իսպանական և այլն: Բուսական մոմի տեսակներից նշվում են ճապոնականը, չինականը, արմավամոմը և բրազիլականը:

Ի՞նչն է ստիպել Միսիթարյան միաբանության այս հոգևոր գործչին 19-րդ դարի վերջին լույս ընծայելու միաճատիպ մի աշխատությունը:

Պատճառը դյուրին բացատրելի է: Միսիթարյան միաբանության քնագիտական ժառանգության մամուրկրկիտ ուսումնասիրությունը մեզ բերել է հետևյալ եզրակացության: Դեռևս 18-րդ դարի վերջին նրանց՝ քաջի զուտ քնագիտական ուսումնասիրություններ հրատարակելուց, միշտ հետաքրքրել է հայ արհեստավորին մատչելի գրքեր լույս ընծայելու ազգամիկ գործը: Հիշենք միայն 1830-ին Վեմետիկում աշխարհաբարով լույս տեսած Մեարոպ Աղաչարաղայանցի «Համառոտ արուեստաբանութիւն եւ նորանոր հմարք» արհեստներին նվիրված 244 էջանոց աշխատությունը:

Կա նաև մեկ այլ պատճառ: Մոմի պատրաստման արհեստը ավելի շատ զարգացած է եղել Արևմտյան Հայաստանում, ուստի և Եվրոպայում ապրող և գործող հայ արհեստավորների, ինչու չէ՞ նաև հենց հայկական եկեղեցիներում ու վանքերում մոմեր պատրաստող վարպետների համար մոմագործության գիրք էր անհրաժեշտ:

Ահա թե ինչ է գրել Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը. «Մեղրամոմի արհեստն ավելի զարգացած չի եղել էջմիածնի կողմերում, այնտեղի եկեղեցիները միայն մեղրամոմ են գործածել, մինչդեռ մեր կողմերում միակել է կամ ավելի ճիշտ դադարել է մեղրամոմի կիրառությունը սեղանի վրա: Այժմ միայն ուխտի և քարեպաշտության համար, կամ պաշտոնյաների ձեռքին վառած մոմերն են մեղրամոմ»⁹:

Մոմագործության հարցերից քաջի Գ. Գալեմյարյանի աշխատությունում քննարկված են այլ հարցեր ևս: Այսպես, գրքի 66-րդ էջում տրված է մոմաթղթի պատրաստման տեխնոլոգիան. «Հասարակ տպագրութեան գործածուած թղթն թերթ մը կ'առնուի, կը տարածուի, եւ տաք արթուկ մը վրայէն կ'անցուի, մէկալ ձեռք մոմի կտոր մը արթուկին ետեւէն թղթի վրա քսելով: Մոմը տաք թղթին մէջ կը թափանցէ եւ մոմապատ կ'ըլլայ: Այս թղթով քաղց-

⁹ Մ. Օրմանյան, Ծիսական յառարան, Երևան, 1992, էջ 102:

ւեմեաց 22 երու բերանը կը փակուի որպէս զի օդ չմտնէ, և ընդհանրապէս՝ ուր որ օդն արգելել ուզուի՝ կը գործածուի»:

Գ. Գալեմքարյանի՝ վերը հիշատակված բնագիտական ուսումնասիրությունների մասին սինչ ազմի Հայաստանում ոչ մի տող չի հրապարակվել:

Երևանում 1960 թ. լույս տեսած աշխատություններից մեկում նրա մասին գրված են մի քանի ժառ տողեր. «Եղել է Վիեննայի Միխրայան միաբանության անդամ: Խմբագրել է «Համդէս ամսօրեայ»-ն: Ունի հայագիտական շատ աշխատություններ»¹⁰:

Հիշյալ երկու տողերին հաջորդում է Գ. Գալեմքարյանի աշխատությունների մատենագիտական ցանկը, որտեղ չի մշված «Մոմագործությունը»:

Գ. Գալեմքարյանին հաջորդ անդրադարձող Ա. Առաքելյանն է. «Վիեննայի Միխրայան միաբանությունը հայ բանասիրությանը տվել է մի շարք ակամավոր դեմքեր, ինչպիսիք են՝ Հովնաթյան, Գաթրոնյան, Գարագաշյան, Ավգերյան, Գալեմքարյան, Տաշյան, Մեմեկիշյան, Ակիմյան և այլք»¹¹:

Միխրայան միաբանության այդ բազմաշխատ երախտավորի կենսագրությանը Հայաստանում առաջին անգամ անդրադարձել է Գ. Ստեփանյանը¹²: Նշելով Գ. Գալեմքարյանի հրատարակած աշխատությունները, Գ. Ստեփանյանը ևս չի մշել «Մոմագործությունը»:

Վիեննայի Միխրայանների տպարանում լույս տեսած «Մոմագործութեան» մասին ինչ-ինչ պատճառներով «Համդէս ամսօրեայ»-ում ոչ մի տող չկա Գ. Գալեմքարյանի մահախոսականում անցած:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին քառորդին և՛ Վենետիկի, և՛ Վիեննայի Միխրայանները շարունակում էին իրենց գիտական և գրական առաքելությունը, և Գրիգորիս Գալեմքարյանը հիշյալ ժամանակահատվածի Միխրայան միաբանության գիտության և մշակույթի չարքաշ և ճգնակյաց աշխատավորներից մեկն էր:

¹⁰ Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժամանայիսեր, Երևան, 1960, էջ 68: Այս ժողովածուի հեղինակ Հովհաննես Պետրոսյանի (1892-1961) մասին տրև Գ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, Խաղորդ 3, Երևան, 1990, էջ 272:

¹¹ Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մարավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 322:

¹² Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, 1973, էջ 215:

ԽԵՍՏԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՐԱՖԵՑՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՏԱՐԸՆԹԱՑԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, 1878 թվականի հունվարի կեսերին փաստական առումով ավարտվում է Ռուս-թուրքական պատերազմը և մույն թվականի փետրվարի 19-ին կնքվում է Սան Ստեֆանոյի դաշմագիրը: Հայտնի է նաև, որ այդ դաշմագրի մի քանի տողից բաղկացած 116-րդ հոդվածը ամբողջովին նվիրված էր Հայաստանին վերաբերվող բարենորոգումներին:

Դաշմագրի կնքումից չանցած մեկ ամիս, «Մշակ»-ի խմբագիր Գրիգոր Արծրունին գերմանական «Allgemeine Zeitung» լրագրից թարգմանաբար «Մշակ» լրագրի մարտի 10-ի համարում իր ընթերցողներին է ներկայացնում 16-րդ հոդվածի այն հատվածը, ուր ասվում էր, որ «Հայաստանը ստանալու է վերանորոգումներ համեմատ տեղական պահանջների և ընթացիկ տրվելու է ապահովությունը քրդերի և չերքեզների դեմ»¹: Կրկին անգամ մեջ բերելով «համեմատ տեղական պահանջների» դարձվածքը, Գ. Արծրունին հետևեցնում է, թե «տեղական բառը պարզ ցույց է տալիս, որ Հայաստանը ունենալու է նահանգական ինքնավարություն»: Առաջ գնալով Արծրունին հուշում է արևմտահայությանը պահանջել ո'չ միայն «քրիստոնյա նահանգապետ, քաղաքային և գյուղական վարչություններով», այլև «սեփական կամ խառը դատարաններ... քրիստոնյաների և մահմեդականների հավասարություն, ուսումնարանների ազատություն»² և այլն:

Գ. Արծրունին խորհուրդ է տալիս Ազգային ժողովին՝ թողնել Կ. Պոլիսը, տեղափոխվել վան կամ Էրզրում և դառնալ «Հայաստանի տեղական նահանգական ինքնավարության գլխավոր կենտրոնական վարչություն»: Թեև միամիտ ու անհրապակաս էին Արծրունու ցանկությունները, սակայն ազնիվ ու սրտաբուխ էր այն ոգևորությունն ու աշխույժը, որն այդ շրջանում տիրապետում էր ինչպես Արծրունու, այնպես էլ հայ մտավորականության մեծագույն մասի մոտ: Ըստ էության ոչինչ չասող, բայց գունագարդված դիվանագիտական խոստումները մի կողմից, քալկանյան ժողովուրդներին շնորհված անկախությունն ու ինքնավարությունը մյուս կողմից ամենուրեք մի նոր թափ են հաղորդում հայության ազգային-ազատագրական զաղափարախոսության հասունացմանն ու վերելքին:

Այդ օրերին հայ մտավորականության մեծագույն զանգվածը գտնվում էր այդ թեմայի հարուցած գինովության մեջ: Կ. Պոլսում մարդիկ շնորհավորում էին միմյանց Հայաստանին տրվելիք վարչական ինքնավարության առիթով:

Ոգևորությունը մեծ հորձանք էր տվել...

Այս դեպքերից կարճ ժամանակ անց Րաֆֆին «Մշակ»-ի 1878 թվականի մարտի 16-ի

¹ ՏՆՆ, «Մշակ», 1878. 10 մարտի, No 37:

² Նույն տեղում:

համարում տպագրում է «Դեռևս ուշ չէ» խոսում վերնագրով հոդվածը:

Ի հակադրություն Գ. Արծրունու, որը «Մշակ»-ի միջոցով ազդարարում էր, թե «Հայերի ճակատագիրը վերջնականապես կարգավորված է»։ Բաֆֆի համար պարզ էր, կամ, ինչ-ճակատագիրը վերջնականապես կարգավորված է: Բաֆֆի խոստովանում էր, որ Սամ Ստեֆանյոյի դաշնագրությունից հետո պես ինքն էր ասում «գործերից երևում էր», որ Սամ Ստեֆանյոյի դաշնագրությունից հետո պես ինքն էր ասում «գործերից երևում էր»: Բաֆֆին գիտակցում էր, որ լավագույնը «հայերի վիճակը ոչինչ փոփոխություն չէ կրելու»: Բաֆֆին գիտակցում էր, որ լավագույնը «հայերի վիճակը ոչինչ փոփոխություն չէ կրելու»: Բաֆֆին գիտակցում էր, որ լավագույնը «հայերի վիճակը ոչինչ փոփոխություն չէ կրելու»: Բաֆֆին գիտակցում էր, որ լավագույնը «հայերի վիճակը ոչինչ փոփոխություն չէ կրելու»:

Որոշակիորեն նկատելի է, որ Բաֆֆին պատերազմից հայ ժողովրդի ստացած օգուտը համարում էր մասնակի երևույթ և շատ էլ ցուրտ չէր արդյունքից: Նրա ըմբռնմամբ հայ ժողովուրդը մի շարք պատճառների հետևանքով չէր կարողացել օգտվել պատերազմի ընթացքում պատեժ առիթից Թուրքիայի լծից ազատվելու համար: Այդ անպատեհության հիմնական պատճառը Բաֆֆին տեսնում էր «հայերի անշարժության մեջ... Ոչ ոք պարտական չէ հայերի համար մտածել, - գրում է նա, - քանի որ իրանք հայերը անշարժ մնացին (ընդգծումն իմն է - խ. Ս.) և իրենց համար չմտածեցին»:

Մատնանշելով ազատություն ձեռք բերելու երկու հնարավոր ուղի՝ Բաֆֆին իր այս «Դեռևս ուշ չէ» վերնագրով հոդվածի մեջ գտնում է, որ արևմտահայերը կա՛մ պետք է սլավոնական ժողովուրդների օրինակով գե՛նք վերցնե՛ին և «կա՛մ գրավոր կերպով իրենց բովորը հայտնե՛ին՝ ուր որ հարկն է: Առաջին գործողության մեջ նրանք անընդունակ էին, իսկ երկրորդը՝ ոչ ոք նրանց չէր արգելում»: Առաջին դեպքում, «ազատության զգացումը արմատից է ծագում, ամբոխի սրտից է բխում, ցածից դեպի վեր է բարձրանում»:

Իսկ երբ ժողովուրդը զարգացած չէ, գտնվում է մի այնպիսի իրավանդոտ դրության մեջ, որ միայն զգում է իր ցավերը, բայց դարձան անելու շնորհ չունի, այն ժամանակ նրան իր թշվառ վիճակից ազատելու հոգը վերևից դեպի ցած է իջնում (ընդգծումը՝ խ. Ս.): Դա հայտնվում է բարձր կենտրոններում, մայրաքաղաքներում, ուր որ գտնվում են ժողովրդի ավելի զարգացած և գործունյա դասերը: Ամբոխը ենթարկվում է այդ տարրերին և կրավորական դեր կատարում:

Առաջին միջոցը արմատական է, իսկ վերջինը՝ մեղմործական³:

Բաֆֆին ազատություն ձեռք բերելու հարցում միշտ էլ առաջնությունը տվել է արմատական միջոցին, երբ ազատությունը մերքևից է դեպի վեր բարձրանում, սակայն երբ նա գրում էր «Դեռևս ուշ չէ» հոդվածը, արդեն պարզ էր, որ արևմտահայությունը չէր կարողացել դիմել արմատական միջոցին, ձեռքից բաց էր թողել պատերազմական վիճակից օգտվելու պատեհությունը: Չէր կարողացել հետևել բալկանյան ժողովուրդների օրինակին, ուստի և չէր արժանացել անկախություն ստանալու բախտին:

Ահա այս պատճառով էլ Բաֆֆին իր «Դեռևս ուշ չէ» հոդվածում, ելնելով Սամ-Ստեֆանյոյի 16-րդ հոդվածի թելադրանքով ստեղծված իրավիճակից այս դեպքում, իր ողջ գործունեության ընթացքում միայն այս անգամ իր ցանապատությունը տալիս է վերևից եկող ազատությանը և քննարկման առարկա է դարձնում մեղմործական միջոցին դիմելու և այդ հնարավորությունից օգտվելու անհրաժեշտությունը:

³ Բաֆֆի, Երկրի ժողովածու, հ. XI, Ե., 1991, էջ 37-39:

Ըստ Րաֆֆու կողմից այս հոդվածում զարգացրած տեսակետի՝ մեր գործական միջոցով ժողովրդի կարիքները, մրանց իղծերն ու ծայրը աշխարհի առաջ կազմվում ու լսելի են դարձվում «թարձր կենտրոններում»՝ մայրաքաղաքներում, ուր գտնվում են ժողովրդի ավելի զարգացած ու գործունյա դասերը»⁴։ Հենց այս մկատառով էլ Րաֆֆին իր հոդվածում քննարկման առարկա է դարձնում հայ հասարակական կյանքում գոյություն ունեցող «զարգացած ու գործունյա դասերի» որպիսությունը, որոնք պետք է հաճախ առնեին ժողովրդի իղծերի իրականացման խնդիրը, վերևից եկող ազատության պայմաններում։ Բազմակողմանիորեն վերլուծելով յուրաքանչյուր «կուսակցության սոցիալ-տնտեսական շահագրգռվածությունն ու հեռավորումը» և պարզելով դրանց քաղաքական դիրքորոշումը, Րաֆֆին տեսնում է, որ պոլսահայ «խոշոր քուրճուազիան, ամիրայությունը ամուր թելերով կապված են վերահսկվի հետ և մրանց շահը թելադրում է միշտ կանգուն տեսնել թուրքիային իր կառավարության անկարգ այլանդակության մեջ»⁵։

Ելնելով տազմապ հարուցող վիճակից՝ Րաֆֆին կոչ է անում օգտվել միակ հեռավոր միջոցից, պահանջել վարչական ինքնավարություն և գտնում ու ընդգծում է, որ խնդրին մասն լուծում տալու համար «Դեռևս ուշ չէ»։

Րաֆֆու այս հոդվածից կարճ ժամանակ անց, դիվանագիտական խաղերի արդյունքում, անգլիական ու թուրքական կառավարողների կողմից մոտից է ասպարեզ մետվում Հայաստանի ինքնավարության գաղափարը։ Կ. Պոլսի Պատրիարք Ներսես Վարժապետյանը, Ազգային ժողովից կորզելով Հայաստանի համար վարչական ինքնավարություն պահանջելու իրավունք, հապճեպորեն ստեղծում է պատվիրակության երկու խումբ։ Խորեն Գալֆայանը (Նար-Պեյ) և Իգմիրյանը մեկնում են Ռուսաստան, իսկ Մկրտիչ Խրիմյանի գլխավորած պատվիրակությունը ուղևորվում է Եվրոպա՝ Հայաստանի վարչական ինքնավարության ծրագիրը Բեռլինի կոնգրեսին ներկայացնելու համար։

Ոգևորությունը մեծ հորձանք էր տվել, որպես ինքնավարության կառավարիչ-մահաճգապետ առաջ են քաշում Ստ. Ասլանյանի, Լորիս-Մելիքյանի, Մելքոն Խանի, Նուբար Փաշայի և այլոց թեկնածությունները։

Րաֆֆին հասարակական կյանքում տեղի ունեցած այս դեպքերին արձագանքելու նպատակով ձեռք է առնում «Խաչագողի հիշատակարան» վեպի մախնական տարբերակի ձեռագիրը, անջատում և առանձնացնում է Արևմտյան Հայաստանում կատարվող գործողություններին վերաբերվող դրվագները և լրացման ու ծավալման միջոցով ընթացք տալիս «Կայծեր» վեպի գրությանը։

Ձեռնարկելով «Կայծեր»-ի գրությունը, հասկանալի է, որ Րաֆֆին այդ վեպի մեջ պետք է ներմուծեր այնպիսի գործողություններ, որոնք վիպականորեն պայմանավորում ու տրամաբանական էին դարձնում Արևմտյան Հայաստանի համար տվյալ ժամանակաշրջանում ստեղծված ու տիրապետող դարձած կացության արձագանքները։ Որքան էլ թվացյալ լինեք, անհրաժեշտ է վաղանցուկ վարչական ինքնավարություն ստանալու հույսերը, միևնույն է, Րաֆֆին չէր կարող հեռու մնալ ժամանակի առաջադրած խնդիրներից։ Ինչպես փաստարկվում է, «Կայծեր»-ի այդ տարբերակից մեզ հասած «Կայծերի վերջը»

⁴ Լույս տեսնում։

⁵ Լույս տեսնում, էջ 43։

խորագրով էպիլոգի (վերջերգի) միջոցով Բաֆֆին անտարբեր չի եղել այն գեղեցիկ հույ-
սերի ու օղեղեն ամրոցների հանդեպ, որ տիրապետում էր Թուրքիայի լծից ազատվել
ցանկացող ժողովրդի մեջ Սամ Ստեֆանոյից մինչև Բեռլինի դաշնագիրն ընկած հարյուր
երեսունմեկ օր տևող ժամանակամիջոցի ընթացքում:

Ինչպես գրում է Օթթալանգադեն, «Բաֆֆին այն ժամանակ էր ավելի ջերմ փափագ
գրում իր գաղափարներով ասպարեզ գալու, երբ հասարակական միտքը քնած չէր... Առ-
հասարակ հասարակության տրամադրությունը մեծ ներգործություն ուներ Բաֆֆու վրա...
Ինքը խնդիրներ չէր հորինում, այլ միշտ ձգտում էր հրապարակի վրա մոր զարթնած և
մտքեր հուզող խնդիրներին լուծում տալ... Նրա զիխում առաջին տեղը ամուր բռնած էր լի-
նում այդ տեմդենցիան, որը պետք է այդպես թե այնպես անցներ վեպի մեջ»⁶:

Այն պարագայում, երբ հայության մեջ լայն տարածում ուներ և տարփոփում էր վար-
չական ինքնավարության գաղափարը, բնավ էլ անտրամաբանական չէր, որ հենց այդ
օրերին էլ Բաֆֆին ձեռնամուխ է լինում «Կայծեր»-ի գրությանը: Խուսքը վերաբերվում է
վեպի նախնական տարբերակին, որի բնագիրը մեզ չի հասել և որի ամսիջական շարու-
նակությունը՝ կցորդվել է եղել Բաֆֆիագիտությանը հայտնի «Կայծերի վերջը»:

Հայության վերը ներկայացված տրամադրություններն ու ակնկալիքները, կարելի է
ասել, որոշակի դեր են կատարել այդ մույն ժամանակաշրջանում գրված «Կայծեր» վեպի
բովանդակության կազմավորման գործում: Սակայն քանի որ մեզ չի հասել «Կայծեր»-ի
այդ տարբերակի ձեռագիրը, այս վարկածը մնում է որպես տրամաբանական ենթադրույթ-
յուն, թեև այդ տարբերակի կցորդը համդիսացող «Կայծերի վերջը» վերնագրով էպիլոգը
որոշակի հիմքեր է տալիս այդ վարկածը հիմնավորված համարելու համար:

Հայտնի է, որ Աննա Բաֆֆին, ամուսնու ձեռագրերի մեջ հայտնաբերելով Բաֆֆու այդ
շրջանում գրած «Կայծերի վերջը», 1890 թվականին այն հրատարակում է Թիֆլիսում:

Այստեղ պայծառ գույներով է ներկայացված Հայաստան աշխարհը, հայ շինականի
խաղաղ հունի մեջ մտած և արդյունավետ աշխատանքով արգասավորված բարեկեցիկ
կյանքը: Դազմիրան գյուղում իշխանական ամրոցի փլատակների դիմաց «Կայծեր» վեպի
գլխավոր կերպարներից մեկը՝ Կարոն, կառուցել է իր քարաշեն տունը և կազմել մի համե-
րաշխ ընտանիք: Արյան հետ խաղացող մարդը Սամ Ստեֆանոյի 16-րդ հոդվածի շնոր-
հիվ տրված արտոնության միջոցով այժմ զբաղվում է խաղաղ աշխատանքով: Ազատույթ-
յուն է ստացել Դիմրովիների ամրոցում գերված մրա կինը՝ ամրոցի աղջիկ Ասլին: Այժմ
նա մի շինական խաղաղ գերդաստանի ժրաջան տանտիկինն է:

Հաղթելով ապրում է որսորդ Ավոն: Նա իր գնած հողատարածությունը դրել է գյու-
ղական համայնքի տրամադրության տակ և ինքը դարձել այդ համայնքի համեստ անդամ-
ներից մեկը: Նրա փեսան՝ Ֆարհադը, ձիաքուծական ֆերմա ունի. իր կնոջ՝ Մարոյի հետ
ապրում է խաղաղ ու բարեկեցիկ կյանքով: Արյունոտ Հաղթակը դարձել է խաղաղ ու
բախտավոր մի երկիր, ուր շինականի թե՛ կայքը, թե՛ կյանքը ապահովվում էր, հասկանա-
լի է, վարչական ինքնավարության շնորհիվ:

Վան քաղաքում խոջա Թորոսի հին կրպակը դարձել է եվրոպական տիպի առևտրա-

⁶ Եփրվանզադ և. երկերի ժողովածու, հ. VIII, Ե., 1961, էջ 474-475:

կամ տուն, զարգացել է տեղական մանուֆակտուրային արդյունաբերությունը: Բերգեն օղիի դարձել է շոգենավային ընկերության առկամ և զբաղվում է բեռնափոխադրությամբ:

Վերացել է երկյուղն ու ազգամիջյան թշնամանքը: Հայերն ու քրդերը դարձել են լավ դրացիներ, քուրդ Աղասի բեկը հյուր է լինում Կարոյի տանը, մահմեդականները քրիստոնյաներին հանդիպելիս մի քանի քայլ հեռվից հարգալից ողջունում են միմյանց: Վերացել է նախկինում եղած ատելությունը, թալանն ու ավարառությունը: Վաճում փաշայի պալատի մեջ մատած է քրիստոնյա մահաճգապետ և այլն:

Այս էպիլոգի վերջին՝ Ե զլուխը մկիրված է Համրին: Հայտնի է, որ Բաֆֆին Համրի կերպարի ներքո մկատի է ունեցել Միքայել Նալբանդյանին: Քանի որ «Կայծերի վերջը» կցորդում, թերևս նաև «Կայծեր» վեպի այդ տարբերակի մեջ գործողության զարգացումն ընթանում էր վերևից տրված ազատության պայմաններում, վարչական ինքնավարության կողմից, և ապա քանի որ այնտեղ՝ Վանի փաշայի պալատում մտած էր քրիստոնյա մահաճգապետ, հասկանալի է, որ այս հայեցակարգի ենթատեքստում Համրի՝ Միքայել Նալբանդյանի մասնակցությունը վեպի գործողությունների ոլորտում կարող էր մերձակ իրավիճակ ստեղծել, ուստի Բաֆֆին մտածված կերպով Համրին դուրս է հանել կենդանի մարդկանց միջավայրից և հանդես է բերում մահացած վիճակում: «Կայծերի վերջում» Ասլանն ու Ֆարահը որպես հարգանքի տուրք այցելության են գալիս նրա շիրմին:

Պետք է ենթադրել, որ այդ բոլոր դրվագների վիպականացված մկարագրությունը րաֆֆիական պատկերավորման միջոցով իրենց արտացոլումներն են ունեցել նաև «Կայծեր»-ի մեզ չհասած տարբերակի ձեռագրում: Մյուս կողմից, պետք է ենթադրել, որ այս վերջերգի գոյությունը հաջողությամբ փաստական է դարձնում նաև վեպի գրված և ավարտված լինելը: Այսուհանդերձ, պետք է խոստովանել, որ վեպի այդ տարբերակի մասին, էպիլոգից բացի, ուրիշ ոչինչ չի հասել մեզ, բացի նրանից, որ, ըստ հեղինակի հավաստիացման, վեպը «սկսվել ու ավարտվել է Ասլանով»:

Սա՞ն Ստեֆանոյի դաշնագրի կնքումից ընդամենը մի քանի շաբաթ անց քրդերի ասպատակություններն ու ավարառությունները Արևմտյան Հայաստանի այլևայլ վայրերում, ցույց տվեցին, թե կյանքի ու կայքի ապահովության ինչպիսի երաշխիքներ կարող էր ստեղծել այդ դաշնագրի 16-րդ հոդվածը:

Ազդվիսում գտնվող Բաֆֆին այս դեպքերից հետո շտապում է ավարտին հասցնել «Ջալալեդդին» վիպակի գրությունը՝ ասելու համար, որ Սա՞ն Ստեֆանոյում ստորագրված պայմանագիրը չի կարող Հաղբակի ու Ալաշկերտի, Վանի ու Մուշի հայության համար ապահովության կայուն երաշխիքներ ստեղծել, եթե արևմտահայությունը չկարողանա գեներ ձեռքին դիմակայել իր աշխատանքի վաստակը հափշտակողներին:

Այս վիպակի հրատարակման միջոցով Բաֆֆին ընդգծում էր անձնապաշտպանության կիրառման անհրաժեշտությունը մույմիս 16-րդ հոդվածի իրականացման պայմաններում: Արևմտահայության կյանքում անձնապաշտպանության կարևորության բացահայտումը, իհարկե, Բաֆֆու հղացումն ու մեծաշնորհը չէր, սակայն վիպական գործողության միջոցով այդ պաշարի ընթացքի վրա ազդելու, այն բորբոքելու հարցում Բաֆֆու ունեցած դերը տվյալ ժամանակահատվածում և՛ կարևոր էր, և՛ բացառիկ ու անհրաժեշտ: Պետք է ընդգծել, որ Սա՞ն Ստեֆանոյի դաշնագրից հետո Արևմտյան Հայաստանում

տեղեցված իրավիճակի պայմաններում Րաֆֆու կողմից «Ջալալեդդին» վիպակի հրատարակությունը ո՛չ միայն ժամանակին էր, այլև խիստ կարևոր ու մեծ տրամաբանված:

Սամ Ստեֆանյոյի դաշնագրի կնքումից հարյուր մեկ օր հետո, 1878 թվականի հունիսի 1-ին, Գերմանիայի կանցլեր Բիսմարկի մախազահությամբ տեղի է ունենում Բեռլինի միջազգային կոնգրեսի բացումը:

Ծուրջ մեկամսյա գործունեության ընթացքում Բեռլինի կոնգրեսում քննարկվում է Սամ Ստեֆանյոյում կնքված հաշտության պայմանագիրը և ի վնաս հայ ժողովրդի, հուլիսի 1-ին, 16-րդ հոդվածը փոխարինվում 61-րդ:

«Բարձրագույն դուրս, - ասված է 61-րդ հոդվածում, - պարտավորվում է առանց ուշացմելու, հայկական մարզերում գործադրել տեղական պահանջներից բխող բարեկարգություններ ու ռեֆորմներ և ապահովել հայերի անվտանգությունը չեղքեզներից ու քողերից: Այդ նպատակի համար ձեռք առնված միջոցառումների մասին մա պետք է պարբերաբար հաղորդի այն պետություններին, որոնք պիտի հսկեն նրա գործադրման վրա»⁷:

Կոնգրեսի կազմակերպման ենթատեքստային նպատակադրումն այն էր, որ առոչինչ դարձվեն Սամ Ստեֆանյոյում Ռուսաստանի կնքած պայմանագրի միջոցով թուրքիայի տարածքում գրաված, ապա մեծ օրինականացված մվաճումները:

Բեռլինի վեհաժողովում ստեղծված կացությունից օգտվելու նպատակով Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանում և Թուրքիայի հայոց Ազգային ժողովում մախօրոք քննարկման են ենթարկում Սամ Ստեֆանյոյում կնքված պայմանագրի դրույթները և ժողովի որոշումով կազմում մի պատվիրակություն՝ խրիմյան Հայրիկի գլխավորությամբ, և ուղարկում Բեռլին՝ կոնգրեսին ներկայացնելու հայության կողմից ակնկալվող ինքնավարության ծրագիրը:

Բեռլինում խրիմյանի գլխավորած պատվիրակությանը ոչ միայն թույլ չեն տալիս մասնակցելու վեհաժողովի նիստերին, այլև երկար ժամանակ նրանց չի հաջողվում Պատրիարքի խնդրագիրը՝ Հայաստանի ինքնավարության ծրագրի մախագիծը և Հայաստանի քարտեզը ներկայացնել կոնգրեսի մախազահին:

Դեպքերի զարգացմանը քայլ առ քայլ հետևող Րաֆֆին տեսնում էր, որ վեհաժողովում շուայվող դատարկ խոստումներից բացի կար մեծ դաժան իրականություն, որի մեջ մեկը մյուսի ետևից փշրվում էին հայության հույսերը:

Սամ Ստեֆանյոյի դաշնագրից անցել էր զգալի ժամանակ, ընթացքի մեջ էր Բեռլինի կոնգրեսը, սակայն Հայաստանի տարբեր վայրերում քողերը դեռևս առաջվա մման և ամբի համարձակ շարունակում էին անպատակել անպաշտպան հայությանը:

Րաֆֆին դառնությամբ էր լսում այդ բոլորը: Այն, ինչ հիացմունք էր պատճառում միամիտներին, չէր կարող մոլորեցնել դեպքերի ընթացքը խորապես գիտակցող գրողին:

Այն պահին, երբ կոնգրեսում շարունակվում էր «Հայ ժողովրդի դատի պաշտպանությունը» վերնագիրը կրող քննարկումը, երբ անդամաճատվում էր Սամ Ստեֆանյոյի 16-րդ հոդվածը, Րաֆֆին իսպանական հայտնի երգիծաբան Մարիոնո խոսն դե Լարրայի հոդվածի հիման վրա տպագրում է «Բառեք» վերնագրով պամֆլետը «Մշակ»-ի 1878 թվականի հունիսի 22-ի համարում, ուր ասում է, թե ամեն տեղ լսվում են «խոսքեր, բառեր, աղմուկ,

⁷ Լևո, Հայկական եպոգի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 110:

խառնաշփոթություն»։ Րաֆֆին տեսնում էր, որ եվրոպական պետությունների համար հայոց հարցը դարձել է սեփական շահերի հետապնդման միջոց։

Մշտապես իր ժողովրդի ճակատագրով ապրող, նրա ազատությունը երազող Րաֆֆին չէր կարող անտարբեր դիտել, թե ինչպես արևմտյան դիվանագիտությունն աճուրդի է դրել մի ամբողջ ժողովրդի գոյության հարցը։ Այդ օրերին գործող Բեռլինի Վեհաժողովը բոլորի համար հասկանալի դարձրեց, թե որքան ճիշտ էր Րաֆֆու կանխատեսումը, թե ինչպես Վեհաժողովից հայ ժողովուրդը շահեց միայն «բառեր»⁸։

Հայոց պատվիրակությունը կոնգրես էր գնացել չափազանց համեստ պահանջներով. «Մենք քաղաքական ազատություն չէ, որ պահանջում ենք, և ո՛չ էլ երբեք ուզում ենք բաժանվել թուրքական կառավարությունից։ Մենք ուզում ենք Թուրքական Հայաստանի մի բաժնում, այն է՝ Էրզրումի ու Վանի վիլայեթներում և Դիարբեքիի վիլայեթի հյուսիսային մասում, ուր թվական առավելություն ունենք թուրքերի վրա, ինչպես ցույց են տալիս ներկայացված վիճակագրական վավերագրերը, ահա այս բաժնում, կրկնում ենք, ուզում ենք ունենալ մի հայ վալի, որ պետությունների հովանավորությամբ կարգվի Բ. Ռոնից»⁹։

Հարկ ենք համարում մեղ, որ «խնդրագրում» եղած այս «մի հայ վալի» ունենալու պահանջը և վերը Գ. Արծրունու հոդվածում «քրիստոնյա մահաճապատի» մասին եղած առաջարկը, թելադրանք են դառնում Րաֆֆու համար, որպեսզի նա իր «Հայերի վերջը» էպիլոգում գրի, որ «Փաշայի պալատի մեջ նստած էր մի քրիստոնյա մահաճապատ»¹⁰։

Ինչպես տեսանք, պատվիրակության խնդրանքն էր ոչ թե անկախություն, այլ քրիստոնյա մահաճապատ թուրքական կառավարության հովանավորության ներքո, և այսուհանդերձ նրանց այդ համեստ ցանկությունը մնում է անկատար և հայ ժողովուրդը՝ իր պահանջած ինքնավարության փոխարեն Բեռլինի կոնգրեսից որպես վարձք ստանում է քարենոդոցումների մասին ոչինչ չափող 63-րդ հոդվածը։

Հայ պատվիրակությունը պիտի վերադառնար՝ իր հետ տանելով «հայության դատը»։ Այդ օրերին Եվրոպայի կենտրոնում հնչում է արևմտահայության արդեն ուշացած ձայնը. «Հայ ժողովուրդը երբեք չպիտի դադարի աղմուկ հանել, մինչև որ Եվրոպան նրա պահանջներին զոհացում չտա»¹¹։

Արցունքն այքերին եվրոպական դիվանագիտությունից գթություն խնդրող խրիմյանը Բեռլինից իր հետ Պոլիս է բերում «Երկաթե շերեփի» պատմությունը և «Իրավունքը ուժովին է» կարգախոսը՝ խորհրդանշելով ինքնավարություն ձեռք բերելու հարցում պայքարի անհրաժեշտությունը։ «Գնա, - ասում է կոնգրեսի պահակը թղթի կտորը ձեռքին ախ քաշող խրիմյանին, - մեյն ալ եթե հերիսա բաժնվի, պատրաստ կեցիր, երկաթե շերեփը չմոռնաս»։

Կոնգրեսի պահակը նման խոսք ասել է, թե ոչ, դա այնքան էլ էական չէ, տվյալ դեպքում ո՛չ այնքան կարևոր է փաստը, որքան դրան ծնունդ տվող շարժառիթը, երբ Բեռլինի կոնգրեսից հետո տիրապետում էր պատեն առիթը բաց թողնելու ափսոսանքը և պայքա-

⁸ Ծավոթ սրբի Րաֆֆու այս սրնդազորությունը դուրս է մնացել նրա «Երկերի ժողովածուի» ավագնեմական իրադարձության 12-րդ հատորից։

⁹ Սարուխան, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 418-419։

¹⁰ Րաֆֆի, Կայսերի վերջը, Թ., 1890, էջ 31։

¹¹ Սարուխան, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 479։

որ վերականգնող ամբրածեղություն գաղափարը:

Բեռլինից վերադարձող և վեհաժողովի որոշումից դժգոհ խրիմյանը սույթանի պալատին մոտ Օրթագյուղի Գոռնգափու եկեղեցում տալիս է մի քանի ռազմաշունչ ջարդոգներ. «Հայաստանցիներ.- ասում է նա.- պատմե՛տե՛ս սիրեցեք երկաթը, ձեր փրկությունը երկաթով կլինի, այն պատվական երկաթով, որ Զեյթունի լեռներեն կելնե: Կհասկնա՞ք ինչ կույթով կլինի, այդ երկաթով ամեն բան կշինվի, խոփ, մանգաղ, սուր, հրացան և այլն: Զենք զե՛մ ասե՛լ, այդ երկաթով ամեն բան կշինվի, խոփ, մանգաղ, սուր, հրացան և այլն: Զենք գործածե՛լ սիրեցեք...»:

Հայկական հարցի, մկատմամբ եվրոպական դիվանագիտության կողմից ցուցաբերած վերաբերմունքից դժգոհ էր ու հիասթափված նաև Ներսես Վարժապետյանը, սակայն, դիրքի բերումով, նա ստիպված էր ավելի զուսպ արտահայտվել, քան այդ իրեն թույլ էր տալիս Մկրտիչ խրիմյանը:

Ազգային ժողովի հուլիսի 21-ի միստում Ներսես Պատրիարք Վարժապետյանը այսպես է փորձում բնութագրել իր գործունեությունը. «Եթե չէս կրճա ընե՛լ ինչ որ կուզես,- ասում է նա,- պետք է ընես ինչ որ կրճաս»:

Թուրքիայի վրա ճնշում գործադրելու մպատակով անգլիական դիվանագիտությունը Կ. Պոլսի իր դեսպանի միջոցով ներկայացնում է Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու կեղծված մի ծրագիր: Հետևաբար որքան սուր կեդրավ է դրվում այդ հարցը, մույնքան ակնհայտ է դառնում Բեռլինի կոնգրեսում ներկայացված ծրագրերի թերությունները և մույնքան էլ հրատապ՝ այն շտկելու և լրացնելու անհրաժեշտությունը: Բարենորոգումների ծրագրի սահմաններն ու բնույթը դառնում է օրվա ամենակարևոր մտահոգության առարկան, ուստի Բաֆֆին իր պարտքն է համարում անդրադառնալ այդ հարցին և «Մշակ»-ի 162 և 163-րդ համարներում տպագրում է «Ի՞նչ վերանորոգումներ պետք են Տաճկական Հայաստանին» վերնագրով հոդվածը: Հույսը չկորցրած Բաֆֆին այստեղ դնում է մի շարք հարցեր, որոնք պետք է դառնային բարենորոգումների համար ծրագրային առաջադրանքներ:

Հոդվածում նա կենտրոնական տեղ է հատկացնում հայ գյուղացուն հողով ապահովելու խնդրին: Նա պահանջում է վերացնել հողի պետական կալվածատիրական օրենքը, այն տալ օրինական տիրոջը՝ գյուղացուն, և ապահովել նրա բոլոր տեսակի արտոնություններն այդ հողի վրա¹²: Բաֆֆին այնուհետև պահանջում է շարիաթի միակողմանի օրենքի փոխարեն երկրի բոլոր բնակիչների համար առանց խտրության, մույնիրավ ջաղաքացիության իրավունք: Ավազակային հարձակումներից ժողովրդին զերծ պահելու, նրանց կյանքի ու կայքի ապահովությունն իրականացնելու համար Բաֆֆին առաջարկում է Զինվորական տուրքի հաշվին պահել հայկական միլիցիա՝ երկրապահ բանակ, ստեղծել հարկերը զանձող ազգային հիմնարկություն և այլն:

Եթե «Տեղեկագիր գավառական հարստահարության» վերնագիրը կրող հոդվածում նա ծաղրում է Թուրքիայի շնորհած Ազգային սահմանադրությունը, ապա այստեղ կոչ է անում ընդարձակել «Ազգային սահմանադրության» սահմանափակ շրջանակը և այն տարածել բոլոր հայաբնակ գավառների վրա: Այս դեպքում կարծես թե Բաֆֆին հակասում է

¹² Նրա այս առաջարկը, որպես նպատակադրում, փեղ է գրել «Կայծերի վրա»՝ Լալիոզում, որտեղ Ռադրո Ալոն ոչ միայն խղափրել է, այլև «իդ ունեցած փարածքը» դրել է նամակների փորագրվածության փակ:

իմքն իրեն, սակայն այդ հակասությունը արդյունք էր իրականում գոյություն ունեցող ռեալ հակասությունների ու հակադրությունների:

Ըստ Բեռլինում ստորագրված պարտավորագրի՝ մինչև 1878 թվականի սեպտեմբերի վերջը Ռուսաստանը պարտավոր էր իր զորքերը դուրս բերել Էրզրումից, Բայազետից ու Ալաշկերտի հովտից: Տասնամյակներ շարունակ Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել ցանկացող հայությունը թվում է, թե հասել էր իր նպատակների իրականացմանը, երբ զորքերի դուրս բերումը գործնականում փշրում էր նրանց բոլոր տեսակի պատրանքները: Խուճապի եմ մատնվում ոչ միայն Էրզրումի, Ալաշկերտի ու Բայազետի, այլև վանի, Երզնկայի, Մուշի ու Խնուսի հայ բնակիչները:

Նախապատրաստվող գաղթը կանխելու նպատակով Կ. Պոլսի Պատրիարքարանից Արևմտյան Հայաստան են մեկնում Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանը, Վահան և Արիստակես վարդապետները: Թիֆլիսից «Մշակ» լրագրի համաձայնագրով կարս ու Էրզրում է մեկնում նաև Րաֆֆին: Տազմապը իրոք որ մեծ էր, զանգվածային գաղթը սպառնում էր Արևմտյան Հայաստանի հայաթափմանը:

Կովկասյան բանակի հրամանատար Լազարևը գաղթականությունը կանխելու նպատակով շրջանային կառավարիչներին հղած հրահանգում, որում ասում է. «Արգելեցեք հայերին գաղթել տաճկաց հողից մեր սահմանները և եթե նոցա չհնազանդվեն ձեզ և իմընազլուխ շարժվեն, լիազոր իրավունք եմ տալիս բռնությամբ պահել նոցա, իսկ եթե այնուհետև ևս փորձեն անցնել, այն ժամանակ, ուր վրա հասաք՝ կանգնեցրեք նոցա...»¹³:

Րաֆֆին, հասարակական-քաղաքական գործչի խորաթափանցությամբ, տեսնում էր արևմտահայության առջև բացված վիճը, դրա վտանգավորությունը և ազգային միասնության կոչ անում: 1878 թվականի հոկտեմբերի երկրորդ կեսին գրողը Ագուլիսից «Մշակ»-ի խմբագրությանն է ուղարկում «Մարդը գոյության կռվի մեջ» խորագիրը կրող ուսումնասիրությունը: Փոքր-ինչ ուշ գրած նամակում Րաֆֆին բացատրում է, թե ինչ վիճակ է սպասում արևմտահայությանը. «... Թուրքիայի այժմյան քաղաքականության փոփոխությունից հետո, և թե մրցության մեջ նրանք ինչ դեր կարող են խաղալ անգլիացիների հետ զարկվելով, և որ ամենագլխավորն է, ի՞նչ զենքեր, ի՞նչ պատրաստություն պիտի ունենա Թուրքիայի հայը, որ չընկնի գոյության կռվի մեջ»¹⁴:

Բազմակողմանիորեն քննելով գոյության կռվի հարցը՝ Րաֆֆին եզրահանգում է, որ կյանքում «ամխիղճ անցուղի, իր շահերի համար ուրիշին խեղդող, միշտ առաջ է գնում և հաղթող է հանդիսանում»: Իսկ եթե մի ազգ կամ անհատ ցանկանում է չոչնչանալ գոյության կռվի մեջ, ապա, ըստ Րաֆֆու, նա պետք է «իր գործունեության ձևերը փոփոխե ժամանակի և հանգամանքների համեմատ»: Գոյության կռվում չոչնչանալու և հարատևելու համար, որպես պայման, Րաֆֆին առաջարկում է «մանաչել ժամանակի պահանջները» և «ժամանակի քաղաքակրթությանը համեմատ լինել զարգացած»¹⁵:

Բեռլինի կոնգրեսից հետո, ինչպես տեսանք, հայ ժողովուրդը ապրում է խորը միասնափոխություն: Մտավորականության առաջավոր թևը սկսում է մեծ նշանակություն տալ սե-

¹³ «Մշակ», 1878, № 170, 5 եռլեւնմբերի:

¹⁴ Մշակ», 1878, № 189, հ. XI, Ե., 1991, էջ 96:

¹⁵ Րաֆֆի, երկերի ժողովածու, հ. XI, Ե., 1991, էջ 96:

փական ուժերի միավորման ու համահամըման գաղափարին, որոնում սթափվելու միջոց-
փական ուժերի միավորման ու համահամըման գաղափարին, որոնում սթափվելու միջոց-
ներ և բազմակողմանի առնչությունների մեջ սկսում քննել ինչպես իրենց հայցած վարչա-
կան ինքնավարությունից զրկվելու պատճառները, այնպես էլ ձգտում նախապատրաստ-
ված դիմակայել սպասվող իրադարձություններին: Որքան խորն էր գիտակցվում պայքա-
րի պատեհի պահը կորցնելու պատճառները, այնքան ավելի ծավալում տեսք են ընդունում
որի պատեհի պահը կորցնելու պատճառները, այնքան ավելի ծավալում տեսք են ընդունում
մի նոր ապագայի համար ձեռնարկվող գործողությունները, և այնքան ավելի արմատա-
կան Ռիմքի վրա է դրվում ապագայում նախապատրաստված լինելու գործը:

Այս նպատակադրումն իրականացնելու հիման վրա, Բեռլինի կոնգրեսի պատճառած
հիասթափությունից հետո, Բաֆֆին նոր իմաստավորում է հաղորդում իր ինչպես հասա-
րակական ու քաղաքական գործունեությանը, այնպես էլ գեղարվեստական ստեղծագոր-
ծությունների ու հրապարակախոսական հոդվածների ներքին բովանդակությանը:

Բաֆֆի ստեղծագործողի արժանիքներից մեկն էլ այն էր, որ նա կարողանում էր ոչ
միայն համաքայլ ընթանալ ժամանակի առաջադրած հասարակական-քաղաքական մոր
խնդիրներին, այլև ինքն էր կատարում նորանոր հարցադրումներ և աշխատում արդյունա-
վետ ուղու վրա դնել և գրականության միջոցով ընթացք տալ իր առաջադրած տեսակետ-
ներից, որի արտահայտությունը պետք է համարել նաև նրա «Ի՞նչ կապ կա մեր և Տաճ-
կաստանի հայերի մեջ» խորագրով հոդվածը և «Կայծեր» վեպի մեջ նրա կատարելիք մոր
և արմատական փոփոխությունները: Ելակետ դարձնելով այս հոդվածում բարձրացված
դրույթները՝ Բաֆֆին վերամշակման է ենթարկում «Կայծերը»: Նա վեպի նախնական
տարբերակից դուրս է թողնում այն գործողություններն ու դրվագները, որոնք այս կամ
այն չափով կապված էին դիվանագիտական ճանապարհով ձեռք բերվելիք վարչական
ինքնավարության հետ: Հանում է նաև այդ գաղափարի գովքն ու հետևանքը հանդիսա-
ցող «Կայծերի վերջը» վերնագրով էպիլոգը՝ վաճի փառալի պալատում նստած քրիստոնե-
յա նախնականների մասին հատվածի հետ միասին: Ելակետ դարձնելով անընդհատ նա-
խապատրաստվելու ծրագիրը՝ Բաֆֆին ձեռնարկում է «Կայծեր»-ի վերամշակման աշ-
խատանքը և որոշում գեղարվեստական լայնակտալ ստեղծագործության միջոցով տալ
ամենքին զբաղեցնող «Ի՞նչ անել» հարցի պատասխանը:

Բազմակողմանիորեն ուսումնասիրած լինելով արևմտահայության կյանքի սոցիալ-
տնտեսական, քաղաքական ու հոգեբանական «հիվանդություններն իր բոլոր փտեցնող,
օրհստօրե լուծարող և քայքայող կողմերով», Բաֆֆին «Կայծեր»-ի այս նոր տարբերակի
մեջ, իր իսկ բնորոշմամբ, «ցույց է տալիս այն դարմանները, որոնցով պետք է բժշկել հի-
վանդին: Այդ դարմանները գուցե շուտով չեն օգնի, գուցե առաջին անգամ բոլորովին
անհաջող կանցնեն, բայց դրանով պետք չէ հուսահատվել... Դարավոր հիվանդությունը
մի ժողովրդի կյանքի մեջ երկարատև բժշկության պետք ունի... Դարմանները փորձված
են: Այդ հիվանդությունն ունեցող ժողովուրդները միշտ դիմել են այդ դարմաններին»:

Ստեղծված նոր իրավիճակում Բաֆֆու համար այլևս պարզ էր, որ հայ ժողովրդի
կյանքում տեղի է ունեցել ճակատագրական՝ ձեռքից քաց է թողնվել Ռուս-թուրքական
պատերազմից օգտվելու պատեհությունը, սակայն նա կատարված իրողությանը նայում է
որպես հեռատես քաղաքական գործիչ, ուստի «Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի
մեջ» վերնագրված հոդվածում Բաֆֆին այն տեսակետն է զարգացնում, որ անհաջողությո-

յունը մի ժողովրդի կյանքում ունի նաև իր օգուտները, որ նրան զգալ է տալիս իր թերութ-
յունները և մատնամշում դրանց վերացման ուղիները:

Մարդերով Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի մեջ ոսկու հանք որոնողներին՝ Րաֆֆին շարունակում է. «Մենք մեկ հանք ենք ճանաչում, որից կարելի է ստանալ ցանկացած ոս-
կին, եթե այդ հանքն անդադար և անընդհատ կերպով կքո՛վագործվեր. դա կոչվում է մա-
խապատրաստություն: Եվ Տաճկաստանի հայոց խմորը պետք է կայանա այսուհետև
անդադար և անընդհատ մախապատրաստության գործի մեջ, որպեսզի նրանք կազմ ու
պատրաստ հանդիպեն այն մեծ օրվան, երբ կրկին անգամ կգարկե ազատության ժամը:
Իսկ այդ օրը կկրկնվի և շատ անգամ կկրկնվի...» (ընդգծումը - իս. Ս.):

Ժողովրդին նոր ապագայի համար մախապատրաստելու ծրագրային խնդիրը Րաֆֆի
վիպասում ու հասարակական-քաղաքական գործչի համար դառնում է ստեղծագործա-
կան մտասեռում, և մա այդ ոգով ընթացք է տալիս նաև «Կայծեր»-ի նոր տարբերակի վե-
րանայման աշխատանքներին:

Րաֆֆին նախ մերժել է համարում 1878 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթաց-
քում գրած «Կայծերի վերջը» խորագրով էպիլոգը, վաճում փաշայի պալատում նստած
քրիստոնյա մահաճապետի հետ միասին և ապա գալով ոչ ցանկալի հետևության, վերըս-
տին դառնում է բալկանյան ժողովուրդների, հատկապես թուղարների կիրառած փորձի
ընդհանրացման զանափարհից և շարունակելով խորացնում է նրանց կիրառած փորձի
տեղայնացումը հայկական միջավայրում, վեպը մաքրում է բոլոր այն հավելվածներից,
որոնք թեմատիկ առումով ինչ-որ չափով կարող էին առնչված լինել 16 և 61-րդ հոդված-
ներում արծարծված հարցադրումների հետ:

Այս նույն առիթով Րաֆֆին դիմում է նաև մի այլ ծայրահեղ թվացող քայլի...

Վեպի «Աստղաբերդ» գլխում Ֆարհադի հետ տեղի ունեցած խոսակցության ընթաց-
քում Ասլանը կատարում է ուշադրության արժանի մի ընդհանրացում. «... Եթե մեր բարե-
կամները, - ասում է նա, - իրենց գործունեության մեջ որևէ սխալ են գործել, այդ առաջ է
եկել նրանց մեջ՝ եռանդի չափազանցությունից և գիտության պակասությունից... նրանք
իրենց ձգտումներին հասնելու չափ գիտությունն չեն ունեցել... առանց հիմնավոր գիտու-
թյան մարդը չէ կարող օգուտ բերել ո՛չ իր ազգին, ո՛չ իր հայրենիքին, ո՛չ մարդկության-
ը»¹⁶ (ընդգծումն իմն է - իս. Ս.):

«Հանի որ Րաֆֆին ցանկանում էր, որ հայ ժողովուրդը կարողանար թուղարների օրի-
նակով տեղ կանգնել իր անկախությամբ՝ իրականացնել անընդհատ մախապատրաստ-
վելու ծրագիրը, ուստի «Կայծեր»-ի երկրորդ հատորում ժամանակի հայության հավաքա-
կան կերպար հանդիսացող Ֆարհադին դուրս է բերում մախկին միջավայրից և տանում
Տարոն:

«Ֆարհադ, - ասում է Ասլանը նրան, - գիտությունը գլխավոր ուժն է, որ... տնօրինում է
մարդու կայուն բարին, նրա երջանկությունը, նրա խաղաղությունը: Բայց դու ոչինչ գի-
տություն չունես... Քո մեջ պակասում է ամենահասարակ զարգացումն անգամ... եթե դու
զարգանաս, կարող ես օգտակար մարդ լինել: Այսօր տանելու եմ քեզ մի վանք, այնտեղ

¹⁶ Րաֆֆի. Երկերի ժողովածու, հ. VI, Ե., 1986, էջ 411:

Եվ այսպես. 1904 թվականին «Կայծերի» երկրորդ հատորը Վիեննայում լույս է տեսնում 27 էջ ծավալ ունեցող «Կայծերի վերջը» խորագիրը կրող տեքստի կցորդումով:

1904 թվականին հետո Րաֆֆու «Կայծեր»-ի երկրորդ հատորը, մինչև այսօր, լույս է տեսել ևս վեց անգամ: Ծավալի է սակայն, որ հետագա բոլոր հրատարակիչները փոխանակ հենվելու Րաֆֆու կողմից 1887 թվականին տպագրած կանոնիկ բնագրի վրա, հավատացել են Աննա Րաֆֆու կողմից ներառված հավելումներին և այնուհետև «Կայծեր»-ի հետագա բոլոր վեց հրատարակությունները¹⁸ լույս են տեսել մրա կատարած այս փոփոխություններով:

1986 թվականին Րաֆֆու «Երկերի ժողովածուի» ակադեմիական հրատարակության վեցերորդ հատորը լույս ընծայելուց առաջ գիտակցվում է Աննա Րաֆֆու կատարածների ոչ գիտական լինելը և ակադեմիական հրատարակության թելադրանքով «Կայծերի վերջը» անջատվում է վեպի կանոնիկ բնագրից:

Ծանոթագրությունների մեջ ստեղծվում է Հավելված խորագրով բաժինը և որպեսզի հետազոտողների համար մատչելի դառնան «Կայծեր»-ի հետ կապված տարբերությունները, մորից ակադեմիական հրատարակության թելադրանքով, այդ վերնագրի տակ զետեղվում են ոչ միայն «Կայծերի վերջը», այլև Րաֆֆու կողմից «Կայծեր»-ի առիթով, տարբեր ժամանակներում, կատարված բոլոր տեսակի գրառումները:

¹⁸ Աննա Րաֆֆու խնդարյուրած հավելումով Րաֆֆու «Կայծեր»-ի երկրորդ հատորը լույս է տեսել յոթն անգամ:

ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱՐԱՀԱՄՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐՅԱՆԻ ԹԵՄԸ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914 - 1917 թթ.)

1914 թ. օգոստոսի սկզբին պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը: Այն մինչև այդ երբեք պատերազմներից ամենաահավորն էր, որը մեծագույն չարիք էր մարդկության, մանավանդ հայ ժողովրդի համար: Այդ պատերազմն իր բացասական հետևանքները թողեց մեկ արցախաբայության հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքի վրա: Զորակոչվեցին և ռազմաճակատ ուղարկվեցին հազարավոր հայ երիտասարդներ, որոնց զգալի մասը չվերադարձավ պատերազմից: Արցախի բուլջակների օրգան «Նեցուկ» թերգզալի մասը չվերադարձավ պատերազմից: Արցախի բուլջակների օրգան «Նեցուկ» թերգզալի մասը տվյալներով՝ միայն Շուշիի գավառից ռազմաճակատ էին մեկնել 7728 տղաթի թերած տվյալներով՝ միայն Շուշիի գավառից ռազմաճակատ էին մեկնել 7728 տղաթի թերած տվյալներով: Երկրամասի տղամարդկանց 50 տոկոսը¹:

Արցախում հողը մնացել էր անմշակ: Եթե Վարանդայի ու Խաչենի գավառներում պատերազմի մախթալային ցանկել էր 15438 դեպատին հող, ապա 1916 թ. այն կրճատվել էր 33,6 տոկոսով: Նույն վիճակն էր տիրում մեկ մյուս գավառներում:

Պատերազմի տարիներին հատկապես տուժեց երկրամասի արդյունաբերությունը: Փակվեցին մի շարք մետաքսագործական ֆաբրիկաներ, անասելիորեն վատացավ աշխատավորների տնտեսական վիճակը: Պատերազմի տարիներին զրկվելով մեծ թվով աշխատող ձեռքից, երկրամասը կանգնել էր քայքայման եզրին: Ավելացել էր որքերի թիվը: Այստեղ սոցիալական կյանքի պայմանները դարձել էին անտանելի: 1915 թ. հունվարի 26-ին Արցախի թեմակալ առաջնորդ Զավեն վարդապետը Գևորգ Ե Կաթողիկոսին ուղարկած մամակում նշում էր, որ «Ղարաբաղի հայ ժողովուրդը շնորհիվ ներկայ մեծ և ահեղ պատերազմի՝ տագնապալից ծանր օրեր է ապրում, մի կողմ թողած պատերազմի հետ կապուած սարսափներն ու դժուարատար պայմանները և այն, որ մա խիստ ճնշում է այլ և այլ ծանր հարկերի տակ, ապագայում գոնե մասամբ շունչ քաշելու համար հարկադրուած է մոր օրենքով սահմանուած հողերի լեռզման խնդիրը վերջացնել երկար տարիներից ի վեր իրեն մեծ ծանրութիւն պատճառող կալուածատերերի հետ, որի համար մա՝ ժողովուրդը չի խնայում մինչև անգամ իր եղած չեղածը վաճառքի հանել»:

Ըստ թեմակալի, քանի որ «կարկուտը և բնութեան այլ տեսակի պատուհասները զրկել» էին «հայ գիւղացուն ապրուստի միջոցներից և մա օրհասական պարեն հայթայթելու ու իր ընտանիքի գոյութիւն պահպանելու հնարաւորութիւն չունի, տնտեսապէս քայքայուած է և գտնուում է ողբալի դրութեան մէջ»²:

Հայ կամավորներին օգնելու և զաղթականների խնամելու համար լուրջ գործունեութե-

¹ «Նեցուկ» (Շուշի), հմր. 3, 31.08.1917:

² ՆԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2238, թ. 1:

յուն ծավալեց 1914 թ. հոկտեմբերի վերջին ստեղծված Ղարաբաղի «Եղբայրական օգնության» կոմիտեն: Այն անմիջապես Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյին փոխանցեց 500 ուռլի, մթերքներ և հագուստներ: 1914 թ. դեկտեմբերի 11-ին Ղարաբաղի հայոց «Եղբայրական օգնության» կոմիտեն Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյին՝ երկրամասում հայ-կամավորական խմբերի ստեղծման մասին ուղարկած նամակում, տեղյակ պահելով կոմիտեի ծավալած գործունեության մասին, գրում էր. «Ներկա պատմական օրերին, երբ պետք է ամեն միջոցով օգնության գալ տարագիր տաճկահայ ժողովրդի դատի պաշտպանությանը, Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը կարող է և պետք է ավելին աներ, եթե ոչ դրամով, զոհե օգնական ուժերով: Քանի որ Ղարաբաղի հայ ժողովուրդն ևս իրապես զգում է, որ ներկայումս Տաճկահայաստանում հայի ինքնուրույն գոյության խնդիրն է ասպարեզի վրա դրած և այդ հարցի հաջող լուծմանը պետք է նպաստենք բոլոր հայերս, մա չէ կարող անտարբեր մնալ հայի այս ճակատագրական թուլեին և մա պատրաստ է ամեն զոհողության հաճձն առնել և յուր մասնակցությունը ցույց տալ մեր հայրենիքի սրբազան գործին»:

Շեշտելով, որ արևմտահայության դատի պաշտպանության համար Ղարաբաղի հայությունը տվել է մի շարք ականավոր հերոսներ, վստահեցնում է, որ այսօր ևս մա պատրաստ է հեծյալ և հետևակ կամավորների գնդերով օգնության գալ Տաճկահայաստանում գործող մեր եղբայրների: Բյուրոն հույս է հայտնում, որ իր ձեռքով կազմած ղարաբաղցի կամավորների գունդը «թե՛ բարոյապես, թե՛ գործնական մասնակցությամբ մեծ նեցուն կարող է լինել ներկայումս գործող հայ կամավորների»³: Պարզվում է, որ հայկական 5-րդ հրաձգային գումարտակը, որը գլխավորում էր արցախցի գնդապետ Պավել Բեկ-Փիրումյանը, հիմնականում կազմված է եղել ղարաբաղցիներից:

Արցախցիները կարևոր ներդրում են ունեցել Արևմտյան Հայաստանից բռնագաղթվածներին օգնություն ցույց տալու գործում: Իսկ այդ աշխատանքը գլխավորում էր Արցախի թեմը: «Եղբայրական օգնության» կոմիտեի փոխնախագահ Ղազար Տեր-Ղազարյանը 1915 թ. փետրվարի 23-ին Գևորգ Ե կաթողիկոսին ուղարկած նամակում նշելով, որ փետրվարի 20-ին փոխանցել է 500 ռ., խնդրում է այն օգտագործել «յօզուտ փախստականների»⁴: Արցախի թեմակալ առաջնորդ Զավեն վարդապետը 1915 թ. մարտի 13-ին վեհափառին ուղարկած գրության մեջ հաղորդելով Օուշիի «Եղբայրական օգնության» հայկական կոմիտեի գործունեության մասին, գրում էր, որ Օուշի քաղաքի և Ղարաբաղի թեմի «գիւղական հայ ժողովուրդը ևս չէ խնայում սուղ միջոցներից լայն աջակցութիւն ցույց տալ պատերազմի դաշտում զինուորների, նոցա ընտանիքների, հայ կամավորների, գաղթականների և առհասարակ պատերազմից վնասուածների օգտին նուիրելով իր ունեցածից դրամ, տաք հագուստ, գուլպաներ և այլ տեսակի կապոցներ-ընծաներ»:

Թեմակալ առաջնորդը տեղյակ է պահում կաթողիկոսին, որ իր կարգադրության համաձայն «Եղբայրական օգնության» հայկական կոմիտեն իր հավաքած գումարներից և հանդերձներից մի մասը ուղարկում է Ա. Էմինածին՝ տաճկահայ գաղթականների համար: Նաև հայտնում է, որ շրջաբերականով կարգադրել է թեմի բոլոր գործակալներին, որոնք գյուղերում մկերներ են ժողովում և ներկայացնում կովկասի կոմիտեի Օուշիի մասնաճյու-

³ ՀԱԱ, ֆ. 288, ց. 2, գ. 1253, թ. 5:

⁴ Նոյն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1253, թ. 5:

դից՝ «յօգուտ Ռիանդ ու վիրատոր գինուորների և պահեստի գինուորների ընտանիքներից»:
Թեմակալ առաջնորդը կաթողիկոսին նաև տեղյակ է պահում, որ իր շրջաբերականի կար-
գադրությամբ նույն գործակալները ժողովել և պատերազմից վնասվածների օգտին հա-
վաքել են 528 ու 75 կ., որն ուղարկվել է Կիևին⁵:

Սովյե Արցախից չէր նահանջում: Օրինակ, 1916 թ. Զիվանջիի գավառի 250 գյուղերից
50 հայկական գյուղեր, որտեղ ապրում էին 18 հազար հայեր, տիրում էր սովյե: Վիճակը
շուրջ տուրմակում էր ծանր մնալ նաև Շուշիում: Քաղաքագլուխ Գեղասիմ Մելիք-Շահնազար-
յանի միջնորդությամբ Թիֆլիսի քաղաքային վարչությունը ուղարկում է երկու վագոն ալ-
յուր, որը եղած ծով կարիքների համար մի կաթիլ էր⁶: Ամբերրիությունն ու բնական պա-
տահարները մեծ հարված էին հասցնում Արցախի գյուղացուն:

Առաջին համաշխարհային պատերազմից առանձնապես շատ է տուժել Արցախի մշա-
կությանը: Թեմակալ առաջնորդ, հոգաբարձության նախագահ Զավեն վարդապե-
տը 1915 թ. հունվարի 26-ին Գևորգ Ե կաթողիկոսին գրած նամակում նշում էր, որ Ղարա-
բաղի համայն հայության մշակույթի ամենաբարձր հիմնարկություններից մեկը՝ թեմական
հոգևոր դպրոցը, գեթ չի մնացել պատերազմի հարվածներից: «Այն եկամուտները, շա-
րունակում է թեմակալ առաջնորդը, որ հոգաբարձություն սպասում էր պատերազմից
առաջ, այժմ շնորհիւ այն գիւղացիների ծայր աստիճան դժուարության, յոյս չկայ նոյն իսկ
սպասածի կէսն ստանալու, որովհետև նախ, որ պսակների թիւն է զգալի չափով պակա-
սել, երկրորդը գտնուում են պատերազմի դաշտում, և երկրորդ, որ գիւղերում աշ-
խատող ձեռք չկայ և ժողովուրդը վերև յիշուած այլ և այլ ծանր հիւրկերի հետ միասին
դժուարանում է միաժամանակ լիովին վճարել նաև վեհափառ Հայրապետի Ս. Կոնդակով
յատկացուած և Սրբազան սինոդով սահմանուած թեմական դպրանոցի հասոյթներ՝ սրբա-
դրամ, պսակադրում, թոշակադրում, մոմավաճառ, ծննդեան վկայագրերի տուրք և այլ ար-
դիւնք»: Թեմակալ առաջնորդ Զավեն վարդապետը խնդրում էր կաթողիկոսին թույլատրել
Գանձասարի պղնձահամքի և երկանաքարի կապալավարի՞ն գոնե որոշ ժամանակով
հատկացնել թեմական դպրանոցին⁷:

Ընդհանրապես, աստիճանաբար նվազում էր թեմի դպրոցների թիվը: Զավեն վարդա-
պետը 1916 թ. հունիսի 30-ին կաթողիկոսին ուղարկած հայտարարության մեջ նշել էր, որ
թեմի 65 դպրոցները մի կերպ յուր են գնում, հիմնականում ծխական տուրքերով և թե ար-
տաքին միջոցներով: Թեմակալ առաջնորդը վեհափառից օգնություն էր խնդրում Զիվան-
ջիի և Նուխիի դպրոցների համար⁸: «Փայլակը» 1916 թ. օգոստոսին գրում է, որ Ղարա-
բաղի թեմի բոլոր կրթական հիմնարկությունները, սկսած թեմականից և վերջացրած ամե-
նավերջին ծխական դպրոցով, գտնվում են ամենաողբալի վիճակում:

Սեփական հասոյթների բացակայությունը և պատերազմական վիճակում ժողովրդի
տնտեսական քայքայումը գյուղում ստեղծել էին այնպիսի պայմաններ, որ երկրամասի
մշակությանը հիմնարկների գոյությունը վտանգված էր մասամբ փակվելու, մասամբ էլ իր

⁵ Նույն տեղում, թ. 6:

⁶ Նույն տեղում, հմր. 63, 18.08.1916:

⁷ ՀԱՄ, ֆ. 57, ց. 2, գ. 2238, թ. 2-3:

⁸ Նույն տեղում, 1-ին մաս, գ. 1054, թ. 28:

անհախաճելի գոյությունը մի կերպ քարշ տալու: «Ղարաբաղի թեմի,- շարունակում էր թերթը,- գյուղական հայ մասսան ամառին կարիք է զգում դպրոցների, տղիտղությունների հսկայական չափով թագավորում է տակավին հայ գյուղում: Կան շրջաններ, ուր մի քանի տասնյակ գյուղերի մեջ չկա մուլմիսկ մի հատիկ դպրոց»: Թերթում այն համոզումն էր հիմնականում, որ յուրաքանչյուր մշակութային քայլ «անապայման կապված է տնտեսական հարցի հետ և այդ ուղղությամբ էլ պիտի գործել: Չպետք է հույս դնել մասնավոր մվիրատվության վրա»: «Փայլակը» առաջարկում էր դպրոցները բացելու և պահելու համար եկեղեցական կալվածքներից ստացված գումարներից կատարել հատկացումներ⁹:

Դպրոցների հարցը հաճախ դառնում էր հասարակության քննարկման առարկան: 1916 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ թեմի պատգամավորական ժողովը, որը պետք է քննարկեր նաև հոգևոր կրթական հաստատությունների հետ առնչվող մի շարք հարցեր, որոնք, իբրև թե, Ջավեն վարդապետի օրոք մնացել էին չլուծված: Սակայն պատգամավորները թեմական դպրոցի հոգաբարձուներ ընտրելուց բացի ոչ մի հարց չլուծեցին:

Ջավեն վարդապետին փոխարինած Ղարաբաղի թեմի առաջնորդական փոխանորդ վահան ծայրագույն վարդապետ Տեր-Գրիգորյանի 1916 թ. օգոստոսին Գևորգ Ե Կաթողիկոսին ուղարկած զեկուցագրից իմանում ենք, որ գալով Օուշի, իր գլխավոր հոգսերից մեկը հանդիսացել է թեմական դպրոցը, որի դրամական հաշիվները գտնվում էին անկանոն վիճակում:

Կան քաղաքային փաստեր թե՛ թեմական և թե՛ թեմի մյուս դպրոցների ուսումնա-դաստիարակչական աշխատանքների որակը ընկնելու և ցածր մակարդակի վրա գտնվելու մասին: Օրինակ, թեմական հոգևոր դպրոցի տեսչի 1916 թ. հոկտեմբերի 14-ին հոգաբարձության անունից արած հայտարարության մեջ ասված է, որ թեմականի հեղինակությունը հետզհետե ընկնում է, շրջանավարտներից շատ քչերն են մտնում բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Քաղաքներում ապրող ծննդով արցախցիներից ոմանք հաճախ կատարում էին մվիրատվություններ դպրոցական մոր շենքեր կառուցելու կամ էլ եղածները նորոգելու համար:

Նման նախաձեռնությունները արժանանում էին թեմի խրախուսանքին և աջակցությանը: Օուշիի գավառի Փիրջամալ գյուղից բաքուաբնակ Միրզա և Սարգիս Սարուխանյան եղբայրները իրենց գյուղում դպրոցական մոր շենք կառուցելու համար մվիրաբերել էին 6000 ռ., գումարներ էին հատկացրել նաև Թեմականին, Մարիամյան դպրոցին, Ռեալական ուսումնարանին, Բարեգործական ընկերության Օուշիի մասնաճյուղին և այլ հաստատությունների՝ ընդամենը 37 հազար ռուբլի:

Ընդհանրապես, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արցախի թեմը մեծ աշխատանք է կատարել երկրամասի շատ կնճոտ հարցեր դրականորեն լուծելու համար, այդ թվում և երկրամասի ուսումնականության հիմնախնդիրները:

⁹ «Փայլակ», հմր. 64, 21.08.1916:

ՌՈՒԶԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ

ԵՊՏ Ռումանական բանասիրության ամբիոնի դասախոս

ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ

18-րդ դարում Արևմտյան եվրոպայում առավել խորացավ անցյալն ու արտոնյալ դասի և մոր սոցիալական ուժերի միջև, որոնք առաջ էին եկել կապիտալիստական տնտեսության զարգացման արդյունքում: Տնտեսական, սոցիալական, քաղաքական խորացող հակամարտության արդյունքն էր 1789 թ. ֆրանսիական հեղափոխությունը: Աճող դասային անհավասարության դեմ պայքարը սնվում էր լուսավորիչների գաղափարներից, որոնց շնորհիվ 18-րդ դարը համարվում է բանականության և լուսավորության դար: Վոլտերի, Դիդրոյի, Ռուսոյի, Դ'Ալամբերի կողմից ստեղծվում է Հանրագիտարանը, որի ուղղվածությունը մարդասիրությունն էր: Լուսավորական գրականության բնութագրական առանձնահատկությունը ևս հումանիզմն է, ինչպես նաև այն հեղափոխական էր ու դեմոկրատական: Լուսավորականության հասարակական իդեալը ազատ մարդն է, անհատի և հասարակության շահերի մերձացվածությունը: Հումանիզմի էությունը ձևակերպվում և արտահայտվում է «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսով:

18-րդ դարում կինը չուներ ունի ու երաշխավորված իրավունքներ: Կնոջ ունեցած դերի շուրջ քննարկումները սկսվում են կանանց հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների հետ: Ֆրանսիական հեղափոխության մախոթեին կանայք գործում կերպով մասնակցում էին հասարակական կյանքին, ձեռք բերելով և որոշակի տնտեսական ինքնուրույնություն: Ռամկավարումներն ազատորեն այցելում էին հասարակական վայրեր, իսկ ազնվական տիկնայք իրենց սալոններից ղեկավարում էին պալատական կյանքը, մասնակցում հոգևոր, գիտական, գրական, փիլիսոփայական հարցերի քննարկմանը: 1789 թ. ֆրանսիական հեղափոխությունից հետո ֆրանսուհիները մի հանրագրով դիմեցին Կոնվենտին, որպեսզի կանանց իրավունք տրվի մասնակցել երկրի հասարակական կյանքին, իսկ նախագահող Թալեյրանը տվեց խուսափողական պատասխան: 1789 թ. հեղափոխությունն ազդարարեց, որ թուր մարդիկ ծնվում են ազատ և ունեն հավասար իրավունքներ: Բնականաբար, ասվածը վերաբերվում էր և կանանց, որոնք առաջադրեցին կանանց աշխատանքի ու կրթության, ինչպես նաև ընտանիքում և հասարակության մեջ հարգանքի և հավասարության հարցերը:

18-րդ դարում կանանց քաղաքական ու քաղաքացիական պահանջները ճանաչում չգտան, թայց հենց այդ ժամանակ էլ ծագեց կանանց քաղաքական և քաղաքացիական իրավունքների պաշտպանության շարժումը՝ ֆեմինիզմը: 1848 թ. Ամերիկայում կայացած կանանց իրավունքների առաջին համաժողովի մշտնաբանն էր՝ «Տղամարդիկ և կանայք հավասար են թե՛ սոցիալական, թե՛ իրավական տեսակետից»: Առաջին ֆեմինիստումները պահանջում էին աշխատանքի հավասար հնարավորություններ, բողոքում էին ընդդեմ հագուստի ընդունված ոճի, կրոնի պարտադրած սահմանափակումների, ամուսնության մեջ անիրավահավասարության, «իսկական լեռի» կարծրատիպի դեմ, որը կնոջը կապում

էր գլխավորապես տան և տնտեսության հետ:

Ֆեմինիզմի գաղափարներն առաջին անգամ շարադրվել են 1789 թ. Օլիմպիա դը Գուիժի «Կնոջ և քաղաքացու իրավունքների խոչանակություն» և 1792 թ. Մ. ֆոն Գիպպելի «Կանանց քաղաքացիական իրավունքների բարելավման մասին» գրքում: «Հռչակագիրը» դարձավ ֆեմինիզմի առաջին քաղաքական փաստաթուղթը, որտեղ հեղինակը պահանջում էր, որ մարդու իրավունքները կանանց և տղամարդկանց վրա տարածվեն միատեսակ, որովհետև կինը տղամարդուց պակաս ընդունակ չէ հանդես գալու որպես հիմնական քաղաքացիական իրավունքների՝ ազատության, սեփականության տնօրինման, բռնակալությանը դիմադրելու լիիրավ սուբյեկտ: Այդ ոլորտում միակ խոչընդոտն ուժեղ սեռի բռնությունն է: Բնության և բանականության օրենքները կոչված են կնոջը պաշտպանելու այդ բռնությունից և սահմանելու օրենքի առաջ երկու սեռերի հավասարությունը¹:

Գերիշխող է այն կարծիքը, որ կանանց շարժումը որպես սոցիալ-քաղաքական երևույթ, սկիզբ է առել 19-րդ դարի կեսերին, թեպետ իր արմատներով այն ձգվում է մինչև 16-րդ դարը: Այդ ժամանակ կանանց ընդլվզումները կրում էին անհատական բնույթ և հասարակության կողմից կնոջ համար սահմանված վարքագծի խիստ նորմերի պատասխան արձագանքներն էին: Աստիճանաբար կանանց շարժումը ձեռք բերեց կոլեկտիվ բողոքի բնույթ, սակայն այդ շարժումներին կանայք մասնակցում էին մույն դրդապատճառներով, ինչ որ տղամարդիկ: Կանանց առաջին ելույթներն ուղղվեցին հարցեր առաջ չէին քաշում և պայմանավորված էին զուտ բարոյա-կրոնական դրդապատճառներով: Նրանք պայքարում էին ստրկության դեմ և հանուն օջախի և ընտանիքի պաշտպանվածության: Աստիճանաբար առաջ քաշվեցին մոր գաղափարներ՝ ընտրություններում ձայնի իրավունքի, գործազուրկների պաշտպանության, ընչազուրկ խավերի կրթության և այլն: Որպես կազմակերպված քաղաքական շարժում այն ձևավորվեց 19-րդ դարասկզբին. ԱՄՆ-ում 1840 թ., Անգլիայում՝ 1850 թ., Ֆրանսիայում և Գերմանիայում՝ 1860 թ., Սկանդինավյան երկրներում՝ 1870-80 թթ.: Այդ ժամանակ առաջացավ «ֆեմինիզմ» տերմինը, որը լատիներեն «fe'mina» կին, բառից է և տղամարդկանց հետ կանանց իրավահավասարության համար շարժման անվանումը:

Շարժման սկզբնական փուլերի խնդիրն էր՝ կանանց ընտրական իրավունքի ձեռքբերումը: Այդ պատճառով էլ շարժման անդամներին անվանում էին սուֆրաժիստներ (suffrage՝ ձայնի իրավունք): Սուֆրաժիզմը ծագել է Անգլիայում 19-րդ դարի երկրորդ կեսին, ապա տարածվել է ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում և այլ երկրներում: Ընտրական իրավունքը նվաճվեց իսկոն-ում, Բելգիայում, Գերմանիայում, Կանադայում, ԱՄՆ-ում, Լեհաստանում 1917-22 թթ.:

Կանանց շարժման մոր ալիք սկսվեց 60-ական թթ. ԱՄՆ-ում: Բայց դա արդեն շարժում էր հանուն կանանց հավասար սոցիալական իրավունքների ընձեռման: Կանանց հարցի և կանանց շարժման հիմքն էին կազմում թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ գաղափարա-քաղաքական գործոնները: Որքան առաջընթաց է ապրում քաղաքակիրթ մարդկությունը, և որքան զարգանում է կնոջ ինքնագիտակցությունը, այնքան մա քաղաքական ավելի է ճնշվում

¹ «Ֆեմինիզմի տեսություն և պատմություն», Երևան, 1999, էջ 449:

իր իրավագույն վիճակի և շնորհիվ դրա դեմ: Նա ելք է փնտրում թոթափելու ուժեղ սե-
ռի լուծող, ձգտում՝ դառնալ մրա ընկերը, այլ ոչ թե մրա խնամակալությամբ ապրող իրավա-
գույն մի արարած: Ֆեմինիզմը գաղափարախոսություն է և տեսություն, որն արձագան-
քում է հասարակության զենդեքային անհամաչափությանը, կնոջ նկատմամբ տղամարդու
զեքականությամբ: «Գենդեր» տերմինը առաջին անգամ գործածվել է 1968 թ. հոգեբան Ռո-
զեքականությամբ: «Գենդեր» տերմինը առաջին անգամ գործածվել է 1968 թ. հոգեբան Ռո-
բերտ Ստույենի կողմից: Գենդերի հիմքում ընկած են կենսաբանական սեռը, սեռադեքա-
բերտ Ստույենի կողմից: Գենդերի հիմքում ընկած են կենսաբանական սեռը, սեռադեքա-
յին ստերեոտիպերը՝ տարածված այս կամ այն հասարակությունում, և «Գենդեքային դիսփ-
լեյ»՝ միանձնային հարաքերություններում «առնականության» և «կանացիության» մորմե-
րի դրսևորումը:

Իբրև գաղափարախոսություն և տեսություն՝ ֆեմինիզմն իր արմատներով ձգվում է
մինչև Միշել Ֆուկոյի իշխանության փոխափախության հալեցակարգը և Ժան-Պոլ Սարտ-
րի և Սիմոնա դը Բովուարի էկզիստենցիալիստական հալեցակարգը: Մ. Ֆուկոն «կանա-
ցի» երևույթը դիտարկում էր իբրև մշակույթում բռնադատական, մարգինալ փորձառույթ-
յունների խորհրդանիշ, որի դեպքում մի սեռը լիովին վերահսկվում է մյուսի կողմից և
զրկվում սեփական մույնականության գիտակցությունից:

Այսպիսով, բոլոր հասարակությունների գոյության հիմքը սեռերից մեկի զերիշխանու-
թյան սկզբունքն է մյուսի նկատմամբ: Համանման եզրակացություն է կատարում և Ժ.-Պ.
Սարտրը իր հալեցակարգում, ինչը պաշտպանվում է մրա կնոջ՝ Ս. դե Բովուարի կողմից:
Գենդեքային կոնֆլիկտի հիմքը Ս. դե Բովուարը բացատրում է կնոջ ի սկզբանե սուբյեկտ
լինելու հանգամանքով և ուրիշի իշխանության օբյեկտ հանդիսանալու պարտադրված
դիրքով: Այդ բաժանումն արվել է դեռևս պատմության արշալույսին, երբ տղամարդուն վե-
րապահվում էր մշակույթի և հասարակության, «կյանքի իմաստը կառուցելու» դերը, իսկ
կնոջը՝ կյանքի վերարտադրության դերը:

1977 թ. տված իր «Սեռերի միապետության ավարտը» հարցազրույցում Ժ.-Պ. Սարտրը
հերքում է ֆեմինիստների արմատական գաղափարները, որոնք սկզբնավորվել էին
ԱՄՆ-ում 20-րդ դարի 60-ական թթ.: մերժելով տղամարդկանց հետ հավասարության գա-
ղափարը, և հռչակում էր բոլոր շահագործվածների ազատագրում՝ համարելով, որ մարդու
կողմից մի այլ մարդու շահագործման բոլոր ձևերից ամենադաժանը կանանց նկատմամբ
ճնշումներն են հայրիշխանական հասարակության մեջ՝ դրանց մեջ տեսնելով ոչ այլ ինչ,
քան սեռերի իշխանության սկզբունքով բաժանելու գաղափարի ընդունումը: Ֆեմինիզմից
հեռացավ մահ Ս. դե Բովուարը՝ կարծիք հայտնելով, որ ֆեմինիզմը սեփական տրամա-
բանական եզրահանգումներ անելու անկարողության հետևանքով զուրկ է կառուցողա-
կան հիմքից:

Պալքարի բոլոր փուլերում կինը փորձել է հասկանալ իր ճնշվածության պատճառը՝
զտնելով, որ ինքը ֆիզիկական, հոգևոր և մտավոր արժանիքներով օժտված կենդանի
էակ է:

Կարելի է ասել, որ կանանց իրավունքների խնդիրն ամենից առաջ արտահայտվել է
զեղարվեստական գրականության մեջ: Դեռևս 1661 թ. Մոլիերը Պալե-Ռուայալում բեմադ-
րում է «Տղամարդկանց դպրոցը», այնուհետև, մեկ տարի անց, «Կանանց դպրոցը» կատա-
կերգությունները՝ նվիրված ընտանիքի խնդիրներին: Նա գտնում էր, որ ընտանիքի կազ-

մավորման խնդրում ձեռողները չպետք է բռնաճան զավակների կամքին, ընտանիքում կի-
նը պետք է ազատ լինի, պետք է ամուսնու ընկերուհին լինի, այլ ոչ թե ստրուկը: Իսկ «Ուս-
լալ կանայք» կատակերգության մեջ կատարում է հետևյալ հարցադրումները՝ «Ունե՞մ կա-
նայք կրթության իրավունք, թե՞» նրանց տեղը խոհանոցն է, մեջարանը և մանկասենյակը»:

«Կինը 19-րդ դարում» գրքում Գոնկուր եղբայրները հետևյալ կերպ են բնութագրում
կնոջը 18-րդ դարում. «1700-1789 թթ. ընկած ժամանակաշրջանում կինը ոչ միայն իր տե-
սակի մեջ միակ զսպանակն է, որն ամեն ինչ շարժման մեջ է դնում, այլ նա թվում է քարձ-
րագույն կարգի ուժ, մտքի ասպարեզում՝ թագուհի»²:

Լուսավորիչ գրողներն ընդգծում էին, որ կինը ծնվում է մույնքան ազատ, որքան տղա-
մարդը, որ նրա բնական տվյալները բնավ պակաս կատարյալ չեն, քան տղամարդուը,
պարզապես դրանք այլ են: Վոլտերը ողջունում էր այն փաստը, որ 18-րդ դարում տարբեր
խավերի կանայք սկսում են ցուցաբերել սեփական արժանապատվության զգացում, փիլի-
սոփայությանն ու քաղաքականությանն նկատմամբ հետաքրքրություն: Վոլտերը գտնում էր,
որ կինը, ինչպես տղամարդը, ի վիճակի է կատարելու իրեն արժանի ընտրություն: Չպետք
է խնայարել նրա բնական ընտրությանը: Դիդրոն այն կարծիքին էր, որ կնոջ մվաստա-
ցած դրությունը հետևանք է որոշակի քաղաքացիական օրենքների, սովորությունների, և
որ նա կարող է ու պետք է մասնակցի հասարակական կյանքին:

Մերժելով այն մոտեցումը, որ կինը երկրորդ տեսակի արարած է, որն օրգանապես ի
վիճակի չէ տղամարդուն հավասար լինելու, լուսավորիչներն, այնուամենայնիվ, խոսա-
փեցին նրա քաղաքացիական կացության ճանաչումին: Նրանք չճանաչեցին կնոջը որ-
պես պատմության սուբյեկտի: Ժ. Ժ. Ռուսոյի 1760 թ. «Ծուլիա կամ Նոր Էլիզա» և 1762 թ.
«Էմիլ կամ դաստիարակության մասին» փիլիսոփայական-մանկավարժական վեպերում
հիմնական շեշտը դրվում է ոչ թե քաղաքական, այլ գերազանցապես հոգեբանական,
զգացմունքային առաքինությունների ձևավորման վրա: Ժ. Ժ. Ռուսոն գտնում է, որ կնոջ և
տղամարդու դաստիարակությունը պետք է լինի տարբեր՝ ըստ նրանց էության առանձնա-
հատկության: Ռուսոյի կարծիքով՝ կինը պետք է լինի հավատարիմ, լավ տնտեսուհի և հո-
գատար մայր, հնազանդ, պարտքի զգացումով տոգորված, համեստ և առաքինի, պետք է
դուր գա տղամարդուն և ենթարկվի նրա կամքին: Իսկ եթե փորձի ընդօրինակել տղամար-
դու արժանիքները, ապա կվերածվի ցածրահոգի կնոջ և կկորցնի այն հատկանիշները,
որոնք նրան դարձնում են ցանկալի ու հարգանքի արժանի: Իր վեպերում նա գովերգել է
կնոջ զգացմունքները՝ սերը, մայրությունը, կարեկցանքը, ցույց տվել, որ նա իրավունք
ունի զգացմունքներ ունենալու՝ մերժելով ավատական-դասային ամուսնությունները³:

19-րդ դարում և՛ գեղարվեստական գրականությունում, կերպարվեստում, փիլիսոփա-
յությունում, և՛ հասարակական մտքի կողմից անդրադարձ է կատարվել կնոջ կերպարին:
Հատկապես ոռմանտիկական ուղղության հետ է կապված ընտանիքում ու հասարակա-
կան կյանքում կանանց վիճակի նկատմամբ գրականության մեջ մի նոր հայացքի երևան
գալը, որն իր արտահայտությունն է գտել Ժ. Սանդի (Ֆրանսիա) և Ե. Բրոնտեի (Անգլիա)
ստեղծագործություններում: Եթե մինչ այդ կնոջ ֆեմինիզմի թացահայտվում էր

² Иллюстрированная история нравов. Гельмгольцск. М., 1994 г., стр. 67.

³ «Ֆեմինիզմի տեսություն և պարմություն», 19 345:

«Ինդիանա» վեպում մի երիտասարդ կնոջ անձնական դրամայի պատմությանը մե
ընդվզում է շահախնդրության, դասային ամուսնությունների, կնոջ ցկատմամբ գործադրվող
ճնշումների դեմ, առաջադրում կանանց ազատագրության հարցը: Ինդիանան գիտակցա-
բար պայքարում է բարոյական պարտադրանքի և շահախնդիր, կեղծ բարեպաշտության
դեմ: Ժ. Սանդը ցանկանում է կանանց լիակատար երջանկություն ամուսնության մեջ:
Նրա հերոսուհիները զրականության մեջ կանանց կերպարների մոր տիպ են՝ ընդվզող,
ազատատենց, իրենց անձի կարեկրության գիտակցությանը, կիրք, զգայուն: «Վալենտի-
նա» վեպի հերոսուհին սիրո մեջ չի ճանաչում ոչ մի պայմանականություն: Ժ. Սանդի ստեղ-
ծած կնոջ ավելի քարո և դրամատիկ կերպար է Լեյիան՝ համարում վեպից: Նա հիաս-
թափված է կյանքից, մարդկանցից, մուլենիս չի պայքարում, ունի չափազանց հարուստ և
առեղծվածային մեղաշխարհ: Նա առանձնանում է աշխարհից, մարդկանցից:

Ժ. Սանդի վաղ շրջանի ստեղծագործությունները մեծ ազդեցություն են թողել հայ առաջին վիպասանուհի և կնոջ իրավունքների պաշտպան Ս. Տյուսաբի աշխարհայացքի ձևավորման վրա: Վաղ շրջանի, քանի որ այդ շրջանում է ժ. Սանդը հասարակությանը մերկայացել որպես կնոջ հոգու, էության գիտակ, կնոջ ստրկական վիճակը մերկայացնող և դրա դեմ ընդվզող գրագիտուհի:

Կանանց իրավունքների հարցը 19-րդ դարավերջին զգալի տեղ է գրավում հայ մանու-
լում և գրական ստեղծագործություններում: 1912 թ. Թիֆլիսի հայ կանայք հրատարակե-
ցին «Հայ կինը» խորագրով մի ժողովածու՝ ամփոփելով «Մշակ» թերթում լույս տեսած հոդ-
վածները և հրապարակումները՝ նվիրված կանանց իրավունքներին: Ժողովածուի առա-
ջաբանում կարդում ենք. «40-ամյա գոյությամ ընթացքում «Մշակ»-ը բազմաթիվ ազդու
առաջնորդողներով, իմաստալից հոդվածներով և գեղեցիկ քանասիրություններով առա-
ջինը արթնացրեց հայ կնոջ մեջ ինքնաճանաչման զգացումը և լայնացրեց նրա աշխար-
հայացքը: Թերթը հանդիսացավ իրավագուրկ հայ կնոջ պաշտպանը, հայ կնոջն առաջինը
ծանոթացրեց լուսավոր ազգերի կանանց գործունեությանը: Նա դուրս հանեց կնոջը ու-

տանեկան մեղ շրջանից՝ հրավիրելով մյուս հասարակական գործունեության լայն ասպարեզը⁴:

«Մշակ-ում լույս տեսած առաջին՝ «Կանանց ստրկության հետևանքը» (1872 թ., թիվ 12) հոդվածում հասարակության քաղաքակրթության աստիճանը որոշող ցուցանիշ է համարվում կնոջ վիճակը: Ուստի որքան հետամնաց էր հայ հասարակությունը, քանի որ կինը մի իսկական «կենդանի բողոք» էր իր ստրկական վիճակի դեմ: Հոդվածում եզրակացվում է, որ հասարակությունը չի կարող ազատագրված համարվել, եթե կանանց սեռը ստրկության մեջ է⁵:

«Կինը մեզ հետ է» առաջնորդողում (1877 թ., թիվ 29) Գրիգոր Արծրունին ասում է, որ ինքը հավատում է կնոջ կարողություններին և համոզված է, որ կինը ճշոր ուժ է հասարակության մեջ. «Պատմությունը մեզ ցույց է տալիս, որ երբ կինը ընդդեմ է ելնում մի գաղափարի, ապա այն պետք է բոլորովին կորած համարվի: Երբ կինն անտարբեր է դեպի մի հարց, մի գաղափար, մի երևույթ, այն հարցը, այն գաղափարը, այն երևույթն անշարժ կմնա»: Այնուհետև կոչ է անում հայ կանանց. «Ձեզ ենք դիմում, հայ կանայք, որ մեմք ձեզանից ենք սպասում հայության բարոյական և մտավոր վերանորոգման գործի առաջ տանելը»:

Կանանց առաջադիմության և հասարակության մեջ արժանապատիվ տեղ գրավելու մյուս գրավականը մշակականները համարում էին ինքնուրույն աշխատանքով ապրելը և կազմակերպություններ, միություններ ստեղծելը: «Մշակ-ում է տպագրվել (1879 թ. թիվ 34-39, 42-43) Բաֆֆու «Հայ կինը» ուսումնասիրությունը: Նկարագրելով կնոջ ապրելակերպը, հոգեվիճակը և դիրքը գյուղում, գավառում, Թիֆլիսում, Բաֆֆին փորձում է վեր հանել սոցիալ-տնտեսական, ավանդական-ազգային, քաղաքական այն պատճառները, որոնց հետևանքն է կնոջ իրավագրկությունը:

«Արդյոք ինչի՞ց առաջ եկավ կնոջ մի այսպիսի վիրավորական վիճակը, որ մա ծայն չունի ո՛չ ընտանիքի և ո՛չ հասարակության մեջ, որ մա պահպանվում է ամսատշելի ծածկի տակ, որպես մի մյուս, որին արտաքին ատմութեայի ազդեցությունը կարող է փչացնել, որ մա իր անձի տերը չէ, այլ գործ են անում մյուս որպես մի սեփականություն, որ ուրիշին էր պատկանում, և, վերջապես, որ մա իբրև մարդ զրկված է մարդկային ամեն իրավունքներից»⁶: Հարցի պատասխանը դժվարանում է տալ. քանի որ հին տնտեսական կյանքից ամենևին տեղեկություններ չկան:

Մեծ բարեարարություն արած կլինի կնոջ սեռին այն մարդը, որ լուսավորության կայծը կմտցնի ամենախուլ գյուղական խրճիթներում, այդ լույսը միայն կարող է մյուս առաջնորդել և դուրս բերելով տնային փակ շրջանից, կանն մյուս հասարակական ընկերության անդամ»⁷: Բաֆֆին էլ գտնում էր, որ կնոջ արժեքորման խնդիրը մոր գործընթաց էր և դեռ երկար ճանապարհ ուներ անցնելու: «Կնոջ ազատություն, կնոջ անկախություն (зависимость), կնոջ հավասարություն, դրանք շատ զեղեցիկ բառեր են, բայց դեռ լուսա-

⁴ Ա. Զալյուսև, Կինը 19-րդ դարի հայ գրականության մեջ, Ե., 2005 թ., էջ 72:

⁵ Նույն տեղում, էջ 73:

⁶ Բաֆֆի, երկերի ժող., հ. 11, Ե., 1991 թ., էջ 137:

⁷ Նույն տեղում, էջ 139:

վոր ազգերի մեջ ևս կենսական անվճիռ հարցերի կարգումն են գտնվում»⁸։ «Կի՞նք իր նուրբ վոր ազգերի մեջ ևս կենսական անվճիռ հարցերի կարգումն են գտնվում»⁸։ «Կի՞նք իր նուրբ խելքով և հրապուրիչ բնավորությամբ կարող էր լինել մի լավ կապ գործող ուժերի միջև։ Կի՞նք կարող էր առաջնորդել և խրախուսել գործող անձերին։ Եվ դրանում է բովանդակվում կնոջ բարձր նշանակությունը, երբ մա կմասնակցեր հասարակական կյանքին իր վում կնոջ բարձր նշանակությունը, երբ մա կմասնակցեր հասարակական կյանքին իր վում կնոջ բարձր նշանակությունը, երբ մա կմասնակցեր հասարակական կյանքին իր վում կնոջ բարձր նշանակությունը, երբ մա կմասնակցեր հասարակական կյանքին իր վում կնոջ բարձր նշանակությունը»⁹։

Ղ. Աղայանը իր «Կնոջ կոչումը» ստեղծագործության մեջ արտահայտել է իր դիրքորոշումը կնոջ հանդեպ՝ ասելով, որ «Կնոջ կոչումն է լինել մայր։ Կի՞նք մայրական սիրտ պիտի ունենա ոչ միայն դեպի իր զավակները, այլև դեպի ամեն մարդ»¹⁰։ Ղ. Աղայանի կարծիքով՝ կի՞նք նույն մայրական գթաստության պետք է պարտի իր ամուսնուն, քանզի մա կյանքի ու սիրտ աղբյուրն է։ «Տան մեջ թագավորող սերը թխում է մորից, այլ ոչ՝ հորից, հայրը նույն սիրտ մեջ լողացողներից է»¹¹։ Ղ. Աղայանը կնոջ կոչումը տեսնում է ընտանիքում, նրան համարելով ընտանիքի բարոյական պատասխանատուն թե՛ ամուսնու, թե՛ զավակների համար։ «Զավակի բարոյական կրթության պատասխանատուն մայրն է։ ...Եթե մեկ մարդ ամուսնամալուց հետո ազնվացում է, փառք ու պանծանք նրա կնոջը, իսկ եթե անազնվացում է, անբարոյականացնում՝ ամոթ ու մախաթինք նրա կնոջը»¹²։

Կնոջ հարցը համակողմանի քննության է ենթարկվել մաև «Նոր-Նար» թերթի էջերում։ «Վարժուհիների խնդիրը», «Ռարձյալ վարժուհիների խնդիրը», «Ռ՝լը են մեր կանայք» հոդվածներում քննելով կնոջ խնդիրը, հոդվածագիրները գալիս են այն եզրահանգման, որ այդ խնդրի հիմքում ընկած է կնոջ դաստիարակության և կրթության հարցը։ «Ծավալի է, որ կանանց մտավոր վիճակը և հասարակական գործունեության ինքնաճանաչողությունը չբարձրացրած, կանանց ազատություն և հավասարություն տալու վրա ենք խոսում»¹³։

Կնոջ ինքնուրույնության, ընտանեկան ազատության, կրթության, աշխատանքի հարցերն առավել խորությամբ բարձրացրեց առաջին հայ վիպասանուհի Ս. Տյուսաբն իր «Մայտա» (1883 թ.), «Սիրանույշ» (1884 թ.), «Արաքսիա կամ վարժուհին» (1886 թ.) վեպերում։ Իր առաջադրած հարցադրումներով մա հիշեցնում էր Ժ. Սանդին և իրավամբ վաստակեց «Արևելքի Ժորժ Սանդ» անվանումը։ Նա խորապես ցավել է հայ կնոջ անազատ վիճակի համար, ձգտել նրա իրավահավասարությանն ու ազատագրմանը։ Առաջին իսկ հրապարակախոսական հոդվածներով՝ «Քանի մը խոսք կանանց անգործության մասին», «Կանանց դաստիարակության խնդիրները», «Կանանց աշխատության սկզբունքները», մա փորձեց ցերկայացնել հայ կնոջ ծանր վիճակը և ցույց տալ դրանից դուրս գալու ուղիները։

1883-86 թթ. հոդվածներում բարձրացրած հարցերին մա փորձեց տալ գեղարվեստա-

⁸ Նույն տեղում, էջ 152։

⁹ Նույն տեղում, էջ 158։

¹⁰ Ղ. Աղայան, Երկերի ժող., հ. 3, Ե., 1963 թ., էջ 35։

¹¹ Նույն տեղում, էջ 37։

¹² Նույն տեղում, էջ 36։

¹³ «Նոր-Նար», Թ., 1890 թ., թիվ 29։

կան մարմնավորում: «Կամանց ազատության հարցով մտախոցված Ս. Տյուսաբի համար հրապարակախոսական ելույթների հասարակական հնչումը թույլ էր թվում: Ամերածեշտ էր ոչ միայն ազդարարել կնոջ իրավունքը, այլև ցույց տալ կոնկրետ սոցիալական այն հանգամանքները, որոնց մեջ գտնվում էր կինը, մերկայացնել ընտանիքի ու բարոյականության կենդանի պատկերը: Այսպես, Ս. Տյուսաբը ընտանիքի ու կանանց հիմնախնդիրը փոխադրեց գրականության բնագավառ և զուգադրեց երկու միտում. մի կողմից ցույց տվեց իրականության պատկերը, մյուս կողմից գաղափարական հերոսների միջոցով ազդարարեց բարոյագիտական իր թեզերը»¹⁴:

Ս. Տյուսաբի հայացքները կնոջ ազատագրության մասին չէին հանգում սոցիալական ճանապարհով հարցը լուծելուն: Ժամանակները դեռևս չէին տալիս այդ հմարավորությունը, բայց այն կոչը, որ անում էր Ս. Տյուսաբն իր վեպերի միջոցով, պատմականորեն համարձակ էր: «Այլ աշխարհի բեմին վրա կուգեմ տեսնել զքեզ, և ի տես ամենուն մարտնչելով փոթորկաց դեմ և հաղթահարելով զանոնք, ուր չի կա մարտ, հոգ չիք արժանիք, պատերազմին դաշտին վրա կհայտնվի զինվորի արիությունը»¹⁵:

Այս կոչը, լինելով ոռոմանտիկ-ուտոպիական իր ժամանակաշրջանի համար, իր խորքում կապված էր եվրոպական մասշտաբով հասարակության ընդերքում հասունացող շարժումների հետ, դարի մոր գաղափարների հետ: Այս իմաստով Ս. Տյուսաբի վեպերը գրավիչ են, ունեն ժամանակի հնչողություն: Նրա վեպերը երբեմն չեն արտացոլում իրականությունը, որի համար քննադատության են ենթարկվել Հ. Պարոնյանի և Գր. Զոհրապի կողմից: «Հավատարմության խոստման գործադրության մեջ կկայանա կնոջ ընտանեկան կյանքը իր ամուսնու հանդեպ և այդ ուխտին դրժելվիլը մեծագույն ոճիրն է»¹⁶: «Կիններուն քով ամեն պարկեշտություն, ամեն չափավորության զգացում ամենտացած ցույց տալով չէ, որ անոնց ազատագրությունը կըրնա ձեռք բերվի»¹⁷:

Ս. Տյուսաբն առաջին հայ վիպասանուհին է, որ փորձել է բացահայտել հայ կնոջ մեքաշխարհը, նրան դիտել որպես անհատ: Նրա ողջ գրական ստեղծագործությունը ծառայել է միմիայն կնոջ ազատագրության, կրթության, դաստիարակության, աշխատանքի խնդիրներին: Այդ հարցադրումները հետագայում իրենց գրական անդրադարձը ունեցան հատկապես Ծիրվանզադեի («Եվզինե», «Ունե՞ր իրավունք», «Մեղանյա», «Նամուս» և այլն), Նար-Ղոսի («Մեր թաղը», «Սպանված աղավնին», «Պալաքար» և այլն) ստեղծագործություններում, Գ. Սուևդուկյանի պիեսներում: Ս. Տյուսաբը համարձակություն ունեցավ բարձրացնել կնոջ ազատության խնդիրը, քանի որ իր աշխարհայացքով, մտածելակերպով, հոգեկան կերտվածքով, ապրելակերպով առաջ էր անցել իր ժամանակից և համոզված էր իր առաջադրած խնդրի ճշմարտացիության մեջ, որը ապացուցվեց ժամանակով:

¹⁴ Ս. Տյուսաբ, Երկեր, Երևան, 1959 թ., Լք 5 (Առաջաբան՝ Ս. Սարիկյան):

¹⁵ Ս. Տյուսաբ, Երկերի մոդ., «Մայրա», Ե., 1981 թ., Լք 18:

¹⁶ Գր. Զոհրապ, Մեր կնակերև, Գանիրե, 1945 թ., Լք 76:

¹⁷ Նույն փնդում, Լք 78:

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԱԶԱՏ ԲԱՐՈՅՈՒՄ

Պատմական գիտությունների դոկտոր

ՃԱՇՈՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1Le *Lectonnaire de Jérusalem en Arménie: Le Casoc'*, III. Le Plus ancien Casoc' Cilicien: Le Érévan 832 / par Charles Renoux, Brepolis, Turnhout/Belgique, 2004, p. 523-644 (Pontificio Instituto Orientale Roma. *Patrologia Orientalis*, tome 49, fascicule 5, N 221).

Երրուսաղեմի Սահմանքն Հայաստանում. Ժաշոց. Գ. Կիլիկյան Ռմագույն Ժաշոցը. Երևան, հմր. 832 /աշխատասիրությամբ Շառլ Ռընուի, Բրեպոլիս, Տյուրնոտ/Բելգիա, 2004, էջ 523-644 (Հոռոմի պապական արևելագիտության ինստիտուտ, հտ. 49, պրակ 5, թ. 221):

Ֆրանսիացի հայագետ-հետազոտող, քննեղիկտյան Ան Կալկա վանքի միաբան Աթանաս (մկրտության անունը՝ Շառլ) Ռընուն ավելի քան 40 տարի զարմացնում է հայագիտությամբ իր հետևողական և հմուտ հետազոտություններով: Նրա ուսումնասիրություններից մյուսն է Հայոց Եկեղեցու ծեսի և վարդապետության պատմությունը, վաղքրիստոնեական տոնակարգի թացահայտումը, տարվա կտրվածքով սրբախոսական և աստվածաշնչային ընթերցումների ճշտումը պատմաբանասիրական լայն կտավի վրա: Հայագիտությունը Շառլ Ռընուին է պարտական վերջին տարիների հայկական ծիսական շրջափուլի բազմակողմանի հետազոտության համար, նրա ջանքերի շնորհիվ էր, որ մանրամասնորեն հետազոտվեցին հայկական Ռմագույն Ժաշոց-մատյանները, և այդ հետազոտության հիմքի վրա ուսումնասիրողը հայտնաբերեց հայոց ծիսական տարվա հիմքում դրված Երրուսաղեմյան Սահմանքի Ռմագույն տարբերակը, որի որոնումը սկսվել էր դեռևս Ժոզեֆ Դարի Եկեղեցագետ-արևելագետ պատմաբանների կողմից¹: Մինչ նրա հետազոտությունների հրապարակումը, հստակորեն չէր գիտակցվում հայկական ծիսական մատյանների դերը Ընդհանրական Եկեղեցու ծիսակարգը թացահայտելու գործում: Հայոց Շառլ Ռընուի մեծագույն ներդրումը երրուսաղեմյան Տոնացույց-Սահմանքի Ռմագույն հայերեն ձեռագրերի հետազոտումն ու հրապարակումն է: Հրապարակված հատորը այդ հետազոտությունների բնականոն շարունակությունն է՝ Կիլիկիայի թագավորության սահմաններում գրված հայերեն Ռմագույն Ժաշոցի ուսումնասիրությունը:

Շ. Ռընուի հրատարակած հետազոտությունների սոսկական թվարկումն իսկ կարող է ցույց տալ նրա մեծ ներդրումը Հայոց Եկեղեցու ծիսական գրքերի և ծիսական տարվա հե-

¹ Renoux A.(Ch.), *Le codex arménien Jérusalem 121*, PO, t. 35/1 et PO 36/2. Brepolis, 1969 et 1971; Ibid. „Les fêtes et les saints de l'Église Arménienne“ de N. Adontz, dans REArm. N.S. 14 (1980) p. 287-305; 15 (1981), p. 103-114.

տազոտության բնագավառում: Երուսաղեմյան Սահմանքին և հայկական ճաշոցին վերաբերող գիտնականի մախորդ բնագրագիտական հետազոտությունները հիմնականում հրատարակվել են «Parrologia Orientalis» (այսուհետև՝ PO) շարքի հատորներում²: Դրանք ներկայացնում են հիմնարար հետազոտությունների մի շարք, որոնք մեծ կարևորություն ունեն հայկական ծիսական տարվա միջնադարյան բնագրերի ուսումնասիրության համար: Մեծ է Եկեղեցու պատմաբան, ծիսագետ, բնագրագետ Օառլ Ռընուի ավանդը հայկական Ծիսարանների, հատկապես ճաշոցի գիտական հրապարակման ու հետազոտության բնագավառում:

Օ. Ռընուի հետաքրքրությունների մյուս բնագավառը Ընդհանրական Եկեղեցու Ս. Հայրերի հայերենով պահպանված երկերի և միջնադարյան մեկնողական բնագրերի հրապարակումն ու ուսումնասիրությունն է: Այս առումով հիշատակելի է նրա ավանդը Իրենիոս Լուզդոնացու հայերենով պահպանված երկերի³ ու Պողոս առաքյալի Ընդհանրական թղթերի խմբագիր կամ շարք (երբեմն էլ շղթա կոչված) մեկնությունների⁴ հրատարակության գործում:

Հայագետի մոր հետազոտությունը հետևելով PO շարքի մշակված սկզբունքներին, բաղկացած է հապավումների (էջ 523-525) և եզր-տերմիմների բացատրության (էջ 526) ցանկերից, մատենագիտությունից (էջ 527-535), բնագիրը կազմելու համար օգտագործված ձեռագրերի թվարկումից (էջ 536), Առաքաբանից (էջ 537-561), Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) թ. 832 մատյանի մանրակրկիտ ցկարագրությունից և ծանոթագրված ֆրանսերեն թարգմանությունից (էջ 563-627), Աստվածաշնչային ճշգրտված հղումների (էջ 629-633), զրքում օգտագործված հայերեն ձեռագրերի (էջ 634-635), ամձնանունների (էջ 636-637), տեղանունների (638) և եզր-հասկացությունների ցանկերից (էջ 641-642):

Ե դարում տոնական տարվա շրջանակում երուսաղեմյան Սահմանք-արարողակարգի ընդունումից հետո, Հայոց Եկեղեցին, ըստ Օ. Ռընուի, ձեռնարկել է այդ հուշարձանի թարգմանությունը հունարենից: Հեղինակն հօգուտ իր այս վարկածի վկայակոչում է Երուսաղեմում հայտնաբերված Ե դարի արձանագրությունները, Ս. Քաղաքում հայկական վանքերի, վանական կյանքի և ծիսական գործունեության առկայությունը վկայող մատենագրական փաստերը: Քրիստոնեական ծիսական տարվա ողջ ամբողջությունը պարունակող,

² PO, t. 35 (1969): *Le codex Arménien Jérusalem 121: I. Introduction aux origines de la liturgie Hierosolymitaine lumières nouvelles* par Athanase Renoux, p. 215; PO, t. 36 (1971): *Le codex Arménien Jérusalem 121. II. Édition comparée du texte et de deux autres manuscrits. Introduction, textes, traduction et notes* par Athanase Renoux, p. 388; PO, t. 44 (1989): *Le lectionnaire de Jérusalem en Arménie: Le Casoc¹. Introduction et liste des manuscrits*, par Charles Renoux, 137 p.; PO, t. 48 (1999): *Le lectionnaire de Jérusalem en Arménie: Le Casoc¹. II. Édition synoptique des plus anciens témoins* par Charles Renoux, 170 p.

³ PO, t. 39 (1978): *Irénée de Lyon nouveaux fragments Arméniens de L'Adversus Haereses et de L'Épideixis* / Introduction, traduction latine et notes par Charles Renoux, p. 164.

⁴ PO, t. 43: *La chaîne Arménienne sur les Épître catholiques. I. La Chaîne sur l'Épître de Jacques* / par Charles Renoux, p. 160, 1985; PO, t. 44: *La Chaîne Arménienne sur les Épître Catholiques. II. La Chaîne sur les Épître de Pierre* / par Charles Renoux, p. 231, 1987; PO, t. 46: *La chaîne Arménienne sur les Épîtres Catholiques. III. La Chaîne sur la première Épître de Jean* / par Charles Renoux, p. 1994.

ընթերցողի դատին՝ ներկայացվող այդ ժողովածուն հայ մատենագրության մեջ հանդես է գալիս ժաշոց անունով և արդեն Ը դարից առաջ Հայաստանում հայտնի է եղել մի քանի խորագրական տարբերակներով: Այդ տարբերակների արտացոլումներն են Երուսաղեմյան ժաշոցի Փարիզում, Երևանում և Երուսաղեմում պահպանված հնագույն ձեռագրերը, որոնց ընդօրինակությունների ամացած ճանապարհն ավելի մանրամասնորեն արձանագրված է հեղինակի մայրող աշխատանքներում:

Երուսաղեմյան ժաշոցի հնագույն վկայություններից մեկը (ըստ ժամանակագրական հերթականության՝ երրորդ) մեզանում, ինչպես պարզել է ֆրանսիացի հայագետը, ՄՄ թ. 832 մատյանն է, որն ընդօրինակվել է 1154 թ. և վեր է հանում Երուսաղեմյան Սահմանքի հիման վրա Հայոց Եկեղեցու ծիսական տարվա զարգացման մի կարևոր շրջափուլը: Այս ձեռագիրը համարելով երուսաղեմյան Սահմանքի վրա հեցած հայկական ծիսական տարվա հնագույն վկայություն, որը հավաստվում է նաև մախքան ժ դարը ստեղծված հայ մատենագրության մեջ առկա փաստերով, Շ. Ռոնուն հայկական սրբագործված տարվա պահպանված ծիսակարգում մշմարում է բյուզանդական ազդեցության ամենաբնականին հետևյալներ: Այդ երևույթը հեղինակը բացատրում է Սև լեռներում և Կիլիկյան միջավայրում տարբեր եկեղեցական կազմակերպությունների համատեղ կյանքով և փոխազդեցություններով:

Այնուհետև հեղինակը ներկայացնում է ՄՄ թ. 832 մատյանի մանրամասն, մասնագիտական նկարագրությունը: Այստեղ պետք է հայագետների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Շ. Ռոնուն ծանոթ է հայկական ժաշոցների ձեռագրագիտական ողջ ավանդույթը, քանի որ նրան է պատկանում աշխարհի թուր գրադարաններում պահպանվող հայկական ժաշոցների քննական նկարագրությունը⁵: Հետաքրքրության առարկա ձեռագրի նկարագրության մեջ (էջ 538-541) հեղինակը մասնագետների ուշադրությունն է հրավիրում հետևյալ խմբիկների՝ մատյանի չափերի, թերթերի և տետրերի քանակի, պահպանված ձեռագրի այսօրվա վիճակի, գրչության տեսակի, գրչի կողմից օգտագործված հապավումների, կետադրության յուրահատկությունների և զարդանախշերի վրա:

Այնուհետև հեղինակը, հիմնվելով հիշատակարանային վկայության վրա, ճշտում է ձեռագրի գրիչ Գևորգի անունը և մատյանի գրման ճշգրիտ թվականը (1154): Հիմնվելով հիշատակարանում հիշատակված Գևորգ գրչի և Ստեփաննոս պատվիրատուի անունների առկայության և հայագետների բերած նյութերի վրա, մատյանի գրման հավանական վայր է համարում Սկևռայի վանքը, ի տարբերություն երջանկահիշատակ Արտաշես Մաթևոսյանի, ում կարծիքով այս ձեռագիրը գրված պետք է լիներ Դրազարկի վանքում: Խոսելով հատկապես Ամանոսի (կամ Սև) լեռներում ստեղծված մշակութային միջավայրի մասին, հեղինակը, հիմնվելով Ժ. Դեյեյանի, Կ. Մուրաֆյանի, Հր. Բարթիկյանի, Լ. Զեքիյանի, Ա. Գափոյան-Գոյումեյանի դրույթների վրա, ԺԱ դարի Կիլիկիան դիտում է հայկական և հունական մշակույթների սերտաճման-միախառնման (hybridation) տարածք: Մեր կարծիքով՝ նմանատիպ մշակութային հող Հայաստանում առկա էր ավելի առաջ ևս. Ժ դարի մշակութային կյանքի մասին խոսելիս նման ենթադրության հմարավորություն է տալիս Ստեփանոս Ասողիկը: Այս ֆենոմենալ երևույթը իսկապես հայագիտության համար հե-

⁵ Le lectionnaire de Jérusalem en Arménie: Le 'Çašoc'. Introduction et liste des manuscrits, par Charles Renoux, PO. I. 44, 1.4 (1989).

տագոտական լայն դաշտ է բաց անում (էջ 541) և պետք է մղի մասնագետներին նորամուտ բացահայտումների:

Այնուհետև հեղինակն անդրադառնում է ՄՄ թ. 832-ում ծիսական տարվա արձանագրության մասն յուրահատկություններին՝ հիշատակելով, որ գրիչը իր սովորության համաձայն չի առանձնացնում վերագրերը, որը ստիպում է հետազոտողին ավելի ուշադիր լինել, քանի որ մեծացնում է ձեռագրի մկարագրության ժամանակ վրիպման հնարավորությունը: Ձեռագիրը սկսվում է հայկական ծիսական տարվա սկիզբը բնորոշող մավասարդի 1-ով (օգոստոսի 11):

Հայր Ռեմոն հավաստում է, որ ձեռագրագետները մատյանների այս տեսակն անվանում են Բաշոց, այսինքն մեկնաբանում է բառի արմատն ու տերմինի նշանակությունը: Հեղինակն ընդգծում է, որ այս գրքի մախատիպը Երուսաղեմյան Սահմանքն է, որի մեզ հասած հնագույն օրինակը, ինչպես իր աշխատություններում պարզաբանել է ֆրանսիացի գիտնականը, գրված է եղել 417-439 թթ. հունարեն և գրեթե մույմ շրջանում թարգմանվել է հայերեն⁶: Այս հուշարձանը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի հայկական տեսք է ստացել՝ իր մեջ ներառելով տեղական եկեղեցական տոնակատարությունների հիմնական յուրահատկությունները: Անդրադառնալով Բաշոցի անցած ճանապարհին, Հ. Ռեմոն վերստին արձանագրում է, որ փոխալից զարգացումների մեջ կարևոր տեղ պետք է վերապահել Բաշոցի այն յոթ ձեռագրերին, որոնց մեջ առկա մյուսը հավաստվում է Հովհաննես Օձնեցու, Գրիգոր Արշարունու և Սողոմոն Մաքենացու մեզ հասած երկերով⁷: Երուսաղեմյան Սահմանքի «հայացման» դեռևս թույլ արտահայտությունն է ՄՄ թ. 832-ը, որի խմբագրված տիպը հանդես է գալիս՝ հետզհետե փոխարինելով Ը դարում ստեղծված տարբերակին, որը, ըստ հեղինակի, ներկայացված է յոթ ձեռագրական վկայություններով:

Այնուհետև Ը. Ռեմոն բերում է ՄՄ թ. 832-ի բովանդակությունը՝ շեշտը դնելով տարեկան հիմնական տոնակատարությունների ժամանակագրության վրա (էջ 543-545): Ձեռագրում բուն Տոնական-Բաշոցը զբաղեցնում է 1-248 թերթերը: Բերված մկարագրությունն ցանկում աչքի է զարնում այն հանգամանք, որ մավասարդի 1-ից («օգոստոսի 11») մինչև Հայտնության կամ Երեմիայի տոնը («հունվարի 6») ամսաթվերը բերվում են ըստ հայկական տոմարի ամսանունների (հայադիր), իսկ դրանից հետո (թղ. 106թ)⁸ ըստ հռոմեական կամ հուլյան ամսանունների (հռոմեադիր): Հեղինակը փորձում է ճշտել բերված տոնակատարությունների մեջ հայկական և ընդհանուր եկեղեցական տոների հարաբերակցությունը՝ ընդգծելով, որ հայադիր և հռոմեադիր մասերը օրգանապես շարունակում են իրար և չեն օգնում տոների հայկական կամ հռոմեական ծագման խնդիրը պարզելու գործում: Ըստ հեղինակի բացատրության, քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների համատեղ ու սերտաճած մշակության լյանքը թույլ էր տալիս հայկական միջավայրում առանց վերապահումների օգտագործել երկու տոմարներն էլ:

Թեպետ այս փաստարկը դեռևս համակողմանի հիմնավորման կարիք ունի, սակայն իր մեջ կրում է երևույթը հասկանալու մեծ առավելություններ: Իհարկե հեղինակը բերում է երկու տոմարների զուգահեռ օգտագործման այլ օրինակներ ևս (ՄՄ թ. 4811, ՄՄ թ. 2948,

⁶ Cf. PO, 163 et 168, p. 170-172.

⁷ Cf. PO, 214, p. 102-105.

երուս. թ. 154, Վիենն. թ. 5 և 6.), սակայն հաշվի չի առնում մի կարևոր հանգամանք. ՄՄ թ. 832-ում տառվա մի մասի տոմակատարությունները բերված են հայադիր ամսանուններով, մյուսին՝ հուլյան. ի տարբերություն բերված ձեռագրերի, ուր ամբողջ տարվա կտրվածքով են իրար կողք դրված երկու տոմարները: Պիտի ավելացնել նաև, որ որոշ «Յայսմա-տարներում», որոնք գրված են ԺԳ դարից հետո, այս երկու տոմարների կողքին երբեմն հայ-տընվում է նաև ասորական ամսանունների հիշատակությունը (օրինակի համար տես ՄՄ թ. 1511, ՄՄ թ. 3806, ՄՄ թ. 4696, ՄՄ թ. 4730, ՄՄ թ. 4755):

Այնուհետև Շառլ Մընուն անդրադառնում է Մաշոցի հայադիր հատվածին (թղ. 1-106թ), որը հնագույն «Յայսմատարից» (mésologes) ավելի հին է⁸ և վաղագույնը հայացված սրբախոսական գրքերից⁹: Այստեղ հիշատակվում են հայկական Ծիսարան մուտք գործած հայկական պատմագրությանը և եկեղեցական ծիսակատարությանը հայտնի սրբերը, որոնց մի մասը ներկայացված են Բուզանդի և Ագաթանգեղոսի երկերում, մյուսներն էլ մագդեականության և իսլամի դեմ պայքարած վկաներ են: Ըստ Օ. Ռոնուի, մինչ Ը դարը հայկական Մաշոցներում պաշտոնականացված է եղել միայն Գրիգոր Լուսավորչի հիշատակությունը¹⁰: Հրապարակվող ՄՄ թ. 832 Մաշոցում երեսուն այլ հիշատակումների ենք հանդիպում, որոնք կապվում են հայոց պատմության մշանավոր տարբեր իրադարձությունների, սրբերի և նահատակների հետ: Դրանք կարելի է բաժանել չորս խմբի, որոնցից առաջինը վերաբերվում է առաքելական շրջանին (Թադեոս առաքյալ, Սամղուխտ կույս, Ոսկյան վկաներ, Սուկավ լեռան սրբեր), երկրորդները՝ Հայաստանում քրիստոնեության ընդունման առաջին շրջանի սրբերին (Տրդատ թագավոր, Աշխեն թագուհի, Խոսրովիդուխտ, Գրիգոր Լուսավորիչ, Արիստակես, Վրթանես, Ներսես Մեծ, Սահակ Պարթև, Հոսիսիսյան կույսեր, Նունե և Մանե, Վարդա Ա. Խաչ), երրորդները՝ Գրեթի Գյուտին և այդ իրադարձության կարևորագույն մասնակիցներին (Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց), չորրորդները՝ մագդեականության և իսլամի դեմ պայքարած վկաներին (Ատոմյան սրբեր, Աբրահամ Խոստովանող, Խորեն, Յիզտրուգիտ, Օուշանիկ, Սահակ և Հովսեփ Կարմիկցիներ, Եղիշե, Դավիթ Գվնեցի, Վահան Գողթնեցի, Ղևոնդյանը ու Վարդանանք և այլն):

Ը դ. - 1154 թթ. միջև ձևավորված Մաշոցը ընդգրկել է հայ մատենագրության մեջ հիշատակված վկայություններ: Ժամանակագրական առումով ամենաուշ սրբախոսական վկայությունը 808 թ. թվագրվող Սահակի և Հովսեփի հիշատակությունն է, որն էլ խոսում է այդ վկաների սրբացման վաղագույն հիշատակության մասին: Այս ձեռագիրը մեծ թվով տեղական սրբերի հիշատակման ամենավաղ օրինակն է, որով Հայոց Եկեղեցին փորձում էր այս բնագավառում ևս հաստատել ազգային եկեղեցական կառույցի անկախությունը: Ընդհանրական Եկեղեցու սրբերի հիշատակության բազմազանությունը ֆրանսիացի հա-

⁸ «Յայսմատարի»-ի արարել խմբագրությունների ծագմանը ծանոթանալու համար Շ. Ռոնուն առաջարկում է անդրադառնալ Winkler G., Der armenische Ritus: Beschreibungsaufnahme und neue Erkenntnisse sowie einige kürzere Notizen zur Liturgie der Georgier.- dans: R. Taft, The Christian East: 1st Institutions & 1st Thought (OCA 251), Rome, 1996, p. 265-298 հոդվածին:

⁹ Ամենավաղ սրբախոսական գրքերից հայտնի են վաղագույն Տոնականները (homéliaires), որոնք ներկայացված են Փարիզի 110 (1194 թ.) և ՄՄ թ. 7729 (ԺԲ-ԺԳ դդ.) ձեռագրերով: M. van Esbroeck, 1984, p. 261.

¹⁰ Հայկական պատմագրության մեջ հիշատակվում են մի շարք քրեական սրբեր և անձնավորություններ (PO 214, p. 179 et 234-235; Renoux 1987², p. 291-303).


լազետը բացատրում է կիլիկյան բազմազգ միջավայրով, որը, մեր կարծիքով, այդքան էլ միացի՞ծ ու միանշանակ չէ: Օտար սրբերի հիշատակությունը, ինչպես հեղինակն է ընդգծում, եղել է առաջ և նորացվել է նաև հետագա դարերում:

Ըաշոցի հոռոմեացի մասը (թղ. 106բ-251) հայր Ռոմուս ավելի հին է համարում: Այն ավարտվում է Վարդանանց մահատակների հիշատակությամբ և սկսվում է Աստված-հայտնության տոնով (հունվարի 6): Այս մասը պարունակում է 48 բաժին, ուր շարաթվա օրերի նշանակումով հիմնականում ընդգրկված են միայն Ե դարի երուսաղեմյան Սահմանքից հայտնի տոնակատարությունները: Հեղինակը փորձում է այս մասի նկարագրության մեջ փնտրել օրինաչափություններ: Ի տարբերություն մինչև Ը դարը մեզ հասած Տոնակարգերի, այստեղ կան երեք հիմնական տիպի շեղումներ. ա) հավելված է Բարեկենդանին վերաբերվող հատվածը (62-րդ բաժին), Ղազարոսի հարության հիշատակությունը (63-րդ բաժին), Արմավենյաց (Մաղկազարդի) կիրակիի հիշատակությունը (64-65-րդ բաժիններ), բ) Մեծ պահքի երկրորդ շաբաթին, Արմավենյաց տոնի հետ միասին Գեորգ գրիչը մուծել է Թեոդորոս գորավարի հիշատակությունը (66-րդ բաժին), Մեծ պահքին հետևող շաբաթ և կիրակի օրերի հիշատակումները, գ) Մեծ պահքի վեցերորդ կիրակիի հիշատակությունների մեջ են մուծվել ավետարանական ընթերցումներ (75 բաժին), իսկ մայիսի 1-ին Երեմիա մարգարեի հիշատակումը (76-րդ բաժին):

Ի տարբերություն երուսաղեմյան Սահմանքի, ուր բերվում են Մեծ պահքի վեց շաբաթների չորեքշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերի ընթերցվածները, Ը դարից հետո մեզ հասած ըաշոցներում, ինչպես նաև ՄՄ թ. 832 մատյանում բերվում են միայն շաբաթ և կիրակի օրերի ընթերցումները: Տոնական տարվա հերթականությունը խախտող այս «բարեկարգությունների» մի մասը, ըստ Օառլ Ռոմուսի, կարելի է բացատրել ընդօրինակման որոշակի փուլում ընդօրինակվող մամուլների խառնմամբ, գրչի սխալով, սակայն հիմնականի մեջ նա արձանագրում է Ե դարի երուսաղեմյան Տոնականի հետ ձեռագրի հարազատությունը: Այս դրույթն ավելի հաստատում է հնչում Մեծ պահքի հիշատակումների շրջանի համար՝ մի բացառությամբ, որ ՄՄ թ. 832-ում բացակայում են չորեքշաբթի և ուրբաթ օրերի հիշատակումները:

ՄՄ թ. 832-ում Հոգեգալստյան հիշատակության բացակայությունը Օ. Ռոմուսին հուշում է բյուզանդական ազդեցություն, քանի որ վերջիններիս Միսարանների շարքում իր ուրույն տեղն ունի Պենտակոստարիոնը: Տասներկու հայկական ձեռագրեր, որոնց մեջ հնագույնը թվագրվում է 1239 թվականով, իրենց մեջ չեն ընդգրկում Մեծի պահքի շրջանի հիշատակումներն ու ընթերցումները, ինչը հեղինակին թույլ է տալիս ենթադրել, որ ԺԲ-ԺԳ դդ. հայկական միջավայրում շրջանառության մեջ է եղել բյուզանդական Triodion¹¹ ժողովածուն հիշեցնող մի հատուկ ծիսարան, որն էլ կարգավորել է Մեծ պահքի ողջ շրջանի տոնակարգն ու ընթերցումները: Այդ են վկայում, ըստ Օ. Ռոմուսի, ըաշոցի մեկնիչ Գրիգոր Գանձակեցին և 1296 թ. գրված ՄՄ թ. 1028 մատյանը: Վերջինս պարունակում է միայն քառասնօրյա պահքի շրջանը՝ կրկնելով նույնատիպ բյուզանդական ժողովածուների թվանդակությունը: Պահպանվել են նաև բյուզանդական Մեծ պահքին նախորդող արարողությունների կարգը հաստատագրող ըաշոցներ (ՄՄ թ. 4987, ՄՄ թ. 8904, ՄՄ թ. 1401), որոնց

¹¹ Այս ժողովածուն կարգավորել է Պահքի շրջանի շուրջ 10 շաբաթների տոնակարգն ու ընթերցումները, այդ մասին տե՛ս H.-G. Beck, Kirche und theologische Literatur im byzantinischen Reich, Muenchen, 1959, p. 250-251.



ԱՄՄՎԵՐՋԻ ՆԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՆՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հուլիսի 6-ին Գևորգյան Հոգևոր ճեմարանում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ ճեմարանի 2004-2005 ուսումնական տարվա փակման հանդիսությունը: Ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ճեմարանի դասախոսներ և ծնողներ:

Բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի դասախոս Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: Տեսչական ամենամյա զեկույցը ներկայացրեց ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը, իսկ ուսման մեջ առաջադիմություն ցուցաբերած սաները պարգևատրվեցին «Կայծակյան» հիմնադրամի և Վեհափառ Հայրապետի կողմից տրված նվերներով:

Հանդիսությունը եզրափակվեց Նորին Սրբության օրհնության խոսքով, որում Վեհափառ Հայրապետը մասնավորաբար նշեց. «...Մեր կյանքով, մեր գործով պիտի պայմանավորենք սերը մեր ժողովրդի դեպի մեր Եկեղեցին, հարգանքը մեր ժողովրդի՝ դեպի հայ եկեղեցականը: Հայտնի կարող ենք լինել մեր ժողովրդի փառավոր ոգով, մեր ժողովրդի նախանձախնդրության ոգով՝ դեպի ազգային մեր արժեքները, դեպի ազգային մեր սրբությունները: Պարգապես եթե թերացումներ կան, ապա այդ թերացումների մեծ բաժինը մենք պետք է գիտակցենք որպես մեր թերացումներ:

...Ես վստահ եմ, որ մեր առաքելության մեջ մենք կհաջողենք, եթե սեր ունենանք, սեր մեր Եկեղեցու նկատմամբ, սեր մեր Հայրենիքի, մեր Ազգի նկատմամբ, սեր Աստծու նկատմամբ, սեր հոգևոր մեր առաքելության նկատմամբ: Սերն այն ուժն է, որ հրաշքներ կարող է իրագործել մեր կյանքում: Մերը հոգի կարող է կերպել, կամք ամրացնել մեր մեջ, որպեսզի չսկսարանանք, չվհարվենք դժվարությունների առջև և մեր հայացքը նոր ժամանակներին հառած՝ իրականացնենք մեր առաքելությունը»:

Ցերեկույթի ընթացքում շարականների ու երգերի հոգեթով կատարմամբ հանդես եկան նաև ճեմարանի սաները:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՆՈՐԸՆԾԱ ՎԱՐՂԱՊԵՏՆԵՐԻՆ

Նույիսի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց նորընծա Տ. Արշեն վարդապետ Սանույանին, Տ. Թորգոմ վարդապետ Տոնիկյանին և Տ. Մարկոս վարդապետ Նովիաննիսյանին, ովքեր, հունիսի 25-ին հաջողությամբ պաշտպանելով վարդապետական իրենց թեզերը, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ստացել էին մասնավոր վարդապետության աստիճան:

Նորընծա վարդապետներին Նորին Սրբությունը ներկայացրեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը՝ հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու հորդորը:

Նորին Սրբությունը, իր հայրական սերը և օրհնությունը փոխանցելով նորընծաներին, նախ իր գնահատանքը հայտնեց քննիչ հանձնաժողովին՝ կատարված աշխատանքի համար: Դիմելով վարդապետներին՝ Տայոց Հայրապետը մասնավորապես ասաց. «...Մենք բարձր ենք գնահատում ձեր սերը հանդեպ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատավոր ժողովուրդը: Վստահ ենք, որ այս վարդապետական աստիճանի շնորհումը առավել ևս պիտի ձեր մեջ գորացնի նախանձախնդրությունը և կամքը՝ օգտակար ծառայություն բերելու մեր ժողովրդին: Մենք անհուն ուրախություն ենք ապրում նման առիթներով, երբ մեր կուսակրոն հոգևորականները գալիս են համալրելու շարքերը մեր վարդապետաց...»:

Վեհափառ Հայրապետը նաև նշեց, որ այսօր մեր Եկեղեցին կանգնած է բազում ծանր մարտահրավերների առջև, և վստահություն հայտնեց, որ նորընծա վարդապետներն իրենց անմնացորդ նվիրումով, գորացյալ հավատով և ծառայությամբ պիտի նպաստեն դրանց հաղթահարմանը:

Հավարտ հանդիպման Նորին Սրբությունը նորընծա վարդապետներին շնորհեց վարդապետական լանջախաչեր:

Հանդիպմանը ներկա էր Վարդապետական թեզերի պաշտպանության հանձնաժողովի նախագահ, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապախյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՐԳ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 2-ին Գևորգյան Նոգևոր ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեզերի պաշտպանություն: Բանավոր պաշտպանության էին ներկայացվել Մայր Աթոռի միաբաններ Ս. Իզնավրիտս աբեղա Մալխասյանի «Խրիմյան Նայրիկ» և Ս. Զոհրաբ աբեղա Կոստանյանի «Նովիաննո Ժ 22-39 տողերը. հայրաբանական հեղափոխություն և քննական ուսումնասիրություն» աշխատանքները:

Քննիչ հանձնաժողովը, նախագահությամբ Ս. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի և մասնակցությամբ Ս. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի ու Ս. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, քննության առավ ներկայացված աշխատությունները և բանավոր պաշտպանությունից հետո տվեց իր դրական գնահատականը: Երկու աշխատանքներն էլ արժանացան հանձնաժողովի հավանությանը:

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձևաձև Գերաշնորհ Ս. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի, տեղի ունեցավ նորընծա վարդապետների վարդապետական աստիճանի փոխության արարողությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ



Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ծնվել է 1976 թ. հոկտեմբերի 17-ին Երևանում:

1983-93 թթ. սովորել է մայրաքաղաքի Ա. Չեխովի անվան թիվ 30 միջնակարգ ուսական դպրոցում:

1993-99 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանում:

1999 թ. մայիսի 24-ին՝ Հոգեգալստյան տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալիաջյանի, ձեռնադրվել է սարկավազ:

1999 թ. Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի (պժմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ) տնօրինությամբ նշանակվել է ծառայության Մայր Տաճարի թանգարանում: Այնուհետև 2000 թ. ծառայության է նշանակվել Ալեք և Մարի Մանուկյան գանձախանը:

2000 թ. դեկտեմբերի 28-ին պաշտպանել է ավարտաճա՝ «Հայ Եկեղեցու և պետության փոխհարաբերությունները խորհրդային տարիներին (1920-1954 թթ.)» թեմայով:

2001 թ. փետրվարի 20-ին, ձեռամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2001 թ. սեպտեմբերի 1-ից Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մկրտարանի հոգևոր տեսուչ:

2004 թ. հուլիսի 1-ին նշանակվել է Արագածոտնի թեմի Օշականի եովվության հոգևոր հովիվ:

2005 թ. փետրվարի 1-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Կոպայքի թեմի Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ:

2005 թ. օգոստոսի 2-ին պաշտպանել է վարդապետական թեզը՝ «Հորիմյան Հայրիկի կրոնա-եկեղեցական գործերը» թեմայով:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԱՆՅԿԱՅՎԵՅԻՆ ՍՓՅՈՒՌ-ՔԱՆԱՅ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԸ

Հուլիսի 28-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ փնդի ունեցավ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների բացման արարողությունը: 13 երկրներից եկած 85 սփյուռքահայ ուսուցիչներ ՀՀ Կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ և Ամենայն հայոց Կաթողիկոսի հովանավորությամբ մեկ ամսվա ընթացքում Գևորգյան հոգևոր ճեմարանի հարկից ներս հեղձնեցին վերապատրաստման դասընթացներին, ծանոթացան ու այցելեցին հայաստանի փարբեր ուխտագրողներ և մշակութային հաստատություններ:

Հանդիսությունը բացեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ Եպիսկոպոս Խաչատրյանը: Մորթազան հայրն իր խոսքում հատկապես կարևորեց այն հանգամանքը, որ դասընթացներն անցկացվում են համայն հայության Սրբություն Սրբոցում Ամենայն հայոց հայրապետի անմիջական հովանավորությամբ, ինչն էլ ավելի մեծ ոգևորություն պետք է հաղորդի ուսուցիչներին:

Այնուհետև ՀՀ Կրթության ազգային ինստիտուտի փնթոն Վիկտոր Մարտիրոսյանը ներկայացրեց դասընթացների ծրագիրը: Բարիգալստյան խոսքով ներկաներին ողջունեց նաև ՀՀ Կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանը. «Երևի ձեզանից ոչ մեկը երբևէ չէր կարող երագել, որ մի օր որպես հայ ուսուցիչ կարող է ոչ միայն այցելել Մայր Աթոռ Ս. Էջմիածին, այլև ամբողջ մի ամիս վայելել միաբանության այս հյուրընկալ վերաբերմունքը և ստանալ անհրաժեշտ գիտելիքներ՝ հանուն հայապաշտպանության և մեր քրիստոնեական արժանքների պահպանման», - նշեց նախարարն իր խոսքում հինգ տարիներ առաջ սկսված ծրագրի այս հանգրվանը նկատելով նոր սկիզբ:

Ողջույնի խոսք ասացին նաև ԱԺ Գիտության, կրթության և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրանտ Հակոբյանը, «հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր փնթոն Նաիրա Մելքումյանը: ՀՀ վարչապետի անունից ներկաներին ողջունեց ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ Արամ Կարապետյանը: Այս ելույթ ունեցավ հայաստանի Գրողների միության նախագահ Լևոն Անանյանը: Նա կարևորելով ուսուցիչների դերը հայապաշտպանության գործում անդրադարձավ նաև դաստիարակչական խնդիրներին՝ շեշտելով և ուսուցիչների դերն ազգային նկարագրի կերպման և պահպանման գործում:

Ուսուցիչների անունից Վեհափառ հայրապետին իրենց երախտագիտությունը և շնորհակալությունը հայտնեցին Աննա Սարիբեկյանը (Վրաստան) և Ալիս Բանդյանը (Հայկա):

Հավարդ հանդիսության իր օրհնության խոսքը և հայրական սերը ներկաներին փոխանցեց Ամենայն հայոց հայրապետը. «Տարին նվիրական է, մենք հիշատակեցինք 90-ամյակը հայոց ցեղասպանության, որը եղավ այն հիմնական պատճառը, որ մենք դարձանք

աշխարհացրիվ ժողովուրդ: Հովվապետական այցելությամբ այս անցնող փարիներին եղել են գրեթե բոլոր գաղթօջախներում և գոհարանական աղոթք են աս Աստված բարձրացրել, որ Տիրոջ օգնականությամբ մեր ժողովուրդը կարողացել է շփել եղեռնապար իր մեջքը և այսօր ապրում է կազմակերպված ու հայաշունչ կյանքով: Հայոց Մեծ եղեռնի ոգեկոչման ատանձնակի նշանակություն ունի հատկապես հայ ռաուցչի համար: Այն ուխտի նորոգության գեղեցիկ մի ամիս է՝ իրականացնելու այն իղձերը, այն երազները, որոնք անկախաբանացին մեր հայրերի հոգիներում. պահել ու պահպանել մեր ժողովուրդը ամբողջ ու միասնական, հավատարիմ ազգային իր արժեքներին, մեր հայրերի սրբազան հավատքին:

